



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material







ԳՍՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՍՂԻՔՐՈԱՆԴԻ ՏԻՒՄԱՅԻ ՈՐԳԵՈՅՆ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱՐԵՆԷ

Յ ՈՎ ՀԱՆՆԷՍ Վ. Ս. ՃԵՄԵԱՆ

ԳՈՐԾԱՍԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԵՋԻՐ ԽԱՆ ԳԵՏՆԱՅԱՐԿ ԹԻԻ 40

— 1872 —

ՀԱՌԱՔԱՆՈՅ Բ. ԱՋԱՅԵԱՆ Ի ԲԻ

5994 p. 1h.

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS 309

LECTURE 10

PROBLEMS



PROFESSOR

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

ՅԱՌԱՉԱԲԱՆ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի Ն

Սիրելի ընթերցող, դքեղ գուցէ չը
ճանչեմ, բայց ո՛վ որ և ըլլաս, այր կամ
կին, ծեր կամ երիտասարդ, այս հե-
տեւալ խօսքերը կ'ուզղեմ քեզ:

Զմտեանս բանալով կ'աղաչեմ իս-
կոյն չդատապարտես զայն, ու արհա-
մարհանօք մէկդի չնետես: Եարունակէ՛
ու յետոյ վճռէ՛: Եթէ մարդկային սըր-
տին թշուառութեանցը դորովելու են-
թակայ սիրտ մ'ունիս, եթէ յանցանք
ներելու բերկրանքը կզգաս, եթէ սիրել
ի՛նչ է դիտես, եթէ արտասուացդ աղ-
բիւրները ցամաքած չեն տակաւին, պի-
տի օրհնես զիս այս սրտաշարժ պատմու-
թեանս թարգմանութեանը ձեռնարկե-
լուս համար:

Հեղինակը ախտին ջատագով չկանդ-
նիր, այլ կը նկարագրէ զայն ազդու
գրչովը, նորա աւաղելի հետեանքը կը
ցուցնէ, և անկէ ազատելու ուրիշ ճամ-

բայ չ'նշմարեր բայց միայն «սէր և վիշա» :
 Եւ արդարեւ , որ և է պատճառաւ իւր
 պատուէն ինկած աղջիկ մի , եթէ ուզէ
 ընկերութեան մէջ վերադառնալ և կամ
 դէթ նորա մեծարանքն ստանալ՝ ճշշ-
 մարիտ սիրով պիտի սիրէ , և այն սէրն
 ալ անշահախնդիր և բնածին պիտի ըլ-
 լայ : Բայց , աւանդ , հպարտ ու ինքնա-
 մոլ աշխարհիս կարծեօքք , որ զինքը
 կազմող անդամներն անվրէպ և անա-
 բաւ կը պահանջէ , այն եղկելի աղջիկն
 իւր անկեղծ սիրոյն պսակուիլը պիտի
 չ'տեսնէ , և ընկերութենէն արտաքսը-
 ւելով՝ անտանելի ցաւոց մէջ իւր թշշ-
 ուառ կեանքը պիտի կնքէ , ու մահ-
 ուամբը միայն ողորմած ու բարեսիրտ
 մարդկան կարեկցութեանն արժանի
 պիտի ըլլայ : Մահը ևեթ պիտի վաւե-
 րացունէ նորա սէրը . . . :

Ս. յս երկու խօսքովս մատենիս ինչ
 տեսակ խնդրոյ վրայ ճառելը յայտնե-
 ցի , կարծեմ : Բայց ներկայ սրտածմլիկ
 պատմութիւնս իբր դբօսանք միայն պէտք
 չէ ընթեռնուլ . որ և է վէպ մի խորին
 և ընկերական խրատ մի կը պարունա-
 կէ , զայն դռնելու ու անկէ օգուտ քա-
 ղելու չէ :

Աղղիս ճշմարիտ ու բանականութեան
 ցուցած եղանակաւ յառաջդիմութեան
 փոյթ ու փափաք տածելու համար
 երկու խօսք ալ աւելցընելու կը յան-
 դրդնիմ:

Այս դարու մէջ ընդհանրացած ու
 ընկերութեանց հիմունքը խախտող ախ-
 տէն աղղիս մատաղ ու սիրուն դասեր-
 քըն զգուշացունելու, և այն դարչելի
 ու համայնակուլ վհին մէջ մշտնջենա-
 կան կորստենէն հեռացունելու համար
 պէտք է դաստիարակութիւնը ընդհան-
 րացնել, կրօնասիրութիւն աղղել ի նո-
 սա, յամենայնի պարզութեան ոգին ներ-
 շնչել նոցա սրտերուն մէջ, ըստ կարել-
 ւոյն զչքաւորութիւն նուազեցունել և
 անտեղի խստութիւն չբանեցունել նոցա
 հետ:

Ուսումնական դաստիարակութեան
 կողմանէ մեր աղղին կանայքը և դասեր-
 քը ևս տակաւին ցաւալի վիճակի մէջ
 են: Աղղի մը յառաջդիմութիւնը մե-
 ծաւ մասամբ ի կանանց կը կախուի. նո-
 քա են մեր մայրերը, ի նոցանէ պիտի
 ընդունիմք այն նախնական դաստիարա-
 կութիւնը՝ որոյ գէշ կամ բարի տպա-
 ւորութիւնն անջինջ պիտի դրոշմուի ի

մեզ: Իսկ արդ եթէ մարք տղէտ ըլլան,
 ի՞նչ կ'ըլլան մանչերը և աղջիկները, մա-
 նաւանդ այս յետիններս, որք, դրեթէ
 միշտ, նոցա աչքին առջև պիտի ապրին:
 Անոր համար է որ, այնքան հրեշտա-
 կանման օրիորդներ, որ մէյմէկ օրինակ
 մայրեր գուցէ կրնային ըլլալ, իրենց տը-
 գիտութեամբն իմաստակ երիտասարդ-
 ներու ծուռ վարդապետութեանց և կամ
 խորամանկ բանից հաւատ ընծայելով
 գահավիժեցան անդ, ուր տակաւին կը
 թաւալին, և ուր ոչ ոք բարերար ձեռք
 մի կը կարկառէ ի նպաստ նոցա: Ուստի
 ազգասէր անձանց ջանքը պիտի ըլլայ ըղ-
 դստերս դաստիարակել կամ օգնել այ-
 նրմ որ և է կերպով. ամէն անհատ իւր
 կարողութեան համեմատ՝ կարելի եղած
 զոհողութիւն պիտի չխնայէ այս գովելի
 և փրկաւէտ նպատակիս հասնելու հա-
 մար, որ մեր ազգիս յառաջդիմութեան
 անժխտելի պայմանն է: Մարք լուսա-
 ւորեալ ըլլալով իրենց դստերց ըստ բա-
 նականութեան կրնան հսկել. և սոքա
 ալ կըթուած ըլլալով առջի ելնողին ան-
 միտ ու խաբէական խօսքերէն չեն հը-
 րապուրիր:

Ամէն բարելաւ մեծատուն մարդկան

և գլխաւ որապէս կառավարու թեանց մեծ
 ջանքը պիտի ըլլայ, եթէ ոչ բոլորովին
 անհետացունել աշխարհէս զչքաւորու-
 թիւն, գէթ նուազեցունել զայն, և հե-
 տեաբար մեծաւ մասամբ նորա աղէտա-
 լի հետեանքները բառնալ: Արովհետե
 յաճախ, աղքատութիւնն է որ կը դըր-
 գէ զաղջիկս իրենց թշուառութենէն ա-
 զատելու նպատակաւ այն պիղծ ընկե-
 րութեան մէջ նետուիլ, ուր կարծեն
 խաղաղաւէտ և բարեբաստ կեանք վա-
 րել, մինչ մի քանի տարի շուայտութեանց
 մէջ ապրելնէն յետոյ, խղճի մտաց խայ-
 թը, այն վրիժառու և մշտնջենաւոր դա-
 հիճը, կուգայ և իւր երկաթի ժանեօք
 կը տանջէ զնոսա:

Մի քանի տարի յառաջ փողոցներուն
 մէջ երկու մուրացիկ աղջիկներ կը տես-
 նէի, ՚ի շնորհաց զիրկ չէին, քաջառողջ
 կ'երևէին: Շիտակը ըսելու համար, ո-
 զորմութիւն չէի տար՝ զժուլութիւն չը-
 խրախուսելու համար: Նախ և առաջ
 պարկեշտ կը տեսնուէին կամ կը կեղ-
 ծէին երևիլ. այնպէս, մի քանի եօթ-
 նեկէն անցորդաց հետ ծիծաղելնին, և
 մինչև կրպակներուն մէջ նստող երի-
 տասարդաց հետ կատակելնին տեսի:

Յետոյ աներևութացան . . ու՞ր գացին . . .
 ո՞վ չկրնար գուշակել . . . :

Այսօր չէ ուրեմն ինանիր ողորմութիւն
 սիրել անդ, ուր ուրիշ բան հարկ չէ
 բայց միայն գործ ու աշխատութիւն : Աւեր-
 տարանական գործ մի չէք կատարեր
 յանխորհուրդս ողորմութիւն բաշխելով .
 ճշմարիտ բարեգործութիւնն է աշխա-
 տութեան առարկայ հնարել, զաշխա-
 տութիւն սիրել տալ, որպէս զի աղքա-
 տութեան խստութիւնը և անգործութեան
 պարսաւելի ճաշակը չմզէ զգոտերս կո-
 րստեան ճամբան :

Եթէ տգիտութիւնը և չքաւորութիւնը
 մեծապէս կը նպաստեն աղջկանց ան-
 պատուութեանը և կորստեանը, ոչնուազ
 կը գրգռէ զնոսա և շքեղ զգեստուց փա-
 փաքը : Ս. յա իղձը, որ ուրիշ բանէ յա-
 ռաջ չգար, այլ միայն ունայնասիրու-
 թենէ, աղջկանց և կանանց տկարագոյն
 կողմն է . և երիտասարդ օք կրնայ յա-
 ճախ այս միջոցաւ շլացունել նոցա աչ-
 քը և հրապուրել զնոսա : Աստի մարք
 պիտի շանան իրենց դատերց պարզու-
 թեան օղին ազդել, ցուցնել անոնց թէ
 առաքինութեան և պարկեշտութեան դար-
 դը՝ պարզութիւնն է . սիրել պիտի տան

զայն, որպէս զի առ յապայն արհամար-
 հեն զարդարուն հանդերձները, և կամ
 գէթ ընկերութեանց մէջ մտնելու իբր
 անհրատեշտ կարօտութիւն համարելով
 դորձած են զայնս: Եւ դարձեալ ուրիշ
 բան մ'ալ կայ. պերճութեան և պճնա-
 սիրութեան ճաշակն առած աղջիկ մը
 ի՞նչպէս կրնայ պարզութեան դատապար-
 տել ինքզինքը, եթէ ամուսնանալէն յե-
 տոյ այրը, անհաստատ բախտին հար-
 ուածը կրելով, չկարենայ իւր կնկան
 հաճոյիցը բաւել, ի՞նչպէս պիտի շարու-
 նակէ սիրել զայն մարդը, որ ա՛լ ան-
 կարող է զիւր կինը պճնել, հետեւաբար
 սէրը կը նուազի, պճնասիրութեան ու-
 պին հետզհետէ կը բռնանայ, և զայն
 դոհացունելու համար, աւա՛ղ, կինն ու-
 րիշ հնար չխորհի՛ր՝ բայց միայն այլ ան-
 ձի մը գիտել . . . : Ամուսնութիւնը,
 այն երկնապարգև և նուիրական կապը,
 ծանրակշիռ կ'երևի, և սիրտք կը դառ-
 նանան: Ա՛նխիժ են զայն միութիւն՝ զոր
 Աստուած օրհնեց, և փոխանակ բարե-
 բաստ օրեր վայելելու՝ կը թունաւորեն ի-
 րենց կեանքը, և իրարմէ բաժնուելով՝
 երկուքն ալ կը տկարանան: Միթէ չե՞ս
 հանդիպած, ո՛ր ներողամիա ընթերցող

տխրադէմ, վշտաբեկ ամուսնոյ մը, և նորա արտաքուստ զուարթ կնկանք: Հէքայր, թշուա՛ռ կին, — անիծեա՛լ պճնա սիրութիւն:

Մայրե՛ր, որովհետև ձեզ դիտաւորապէս կ'ուղղեմ խօսքերս, անտեղի խրատութիւն մի՛ բանեցունէք ձեր դասերց հետ: Խստութիւնն օգուտ մը չունի. վրասաներն անթուելի են. — հսկելու է բռնանալու չէ: Ի՞նչպէս պիտի կարենաք սանձել աղջիկ մի որ դաշխարհ տակաւին չճանչեր, և ցանկանալով կը ցանկայ իւր աչքին առջև նետուած քօղը մէկդի քաշել: Ս, յնպիտի մթութեան մէջ կեանքըն անցուցած աղջիկ մի ամէն հնար պիտի նիւթէ լուսաւորուելու համար. ամրափակ դռները պիտի կարենայ բանալ, բարձրաբերձ պատերէն պիտի զօրէ անցնիլ. վերջապէս ամէն խոչընդոտներու պիտի յաղթէ, և, աւա՛ղ, յաճախ բարւոյ և չարի դանաղանութեան անգէտ ըլլալուն համար՝ պիտի շփոթէ դայներս իրարու հետ. քօղին մէկ կողմը վերցունողը, զուարթուն մի պիտի թուի իրեն, և ինքզինքը աներկիւղ նմա պիտի յանձնէ:

Պատմութեանս դիւցադնուհին, ինչ-

պէս պիտի տեսնէք, երկու պատճա-
 ւաւ վհին մէջ ինկեր էր, մօրը խստու-
 թիւնը և պճնասիրութիւնը, երկուքն
 ալ զարհուրելի կերպով նպաստաւոր ե-
 Ղեր էին իւր անկման . . . : Եւ յետոյ
 մինչ իւր շուայտօտ կենաց մէջ կ'ուզէր
 առանճնանալ, մինչ կը խնդրէր սիրոյ
 անգործադրելի երազներ յօրինել, կ'ա-
 տէր գերկուսն ալ, և անէծք կը կար-
 դար իւր կորստեանը և աղէտից այն
 զոյգ շարժառիթներուն վրայ :


Բայց այս վերոյիշեալ արամադրու-
 թիւնները ընդունայն կ'ըլլան առանց կը-
 րօնասիրութեան : Մանուկ մի երբ կա-
 բենայ խորհիլ՝ մայրը դուն պիտի գործէ
 զայս զգացումը ներշնչել ինա, գերծ-
 ՚ինախապաշարմանց : Չըլլայ որ մայրը
 զսնապաշտութիւն ճշմարիտ կրօնին հետ
 շփոթէ . պաշտամանց անսահման և ան-
 խորհուրդ յարումը՝ զմարդ կրօնասէր
 չընէր, այլ մոլեռանդն՝ որ աշխարհիս
 շատ չարեաց աղբիւրն է : Մարդս ոչ
 միայն Աստուծոյ տաճարին մէջ բարե-
 պաշտ պիտի ըլլայ, այլ ամենուրեք, ոչ
 միայն եկեղեցւոյ մէջ պիտի աղօթէ առ-
 այն որ կը լսէ աղաչանաց իւր ամենէն
 աննշան արարածին, այլ տան մէջ, ըղ-

բոսանաց մէջ, լերան վրայ, դաշտին մէջ
 են. և այն աղօթքները, ոչ միայն շքե-
 թունքը պիտի թոթովեն, այլ սիր-
 տըն ու հոգին պիտի վերանան յերկինս:
 Ս. յսպիտի կերպով ներշնչեալ կրօնը
 հաստատուն է, և ոչինչ՝ յաշխարհի կա-
 րող է խախտել զայն. յաջողութիւնք,
 ճախորդութիւնք և ամեն փոփոխութիւնք
 բախտին և մարդկային կենացս՝ իբր ամ-
 րակառոյց և ժայռերու վրայ նստած բեր-
 դի մը բախելով նմա՝ կը փշրին: Ահաք
 չէ արհամարհել զմանկունս՝ իբր անըն-
 դունակ բարոյականին և կրօնից առած
 ները ի միտ առնելու. բարոյականը և
 կրօնքը, որ նորա վրայ հաստատուած
 ըլլալու է, ամէնուն համար են. դժուար
 բան չկայ նոցա մէջ, բայց միայն այն
 սնտուի վարդապետութիւնները և պաշ-
 տամունքը՝ զոր ընչասէր մարդիկ կամ
 տիեզերաց վրայ իշխել ուզող մարդիկ
 հնարեր են, նոքա հարկաւոր չեն ճշ-
 մարիտ կրօնասիրութեան: Աւրեմն այս
 Աստուածային զգացումը ունեցող անձը
 ամէն բարոյական և ընկերական բարե-
 մասնութեամբք զարդարուած կըլլայ,
 ու աշխարհի մէջ գովելի կեանք մը վա-
 րելէն յետոյ կը մեռնի՝ մարդկան ցա-

ւերը իրեն հետ տանելով: Աւստի, մայրեր, կ'աղաչեմ ձեզ որ զճշմարիտ բարոյականը քաջ ուսուցանէք ձեր դստերաց, որպէս զի ամէն չար հրապուրանաց յաղթելով իրենք ալ որ մի կատարեալ մայրեր ըլլան՝ յօգուտ իրենց ընտանեաց, ազգին և մարդկութեան:

Գարձեալ կը կրկնեմ, ո՛ր ընթերցող, այս պատմութիւնս ամբողջ կարդաս. մի՛ արհամարհեր դու ալ, նախապաշարեալ անձանց նման, զպատմութիւն այն կանանցմէ մէկուն, որ վերջապէս կրցեր է ինքզինքը պրծել իւր թաւալող կոյանոցին աղտեղութիւններէն: Գու ալ, երկնից հետ, ուրախացիր մեղաւորի մի դարձին վրայ, որ առաւել կը բերկրեցունէ զՍ.մենակալն քան հարիւր անարատ և անբիծ արարածներ:

ՅՈՎ. Հ. Վ. Ս. ԺԵՄԵԱՆ




Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 horizontal lines.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or a date, which is also illegible.

Գ Ա Մ Է Լ Ի Ա Ջ Ա Ր Դ

Տ Ի Կ Ի Ն



Ա.

Իմ կարծիքս սա է որ մէկը առանց զմարդիկ ընդ երկար քննելու՝ չ'կրնար ստեղծել, ինչպէս որ չ'կրնար խօսիլ լեզու մը՝ զոր կատարելապէս ուսած չէ :

Ստեղծելու տարիքը չ'ուեննալուս պատճառաւ՝ լոկ պատմելով կը շատանամ : Ուստի կը պահանջեմ ընթերցողէն որ համոզուի այս պատմութեանս ճշմարտութեանը վրայ, որոյ ամեն անձինքը՝ բաց 'ի դիւցադնուհւոյն՝ կ'ապրին տակաւին :

Սակէ դատ, այս մատենիս մէջ հաւաքուած եղելութեանց մասին վկայներ կը գտնուին ի փարիզ, որք կրնան հաստատել զայնս՝ եթէ իմ վկայութիւնս չը բաւէ : Մասնաւոր հանգամանքով մը ես միայն կրնայի 'ի դիր առնուլ զայնս, որովհետեւ միայն ինձ պատմուեցան յետին ճամբարամասնութիւններս, առանց ու-

բոց անկարելի պիտի ըլլար հետագորդաշարժ
եւ ամբողջ պատմութիւն մը յօրինել :

Մհառասիկ ինչպէս այդ մանրամասնու-
թեանց տեղեկացայ :

1847 տարւոյն Մարտի 12 ին , « Լաֆիթ »
փողոցին մէջ կը տեսնուէր ծանուցում մը , դոր
կարդալով իմացայ որ կարասիք եւ չքնաղ ու
փառաւոր իրեր պիտի վաճառուին : Ընչից
տէրը մեռած էր : Ծանուցման մէջ հանդու-
ցելոյն անունը չ'էր դրուած . բայց վաճառու մը
'ի « ա' Մնթէն » փողոց պիտի կատարուէր , 9
թիւ տան մը մէջ , ամսոյս 16 ին , ժամը տաս-
ներկու քէն մինչեւ հինգ :

Ծանուցումէն կ'իմացուէր նաեւ թէ ամ-
սոյն 13 ին եւ 14 ին ժողովուրդը կրնար օթե-
ւանը եւ կարասիքը տեսնել :

Հետագորդաշարժ բաներու միշտ սիրող ըլ-
լալուս համար , միտքս դրի որ այս առիթը չը
փախցընելով երթամ , ոչ գնելու , այլ տես-
նելու համար :

Ուստի երկրորդ օրն 'ի « ա' Մնթէն » փողոցը
գացի ու այդ տունը մտայ :

Քեռ կանուխ էր , սակայն օթեւանին մէջ
տեսայ այցելուներ եւ այցելու հիւններ խակ , որք ,
թէ պէտեւ կաշմիրներով ու թաւիչով ծածկուած
էին , եւ իրենց շքեղ կիսակառքերը դրան առ-
ջեւ իրենց կ'սպասէին , այսու ամենայնիւ դար-
մացմամբ ու հիացմամբ նաեւ կը նայէին իրենց
առջեւ պարդուած զեղխութեան :

Սպա հասկցայ այս դարմացման ու հիաց-
ման պատճառը , որովհետեւ երբ ես ալ դի-
տեցի՝ դիւրաւ իմացայ որ պահժու կնկան մը
օթեւանին մէջ եւմ եղեր : Արդ , ընկերակա՛ն

կանայք, եւ ասոնցմէ հոն գտնուողք կը փա-
փաքէին տեսնել այն կանանց ներքինը, որոնց
կահը ամեն օր իրենցը կը նսեմացնէ, որք ի-
րենց պէս եւ իրենց քով օթեակ մ'ունին,
յօրէրան եւ ի թատրոնն Նտալական, եւ որք
կը տարածեն ի Բարիդ իրենց գեղեցկութեան,
ականակապ դարդուց եւ գայթակղութեանց
վիրք ճոխութիւնը:

Այն կինը, որոյ տան մէջ էի, մեռած էր.
տասն տարիներ առջին աղոյն կանայք եւս կրնային մրտ-
նել մինչ նորա սենեակը: Մահը մաքրած էր
այն պճնազարդ կոյանոցին օդը. բայց ասկէ
դատ, հոն գտնուող կանայք կրնային ի հարկի
իրենք զիրենք արդարացրնել ըսելով որ բան
գնելու համար եկած են առանց գիտնալու թէ
որուն տունը կուգան, եւ թէ ծանուցումները
կարդալով խնդրած են տեսնել այն ծանուց-
մանց խոստացած իրերը, եւ յառաջուց ընարել
ինչ որ պիտի գնեն: Ասկէ աւելի պարզ բան
չլլար. այսու ամենայնիւ արդիւրեւած չէին
հետադօտել այն ամեն հրաշարեաց մէջ զհետս
կենաց պոռնկան, որոյ վրայ անտարակոյս շատ
մը նոր օրինակ պատմութիւններ լսած էին:

Նիցուհեոյն հետ գծբաղդարբար խորհուրդ-
ներն ալ անհետացեր էին: Այս կանայք տե-
տան միայն մահու ընէն վերջը վաճառուելու
իրերը, եւ ոչ զայնս որք կը վաճարուէին վար-
ճարնակին կենդանութեան ժամանակը:

Սակայն գնելու շատ բան կար: Փառաւոր էին
կահ եւ կողմածք: Վարդենիէ եւ Պուլի փայ-
տէ կարասիք, Սէվրի եւ Չինաստանի անօթներ,
Սաքոնիոյ արձանիկներ, սնդուս, թաւիչ եւ
կիտուածներ, միով բանիւ ոչինչ պակաս էր հոն:

Օթեւանին մէջ շրջելով հետեւեցայ ազ-
նուատուն հետադրոյ կանանց, որ ինձ մէ առաջ
եկեր էին: Պարսկաստանի կերպասով դարդար-
եալ սենեակ մը մտան, ես ալ պիտի մտնայի,
բայց նորա ջանկարծ դուրս ելան ժպտելով եւ
իրր այս նոր հետադրոյ թեան վրայ ամա-
շելով: Չայս տեսնելով փափաքեցայ այն սենե-
ակը դիտել: Յարդարանայ սենեակն էր այն,
իւր ամենամանր նիւթերովը դարդարուած,
յորս հանգուցեալը լայնալիւ տարածած էր իւր
դեղխութիւնը:

Պատին կոթնցուցած սեղանի մը վրայ կը
չողչողէին Օգոդի եւ Օաիօյի ամեն բաղմահա-
րուստ գանձերը: Ոսկիէ եւ արծրթէ էին այն
փառաւոր հաւաքման ամենայն նիւթերը, որք
անհրաժեշտ կարեւոր են կնկան մը պահուճա-
նայր եւ մանաւանդ նորա համար՝ որոյ տունն
էին: Բայց դայս հաւաքումը տակաւ առ տա-
կաւ ամբողջացած ըլլալու էր, ու հոսանի մը
միայն չէր լրացուցած դայն:

Ես չ'էի սարսնուր պահճու կնկան մը յար-
դարանայ սենեակը տեսնելով: Հոն գտնուող
չքեղարար քանդակուած կաղնածքը տարբեր
սկզբնատառեր ու դանադան թագեր կը կրէին
վրանին:

Ար նայէի ամէն իրայ՝ որոց իւրաքանչիւրը
հէք աղջկան մը պտունկութիւնը կը ներկայա-
ցնէին ինձ, եւ ինքնիրենս կրօէի թէ Սաս-
նուած ողորմեր է նմա, որովհետեւ սովորա-
կան պատուհասին չը հասած՝ մեռեր է իւր
դեղխութեան եւ դեղեցկութեան մէջ, յառաջ
բան դպառաւութիւն, որ առաջին մահն է կո-
րուսեալ աղջկանց:

դատեր : Շատ մանկահասակ էի ես այն ատեն
ևւ պատրաստ էի իմ դարուս հեշտալի բարո-
յականն ընդունելու , սակայն կը յիշեմ որ այն
դասկանողեցուցիչ հսկման տեսքը արհամար-
հանք եւ զգումն կ'ազդէր յիս :

Ձեմ տեսած ուրիշ կոյս մը, որոյ դէմքին վը-
րայ անմեղութիւնն ու վշտաակրութիւնն այն-
քան ազդու նկարուած ըլլան , կարծես հա-
մակամութեան կերպարան մ'էր :

Օր մ'աղջկան երեսը դուարթացաւ : Մօրը
կարդադրած շուայտութեանց մէջ , մեղաւոր
էինք կարծեց թէ Աստուած թոյլ տուեր է իրեն
որ երջանկութիւն մի վայելէ : Եւ արդարեւ
Աստուած որ ստեղծեր էր զնա անոթ , ինչո՞ւ
անմխիթար թողուր ցաւալի կեանքի մը տառա-
պանաց մէջ : Օր մ'ուրեմն իմանալով թէ յղա-
ցեալ է՝ խայտաց ուրախութենէն , որովհետեւ
համեատութեան նշխար մը տակաւին մնացեր
էր 'ի նա : Մարդս դարմանալի ապաւէններու
կը դիմէ : Լուրս վաղեց զինքը ցնծացնող լու-
րը մօրը աւետեց : Ամօթ է ըսել , սակայն
Պատքս չէ հաճութեամբ բարոյականի դէմ գը-
րել , այլ ճշմարիտ եղելութիւն մը պատմել ,
զոր աւելի լաւ կ'ըլլար լռել , եթէ հարկ չը
համարէինք յայտնել երբեմն այն արարածնե-
րուն կրած տառապանքը , զոր կը դատաւար-
տենք եւ կ'արհամարհենք առանց դատելու . ա-
մօթ է ըսել , ըսինք , բայց մայրը պատասխանեց
իւր աղջկան թէ արդէն երկու հողւոյ ապրուս-
տը ճարելու դժուարութիւն ունենալուն հա-
մար , երրորդ անձի մ'ալ յաւելմամբ , աւելի
նեղը կը մտնեն , թէ տղայք անօգուտ են , եւ
յղանալը ժամանակ կորուսել է :

Երկրորդ օրը մանկաբարձ մը , (զոր հաս էր յիշատակենք իբրև մօրք բարեկամներէն մին) եկաւ տեսնելու զԼուսիգան , որ մի քանի օր անկողին կենալէն յետոյ , եկաւ անաղուրնէ աւելի տօգոյն եւ աւելի տկար :

Երեք ամիսէն վերջը բարեգութ մարդ մը նորա բարոյական ու նիւթական առողջութեան նը ձեռնարկեց , բայց վերջին հիւանդութենէն ընդունած հարուածն ուժգին ըլլալուն համար Լուսիգա մեռաւ վիժման հետեւանքէն :

Մայրը կապրի տակաւին , Աստուած գիտէ ինչպէս :

Այս պատմութիւնը միտքս եկած էր արծաթի դռները գիտելու ատենս , եւ կ'երեւի թէ այս խորհրդածութեանց մէջ բաւական ժամանակ անցուցած ըլլալու էի , վասն զի օթեւանիս մէջ ուրիշ մարդ չէր մնացած բաց միայն ես եւ պահապան մը , որ գունէն ուշի ուշով կը նայէր որ բան մը չը գողնամ :

Մերձեցաւոյն նմա , ըսի .

— Կրնա՞ս ինձ ըսել հոս բնակած անձին անունը :

— Մարգարիտա Կօթիկէ :

Ըսեր էի այն աղջկան անունը ու տեսնելի նաեւ զիսքը :

— Ի՞նչ , Մարգարիտա Կօթիկէն մեռա՞ւ :

— Այո , տէր խմ :

— Ե՞րբ :

— Երեք եօթնեկէ 'ի վեր , կարծեմ :

— Հապա ինչո՞ւ համար օթեւանը տեսնելու թողտուութիւն արուեր էի անոց 'ի դէմ :

— Պարտաւանարք մտածեցին որ այս կերպով վաճառուելու առարկայից զինը կը բարձրանայ :

Անձինք յառաջուց տեսնելով կերպասները եւ
կարասեաց տուած տեսքը՝ դնելու կը յորդոր-
ուին :

— Միթէ Կօթիէ օրիորդը պարտք ունէ՞ր :

— Ա. յո՛ւ, տէր իմ, շա՛տ :

— Բայց իրաց վաճառմամբ անշուշտ նոքա
կը վճարուին :

— Եւ կ'աւելնայ նաեւ :

— Արո՞ւ կիյնայ մնացորդն այն ատեն :

— Ընտանեացը :

— Ընտանիք ունէ՞ր :

— Կ'երեւի թէ ունի եղեր :

— Շնորհակալ եմ :

Պահապանը որոյ սիրտը հանդարտեր էր իմ
դիտատաւորութեանցս վրայ, բարեւեց դիտաւ
գուրս ելաւ :

— Խեղճ աղջիկ, կ'ըսէի ինքնիրենս ճամբուն
վրայ, շա՛տ տիրալի վիճակի մէջ մեռած ըլ-
լալու է, որովհետեւ իր նմանները քաջառողջ
ըլլալով միայն բարեկամ կուսենան : Եւ կը ցա-
ւէի Մարգարիտա Կօթիէի բախտին վրայ :

Ասի թերեւս տարօրինակ բան մը թուի շա-
տերու, բայց ես անսպառ գթութիւն մը կը դ-
դամ կորուսեալ աղջկանց վրայ :

Օր մը երբ կուսակալին կ'երթայի անցագիր
մ'առնելու համար, տեսայ մերձակայ փողոց-
ներուն մէկուն մէջ աղջիկ մը, զոր երկու ու-
տիկան կը տանէին : Չգիտէի աղջկան ըրածը,
բայց կուսար ջերմ արտասուօք՝ դրկելով մի քա-
նի ամսուան մանուկ մը, որմէ պիտի բաժնը-
ուէր 'ի բանտ երթալու համար : Ա. յն օրէն ըս-
կրսեալ չը կրցի արհամարհել կին մ'առաջին
անգամ տեսնելով :

Վաճառու մը ամսոյս 16 ին պիտի կատարուէր, ըսինք :

Օրուան մը միջոց թողուած է այցելութեանց եւ վաճառման մէջ տեղ, որպէս զի օթոցարարները ժամանակ ունենան գորգերը, վարագոյրները, եւ ին . հանելու :

Այն ժամանակ ուղեւորութենէ մը դարձած ըլլալով բնական բան էր Մարգարիտայի մահը չիմացած ըլլալս, ինչպէս մէծ լուր մը, որ բարեկամք կ'իմացունեն էրք մէկը վերադառնայ 'ի մայրաքաղաքն լրերու : Մարգարիտա դեղեցիկ էր, բայց որչափ որ այս տեսակ կանանց մեծածախ կեանքին համբաւը հռչակուի . այնքան ալ նոցա մահուան վրայ քիչ կը խօսուի : Սորա՛ նման են այն աստեղաց՝ որ անփայլ կը ծաղիս ու անփայլ կ'աներեւութանան : Երբոր մանկամարդ մեռնին, նոցա ամեն համանիները միանգամայն կ'իմանան դայն, որովհետեւ 'ի Փարիզ՝ ծանուցեալ աղջկան մը համանիներն իրարու մտերիմ բարեկամ կ'ըլլան : Հանդուցելոյն վրայ քիչ մ'ատեն խօսելնէն յետոյ՝ դարձեալ կը շարունակեն իրենց կեանքը առանց արտասուքով մ'ալ դայն պղտորելու :

Երբոր մարդս քսան եւ հինգ տարեկան ըլլայ, աչերը գրեթէ կը ցամաքին, որով չը կրնար ամենուն վրայ արտասուել :

Ազգականք եւս, որք զարտասուս կը դրնեն, տուածնուն համեմատ ողբեր կ'ընդունին : Թէպէտեւ գլխադիրերս Մարգարիտայի եւ

եջ մէկ տիկն վրայ գանուէին, սակայն իմ
քնածին ներման եւ քնական զթութեան ըղ-
գացմամբքս զրգռուեցայ նորա մահուանը վրայ
մտածելու՝ պէտք եղածէն գուցէ աւելի:

Կը յիշէի որ յաճախ հանդիպէի Մար-
գարիտայի՝ ի Շանդ-Ելիզէ, ուր հանապազ կ'ու-
զար՝ նստած փոքր կիսակարգի մը մէջ, որու
լծուած էին երկու գեղեցիկ աշխատ ձիեր:
Տեսեր էի այն ատեն ինա այնպիսի մեծ վա-
յելչութիւն մը, զոր չ'ունին իւր նմանները,
եւ որ կը պայծառացունէր նորա հրաշալի դե-
ղեցկութիւնը:

Երբ այն խեղճ արարածներն գորս եղնեն
իրենց հեռանձանօթ անձ մը կուսնեման: Այսին
դիմնչպէս որ ոչ ոք կուզէ նոցա հետ ունեցած
դիշերային յարաբերութիւնն հրապարակա-
յայտնել ժողովրդեան, եւ ինչպէս որ նոքա
ալ առաջնութենէ կը ստական, իրենց հետ կ'առ-
նուն կամ դանոնք, որ կառք մ'ունենալու
բարերաստութիւնը չունին, կամ պատաւ պոռ-
նիկներէն մէկը, որոց վարած կեանքը կեր-
պով մ'ալ չարդարանար, եւ որոց կրնա ա-
ներկիւղ մատչել նոցա քով եղող կնկան վրայ
տեղեկութիւն առնելու համար:

Բայց Մարգարիտա այնպէս չէր: ի «Շանդ-
Ելիզէ» կուզար՝ միշտ միայնակ իւր կառքին
մէջ, յորում կրցածին շտի կը ծածկէր ինք-
դինքը՝ ձմեռը մեծ կաշմիր մը, ամառն ալ ան-
պաճոյճ պարեղօտ մը հագած: Իւր սիրելի
չրջագայութեան ատեն շատ ծանօթներու կը
հանդիպէր, եւ թէ որ յանկարծ ժպտէր,
նոքա միայն կը տեսնէին զժպտը, որ աղնը
սական կնոջ մը ժպտին նման էր:

Եւր ընկերութեաց պէս Շանդ-Ելիզէի շք-
ջակայքը չէր դեզերեր, այլ իւր ձիերն արա-
դութեամբ կը տանէին դինքն յանտառն, ուր
կառքէն կ'իջներ, ժամ մը կը քայլէր, յետոյ
կառքը մանելով 'ի տուն կը դառնար ձիոց քա-
ռատութի արչաւանքը:

Ս. յս ամեն հանդամանքը, որոց երբեմն
ականատես եղեր էի, վերապին աչքիս առջեւ
գալով կը ցաւէի այն աղջկան մահուանը վրայ,
ինչպէս կը ցաւի մէկը չքնաղ կերտի մը բոլո-
րովին եղծմանը վրայ:

Մարդարիտայի պէս դարմանագեղ աղջիկ
մը չէի տեսած:

Բարձրահասակ եւ նրբամարմին էր, եւ քաջ
գիտեր ընական թերութիւնները ծածկելու
արուեստը՝ իւր հագած զգեստուց կարգադ-
րութեամբ մրայն: Արկայնատառն կաշմիրը
երկու կողմէն ցոյց կուտար ասուեայ պարե-
զօտի մը լայն ու ծածանող եզրները. թանձր
դաստակայր, որ նորա ձեռքերը կը ծածկէր,
եւ դոր կը ծիցը վրայ կոթնցքնէր, այնպիսի
ճարտարապետ ծալքեր ունէր որ ամենախիստ
աչերն իսկ պակասութիւն մը չէին կրնաո գտնել
գծերուն ծիրին վրայ:

Հրաշագեղ փոքրիկ գլուխը մասնաւոր հրա-
տանքի մ'առարկայն էր եղած, եւ մայրը, այլ
Մինսէ քերթողին լեզուով խօսելով, խնամքով
յօրինելու համար դայն փոքր շիներ էր:

Երբ շնորհագեղ ձուածեւի մը մէջ դնես եր-
կու սեւ աչեր, եւ նոցա վրայ ալ գծես այնքան
ջինջ կամարանման յօնքեր, որ ներկուած կար-
ծուին. եթէ քողարկես այն աչերը մեծ ար-
տեսանամք, որք 'ի խոնարհիլն հովանաւորն

զարգակարսիք այտերը , եթէ դժեւ նուրբ ,
ուղիղ եւ հողենկար քիթ մը , որոյ ռոգունքը
սակաւիկ մի քայուած բլլան՝ եռանդագին
տենչանքով մ'առ զգայական կեանս . եթէ
նկարեւ կանոնաւոր բերան մը , որոյ շուրթ-
ները շնորհով քայուին կաթի պէս սպիտա-
կապիտայ սկռայներու վրայ . եթէ ներկեւ թա-
շանման մորթին վրայ անարատ դեղձեր , բո-
վանդակ կ'ունենաս նորա դեղեցիկ գլուխը :

Նորա բնական կամ արուեստական դանդ-
բագեղ մաղերը , որ սեւա սաթի պէս սեւա-
գոյն էին , ճակատին վրայ ճեղքուելով իբր եր-
կու լայն վարսակայներ՝ գլխուն ետին կը կոր-
սուէին , որով կը տեսնուէին ականջներէն կա-
խուած երկու աղամանդները , որոց խրաքան-
չիւրը շորս հինգ հազար Փրանգի արժէք ունէր :

Ի՞նչպէս նորա վարած եռանդնոտ կեանքը
Մարգարիտայի կուսական եւ մանկական դէմ-
քը չէր եղծած . ստիպեալ եւմ դայնս հաստա-
տելու՝ առանց պատճառը գիանալու :

Մարգարիտայի դէմքը հրաշալի կերպով նը-
կարեր էր Ախտայ , որոյ մատիտը միայն կա-
րող էր դայն նկարել : Սղջկան մեռնելէն յետոյ
այն կենդանադիրը մի քանի օր քովս մնաց ,
եւ նմա յոյժ նմանելուն համար՝ կրցի վերոյի-
շեալ տեղեկութիւնները տալ , որոց համար
վիշտութիւնս գուցէ չը բաւէր :

Թէպէտեւ այս գլխոյս մէջ արձանագրուած
մանրամասնութիւններէն մի քանին վերջէն
հասեր են ինձ , բայց իսկոյն գրեցի , որպէս
զի՛ չը կրկնեմ դայնս , այն կնկան ճշմարիտ
պատմութիւնն սկսելէս յետոյ :

Մարգարիտա ամեն առաջին ներկայացմանց

անպատճառ գտնուելու էր . գիշերները կամ
'ի թատրոն եւ կամ 'ի պարահանդէս կ'անցու-
նէր : Ամեն անգամ որ նոր խաղ մը ներկայա-
ցնէին , ապահով էիր զինքն հոն գտնուելու
իրմէ անբաժան երևք բանով , այսինքն հեռա-
գիտակ մը , շաքարի տուփ մը եւ կամէլիայից
փուռնջ մը , զորս օթեկին առաջքը կը դնէր :

Ամսոյս մէջ քսաներեւինդ օր սպիտակ , հինդ
օրն ալ՝ կարմիր կամէլիաներու փուռնջ մը կը
բռնէր . ոչ ոք խնայեր էր գուռնոց այս փոփո-
խութեան պատճառը , եւ ոչ իսկ ես . եւ խնձի
պէս դիտեր էին զայս իւր բարեկամները եւ
դացած թատրոններուն յաճախորդները .

Մարգարիտայի ձեռքը կամէլիայէն դառ-
ուրիշ ծաղիկ շտեմնուելուն համար՝ իւր ծաղ-
կավաճատին խանութը՝ զինքը վերջապէս կա-
մէլիազարդ տիկին կոչէր էին , եւ այս յոր-
ջորջումը մնացեր էր վրան :

Գիտէի նաեւ , Փարիզու ընկերութեանց մէջ
մտնելու համար , թէ Մարգարիտան ազնուա-
տոհմ երիտասարդաց հարճն եղեր էր , եւ յայտ-
նապէս կը խոստովանէր զայս , եւ թէ նորա
ալ կը պարծենային սա բանիս վրայ , որով կը
հետեւի թէ հոմանիք եւ հարճ իրարմէ գոհ էին :

Սակայն տարիէ մ 'ի վեր՝ 'ի Պանիէր ըրած
առդեւորութենէն յետոյ՝ կ'ըսէին թէ խիստ ըն-
չաւէտ անծանօթ ծեր դքսի մը հետ է եղեր ,
որ եւ ջանացեր է ըստ կարելոյն զնա հեռա-
ցրնել անցուցած կենացն ընթացքէն . եւ կ'ե-
րեւի թէ աղջիկն ալ գովկամակութիւն մը զէր
ցուցած :

Ահաւասիկ այս բանիս նկատմամբ լատնա .
1842 տարւոյն գարնան մէջ Մարգարիտան

յոյժ տկար եւ յոյժ փոխաւած ըլլալուն համար
բժիշկները հանքացին ջրերու երթալը յորդո-
րելով 'ի Պանիէր գնացեր էր :

Հոն հիւանդաց մէջ կը դռնուէր նաեւ վե-
րայիշեալ գքսին աղջիկն ալ , որ ոչ եթէ միայն
նոյն հիւանդութիւնն ունէր , այլ եւ այնչափ
նման էր Մարգարիտայի որ քոյր կրնային կար-
ծուիլ : Բայց մանկամարդ գքսուհին ծիւրական
ախտին (վէրէմ) երրորդ աստիճանին հասած
ըլլալով Մարգարիտայի գալէն մի քանի օր
վերջը վախճանեցաւ :

Սաաւում մը դուքսը , որ 'ի Պանիէր մնա-
ցեր էր , այն հողոյն վրայ որ սրաին մէկ մտար
ժածկեր էր , զՄարգարիտան պուրակի մը մէջ
տեսնելով կարծեց թէ իւր աղջկան ուրուա-
կանն է . ուստի մերձեցաւ նմա , նորա ձեռ-
քերը բռնեց , համբուրեց , դնա արտասուելով ,
տաանց ո՛վ ըլլալը հարցունելու հրաման խնդ-
րեց երբեմն տեսնելու դնա եւ սիրելու 'ի նա
խը մեռած աղջկան կենդանի պատկերը :

Մարգարիտա 'ի Պանիէր իւր սենեկատան
կնկանը հետ առանձին ապրելով եւ փորձան-
քի ալ վախ հռչակելով ընդունեց գքսին
խնդիրը :

Բայց 'ի Պանիէր եղող ծանօթները դացին
գքսին իմացուցին մարդասիրութեամբ Մար-
գարիտա կօթէին բուն իսկ վիճակը : Ս. յա լու-
րը ձերուն ոյն սիրան 'ի խոր խոցեց , վասն զի
այս կերպով նորա իւր աղջկանը հետ ունե-
ցած նմանութիւնը կը դադրէր , այլ շատ ուշ
էր , որովհետեւ մանկամարդ կլինն իւր սրաին
պատշէն եղած ըլլալով նորա համար միայն
կ'ասրէր տակաւին :

Չնա կչտամբելու իրաւունք չունենալով
հարցուց միայն թէ կրնա՞յ արդեօք իւր կենաց
ընթացքը փոխել. եւ այս դճողութեան փոխա-
րէն խոստացաւ. նորա ամեն ուղած հատու-
ցութիւնն էր. Ուստի Մարդարիտան հաւանեցաւ:

Զայս ալ պէտք է ըսել որ այն ժամանակ
այդ մտեռանդն աղջիկը անցուցած կենսքն
իւր հիւանդութեան իրրեւ գլխաւոր պատճառ-
ներէն մին համարելով նախապաշարմամբ կը-
յուտար որ Աստուած զեղեցկութիւն եւ անող-
ջութիւն պարզեւէ՝ 'ի վարձ իւր զղջման եւ
դարձին:

Արդարեւ բաղանիք երթալով, շրջադա-
յութիւններ ընելով, մարմինը յողնեցունելով
եւ կանոնաւոր կերպով քնանալով ամառուան
մերջին օրերը անողջութիւնը դրեթէ ասա-
ցեր էր:

Իսկ ըստ Մարդարիտայի հետ վերադարձաւ
'ի Բարիդ, ուր շարունակ կուգար կը տեսնէր
չնա, ինչպէս երբեմն 'ի Պանիէր:

Այս ընտանութիւնը, որոյ ոչ ճշմարիտ ըս-
կիցքը եւ ոչ ճշմարիտ պատճառը գիտցող կար,
մեծ տպաւորութիւն ըրաւ 'ի Բարիդ. որով
հետեւ սկսան ըսել թէ դուքան իւր մեծահա-
րուտա ճօխութեամբն համբաւաւոր ըլլալէն յե-
տոյ՝ հիմայ ալ անատակութեամբը հաշակուիլ
կ'ուղէր. եւ ձեր դքսոյն ու մանկամարդ կնկան
ընտանութիւնը ցոփութեան տուին, որ շատ
ձերերու վրայ կը տեսնուի:

Սակայն ձերունեայն Մարդարիտայի վրայ
ունեցած սէրն այնքան անարատ էր, որ նորա
հետ սրտի յարաբերութենէն դատուիլ տե-
ւակ յարաբերութիւնը աղղապղծութիւն կ'ե-

րեւէր իրեն , եւ երբէք բերնէն չ'էր ելած
խօսք մը , զոր իւր հարազատ դասեր չը կա-
րենար ըսել :

Միայք չունինք մեր դիւցազնուհւոյն ի'նչ ըլ-
լալը ծածկելու Ուրեմն քանի որ 'ի Պանիէր էր,
գըսին տուած խոստմունքը դիւրաւ կրցեր էր
պահել , բայց 'ի Բարիդ վերադառնալուն պէս
անկարգ կենաց , պարահանդէսներու եւ շուայ-
տութեանց եւս սովորած ըլլալով մահ երեւ-
ցաւ իրեն այդ առանձնութիւնը , զոր պիտի
աղմկէին գըսին կանոնաւոր այցելութիւնները
միայն . եւ իւր անցուցած կենաց հրատապ
խորշակը կը փչէր դիտոյն եւ սրաին վրայ մի-
անդամայն :

Այս ալ դիտնալու է որ Մարգարիտա այն
ուղեւորութենէն առաջուրնէ աւելի դեղնց-
կացած վերադարձեր էր . քան տարեկան էր .
եւ իւր թմրած այլ ոչ յաղթուած հիւանդու-
թիւնն անդադար կը վառէր 'ի նա այն հրա-
տոչոր փափաքներն , որք դրեթէ միշտ կրժից
ախտերու հետեւանք են :

Գուքան հետեւաբար մեծապէս վշտացաւ եր-
բոր իւր բարեկամները , որ միշտ դարանակալ
էին գայթակղական բան մը գտնելու համար
կնական վրայ , որոյ պատճառաւ ծերունին իւր
համբաւը կորուսելու վրայ է , կ'ըսէին , եկան
խմացուցին որ Մարգարիտա օտարներ կ'ըն-
դունի եղեր իրեն հոն չը գտնուած ատենը ,
եւ թէ այս այցելութիւններն յաճախ մինչեւ
երկրորդ առաւօտ կը տեսնեն եղեր :

Երբոր գուքան հարցուց զայս Մարգարիտայի
աղջիկն անկեղծութեամբ ամեն բան խոստո-
ւանեցաւ , ու յորդորեց նաեւ ծերունին որ ալ

Թողու զինքը, որովհետև այնուհետև չէր կր-
նար տուած խօսքը պահել, եւ չէր ուզեր վա-
յելել մարդու մը բարերարութիւնը, զոր կը
խարէր :

Ի ուրքսն ութ օր չ'երևցաւ. բայց անկէ աւե-
լի չը կարենալով դիմանալ՝ ութ երորդ օրն եկաւ
Մարգարիտայի աղաչեց որ առաջուան պէս
դարձեալ ընդունի զինքը, խոստանալով միան-
դամայն՝ նորա որ եւ է ըրածներուն վրայ աչք
դոցելու, միայն թէ կարենայ տեսնել զնա.
Եւ երդուաւ ամենեւին չը կշտամբել զնա՝ թէ-
պետև նորա վարած անկարգ կեանքը մահա-
ռիթ հարուած մ'էր իրեն համար :

Այս էր իրաց վիճակը Մարգարիտայի 'ի Բա-
րիզ վերադառնալէն երեք ամիս յետոյ՝ այսինքն
1842 տարւոյն նոյեմբեր կամ դեկտեմբեր ամ-
սոյն մէջ :

5994 P. 161



Գ.

Վերոյիշեալ ամսոյն 16րդ. օրը «ա՛նթէն»
փողոցը դացի :

Կառաց դռնէն կը լսուէին գնահատ գոր-
ծակալաց ձայները :

Օթեւանը հետաքրքիրներով լեցուն էր :
Հոն էին ամեն պճնազարդ ու համբաւեալ
սղջիկները, զոր ցասամաք կը դիտէին մի քանի
սղնուազդի կանայք, որք վաճառումը դար-
ձեալ պատրուակ բռնելով եկեր էին մօտանց

դիտելու համար այն կիները, որոց հետքը
նուրբ գուցէ մէկ մ'ալ առիթ պիտի չունեն-
նային, եւ գուցէ 'ի ծածուկ կը նախանձէին
նոցա դիւրաձեռն բերկրութեանց վրայ:

Եթէ ընթերցողներս ճանճրացունելէ չեր-
կրնչէի, կրնայի այն սրահին մէջ ժողովեալ
կանանց անուններուն սկզբնատառերը նշա-
նակել. այս միայն աւելցնեմ որ նոքա կը զար-
մանային զիրար մէկտեղ դռնելնուն վրայ:

Հոն եղող անձինք ուրախ դուարթ էին եւ
կանանց դրեթէ շատերը ճանչեր էին մեռեալը,
դոր կարծեմ բնաւ չէին յիշեր:

Ամեն մարդ կը ծիծաղէր. գործակալները
քարճրաճայն կ'աղաղակէին. վաճառականք,
որ վաճառաց սեղաններուն առջեւ դրուած
նստարանները գրաւեր էին, 'ի գուր լռութիւն
կը պահանջէին՝ իրենց գործերը հանդարտու-
թեամբ տեսնելու համար: Այնքան այլազան
անձինքներէ բաղկացեալ ու բազմազոյ ժողով
մը տակաւին չէի տեսած:

Խոնարհութեամբ ամբոխին մէջ սպրդելով
դիտելի մտածելով որ այն խցին քով կ'աղա-
ղակէին՝ յորում վախճաներ էր հէզ աղջիկը,
որոց կան կարասիքը կը վաճառէին պարտքերը
հատուցանելու համար: Աւելի դիտելու քան
թէ գնելու համար եկած ըլլալովս՝ կը նայէի
վաճառել տուողներուն, որոց դէմքը կը դուար-
թանար երբ նիւթ մը անակնկալ գնով մը վա-
ճառուելու ըլլար:

Այդ արդարակորով մարդիկը Մարգարիտայի
անատակութենէն օդուտ քաղելով հարիւրին
հարիւր շահեր էին, եւ նորա կենաց վերջին
վայրկեաններն ալ դրսչմեալ թղթերով խոս-

վելէ յնսոյ իրենց պատուաւոր հաշիւնե-
րուն պտուղները եւ միանգամայն ամօթալի
շահերը քաղելու նպատակաւ եկեր էին հոն
նորա մեռնելէն վերջը :

Արդարեւ նախնիք իրաւունք ունին եղեր
դողերու եւ վաճառականներու համար մէկ
Աստուած միայն ճանաչելու :

Պարեգօտները , կաշմիրները եւ գոհարներն
անհաւատալի արագութեամբ վաճառուեցան :
Ասոնցմէ մէկն ալ ինծի չեր դար . ուստի ըս-
պասեցի տակաւին :

Յանկարծ լսեցի ճայն մը՝ որ կ'աղաղակէր
ու կ'ըսէր . « Մանօն Ախոօ » , փառաւոր կապ-
մուած եւ սակեղօծ հասոր մը . « առաջին թըղ-
թին վրայ ձեռագիր մը կայ » : Տա'սը Քրանդ :

— Տա'սներկու , ըսաւ մէկը , երկարատեւ
լռութենէ մը վերջը :

— Տա'սն եւ հինգ , ըսի ես ալ , չեմ գիտեր
ինչո՛ւ , անչուչա այն ձեռագրին համար :

— Տա'սն եւ հինգ , կրկնեց գնահատ դուր-
ծակալը :

— Երեսուն , ըսաւ նախ գինն աւելցընող
մարդը՝ կարծես թէ ապահով էր ուրիշներուն
ա՛լ չը բարձրացունելուն վրայ :

Ասի գրեթէ կռիւ մը դարձաւ :

— Երեսունեւհինգ , աղաղակեցի ես ալ
նոյն եղանակաւ :

— Քառասո՛ւն :

— Յիսո՛ւն :

— Աւթսո՛ւն :

— Հարի՛ւր :

Եթէ տպաւորութիւն մ'ընել խնդրէի հոն
գանուող մարդկան վրայ՝ շատ աղէկ կը յաջու-

դէր . վասն զի վերոյիշեալ յաւելումէն յետոյ՝
խորին լռութիւն մը տիրեց սրահին մէջ , եւ
ամեն մարդ ինձ նայեցաւ իբր զխնայու հա-
մար թէ , ինչո՛ւ այն մատեանն անվրէպ ստա-
նայ կ'ուզէի :

Ա՛րեւի թէ վերջի ըսած բառս հակառա-
կորդս համոզեր էր . քանզի աւելի ընտրեց
զադրեցունել այն կռիւը , որ ուրիշ բանի
պիտի չը ծառայէր ինձ բայց եթէ գրքին ար-
ժէքին տասնապատիկը վճարել . ուստի բարե-
ւելով զիս , շնորհալի կերպով մ'ըսաւ , թէ-
պէտեւ անաղան :

— Տէ՛ր իմ , տեղի կ'ուտամ ձեզ :

Այ ոք բան մը ըսած ըլլալուն համար՝ մատ-
եանն ինձ ինկաւ :

Բայց վախնալով միայնդամայն որ չըլլայ թէ
ուրիշ հակառակորդ մ'ելնէ , որոյ հետ աչ
գուցէ կռուելով՝ քսակս գէշ վճակի մէջ ընկ-
նի , անունս գրել տալէն յետոյ զիբքը մէկ-
դի գնել տուի , եւ վար իջայ : Ականատեսք
արդեօք ինչե՛ր ըսեր էին հարիւր Ֆրանզ վը-
ճարելս տեսնելով մատենի մը համար , զոր
ամենուրեք տասն կամ շատ շատ տասնեւհինգ
Ֆրանզով կրնայի գնել :

Ժամ մ'անցնելէն յետոյ՝ մարդ խրկեցի հա-
տորն առնելու համար :

Առաջին էջին վրայ նուիրողը գեղեցիկ
դրով հետեւեալը գրած էր :

« ՄԱՆՈՆ ԱՌ ՄՍՐԳԱՐԻՏՍ ,

« ԽՈՆԱՐՀՈՒԹԻԻՆ • »

Ստորագրութիւնն էր « Սրման Տիւփալ : »

Ի՞նչ կը նշանակէր «խոնարհութիւն» բառը :

Մանոն՝ ըստ կարծեաց Պ. Սրման Տիւփալի՝

չուայտութիւնս կամ սիրոյ մէջ դերադանց կը համարէր արդեօք զՄարգարիտա :

Նրկորդ մեկնութիւնն աւելի հաւանական էր , որովհետեւ Մարգարիտա , իւր վիճակին պիտակցութեամբն հանդերձ , անշուշտ չ'էր ընդունէր զառաջինը՝ լիրք պարզախօսութիւն մ'ըլլալուն համար :

Գարձեալ դուրս ելայ , եւ դիչերը պառկելէս վերջն ալ՝ երկար ատեն այս բաներուս վրայ խորհեցայ :

Ինձ քաջածանօթ Մանօն Լէսգոյի պատմութիւնն անտարակոյս խիստ սրտաշարժ է . անոր համար երբ այն մատեանն աչքիս հանդիպի՝ համակրութեամբ կը հակիմ առ այն , կը բանամ գիրքը , ու վերստին կը տեսնեմ Նրէվօ երէցին դիւցադնուհին : Սրդ՝ այն դիւցադնուհին ա՛յնքան իրական կերպարան մ'ունի , որ կարծեմ թէ ճանչեր եմ զնա : Ս. յն նորահաս հանդամանաց ժամանակ՝ Մարգարիտայի եւ Մանոնի մէջ եղած համեմատութիւնն անակրնկալ կերպով կը հրապուրէր զիս այդ մատեանն կարդալու , եւ ներողամտութիւնս աւելցաւ 'ի գթութենէ՝ գուցէ առ սէր չարաբաստիկ Մարգարիտայի . որոյ ժառանգութենէն ստացեր էի այն հատորը : Մանոն անապատի մէջ մեռեր է , բայց զինքը պաշտող մարդուն բազկացը մէջ , որ նորա վախճանելէն յետոյ դերեզման մը փորեր է՝ թրջելով զայն իւր արտասուօքը , եւ հոն թաղեր է իւր սիրտը : Իսկ Մարգարիտան՝ Մանոնի պէս մեղաւոր լինելով եւ գուցէ նորա պէս դարձի դալով մեռեր էր (ինչպէս որ տեսածներէս կ'երեւի) 'ի ծոց շքեղաշուք գեղջութեան եւ առջի անկողնոյն

մէջ, բայց նաեւ սրտի անապատին մէջ, որ
առաջ ամայի, առաւել լայնատարած եւ ան-
տանելի է քան զայն՝ յորում թաղուած էր
Մանոն :

Արդարեւ Մարգարիտա ճշմարիտ միսիթա-
րութիւն մը չէր ունեցած իւր երկարատեւ եւ
ցաւալից հողեւորքին ժամանակ, որ ամբողջ
երկու ամիս տեւած էր, ինչպէս որ իմացեր
էի նորա կենաց վերջին հանդամանաց տեղեակ
եղողներէն :

Կը յիշէի նաեւ Մանոնի եւ Մարգարիտայի
նմանները, որք զուարթ երգերով զէպ 'ի ան-
փոփոխ մահը կը դիմէին :

Հէ՛ղ արարածներ : Պէտք չէ սիրել զանոնք,
բայց զաւելու է նոցա վրայ : Կը զթագ կուրին
վրայ՝ որ ամենեւին չէ տեսած արեղին ճա-
ռագայթները, խլին՝ որ երբէք չէ լսած բը-
նութեան ներդաշնակութիւնքը, համբին՝ որ
բնաւ չէ կրցած իւր հողւոյն ճայնը լռեցունել-
բայց պարկեշտ երեւելու սուտ պատրուակաւ
չէք ուզեր գորովիլ սրտի կուրութեան, հողւոյ
խլութեան եւ խղճի մտաց համբութեան վրայ,
որ վշտաբեկ թշուառուհին յիմարացունելով
ակամայ անկարող կ'ընեն զնա տեսնելու բարին
լսելու Սատուծոյ ճայնը եւ խօսելու սիրոյ եւ
հաւատոյ նուիրական լեզուաւ :

Հիւկօ գրեր է զՄարիոն աը Լորմ, աը Միւսէ՝
զՊոռնըրէթ, Աղեքսանդր Տիւմա՝ զՅէռնանտ,
եւ ամեն գարուց իմաստասէրք ու քերթողք
մատուցեր են առ անառակ կիսն իրենց գը-
թութեան նուէրը եւ երբեմն ալ բարեւիրտ եւ
վեհանձն մարդ մը դարձի բերեր է զանոնք,
իւր սիրովը եւ ամուսնութեամբն իսկ :

Այս բաներուս վրայ երկար ճառելու էի՝ վասն զի ընթերցողներէն շատերը գուցէ մէկ-դի նետեն այս մատեանը, անառակութեան եւ ցոփութեան գովեստը տեսնելու վախով, որոյ հեղինակին տարիքն ալ անշուշտ իրաւունք պիտի տայ իրենց այնպէս ընելու: Բայց այդ երկիւղը վարատելով թող անվախ շարունակեն կարդալու:

Հաստատապէս համոզուեր եմ որ դաստիարակութեամբ դբարին չ'ուսած կնկան առջեւ Աստուած առ բարին տանող երկու ճանապարհ կը բանայ, որք են վիշտ ու սէր: Այն ճանապարհաց հետեւողները դժուարաւ կը քայլեն, արեամբ կը թաթաւեն իրենց ուրբերը, ձեռքերնին կը պատառեն, բայց կը թողուն միանգամայն փուշերուն վրայ անառակութեան դարդերը եւ նպատակին կը հասնին մերկ, ընդ որ չ'են ամաչեր առաջի Տեառն:

Այն յանդուգն ուղեւորներուն հանդիպողները պարտաւոր են օգնել, եւ ուրիշներուն ըսել նաեւ թէ տեսան զնոսա, վասն զի զայս հրատարակելով ճանապարհը ցուցած կ'ըլլան:

Բաւական չ'է 'ի մուտս կենաց երկու ձող դնել ու մէկուն վրայ, « Այս է ճանապարհ բարւոյ », եւ միւսին վրայ, « Այս է ճանապարհ չարի » զրել. ու չը բաւեր դարձեալ եկողներուն « Ընտրեցէք » ըսել միայն, այլ պէտք է Բրիտանոսին պէս՝ չարէն առ բարին հանող ճամբան ցուցնել 'ի սկզբանէ անդ խաբւողներուն, եւ մանաւանդ պէտք չէ որ այն ճամբուն ըսկիզբը յոյժ ցաւալից կամ անմատչելի երեւի:

Բրիտանոսութիւնն անառակ որդւոյն հրաշայի առակովը կը յորդորէ զմեզ 'ի ներողա-

մտութիւնս եւ 'ի թողութիւնս : Յիսուս յոյժ կը
սիրէր մարդկային կրիւք վիրաւորեալ հոգիներ
ը . եւ կ'ախորժէր նոցա վէրքերը բուժել
փրկարար բալասանը դնելով նոցա վրայ : Ուս-
տի Մազդազինէին կ'ըսէր . « Թողեալ վիցին
քեզ մեզք քս բազում , զի յոյժ սիրեցեր : »
Վսե՛մ եւ հաւատարե՛ր թողութիւնս :


Ինչո՞ւ Քրիստոսէ աւելի անաչառ ըլլանք ,
ինչո՞ւ յամառութեամբ յարինք կարծեաց այս
աշխարհիս , որ դորաւոր կարծուելու համար
խատարաութիւնս կը ցուցնէ , եւ մերժենք այն
հոգիները , որոց արիւնը կը վազէ 'ի վիրաց ,
ուսկից՝ հիւանդի մը գէշ արեանը պէս՝ կը հո-
սին անցեալ ախտերը , եւ կ'սպասեն եւեթ
նպատաւոր ձեռքի մը՝ որպէս զի զիրենք բը-
ժըշկելով՝ սրտի ապաքինութիւնը պարզեւէ ի-
րենց :

Խօսքերս ժամանակակիցացս կ'ուզղեմ , որոց
համար Վօյթէրի վարդապետութիւններն ա՛յ
բարեբախտաբար էութիւնս չ'ունին , եւ որք՝
ինձ նման՝ կ'իմանան որ մարդկութիւնը տաան
եւ հինգ դարերէ 'ի վեր յանդուգն ընթացքով
մը կը յառաջէ :

Վ՛լ ստացեր ենք բարւոյ եւ չարի գիտու-
թիւնը . հաւատքնիս կը նորոգուի , նուիրական
իրաց դարձեալ յարգութիւնս կը մատուցանենք .
եւ աշխարհս լաւագոյն կը համարուի՝ եթէ ոչ
բոլորովին լաւ : Սմեն հանճարեզ մարդկան
Չանքը մի եւ նոյն նպատակի համար է , եւ ա-
մեն ազնուատոհմ անձինք մի եւ նոյն սկզբանոց
կը հետեւին , այսինքն , բարեւէր՝ իրաւախոս
եւ ճշմարտախօս ըլլալ Չարի վրայ պարծիլը ու-
նայնութիւնս է , պէտք է բարւոյ վրայ պարծիլ ,

եւ մանաւանդ չը յուսահատիլ : Չ'արհամարհել
ոչ մայր՝ ոչ քոյր՝ ոչ ամուսին եղող կիները :
Չը մեծարել ինքնամոլութեամբ զընտանիս մի-
այն : Եւ որովհետեւ երկինք առաւել կ'ուրա-
խանայ մեղաւորի մը դարձին վրայ՝ քան հա-
րիւր արդարներու , ջանանք ուրեմն ուրախա-
ցընել զերկինս , վասն զի ատկուօք կը վար-
ձատրէ զմեզ : Բաշխենք ճանապարհին վրայ
ներման ողորմութիւնը նոցա առջեւ , որք երկ-
րաւոր ջանկութիւններով կորսուած են , եւ
թերեւս փրկուին երկնառաք յուսով մը , ինչպէս
որ բարեմոյն պառաւներն իրենց տեղերնէն
մէկն ըսելնէն յետոյ կ'աւելցունեն . եթէ ասի
օգուտ մը չընէ , մնաս մ'ալ չը պատճառեր :

Ներկայ փոքրիկ նիւթէս այս հետեւանքները
քաղել ուղելս անտարակոյս յանդուղն բան մը
թուի . բայց ես կը հաւատամ թէ ամենայն
ինչ 'ի սակաւուց ամփոփուած է : Մանուկը փոքր
էակ մ'է , սակայն զմարդ կը պարունակէ .
ուղեղն անձուկ , բայց մտաց պատասխարան է .
աչքը կէտ մ'է , սակայն փառսախներով տեղեր
կ'ամփոփէ :



Բ.

Վաճառու մը , որ հարիւր յիսուն հազար ֆր-
րանք բերէր էր , երկու օրէն աւարտելով ,
պարտատեարք մէջերնին բաժնեցին զուճարին
երկու երրորդը , իսկ մնացածն ալ ընտանիքը ,

այսինքն՝ քոյրը եւ մանկահասակ քեռորդին
ժառանգեցին :

Քոյրն ապշած մնաց երբ գործակալն խնայեց յիսուն հազար ֆրանք ժառանգելը :

Վեց կամ եօթը տարիէ 'ի վեր տեսած է' էր իւր քոյրը , որն որ օր մը փախեր էր , եւ այն ատենէն 'ի վեր ոչ անկէ եւ ոչ ուրիշներէն տեղեկութիւն ունեցեր էր նորա կենացը վրայ :

Փութով 'ի Ֆարիզ եկաւ , եւ Մարգարիտայի ծանօթները դարմացմամբ տեսան որ նորա ժառանգորդը՝ գիրուկ եւ գեղեցիկ շինական աղջիկ մ'էր , որ մինչեւ այն ատեն իւր աւանէն դուրս չէր ելած :

Յանկարծ հարատացաւ , առանց գիտնալու այն անակընկալ բարերատութեան աղբիւրը :

Յետոյ լսեցի որ իւր դիւղը վերադարձեր էր , քրոջը մահուանը վրայ ողբալով , բայց առ հարիւր 4 1/2 շահով գետեղած արծաթովը լիտարինեալ :

Այս հանդամանքները տեղի ունենայէն յետոյ 'ի Ֆարիզ' 'ի մայրաքաղաքն գայթակղութեանց՝ սկսեր էին մոռցուիլ . եւ մինչ ես ալ մոռնալու վրայ էի թէ ինչ կերպով վերոյիշեալ գիպացս մէջ գտնուեր էի , ահա նոր գիպուածով մ'իմացայ Մարգարիտայի սրտաչարժ պատմութիւնը , զոր մեծ ախորժով գրեցի :

Երեք կամ չորս օրուքնէ 'ի վեր այն աղջկան բնակարանը պարպուած եւ վարձու տրուած էր , երբ առաւօտ մը դուռս զարնուեցաւ :

Մատառ , կամ մանաւանդ դոնապանս՝ զոր ծառայի տեղ ալ կը գործածէի , գնաց դուռը բացաւ եւ թուղթ մը բերաւ ըսելով թէ զայն իրեն տուող անձը կը փափաքէր ինձ հետ խօսիլ :

Թղթին վրայ գրուած էին հետեւեալ բառերը
ԱՐՄԱՆ ՏԻՒՎԱԼ :

Քիչ մ'առեն խորհելէն յետոյ յիշեցի Մանօն
Լէսգոյի առաջին թերթը :

Ինչ, արդեօք կրնա՞ր յինէն խնդրել այն
մատեանը Մարգարիտայի նուիրող անձը, զոր
ներս հրամցունել առի :

Տեսայ այն առեն բարձրահասակ եւ դունստ
երիտասարդը՝ որ ճամբորդի զգեստ հագած
էր, եւ կ'երեւի թէ մի քանի օրուքնէ 'ի վեր
չ'էր հանած, ու չ'էր մաքրած զայն 'ի ճարիտ
հասնելէն յետոյ, որովհետեւ փոշելից էր :

Պ. Տիւվալ՝ սաստիկ յուզեալ ըլլալով, ամե-
նեւին չը ջանաց իւր այլայլութիւնը ծածկելու,
եւ արտասուածոր աչօք ու դողդօջուն ձայ-
նիւ մ'ըսաւ .

— Տէ՛ր իմ, կադաչեմ՝ ներէիք իմ գալուս
եւ այս զգեստներով ներկայանալուս համար .
բայց գիտնալով որ երիտասարդք իրենց մէջ
իրարմէ շատ չ'են ակնածիր, եւ փախաքելով
նաեւ այսօր զձեզ տեսնել, վախցայ որ չըլլայ
թէ ժամանակս կորուսնեմ երթալով 'ի պան-
դոկ՝ ուր որ սնտուկներս գրկելէս յետոյ՝ փու-
թով եկայ որպէս զի գտնեմ զձեզ ,

Ազաչեցի Ս. Տիւվալին որ կրակին մօտենայ-
բաղմեցաւ ու միանգամայն գրպանէն թաշկի-
նակ մը քաշելով պահ մը դէմքը ծածկեց :

— Չ'էք հասկնար անշուշտ, ըսաւ տխրու-
թեամբ ժպտելով, թէ անծանօթ այցելուս ինչ
կը խնդրէ ձեզնէ այս ժամուս, եւ ճամբորդի
զգեստներով ու արտասուելից աչօք ձեր առ-
ջին ներկայանալով : Տէ՛ր իմ, մեծ ծառայու-
թիւն մը խնդրելու համար եկայ :

— Խնդրեցէք , Տէ՛ր իմ , պատրաստ եմ դայն
կատարելու :

— Մարդարիտա Աօթիէին կարասեաց վա-
ճառման դայի՞ք :

Այս խօսքիս՝ սրտին այլայլութիւնը՝ դոք
պահ մը սանձեր էր՝ դարձեալ դայրանալով
սկսաւ արտասուել :

Արդեօք քանի՛ ծագրելի երեւելու եմ ձեզ
աւելցուց . ներեցէ՛ք , Տէ՛ր իմ , եւ հաւատացէ՛ք
որ բնաւ պիտի չը մոռնամ ձեր համբերութիւնը՝
որով կը հաճիք ունկնդիր լինիլ ինձ :

— Տէ՛ր իմ , պատասխանեցի , եթէ այդ ծա-
ռայութիւնը՝ որոյ կարող կը դատէք զիս՝ կա-
րենաց սակաւ մի ախտիւ ձեր վիշտերը , ըսէք
ինձ շուտով թէ ի՞նչ կերպով կրնամ մատու-
ցանել դայն . եւ դիտցէ՛ք որ ձեզ բարիք մ'ը-
նելը երջանկութիւն պիտի համարիմ ինձ :

Պ. Տիւվային վիշտքը համակրութիւն ազդե-
լով յիս՝ կը փափաքէի անոր օգտակար ըլլալ :

Հարցուց ինձ այն ատեն եւ ըսաւ .

— Մարդարիտայի վաճառած իրերի՞ն բան
մը գնե՞ր էք :

— Այո՛ , Տէր իմ , մատենան մը :

— Մանօն Ախոօն :

— Այո՛ :

— Քովերնի՞դ է տակաւին այդ մատենանը :

— Պառկելու սենեակս է :

Արման Տիւվայ դայս լսելով կարծես մտատան-
ջութեմէ մ'աղատած՝ շնորհակալ եղաւ ինձ իր-
բեւ թէ յառաջուց ծառայութիւն մը մատուցած
ըլլայի իրեն այն մատենանը պահած ըլլալով :

Այն ատեն խուցս երթալով առի՛ գիրքը եւ
առի իրեն :

— Այս իսկ է, ըսաւ նայելով առաջին էջին
մէջ գրուած ընծայման խօսքերուն եւ մատեն-
նին թղթերը դարձունելով. ա'յս իսկ է :

Եւ արտասուաց երկու խոշոր կաթիլներ ին-
կան էջերուն վրայ :

— Իսկ արդ, Տէ'ր իմ, ըսաւ աչերը վեր-
ցունելով գրքին վրայէն, եւ առանց արտասու-
քը ծածկելու, միթէ այս մատենէս բաժնուիլ
չ'է՞ք ուղեր :

— Ինչո՞ւ կը հարցունէք :

— Որովհետեւ ձեզնէ զայս խնդրելու հա-
մար եկայ :

— Ներեցէ՛ք հետադրողութեանս, ըսի այն
ատեն. դո՞ւք ուրեմն ընծայեր էիք զայս Մար-
դարիտա Աօթիէի :

— Ես ինքն :

— Աւասի այս մատենար ձերն է, Տէ'ր իմ,
առէ՛ք. եւ զայս ձեզ վերադարձունելով եր-
ջանիկ կը համարիմ զիս :

— Բայց, կրկնեց Պ. Տիւփալ տաղնապետ
մը, գոնէ վճարեմ գինը՝ որով դ'ներ էք :

— Թոյլ տուէք որ ընծայեմ ձեզ զայս : Հա-
տորի մը գինն ոչինչ բան մը կը համարուի այդ-
պիսի վաճառման մը մէջ. ասկէ զառ չ'եմ
յիշեր թէ քանիով առեր եմ :

— Հարիւր ֆրանգ վճարեր էք :

— Արդարեւ, ըսի ես ալ տաղնապետով,
ուստի՞ գիտէք :

— Շատ պարզ կերպով իմացայ զայս : Կը
յուսայի հասնիլ 'ի Բարիդ Մարդարիտայի կա-
րասեաց վաճառման ատեն, քայց այս առա-
ւօտ միայն կրցի հասնիլ : Կ'ուղէի նորա եղած
իրերէն մին անհրաժեշտ ստանալ. անոր հա-

մար վաղեցի գնահատ-վերատեսչին հրաման
խնդրեցի վաճառուած նիւթոյ եւ գնողներուն
անուանոց ցանկն աչքէ անցունելու : Տեսայ որ
դուք գներ էք այս մատեանը, ուստի որոշեցի
աղաչել ձեզ որ ինձ տաք զայս, թէպէտեւ
ձեր տուած գինն խմանալով կը վախճայի որ
չ'ըլլայ թէ դուք ալ որ եւ է յիշատակի մը
պատճառաւ այս հատորը պահել ուղենաք :

Կ'արժեմ Սրման կը կասկածէր որ ես ալ
«իրեն պէս» ճանչցած ըլլամ զՄարգարիտա :

Ուստի գինքն ապահովելու համար փութով
ըսի :

— Տեսութեամբ միայն ճանչեր եմ զօրիոր-
դըն Աօթիէ : Կորս մահը լսելով ցաւեցայ վը-
րան, ինչպէս որ երիտասարդ ոք կը ցաւի դե-
ղեցիկ կնկան մը մահուանը վրայ : Ուղեցի բան
մը գներ, եւ յամարութեամբ այս հատորիս գի-
նը հետզհետէ բարձրացուցի, չը գիտեմ ինչու
համար, գուցէ մէկը կատղեցընելու նախառա-
կաւ որ կը համառէր այս մատեանը ձեռք ձը-
գելու : ուստի ես ալ դրդուելով ջանացի
զայս ստանալ : Կ'արժեալ կը կրկնեմ, Տէ՛ր իմ,
այս գիրքը ձերն է, եւ վերստին կ'աղաչեմ որ
ընդունիք զայս, որպէս զի յինէն առած չը-
համարուիք գնահատ-վերատեսչին առնելնուս
նման, եւ որպէս զի ասի՝ իբր առհաւատչեաց
մ'ըլլայ երկարատեւ բարեկամութեան եւ մը-
տերմական յարարերութեանց :

— Լա՛ւ ուրեմն, Տէ՛ր իմ, ըսաւ Սրման
ձեռնս սեղմելով, կ'ընդունիմ, եւ բոլոր կե-
նացս մէջ շնորհապարտ պիտի ըլլամ ձեզ :

Շատ կը փափաքէի Մարգարիտայի վրայ
քանի մը բան հարցունել իրեն, որովհետեւ

մատենին մէջ գրուած ընծայման խօսքերը :
երիտասարդին ուղեւորութիւնը եւ այն գիրքն
ստանալու ցուցած փափաքը հետագրգռու-
թիւնս կ'աճեցունէին , բայց կ'երկնչէի նաեւ որ
հարցմունքներ ընելովս՝ չ'ըլլայ թէ այցելուս
կարծեր որ իւր արծաթը մերժելով՝ կ'ուզէի
իրաւունք ունենալ իւր գործոց խառնուելու :

Կարծես գուշակեց իմ փափաքս եւ ըսաւ :

— Կարդացե՞ր էք այս մատենանը :

— Ս.մբողջ :

— Ի՞նչ մտածեցիք իմ գրած երկու տողիս
վրայ :

— Հասկցայ շուտ մը որ ըստ ձեր դատո-
ղութեան այն դժբախտ աղջիկը՝ որոյ ընծայեր
էք դայս՝ սովորական դասակարգութենէն կը
խոստորէր , վասն զի չ'ուզեցի անարգական դո-
վեստ մը համարել այն գրուածը :

— Իրաւունք ունէիք : Տէ՛ր իմ : Հրեշտա-
կանման աղջիկ մ'էր անի : Առէ՛ք կարդացէք
այս թուղթը :

Իացի դայն ու կարդացի հետեւեալ տողերը :
« Սիրեցեալդ իմ Արման , ընդունեցի քու
թուղթդ : Սրտարեւ միշտ բարեսիրտ ես դու ,
ընդ որ շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ : Այո՛ ,
բարեկամս , հիւանդ եմ , եւ այնպիսի հիւան-
դութիւն մ'է սա՛ յորմէ աղատիլ չ'ըլլար . բայց
իմ վրայ տակաւին ունեցած սէրդ մեղմացուց
ցաւերս : Անշուշտ մտալուտ մահը պիտի չը-
թողու որ կարենամ սեղմել քու աջդ՝ որ գրեց
այն գորովալիլ թուղթը , որոյ խօսքերը կը
բժշկէին զիս , եթէ բան մը կարող ըլլար բը-
ժշկել զիս : Պիտի չը տեսնեմ դքեդ , որովհետեւ
մահս մօտեցեր է եւ հարիւրաւոր մղոններ կ'ան-

շատենս դքեղ յինէն : Բարեկամս , տեսնե՛ս՝ քու
առաջին Մարգարիտադ , որչա՛փ փոխուած է .
այլ լաւ է քեզ չը տեսնել ամենեւին քան հի-
մակուան վիճակին մէջ տեսնել դնա : Ար հար-
ցնես ինձ թէ՛ ներե՛ր եմ քեզ . այո՛ , բողոքով
սրտիւ , բարեկամս , վասն զի քու իմ վրաս
դործած վրէժխնդրութիւնդ ալ սիրոյդ նշանն
էր : Ամսէ՛ մ'ի վեր յանկողին ինկած եմ , եւ
քու մեծարանքդ ստանալու դիտաւորութեամբ
իրարմէ բաժնուելնէս 'ի վեր ամեն օր կը դրեմ
կենացս օրագիրը , եւ մինչեւ որ դօրութիւնս
պակասի շարունակ պիտի դրեմ :

« Արմա՛ն , եթէ՛ ուղես բարիք մ'ընել ինձ ,
եւ երբ դառնաս 'ի Բարիդ՝ դնա՛ ծիւլի Տիւփ-
րային , եւ իրմէ՛ այն օրագիրն առ . դայն կար-
դալով կ'իմանաս մեր բաժանման պատճառն
ու չքմեղը : Բարեսիրտ ծիւլին քովէս չը հե-
ռանար . ստե՛պ կը խօսինք քու վրադ : Լալով
կարդացինք քու թուղթդ :

« Արպիտութիւնդ ինձ չ'իմացուցած ալ ըլլայիր
ծիւլի յանձն առեր էր քեզ տալու այն թղթ-
թերը 'ի Տրանսա համեւուդ պէս : Ասոր հա-
մար երախտագէտ մի՛ ըլլար ինձ , որովհետեւ
այս կերպով դարձեալ կը յիշեմ իմ կենացս
ճշմարիտ բարեբաստ վայրկեանները , եւ այսու-
մեծապէս կը սիրտիմ . դու պիտի դանես այն
թղթերուն մէջ բրածներուս չքմեղը , իսկ ես
դնոսա կարդալով՝ շարունակ կը մխիթարուիմ :

« Ա՛ռդէի քան մը թողուլ քեզ՝ որպէս զի
միշտ յիշես զիս , բայց բնակարանիս մէջ ամե-
նայն ինչ դրաւեալ ըլլալով՝ ոչինչ ունիմ :

Այո՛ , բարեկամս , պիտի մեռնիմ , եւ պառ-
կած խուցէս կը լսեմ սրահին մէջ շրջող պա-

Հառաչանիսն քայլերուն ձայնն դոր արարատանար
քրա հոն գրեթե են՝ արախն զի քան մը չը վեր-
ցուի, եւ առողջանայ եւ վերջն ալ քան մը չու-
նենաւ: Առկայն զը յուսամ որ փաճառելու
համար մահուանաւ ազատեն:

« Ա՛հ, որչա փ անողորմ են մարդիկ. բայց
քչ, կը սխալիմ, Աստուած է միայն այդ արա-
կորով եւ անողորմ: »

« Աւարտ, սիրելեացք իմ Աստուծ, կ'աղեմ
որ վերադառնաս հոս եւ իր մը գնեաւ կարա-
ւեացա փաճառելու առեն, որովհետեւ եթէ
քեզ համար քան մը պահեմ եւ թէ իմացուի,
կրնան դքեզ անգամառանել իցը դոդ գրառեալ
իրաց: »

« Ենչպիսի՞ արեւուայից կեանքէ մը պիտի ա-
ղաարիմ: »

« Որչա փ աղէկ կըլար՝ թէ որ ոգորեւածն
Աստուած թող տար ինձ անունել դքեզ մեռ-
նելէս առաջ, բայց կարծեմ թէ պիտի չը կա-
րենաւ: Բարեւա՛ւ մնաս, ուրեմն բարեկամս,
նկրողամիտ եղիր առաւել երկար չը դրելուս
համար, փառն զի առողջացուեալ կ'աիծարկելը
անհոչա՛ փ անկարացուցին զիս երակահատու-
թեամբ՝ որ ձեռքս առելի չը կրնար դրել: »

« Մարդարիտա Վոթիլե. »

Յիրաւի վերջին քառերը հարկե կրնայի կար-
գալ:

Նամակը առի Մրմունիսն՝ որ անչաւչա մտքէն
կարդացեր էր դաջն՝ իմ թղթէն կարդալու ա-
ռենա, որովհետեւ առնելով դառ:

— Ո՛վ կրնայ կարծել թէ անստակ կի՞ն մը
գրած ըլլայ նամակս, եւ այս յիշատակներով
սիրտը շարժած՝ նայեցաւ քիչ մ'առեն թղթին

վրայ՝ դոր համբուրելէն յետոյ աւելցուց՝
 — Երբ մտքս կը բերեմ թէ չը կրցի անանեջ
 դինքը մահու ընէն առաջ եւ թէ ա՛յ ամենեւին
 պիտի չը անենեմ . երբ մտածեմ որ ինձ հա-
 մար ըրածը՝ քոյր մը չ'էր ընելը , դինքը մեռ-
 նելու ատեն այդպէս երեսէ թողուս համար
 բնաւ չ'եմ ներել անձիս : Թշուա՛ն Մարդա-
 բխաս . մեռա՛ր դու , յիս մտածելով , եւ գը-
 բելով ինձ , եւ իմ անունս տալով :

Եւ Արման սկսաւ դեղմամբ սրտի խօսիլ ու
 արտասուել , եւ ձեռնը ինձ կարկառելով շա-
 ռունակեց :

— Տղու մը տեղ կրնան դնել զիս այդպիսի
 աղջկան մահուանը վրայ ողբալս անանելով .
 բայց ոչ ոք կրնայ հասկընալ թէ որչա՛մի վըշ-
 տացուցեր եմ ես այն կինը , եւ որչա՛մի ան-
 դթ ու թեամբ վարուեր եմ նորա հետ , մինչ
 ինքը միշտ բարեօրոյթ իւն եւ համակամութիւն
 ցուցեր է : Աարծէի թէ ինձ կիցնար իրեն նե-
 րել . բայց հիմա իւր թողութեանն անարժան
 կը համարիմ զիս : Ա՛հ , կեանքէս տասը տարի
 սիրով կը դոնէի ժամ մը յոտս նորա լալու հա-
 մար :

Միշտ դժուար եղեր է սիրովել մարդ մը ,
 որոյ մշտաց անդէտ ըլլանք . սակայն այնչափ
 համակրութիւն զգացեր էի ես այն երիտա-
 սարդին համար , եւ այնպիսի պարզախօսու-
 թեամբ եւ մտերմութեամբ կը յայանէր ինձ իւր
 վիշտերը , որ կարծեցի թէ իմ խօսքերս ան-
 աղդու չ'են մնար , ուստի ըսի :

— Չ'ունի՞ք ազդակամներ եւ բարեկամներ ,
 յուսացէ՛ք , տեսէ՛ք դանտնք՝ որպէս զի միսի-
 թ արուիք անտնցմով , որովհետեւ ես ուրիշ բան
 չ'ունիմ ձեռքս : Եւ ինչ որ խօսեցի զուրիշ

չ'եմ կրնար ընել, բայց եթէ գիտայ ձեր վրայ
 — Կրաւունք ունիք, բաւ ուր կ'ընելով եւ
 մեծաքայլ շրջելով իցին մէջ, կը ձանձրացու-
 նեմ դձեղ: Ներեցէ՛ք, չը մտածեցի որ իմ ցա-
 ւերս փոյթ կրնից չ'ըլլայու են, եւ թէ ապրո-
 կութիւն կը պատճառեմ ձեզ այնպիսի բանի
 մը վրայ խօսելով որոյ համար անտարբեր ըլ-
 լայու էք:

— Զը հասկոցաք խօսքերուս իմաստը պատ-
 բաստ եմ ծառայել ձեզ. միայն թէ կը դաւիմ
 դձեղ միսիթարելու անբաւական ըլլայուս վրայ:
 Եթէ իմ եւ բարեկամացս ընկերու թեամբը կա-
 բենաք ախտիկ, եթէ կարօտութիւն ունենաք
 ինձ ո՛ր եւ է բանի մը մէջ, զիտնաք որ հա-
 ճու թեամբ կը կատարեմ ձեր ուղածը:

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք, բաւ զիչաները
 կ'անկցունեն զգայութիւնս: Թող առէք որ
 նատիմ տակաւին պահ մը աչերս սրբելու հա-
 մար՝ որպէս զի փողոցին մէջ եղող ապուշները
 հետադրողութեամբ չը նային աղու մը պէս
 լացողիս. Շատ երջանկացուցիք զիս՝ տալով
 ինձ դմատեանս, չ'եմ գիտեր ի՞նչպէս երախ-
 տաղէտ ըլլալ ձեզ:

— Շնորհելով սակաւ մի ձեր բարեկամու-
 թեանէն, ըսի Արմանին, եւս յայանելով ինձ ձեր
 աղետից պատճառք: Մարդս կը միսիթարուի
 իւր ցաւերը ուրիշին պատմելով:

— Այդպէս է. բայց այսօր շատ կարօտ եմ
 արտասուայ, եւ թէ որ պատմելու ըլլամ ան-
 յաջորդ խօսքեր կեցնէն բերնես: Թը մը կ'ը-
 սեմ, եւ կը տեսնէք որ կրաւունք ունիմ եղեր
 այն հէզ աղճկան մահուան վրայ արտասուելու:
 Յերոց վերջին անգամ աչերը շփելով եւ հա-

յնչիսն մէջ հայեցով աւելցուց :

— Ի նչ ապուշ կերպարան ունեցեր եմ :
Իսկ արդ հրաման տուէք ինձ դարձեալ դա-
լու առ ձեզ :


— Արքան բարեօէր եւ քաղցրաբարոյ կ'երևէր
այդ երխաասարդը , դոր արդէն սիրելի սկսեր
էի :

Դարձեալ աչերը սկսան արտասուօք վեցուիլ ,
եւ անանաղա իմանալուն այնքան երկար անդին
դարձուց :

— Զօրացէ՛ք , ըսի :

— Բարեաւ մնացէ՛ք , ըսաւ ու դուրս ելաւ :

Վերուցի պատուհանիս լարագոյրը , եւ տե-
սայ կտորքին մէջ մտնելը որ դրան առջեւ կը
սպասէր . բայց հագիւ թէ մէջը մտաւ սկսաւ
դարձեալ արտասուել եւ թաշկինակովը դէմքը
ձած կեց :



Ե.

Սրմանին վրայ երկար ատեն բան մը չ'սկսցի .
բայց շահախ կը խօսուէր Մարգարիտայի վրայ :

Իտուելու բան է որ քեզ անձանօթ կամ ան-
տարրեր եղած անձի մ'անունը երբոր մի ան-
գամ լսեա՛ խեղճ այլ եւ այլ մանրամասնու-
թիւններ տակաւ կը ժողովին այն անուն
չաբջը , եւ յայնժամ բարեկամդ այնպիսի բանի
մը վրայ կը խօսի՝ դոր երբէք լսած չէիր յ'ա-
ռաջադոյն : Այն ատեն կ'իմանաս որ այդ անձը
դրեթէ մօտեցեր էր քեզ , կը լիչես նաեւ կե-

հասցոյ մէջ շատ անդամ քովէն անցած բնակարան,
 եւ պատմուած գէպքերուն մէջ քու կենացոյ
 գէպքերուն ամանց հետ նմանութիւն մը կը
 գտնուես : Իրաւ է որ ես նոյն զիճակիս մէջ չ'էի,
 մասն զի տեսեր էի զՄարդարիտան եւ նորա
 արժարութեանց տեսեալ էի, բայց այն վաճառ-
 ութ մէջն ի վեր այնչափ շտեր էի նորա անունը,
 եւ նախորդեաց զվստցն մէջ պատմուած հան-
 դամանացս մէջ այդ անունը այնպիսի արտա-
 ճրակիկ մշտաց հետ խառնուելը էր որ դարմանքս
 եւ հետագորդութիւնս միանգամայն աւելցեր
 էին : անոր համար երբոր հանդիպէի բարե-
 կամացս ամանց որոյ Մարդարիտայի զբայ ընա-
 չ'էի խօսած կը հարցունէի եւ կ'ըսէի :

— Չանչե՞ր ես Մարդարիտա կոթիտ անուանեց
 աղջիկ մը :

— Զ'կամէ վաղաք ըր Տիկնիւն :

— Այո :

— Շա՛տ :

Այս վերջի բառն այնպիսի ճակատով մը կ'ը-
 սէին որ տարակոյս չ'էի ունենար նշանակու-
 թեանը վրայ :

— Ի՞նչ տեսակ աղջիկ էր :

— Բարի աղջիկ մը :

— Վրայցածդ բոլոր ա՞յս էր, այն ժամանակ :

— Այո՛ . ի՞նչ կարծ էիր դիւրը . միայն թէ
 ուրիշ աղջիկներէ աւելի նորամիտ ու զղայուն
 էր :

— Մասնաւոր բան մը չ'ես : գիտեր նորա
 վրայ :

— Տը կ'սեպուէր սնանկացուց :

— Միայն դանի :

— Սեր դըքսի մ'ալ հարձն եղաւ :

— Նայինք իրաւ էր :

— Այնպէս կ'ըսեն . բայց սա ճշմարիտ է որ ճերմակին շատ արժանի կուտար :

Միշտ մի եւ նոյն ընդհանուր մանրամասնութիւններէն դատուիչ բան չ'էի լսեր :

Բայց հետաքրքրութեամբ կը փափաքէի Մարգարիտայի Արմանին հետ ունեցած յարաբերութեանց պատմութիւնը գիտնալ :

Օր մը հանդիպելով ծանուցեալ կանանց հետ մանրամասն ապրողներէն մէկուն հարցունքի եւ ըսի :

— Ճանչե՞ր ես զՄարգարիտա Կօթիկէն :

Նոյնպէս « շատ » պատասխանեց :

— Ի՞նչպիսի աղջիկ էր նա :

Գեղաշնորհ ու բարեւիտ աղջիկ մը : Շատ վշտացայ նորա մահը լսելով :

— Արման Տիւփալ անուամբ հոմանիս մ'ուսնեցե՞ր էր :

— Բարձրահասակ եւ խարտեշահեր երկարատաւ լող մը :

— Այո՛ : Ո՞վ է անի :

— Երիտասարդին մէկը՝ որ այն աղջկան հետ բոլոր ունեցածը վատնելէն յետոյ ստիպուեր է լքանել դնա , դոր յայտ կը սկսէ եղեր . կ'ըսեն :

— Ապա Մարգարիտա՞ն :

— Ինքն ալ նմանատէս կը սկսէ եղեր դնա , բայց ինչպէս որ այդ տեսակ աղջիկները սովոր են սիրել : Նոյն կարողութեան Մաւելի բան պէտք չ'է խնդրել անոնցմէ :

— Յետոյ ի՞նչ եղաւ Արման :

— Չը գիտեմ : Շատ չ'եմ ճանչեր դնա : Հինգ վեց ամիս Մարգարիտայի հետ գտնի մը մէջ

արարելիս եւ աղջկանս ի հարկոյ դարձանքս յե-
սոյ բոլորովին անյայտ եղաւ :

— Զր տեսաւ թ զնա այնուհետեւ :
— Ահ :

Ես ալ բաւանկանս ժամանակէ ՚ի վեր զՍր-
ման շր տեսած ըլլալուս համար կը մտածէի
թէ իբր առ իս եկած ասան Սարգարիտայի
մահուան նորահաս լուրը իբր առջի տէրն ա-
ճեցուհեւով դայրացուցեր էր սառւ վիշտերը ,
եւ թէ համոզուցելոյն հետ մտոցեր էր առ իս
դալու համար ըրած խոստմունքն ալ :

Այս երկամպրու թիւնը կրնար ուրիշի մը հա-
մար ստոյգ համարուիլ , բայց Սրմանին յու-
սածատու թեամբ եւ անկեղծու թեամբ տրարը
տեսած ըլլալուս համար կ'ըսէի սառւ ինքնիկեանս
թէ , դուցէ ցաւէն հիւանդացած ըլլալով շր
կրնար առնա դալ , եւ թէ դուցէ մեռած է :

— Ար սիրէի այս երկամպարդը : Թերեւս սիրոյն
պատճառը ինքնամոզու թիւնս էր . թերեւս այդ
պարու թեանս ներքեւ սիրոյ սրտաչարժ պատ-
ճառ թիւնս մը երկմարեր էի . դուցէ դայն դիտ-
եալու . իրախարս շատ կը նայաստեր զՍրման
տեսնելուս վրայ դդացած անձկու թեանս :

Աերջապէս որոշեցի որ ես երկամ նորա
ատենը : Գծուար է էր պատարուակ մը դանկել .
դժբախտաբար ատենը է էի դիտեր , եւ որոյ
մը հարցաւ ցեր էի նորա ալ է էին կարողացած
տեղեկու թիւնս մը առ ինձ :

«Տ'Սնթէն» փողոցը դայի յուսալով ու Սար-
գարիտայի դատարանը դուցէ դիտնայ Սրմա-
նին ո՛ր լեռակիկը : Սոր դառնադանս մը եկեր
էր , եւ անի ալ ինձ ալէս անդէս էր Ս. Սո-
ստանի հարցուցի Այոթիւն օրիորդ ին ո՛ր գերեզ-

ճանապարհորդ ոչնչ և՛ թաղաւած ըլլալը, առ իսկապէս
զայ ՚ի «Մ ճանապարհ» թաղաւած ըլլալը:

Ապրիլ ամիսն էր, օրն արդեօք ընտրուի
խորհնայնորդ գերեզմանը չ'ունենալու էին այն
տխրաբի եւ վատագոյնի մեծիս զոր կրնան
ճանն ձմեռաւուն անուն: Միտի քանիս օրոյն
առաջ թեանը պատճառաւ կենդանիք կրնա
ինն յիշել զմեռեալա եւ անունը ապաքին թեան
երթայ: Աւարի գերեզմանաւորին պարի քան
յով ինքնիրենա: Մարտարիտաւի գերեզմանը
միայն անանապոյ կրնաւ հասկրնայ թէ Ար
մանին տխրա թիւնը կը տեսէ՝ ասկառ ինն եւ
դուրէ կ'սխմանաւ իրեն ինչ ըլլալը:

Պահապանին իրջիկը մասն եւ հարցալի
թէ ինչպիսիք ամսն 22 ինն: Մարտարիտա
կոթիլ անաւե կ'ինն իր թաղաւած էր այն գե
րեզմանաւորին:

Ասի իրայն մտաւեի իր թղթերը քարոյն
նեղն յետայ յորտեմ կ'արձանապրեն եւ կը
թուայրեն այն իրջիկ շնորհապանին մէջ
մանտիկերուն անաւնեքը, պատասխանելը թէ
արդարեւ իրայնիչեայ ամսն 22 ինն կէս օր
աւան ժամանակն այն անաւալը կ'ինն իր թաղեր
էին հոն:

Այն անունն ապաշնորհի որ ասաջնորդի ասա
դիս նորա գերեզմանը, որովհետեւ ասանց
ասաջնորդի անաւակի է ինչպիսիք զանել
մեռելոյ քաղաքին մէջ առ կան նաեւ ին
դոյներ կենդանեայ քաղաքին նման: Պա
հապանը պարտաւորաւ իր ձայնելը, մի քանի
անգիկա թիւն ասա աւանդի որ միտալիս իսա
քըն ընդմիջելով քառ:

— Նիսեւս, զիսեւս: Նիսաւս կը նման

դու ի աշն դերեզմանը : շարունակեց իմ կազմ
դառնալով :

— Ինչո՞ւ, հարցուցի : զն խոսիլս ընկալապիս

— Որովհետեւ ծագիկները առիշնեքուն ծա-
ղիկներէն սարքեր են :

— Ի՞նչ կը հոգ տաս դանտեր :

— Այո՛, Տէր իմ, եւ կ'ուզեմ որ ամեն մարդ
տորա նմա մեռեալներ ունենայ, ինչպէս այն
երիտասարդը որ ինձ յանձնեց դասի :

Մի քանի պատշա ընկնէս յետոյ պարտիզ-
պանը կանկ առաւ եւ ըստ իմ յարմար ինչ յա մտ

— Ահաւասիկ եկանք :

Տեսայ ծագիկայն ամուսնի որ դերեզմանի
տեսք է՝ ունէր միայն ճերմակ մարմարաձմի զբար
փորագրուած անունն կ'իւնայուէր շիթիմ ըլ-
լալ :

Մարմարիտը շիտակ դրուած էր : երկաթ է
վանդակ մը կը սահմանէր դուռու մեղք
որ սպիտակապոյն կամ իրաներով ծածկուած
էր :

— Ինչպէ՞ս կը գտնէք սաի : հարցուց պար-
տիզպանը :

— Ես ա դերեզիկ :

— Ապապրեցին : որ կամէ ինչ մը չարմարեմ
պէս՝ անոր ուրիշ մը գնեմ :

— Ա՞՞՞՞ պարտեց :

— Երիտասարդին մէկը որ առաջին անգամ
հոս գալուն յոյժ լացաւ : կարծեմ հանցանքներն
հին հանցանքներէն մէկն ըլլալու է, սխալն ու
կ'երեւի թէ այս կ'ներ իստանապոլսոյ կենտրոնի մ-

նկցած ըլլայ : Կ'ըսեն թէ շատ անգամ ինչ է
կողմ : Տէր իմ, ճանչե՞լ էք դուս :

— Այո՛, ինչ :

— « Երբիս » պէս, հարցուց պարտիզականը
խորամանկ ժպտով մը :

— Ո՛չ, նորա հետ ամենուրեք չ'եմ խօսած :

— Այո՞ւ, ամենայնիւ, դերեղմանին աջակցու-
թեան եկեր էք. շատ բարեւէր էք եղեր,
Տէ՛ր խմ, որովհետեւ իրեն համար եկողները
դերեղմանապէս ճամբայները չ'են խափա-
ներ :

— Ո՛չ որ կուզայ որքան :

— Այո՞ւ որ բայ ՚ի պէս երիտասարդէն, որ
ան ալ մի անդամ եկան :

— Մէ՞կ անդամ միայն :

— Այո՞ւ, Տէ՛ր խմ, բայց դարձեալ պիտի
դայ ուղեւորութեան ճամբայուն պէս :

— Գիտե՞ս որ դիպց :

— Կարծեմ օրիորդ կօթիէի քողը :
Երբիս յո՞ւ համար ճամբայ գնացանուս
ճամբայն պիտի խնդրէ դերեղմանէն հա-
նելու, որ հանդուցեալս ճամբայն զի որքան տեղ
փոխադրէ :

— Երբիս պատճառաւ չ'ուղեր հա թողուլ :

— Գիտէ՞ք, Տէ՛ր խմ, որ մարդիկ զանազան
կարծիքներ կ'ունենան մեզից զբայ : Մենք
ստեղծ օր կը տեսնենք դայ : Այս տեղը հինգ
տարուան համար դեռ ան ընդունին պատճառաւ
այն երիտասարդը կ'ուղէ մշտնջենաբար կ'աւելի
ընդունակ տեղ մ'ունենալ ճամբայն մէջ :

— Այո՞ւ, նոր ճամբայ :

— Զգի՛ս կնիքի դրամները կ'որ ճամբայի են
հիմա ք Սիէն հիմակուն ան պէն հոյ ամսէ ինքե
բեղմանապէս զայն աշխարհիս մէջ համար չ'էր
դատուէր. բայց ամերախն շատ բան շարժ
այն վիճակին հասնելու համար : Ստիպիս ի՞նչ

դարմանալի մարդիկ կը դանտախն երկրիս վրայ
 — Ինչ ըսել կ'ուզեմ : այսմանն զիս յայն
 — Ըսել կ'ուզեմ թէ մարդիկ իմն որ հոս
 ալ մեծ սանդալ թ լուս կը ցույցնեն Զոր օրինակ ,
 օրիորդ Աօթ լիս կ'երևալ թէ շատ յաւ թե սանդ
 եւ անտանկա թե արժանացանք է իւր կեանքը :
 Արդ , խեղճ աղջիկը մեռաւ , եւ ուրիշ բան
 պիտի չմնայ իրմէ յարցոյ մէջ ազի մը հող ,
 ինչպէս եւ յայնոց որք անարատ իարք մ'ունեցեր
 են , եւ որոց ծաղիկներն ալ կ'ուտնան եւ մեծ
 օրն Երրոր արտա ընդ թաղող սո մեռելներուն
 աղղականներն իսարցան ու ըլլալը իսկոյն ըն
 դոքեցին աղջկան հոս թաղուած ըլլալուն դէմ
 եւ սարսափանցան նսրեալ այն տեղ ըլլալու զիս
 ըսելով թէ այն տեսակ իմնանց համար մաս
 նաւոր անդեր ըլլալու են ինչպէս որ անքան
 ներսն համար կան ըստ ալ աղէկ մը կ'ուտն
 բեցի դանտախն թոյն աղանդները խոչոր եկաւ
 մուտներն զանին տարուածն լակ ջորս անդամ
 չ'են զոր իրենց մեռելոցը զերեղմաններուն ,
 եւ երբոք դանկ ծաղիկներն արձանք կը բերեն ,
 եւ անտալիս ինչ ծաղիկներն անք հոչանն ինչոյ
 համար ըրածա՞ծախքերնինն զերեղմաններուն
 վրայ արտաւարք ներսերն կանանն , եւ թոյն
 չ'են ըստ անկացն կ'ուզեն հարստացնել որ
 կը զաւ ինչոյս մեռելուն վրայ եւ այսու ամե
 նայնիւ չ'են հաննիւր իրենց մեռելոց զբացինե
 թուն : Հաւատայէ՞ք խօսքիս զՏէր իմ . չեմ
 ծանօթ զայն օրիորդ , չ'եմ զիմեր իրեն ըրածը ,
 սակայն մասնաւոր հող կը արտաւարք նսրալ զե
 րեղմանին եւ արմէ իմներն ան անց չահու կը
 գնեն , որովհետեւ կը արկեմ զինքը : Մենք
 Տէր իմ , ստիպեալ ենք մեռելները սիրելու :

Վասն զի դարձոց յանձարս թեևնն ուրիշ բանի
վրայ սէր ունենալու ժամանակ չ'աւելիւք :

Ընթերցողներէս ամանք անչաւչա կը հասկը-
նան ասանց իմ բնութեան թէ՛ քիչ քիչ սիրտս
կը շարժէր այս խօսքերը չսկզով իմ քրտնոցս

Անտարակոչս իմացան զայս : Արտիճեալեւ շա-
րունակեց :

— Կսկզի թէ շատ մարդիկ անմեղացեր են
այս ազգիան անամբարտա յարե թէ յոյժ սիրելի

են սնու իսկ այդ սիրտս կը մտնուի եւ նո-
բանչան բան մը կ'երկուի ինձ՝ երբ կը մտածեմ

թէ անմեղսն ոչ ոք կ'աւելայ ծաղիկ մը գնելու :

Այսու ամենայնիւ շատ դժբախտ չ'է մար-
տիճեալեւ գերեզման մ'աւելի եւ թէ ինչակեւ մէ-

կը միայն կը յիշէ զինքը, անկայն այլոց ընելիքն
այ միանդամայն կը կատարէ :

Սորա հասարակա-
կից եւ նոյն անակ ազգիկներ կան հոս՝ արնեւ

տուած են հասարակաց փոսին մէջ զայս սիրտս
կատր կատր կ'ըլլայ երբ շուտ անմեղ խեղճ մար-

մեղներուն փոսին մէջ ինկնարք : Եւ այնուհետեւ
ա՛յ ոչ ոք զանանք կը հոգայ : Սերտս արտեւար

զուարթարար արուեան մը չ'է իմանաւ անդ
քիչ մը զգայուն մարդու մը համար : Բան

տարեկան զեղեցիկ ազգիկ մ'աւելիւնար միայն
կ'աւելայ երբ նորա հասակակից մեռեալ կին մը

բերեն հոս, թէ արհուսկան եղեր է՝ եւ թէ
խանձագնաց արնե արտեն չ'եմ կրնար զիմա-

նայ, սիրտս կը դարձի : Եւ շատ անգամ
հայց կը ձանձրացնեմ, դձեղ արտամեթեալե-
քս՝ զոր շուտ հասար չ'է քեկամ հոս : Ինձ
հրամայուածին համեմատ օրիորդ կ'օթիի դե-
րեզմանը բերի դձեղ : Սրդ՝ կրնար մ'ուրիշ ծա-
ծաւայտ թիւն մտնու զանել ձեզ :

— Գիտե՞ա, որքա՞ն է Պ. Արման Տիւփալին
տունը, հարցուցի պարտիզանին:

— Այո՛, ի փողոցն է. որովհետեւ հոն դայի
ճաղկանցս արձաթն առնելու համար:

— Ենթահայ եւ՛ բարեկամս:

Նայեցայ վերջին անգամ մ'ալ այդ ճաղկա-
զարդ շիրմին վրայ, որոյ մէջք կ'ուզէի դնել
տեանելու համար թէ հոգն ի՞նչ բրեր էր իրեն
ուանդուած գեղանի արարածը, եւ հեռացայ
անտի տխրազգած:

— Կ'ուզէ՞ք, Տէ՛ր խմ, տեսնել Պ. Տիւփալ,
հարցուց պարտիզանը՝ որ քովէս կը քայլէր:

— Այո՛, ես ցգոյ միշտս որ հիշմի՛նք ի՞նչ

— Բայց շատ ապահով եւ՛ որ տակաւին դար-
ձած է՛, ապա թէ ոչ հոս կը տեսնէի զինքը:

— Աւրեմն համոզուե՞ր ես զՄարդարիտան
մոռցած չ'ըլլալուն վրայ:

— Այ միայն համոզուեր եւ՛, այլ կ'երդնում
հասեւ թէ ուրիշ բանի համար չը փափաքիր գե-
րեզմանը փոխել բայց եթէ դարձեալ դնա
տեանելու համար:

— Ի՞նչպէ՞ս կրնայ ըլլալ:


— Սոյն գերեզմանատեղին եկած ատենն ինձ
հասի այս խօսքը ըստ. « Ա՛րպէ՞ս կրնամ մէկ
մը տեսնել դնա »: Եիրիսը փոխելով միայն կըր-
նար կատարել փափաքը: Անոր համար ցու-
ցուցի իրեն թէ ի՞նչ կերպով հրահան առնելու
էր գերեզմանը փոխելու համար. որովհետեւ
դիտէք որ մեռել մը յայլ շիրմ փոխադրելու
համար հարկաւոր է ճանչել դնա, եւ այս բանիս
ընտանիքը միայն իշխանութիւն կ'ունենայ. եւ
նոյն ատեն ռառիկանութեան տեսուչ մը ներ-
կայ գտնուելու է հոն Աւստի Պ. Տիւփալ գնաց

օրիորդ կօթիցիս քրոջը հաւանութիւնն անկերտ
համար, եւ 'ի դարձին անչոր շա հախ հոս կու գայ:

Գերեզմանաանդուոցն, դրանս հասանք: Աչնոր-
հակալ եղաց: դարձեալ պարտիզպանին: եւ ըսի
քանի դրամ գնեղով ձեռնը: դացի: Արմանին
տուր:

Արման ուղեւորութեանն, ասկաւին զկերտ
դարձած էր: Թուղթն զրեցի, քորով կ'ա-
ղաչէր որ վերադառնարուն: պէս դաց տեանէ
դիւ, եւ կամ խնացունէ ինձ թէ: Եւ զկրտամ
տեանով իրեն հետ:

Երկրորդ օրն աստ օտանց ընդ աւելցի նամակ
իւր Պ. Տիւփայէն՝ որ դարձին լուրը տալով կ'ա-
ղաչէր որ եւ կրթամ իրեն, որովհետեւ, սաս-
տիկ յոյժած ըստուն համար դուրս է' կրկնար
եղնէ:



2.

Արման անկողնին մէջ պառկած էր:

Չիս տեանելուն պէս հրատար ձեռնը կար-
կանեց ինձ:

— Չե՞ ընն ունիս, հարցուցի:

— Եսն իր էէ. յոյժ արադութեամբ ճամ-
բորդութիւն ընելուն համար սաստիկ յոգնեց
եմ:

— Մարդարիտանի քրոջը դացի:

— Ս. յո, ս' դրամ:

— Իմացայ: խնդրածդ ընդ աւելցի ք:

— Ս. յո՛, բայց ո՞վ ըսաւ որդեւորութիւնս ընելս եւ վախճանը :

— Գերեզմանաանդուոյն պարտիպանը :

— Գերեզմանը տեսա՞ր :

Չ'էի իշխեր պատասխանել, որովհետեւ այս հարցմունքս ընելու ատեն ձայնէն իմացայ թէ զիմացինս միշտ որս էր այն յուզմանց՝ որոց անանաատեա եղեր էի, եւ թէ ընդ երկար սրբաինս այլայլութիւնը պիտի մասնէր զիւր կամքը երբ միտքը դար այն վշտացուցիչ առարկայն կամ ուրիշ մը յիշեցուներ դայն :

Աւտի գլխովս միայն պատասխանեցի :

— Ի՞նչպէս, աղէկ հոգ տարուե՞ր է գերեզմանին, հարցուք Սրման :

Սրտատուաց երկու խոշոր կաթիլներ սահեցան հիւանդին այտիցը վրայ եւ անդին դարձուց գլուխը՝ որպէս զի չը տեսնեմ : Նս ալ չը տեսնել ձեւացունելով ջանացի խօսակցութիւնը փոխել :

— Աւղեւորութիւնդ երկայն տեւեց, երեք եօթնեակ կայ որ հոս չ'ես :

— Ճիշդ երեք եօթնեակ : Բայց ճամբորդութիւնս այնչափ ժամանակ չը տեւեց, որովհետեւ հոն հասնելուս պէս ջերմէ բռնուելով տասն ու հինգ օր ստիպուեցայ խցի մէջ փակուելու, ապա թէ ոչ մինչեւ հիմայ շատանց դարձած կ'ըլլայի :

— Աւրեմն առանց բողորովին առողջանալու ճամբայ ելար :

— Եթէ հոն ութն օր աւելի կենայի կրմնոնէի :

— Բայց հիմա դարմանելու եւ ինքդինքդ բարեկամներդ կուզան դքեղ տեսնելու, մանաւանդ ես, եթէ թող սաս :

- Երկու ժամէն պիտի ելնեմ :
- Ի՞նչ անխաճեմու թիւն է ըրածդ :
- Ի՞նչ ընեմ, հա թի է :
- Ի՞նչ պէտք է փութալ :
- Առտիկաճնմեքաւ վերապայտեմ ան պիտի երթամ :

— Մէկու մի յաճմնէ աչք դարձը, որպէս վի հիւանդութիւնդ չը աստակամայ :

— Այս բանս միայն կարող է դիտ բժշկել : Անհրաժեշտ պիտի տեսնեմ զնա : Նորա մաճը շուրէս եւ մանաւանդ դերեզմանը տեսնելիս ի վեր ամենեւին չ'եմ քնացած : Չեմ կրնար հաւատալ որ այդ մանկամարդ եւ չքնազարկող կիներ մեռած ըլլայ : Պէտք է որ աչերտիս տեսնելով ապահով ըլլամ : Առդեմ գիտնալ թէ Սասունած ի՞նչ ըրաւ այն արագածը զոր յոյժ պիտեցի, եւ դուցէ այն դարչելի տեսարանով յաւաստութիւնս փարատի : Ապազեմ ինձ հետ եկար, եթէ նեղութիւն չ'ըլլար քեզ :

- Ի՞նչ ըրաւ Մարգարիտայի քոյրը :
- Եստ զարմացաւ օտարականի մի Մարգարիտայի համար դերեզմանը դնել եւ շիրին մի կանգնել տալ ուղեր տեսնելով, եւ իսկոյն հաւանութիւնը առաւ անունս ասորագրելով :

— Ար յորդորեմ զքեզ որ ազիկ մ'առողջանալէդ յետոյ՝ դերեզմանափոխութիւնը կատարեալ :

— Մի՛ վախեր, բաւական դորութիւն կուտեսնաս : Ար իսկնդեմամ թէ որ չը կատարեմ գիտաւորութիւնս՝ որոյ քու մի ցաւոյս համար անհրաժեշտ կարեւոր է : Ա'երդնում որ զՄարգարիտան տեսնելով միայն կրնամ խաղաղիլ : Այս փափարս դուցէ շերմնիս ծարաւն, տըր-

նութեանս անուրջքը, կամ զնորիցս հետեանքն
ըլլայ. բայց թէ որ Պ. տը Ռանսէին պէս,
տեսնելէս յետոյ, Տրապեան միանձն ըլլամ
դարձեալ կ'ուզեմ տեսնել:

— Ա'խմանամ, ըսի Արմանին, և պատրաստ
եմ քեզ ծառայել: Ժիւլի Տիւփրան տեսա՞ր:

— Այո՛, առաջին անգամ 'ի Բարիդ դառնա-
լուս օրը:

— Առի՞ր Մարդարիտայի քեզ համար անոր
յանձնած թղթերը:

— Հո՛ս են:

Արման թղթերու պատատ մը քաշեց սնարքին
տակէն, և դարձեալ անմիջապէս տեղը դրաւ:

— Բերնուց դիտեմ ի՛նչ որ մէջը գրուած է,
ըսաւ: Երեք եօթնեկէ 'ի վեր օրուան մէջ
տասն անգամ կարդացեր եմ: Գու ալ կը կար-
դաս երբոր միտքս հանդարտի և կարենամ
հասկըցունել քեզ թէ ո՛րչափ զգացմամբք և
սիրով գրուած են այս խոտտովանութիւնքս:

Արդ՝ քենէ ծառայութիւն մը պիտի խնդրեմ:

— Հրամայէ՛:

— Կառք մ'ունի՞ս վարը:

— Այո՛:

— Ռերեմն կ'աղաչեմ որ անցագիրս առնեա
ու երթաս թղթատարութեան՝ նայելու համար
թէ նամակ կա՞յ ինձ համար: Հայրս և քոյրս
գրած ըլլալու են, բայց շատապու ճամբայ ել-
նելուս համար՝ ժամանակ չ'ունեցայ թղթա-
տարութեան երթալու: Յետոյ մէկտեղ կ'եր-
թանք, ոստիկանութեան տեսչին կ'իմացունեմք
դ երեզմանափոխութեան վաղը կատարուիլը:

Արմանին անցագիրն առի ու գացի:

Երկու թուղթ կար Պ. Տիւփաղին համար ,
զանոնք առնելով առն դարձայ :

Երբ սենեակը մտայ՝ Արման գղեւաններն
հաղած՝ սրատրաստ էր դուրս ելնելու :

— Ենորհակող եմ , ըսաւ թղթերը առնելով ,
և աւելցուց՝ երեսադիրերուն նայելէն յետոյ՝
Այո՛ , մէկը հօրմէս է , և միւսն ալ՝ քոյրէս : Ան-
շուշտ լուսթեանս պատճառը չ'են իմացած :

Բացաւ նամակները , և գռչակեց զայնս
քան թէ կարդայ , որովհետև իւրաքանչիւրը
չորս էջ էր , և քիչ մ'առնելն վերջը դարձեալ
ծալկեց զայնս :

— Երթա՛նք , ըսաւ , վա՛ղը կը սրտատախա-
նեմ :

Պատիզանութեան տեսչին գացինք , սրոյ
Արման ցուցուց Մարգարիտայի քրոջը հաւա-
նութեան թուղթը :

Տեսուչն ալ ծանուցման թուղթ մը յանձնեց
զերեզմանատեղը այն պահապանին համար : Արո-
շեցին երկրորդ օրն առ առօտեան ծամը ասանին
մեռելը փոխադրել , իսկ ևս ծամ մ'առաջ
գալով՝ Արմանին հետ պիտի երթայի ՚ի գե-
րեզմանատեղին :

Կա ալ հետագայը ուսթեանը կը փախաբէի
այն տեսարանին ներկայ գտնուիլ , անոր հա-
մար զիչերն ՚ի բուն չը քնացայ :

Գլխոյս մէջ տիրող խորհուրդներէն կը դու-
շակէի որ Արմանին համար տարի մը երեւելու
էր այն զիչերը :

Երբ երկրորդ առառօտ ծամը իննիմս առնը
դասի , յոյժ դունատ տեսայ զինքը , այլ խա-
զող կ'երևէր :

Փայտելով ձեռնն ինձ կարկատեց :

Մտերը մինչև ծայրերնին վառուած էին :
Գուրա ելնելէն առաջ Արման առաւ առ Հայր
իւր դրած բազմաթերթ նամակը , յորում մնւ-
շուշտ աւանդեր էր իւր գիշերային տապաւ-
րութիւնքը :

Այս ծամէն հասանք Մօնարթը :

Ռատիկանն արդէն մեզ կ'սպասէր :

Սկսանք դանդաղաքայլ երթալ Մարդարի-
տայի գերեզմանը : Ռատիկանն առջևէն կը
քայլէր , իսկ Արման և ես մի քանի քայլ հե-
ռաւորութեամբ կը հեռակէինք անոր :

Մերթ ընդ մերթ ընկերոջս բազուկը կը դո-
ղար , իւր թէ սարսուռք վաղէի ն յանկարծ
բոյր մարմնոյն մէջ . այն ատեն երեսը կը նայէի .
և հասկընարով նայելուս պատճառը՝ կը ծագէր
ինձ , սակայն անէն դուրս ելնելէս 'ի վեր
տակաւին խօսք մը չ'էինք ըրած իրարու :

Ի գերեզմանն հասնելէն քիչ մ'առաջ Արման
կանդ առաւ՝ երեսը սրբելու համար՝ ուստի
կը հոսէին քրտանց խոշոր կաթիկներ : Ես ալ
քիչ մը շունչ առի այն ատեն , որովհետև իմ
սիրտս ալ ճնշուած էր կարծես մասնու լի մը տակ :

Ինչէն է որ այդ տեսակ տեսարաններէն
ցաւալի հաճութիւն մը կ'իմանանք :

Մինչ հասանք գերեզման , տեսանք որ պար-
տիզպանը վերուշեր էր ծաղկանոց թաղարները ,
երկաթի վանդակն հաներ էր , և երկու մարդ
հողը կը փորէին :

Արման ծառի մը կռթնելով սկսաւ նայիլ :

Կարծիք թորք հողին աշայլ մէջ ամփոփուեր
էր :

Յանկա բրիչներէն մէկը քարի մը վրայ
կրճտեցաւ :

Այս ճայնիս Արման ետ ետ դնաց իբր ելեք-
տըրական շարժմամբ մը սասանեալ, և այնչափ
ուժով պնդեց ձեռնա որ ցաւցուց զայն :

Դիտածազը լայն թի մ'աննելով քիչ քիչ պար-
պեց փոսը, յետոյ դադազը ծածկող քարերն
ալ մի առ մի դուրս նետեց :

Արմանին երեսը կը դիտէի, որովհետեւ կը
վախէի որ չ'ըլլայ թէ իւր կեդրոնաւորեալ
զգայութիւնները խորտակեն գինքը, այլ ան-
քըթիթ և բաց աչերով անդադար կը նայէր՝
իբրև թէ սաղութեան մէջ ըլլար, և այտիցը
ու չրթանցը մեղմիկ շարժելէն միայն յայտնի
էր ջղային բռնութեան մը որս եղած ըլլալը :

Իսկ ես դալուս վրայ արդէն կը գղջայի :

Մինչ դադազը բոլորովին մերկացաւ, ոտի-
կանը դիտածազներուն հրամայեց ու ըսաւ .

— Բացէ՛ք :

Սոքա առանց այլայլելու հնազանդեցան հը-
րամանին :

Իսկ ազը կաղնիի փայտէ շինուած էր. սկը-
սան կափարչին պտուտակները հանել, բայց
հողոյն խոնաւութենէն ժանդոտած ըլլալուն
համար՝ դադազը դժուարաւ բացին : Ժանգա-
ւից հոտ մ'ելաւ անկէ, թէպէտեւ անուշահոտ
բոյսեր ցաներ էին հոն :

— Աստուած իմ, Աստուած իմ, ըսաւ Ար-
ման քրթմնջելով, և առաւել ևս դեղնեցաւ :

Դիտածազը ևս ետ ետ դացին :

Դիակը ծածկուած էր մեծ ու ձերմակ պա-
տանի մը մէջ՝ որոյ վրայ կը տեսնուէին մարմ-
նոյն քանի մը ծռութիւնները. պատանքին ծայ-
րերէն մին ծակած էր, և մեռելին ոտից մին
անտի դուրս ելած :

Քիչ մնաց պիտի մարէի . և հիմա ուլ այս
բաներս գրելուս ատեն այն ճշմարիտ և սար-
սափելի տեսիլը տակաւին աչերուս առջևն
ըլլալով՝ սոսկում ու սարսափի կ'ազդէ յիս :

— Շո՛ւտ ըբէք , ըսաւ ոստիկանը :

Այն ատեն դիտածաղներէն մէկը ձեռնը եր-
կրնցունելով՝ սկսաւ պատանքին կարը քակել ,
յետոյ ծայրերէն մէկը բռնելով՝ յանկարծակի
բացաւ Մարգարիտայի երեսը :

Ո՛հ . այն ի՛նչ գարշելի տեսիլ էր . ո՛վ կրնայ
նկարագրել այն սոսկալի տեսարանը :

Աչաց տեղ երկու ծակեր մնացեր էին .
չբժներն անյայտ եղեր , և սպիտակ ակռայ-
ներն իրարու կպած էին : Արկայն և սևա-
թոյր մազերն չորցած քունքերուն վրայ փակած
էին , և սակաւիկ մի կը սքողէին այտիցը կա-
նաչագոյն խոռոչները . այսու ամենայնիւ զայս
տեսնելով կը յիշէի Մարգարիտայի սպիտակա-
գեղ , վարդակարմիր և զուարթալից երեսը՝
զոր յաճախ տեսեր էի :

Արման յապուշ կրթեալ շարունակ կը նայէր .
դաշկինակը բերնին վրայ բռնած՝ կը խածնէր
զայն :

Իսկ ես կարծէի թէ երկաթի շրջանակ մի
կը պնդէր զգլուխ իմ , քող մ'իջաւ աչացս վը-
րայ . ահանջքս սկսան դռնչել : Այն ատեն բա-
ցի փոքր շիշ մը՝ զոր զգուշութեան համար
բերեր էի՝ և հոտոտեցի մէջի ողին :

Շլացութեանս մէջ լսեցի ոստիկանին ձայնը՝
որ կըսէր Արմանին .

— Ասի՞՞ է :

— Այո՛ , պատասխանեց երիտասարդը ցած
ձայնով :

— Ուրեմն գոցեցէ՛ք և տարէ՛ք , ըսաւ ոստիկանը :

Ղիաթազք պատանը մեռելին երեսին վրայ նետելով՝ գոցեցին դադաղն և ծայրերէն բռնելով՝ տարին դայն իրենց ցուցուած տեղը :

Արման անշարժ կեցեր էր : Աչերը տնկեր էր պարապ փոսին վրայ , մեր տեսած ղիաթին պէս դեղնած էր . . : Աարժես արձանացած էր :

Գուշակեցի թէ ի՛նչ պիտի ըլլար տեսարանին բացակայութենէն ցուերը նուաղելով , և հետեւաբար պիտի չը կարենար ղիմանալ :

Անոր համար ոտիկանին մերձեցայ ու ըսի Արմանը ցուցնելով .

— Պարունիա ներկայութիւնը կարեւոր է տակաւին :

— Ո՛չ , պատասխանեց , և ըսւ կ'ընէք թէ որ տանիք զինքը , վասն զի հիւանդ կ'երեւի :

— Ե՛կ , ըսի , յայնժամ Արմանին բազկէն բռնելով :

— Ի՛նչ , ըսաւ նայելով ինձ իբր թէ չը ճանչեր զիս :

— Աւարտեցաւ , կրկնեցի , հիմա ո՛ւր պէտք է երթանք , բարեկամս , երեսիդ գոյնը նետեր է , կը մտիս . սրտիդ այլայլութիւնը կ'սպաննէ գրեզ :

— Իրաւունք ունիս , երթա՛նք , պատասխանեց մեքենայաբար՝ առանց տեղէն շարժելու :

Այն ատեն բազկէն բռնելով՝ քաշեցի տարի զինքը :

Տղու մը պէս ինքզինքն ինձ թողուց . և մերթ ընդ մերթ ցած ձայնով .

— Աչերը տեսա՞ր , կ'ըսէր :

Եւ ետինն կը նայէր , իբրև թէ այդ տեսիլք
զինքը խնդրէր :

— Սակայն սկսեց անհաւասար քայլերով
յառաջ երթալ . ընդոստ ընդոստ կը քայլէր .
տկուայներն իրարու կըրտողխէին . ձեռները պա-
ղած էին . միտք բանիւ ջղային բուռն տաղնատ
մը կը տիրէր իւր վրան :

Խօսք մ'ըսի իրեն , այլ պատասխանը չառի :
որովհետև բան մ'ընելու կարողութիւն չունէր ,
և ինքզինքն ինձ թողէր էր :

Գերեզմանատեղւոյն դրան առջև կառք մը
դանելով շուտ մը մէջը նստեցուցի զինքը :

Բազմելուն պէս սկսեց առաւել ևս դողալ .
ջղայ ճշմարիտ բռնութիւն մ'ունեցաւ . և վա-
ջը դարհուրեցունելու համար՝ դձեռնս կը սեղ-
մէր և կ'ըսէր քրթմնջկով .

— Աշի'նչ է , ոչի'նչ է , արտասուել կ'ուզեմ ,
բայց կը տեսնի կրծկոյն ուռնուլը , արիւնք
տչերուն մէջ կը փաղէր , բայց չէր կրնար լսել :

Հոտուել առի իրեն վազր ղիշս . և մինչ
տունը հասանք , տակաւին կը դողար :


Մտային օղնութեամբը սառ կեցուցի զինքը ,
առատ կրակ վառել առի սենեկին մէջ , և
ընթացայ բժիշկս բերելու՝ որոյ ամեն բան
պատմեցի : Սն ալ խնդոյն եկաւ :

Արման ծիրանադոյն դարձած էր . կը ցնորէր
և թոթովելով անցածորդ խօսքեր կ'ըսէր՝ որոց
մէջ Մարդարիտայի անունը միայն որոշ կը լը-
սուէր :

— Ի՞նչ ունի , հարցուցի բժշկին հիւանդը
քննելէն յետոյ :

— Սղէկ որ ուղեղի ջերմն ունեցեր է , պա-
տասխանեց , ապա թէ ոչ՝ կարծեմ՝ խեղճ

կ'ըլլար : Բարեբախտարար նիւթ ահան հիւանդ-
դու թիւնը սխալի յաղթէ բարոյական հիւանդ-
դու թեան , և ամսէ մ'երկուքէն ալ թերեւ
կ'աղաատի :



Է.

Արմանին ունեցած հիւանդութիւնն այն
աղէկութիւնն ունէր որ կամ կը սպաննէ շուտ
և կամ դիւրաւ կ'անցնի :

Աերոյիշեալ եղելութիւններէն տասնուհինգ
օր վերջը Արման սպաքինութեան մէջ էր , և
սերտ բարեկամութեամբ կապուեր էինք իրա-
րու : Հիւանդութեանը ժամանակ քիչ անդամ
խցէն դուրս ելեր էի :

Գարունը լիութի կը սփռէր ծաղիկները , տե-
րեները և քաղցրաձայն թռչունները , և բա-
րեկամիս պատուհանէն կը տեսնուէր դեղա-
դուարձ պարտէզ մը՝ ուստի առողջարար բուր-
ժուները կը հասնէին մինչև ցնա :

Բժշկին թոյլատուութեամբը կ'ելնէր անկող-
նէն , և յաճախ կը խօսէինք նստելով պատու-
հանին առջև՝ դոր կը բանայինք օրուան ամենէն
տաք եղած ժամանակը , որ է կէս օրէն սկը-
սեալ մինչև ժամն երկու :

Արդ զգուշանայի Մարգարիտայի վրայ խօսք
բանալու՝ վախճանալով որ չ'ըլլայ թէ այդ անուներ
զարթուցանէ տխրագին յիշատակ մը՝ որ նիր-
հած էր հիւանդին վեր 'ի վերոյ հանդարտու-
թեանը ներքե . բայց Արման ընդհակառակն
հաճութեամբ կը խօսէր նորա վրայ , ոչ որսլէս
երբեմն արտասուած որ աչերով , այլ քաղցրա-
հաճոյ ժպտով մը՝ որով ապահով կ'ըլլայի հո-
գւոյն վիճակին վրայ : Ղխտեր էի որ դերեղ-
մանատեղւոյն մէջ տեսած տեսարանէս 'ի վեր՝
որով հաստատուեր էր 'ի նա այն բուռն հի-
ւանդութիւնը , մտաւորական ցաւերու շարք
լեցուած ըլլալով հիւանդութեամբ՝ Մարգա-
րիտայի մահուան վրայ առաջուան սլէս չ'էր
խորհէր : Քենեցած ատուղութեամբը մխի-
թարուեր էր , և յաճախ միտքն եկող տխրա-
տեսիլ պատկերները հալածելու համար՝ Մար-
գարիտայի հետ ունեցած յարաբերութեանց
քաղցր յիշատակներուն մէջ կ'ընկղմէր ինքզինքը ,
և ուրիշ բանի վրայ չ'էր մտածէր :

Մարմինը աննդին բռնութենէն և բժշկու-
թենէն ևս յոյժ տկարացած ըլլալով սիրտը
չ'էր կրնար սասաիկ այլայլութեան մը տանել .
և դարձնանային ու համաշխարհական ուրա-
խութիւնը՝ որով շուրջ պատեալ էր՝ դուար-
թալից պատկերներ լոկ կը բերէր աչացն առջև :

Չ'էր ուզած ընտանեացն խնայունել իւր վը-
տանդաւոր հիւանդութիւնը , և առողջանային
յետոյ հայրը տակաւին չ'էր դիտէր զայն :

Արիկուն մը սովորականէն աւելի պատու-
հանին առջև կեցեր էինք . օղը շատ դեղեցիկ
էր . արեգը հորիզոնը կը խոնարհէր կապու-
տակային և ոսկեճաճանչ երկնին վրայէն : Թէ-

այլ, առ ճարտար մէջ էինք, սակայն մեր շարժն
նշանդ դալարիքը կարծես հեռացուցեր էին
զմեզ յաշխարհէ, և հապիւ հաղ երբեմն կառքի
մը ճայնը կը խռովէր զմեր բանակցութիւնը:

— Գրեթէ այս եղանակիւ և այսպիսի իրի-
կուն մը ծանկայ զՄարդ արիտա, ըսաւ Արման,
առ ելի իւր մտածութեանց լսելով քան թէ ըսած
խօսքերու:

Պատասխան չը տուի:

Այն ատեն դարձաւ ինձ, և ըսաւ.

— Պատմելու եմ քեզ այս պատմութիւնը.
կրնաս դրել զայն, այլ հաւատացող չ'ես զաներ.
սակայն դուք, ախորժակի ըլլաց 'ի դիր արձա-
նագել զայն:

— Արիչ անդամ կը պատմեա, բարեկամս,
բախ իրեն, որովհետև տակաւին բոլորովին
առողջացած չ'ես:

— Այս երեկոյ օդը սաք է, վառեակս կե-
րեր եմ, պատասխանեց ծպակով. ջերմն տն-
ցեր է և դորձ ալ չ'ունինք. ուստի կրնամ
ամեն բան պատմել:

— Արեմն պատմէ':

— Պարզ պատմութիւն մ'է, սախ, դոր դէպ-
քերուն կարդին համեմատ պիտի պատմեմ:
Կրճաա ատեն անցնելէն յետոյ ուրիշ կերպով
դրել զայն:

Ահա ասիկ ինչ որ լսեցի իրմէ, և հապիւ թէ
քանի մը խօսք փոխեր եմ այս սրտաշարժ
պատմութեանս մէջ:

— Այո՛, կրկնեց Արման զլախը թիկնա-
թառին կաթ ընցունելով, այո՛, այնպիսի երե-
կոյ մ'էր, յորում բոլոր օդը գիւղի մը մէջ
անցուցեր էի Աստիօն Ա. անուամբ բարեկա-

միս հետ : Արեւիցին 'ի Բարից վերադարձանք ,
և դորձ Հունեկալով « Աարիէթէ » թատրոնը
մտանք :

Աարադոցը իջնելէն յետոյ դուրս ելնելով
նեղ անցքին մէջ հանդիպեցանք բարձրահասակ
կնկան մը՝ զոր բարեկամս բարեւեց :

— Ո՞վ է այդ կինը , հարցուցի :

— Մարդարիսա Աօթիէն է , պատասխանեց :

— Փոխուած ըլլալու է , որովհետեւ չը կրցի
ձանչել զնա , ըսի այլայլութեամբ մը՝ զոր արդ
կը հասկընաս :

— Հիւանդացի էր , հէզ սպիկը շատ շատ
բիր :

Այնպէս քաջ կը յիշեմ այս խօսքերը , որ-
պէս թէ երէկ լաւ ըլլայի : Այս ալ դիտնալու
ես , բարեկամս , որ երկու տարիէ 'ի վեր նոր
տեսակ տալաւորութիւն մը կ'ընէր իմ վրաս
այն սպիկը՝ երբ իրեն հանդիպէի :

Յանկարծ երեսիս դոյնը կը նեւէր և սիրտս
ուժղին կրբարախէր : Բարեկամներս մին թա-
ղուն դիտութեանց պարատրոլ ըլլալով կրնար
հոռանուաներու նմանութիւն անուանել զտը-
պաւորութիւնս . այլ ես կը հաւատամ որ ճա-
կատաղ իրս էր Մարդարիսային համանին ըլլալ ,
և ես ալ կ'իմանայի դաշս :

Այս ճշմարիտ էր որ միշտ խորին տալաւ-
որութիւն մ'ըրած էր յիս , և բարեկամներէս
չատերն ալ զայս տեսնելով ծիծաղեր էին ,
այն տալաւորութեան պատճառ եղող անձը
դիտնալով :

Առաջին անդամ տեսի զնա վաճառականաց
ակըմբանոցին հրատարակը , հռչակաւոր Անտին
կրպակին դրան առջև : Բայ թեթեւութեամբ

կառքէ մը սպիտակադղեատ կին մ'իջաւ : Խա-
նութիւն մտնելու տակն հոն եղողներն սքան-
չացած ու ապշած նայեցան անոր : Իսկ ես
անշարժ կեցայ տեղս մինչև նորա դուրս ել-
նելու ժամանակը : Ապակիներէն կը դիտէի
վաճառքներուն մէջէն ընտրած իրերը : Չ'էի
իշխեր ներս մտնել , որովհետև չը դիտնալով
այն կնկան ո'վ ըլլալը՝ կը վախժի որ չ'ըլլայ թէ
մտնելուս նպատակը դուշակելով չ'ախորժի :
Սակայն կ'իմանայի յիս որ ճակատագիրս վե-
րբայտին պիտի ցուցնէր զնա ինձ : Փառաւոր
էին զգեստները , շղաչատեռէ պարեղօտ մը
հագեր էր՝ դարդարեալ եզրներով . Հնդկաս-
տանի ցփաի մը՝ ոսկեճամբուկ և մետաքսէ ծաղ-
կամբք հիւսած քառակուսի անկիւններով ձե-
ռակերտեալ . դուրսը խաւիտոյ յարդէ զվաարկ
մը դրած էր . դաստակներէն մէկուն անցուցեր
էր խոշոր ոսկեկուռ ապարանջան մի՝ որոյ
դորձածութիւնն այն ժամանակ նոր սկսեր էր :

Յետոյ կառքը մտնելով հեռացաւ անտի :

Խանութիւն ծառայներէն մին դրան առջև
կենալով՝ զարմանադեղ դնողին կառքին ետևէն
կը նայէր : Մերձեցայ և հարցուցի այդ կնկան
անուէր :

— Մարդարիտա Աօթիլ, օրիորդն է , պա-
տասխանեց :

Չը համարձակեցայ սուներ հարցընել , և հե-
ռացայ :

Այս ճշմարիտ տեսիլը՝ ուրիշ տեսիլներուս
պէս՝ մտքէս չ'ելաւ . ուստի ամենուրեք կը
խնդրէի այդ սպիտակադղեատ և հրաշադեղ
կինը :

Քանի մ'օրէն դացի 'ի կատակերդակ—Օրէ-

րան՝ ուր փառաւոր ներկայացում մը պիտի
ըլլուէր : Նախ զՄարդարիտա Կօթիէն տեսայ՝
տեսարանին քովն եղող օթեակներէն մէկուն
մէջ :

Ինձ ընկերող երիտասարդը ծանեաւ զնա ,
վասն զի անունը տալով ըսաւ .

— Նայէ՛ սա դեղեցիկ աղջկան :

Նոյն միջոցին Մարդարիտան հեռադիտակը
մեր կողմն ուղղելով՝ տեսաւ զբարեկամս ,
ժպտեցաւ և նշան ըրաւ որ իրեն երթայ :

— Երթամ տեսնեմ զինքը , ընդհուպ կը վե-
րադառնամ , ըսաւ :

— Երանի՛ քեզ :

— Ինչո՞ւ :

— Արովհետեւ պիտի խօսիս հետը :

— Մի՛թէ կը սիրե՞ս զնա :

— Ա՛յ , պատասխանեցի շառագունելով ,
վասն զի որոշ չ'էի զխտեր զդացածս , ևակայն
կը փափաքիմ ճանչել զնա :

— Աւրեմն ե՛կ ինձ հետ , ներկայացունեմ
զքեզ :

— Նախ և առաջ հրաման խնդրէ :

— Է՛հ , իրմէ պատկառելու հարկ չը կայ :

Այս խօսքը վշտացուց զիս : Ար դողայի մը-
տածելով որ չ'ըլլայ թէ Մարդարիտան անար-
ժան ըլլար՝ իրեն համար ունեցած զդացմանս :

Այժոնս Գար՝ «Ամ Բոչէն» անուն գիրք մ'ու-
նի՛ յորում զրուած է թէ մարդուն մէկը երե-
կոյեան դէմ դեղազարդ կնկան մը կը հետեւի ,
զոր առաջին անգամ տեսնելով սիրեր է՝ յոյժ
դեղեցիկ ըլլալուն համար : Այն կնկան ձեռնը
համբուրելու համար՝ ամեն բանի ձեռնարկելու
զօրութիւն , ամենայն ինչ ձեռք ձգելու կամք ,

և ասենք բան կատարելու քաջութիւնն կը պղպայ
 յինքն : Հազիւ հարկ կ'իջխէ նայելու նորա շքե-
 նագագեղ սրունքներուն վարի կողմը՝ դոր պղ-
 կինը կը բանայ՝ պարեղօտը հանդրիճելով և
 որպէս զի հողոցն քսուելով շաղտառի : Մինչդեռ
 կը մտածէ յամենայնի յանդգնարար խիղախել՝
 զնա ստանալու համար , կինը կը դառնայ և
 կը հրաւիրէ զինքն իւր տունը մտնելու : Յայն-
 ժամ մարդը գլուխը կը դարձունէ , կ'անցնի
 փողոցէն և արտում ախուր կը մանէ յիւր տուն :

Այս օրինակէս օղտուելով՝ կ'ուզէի այդ կրն-
 կան սիրովը վառիլ , այլ կ'երկնչէի միանդամայն
 որ չըլլայ թէ դիւրաւ ընդունի կամ շուտ սիրէ
 զիս , որոյ կը խնդրէի ժամանել երկար տակն
 յուսարէն կամ մեծ զոհողութիւն մ'ընելէն յե-
 սոյ : Այսպէս են մարդիկ , և ազէկ որ երեւա-
 կայութիւնը 'ի զգայութեանց չը բառնար այդ
 հաճութիւնը , և թէ մարմնական ցանկութիւն-
 ները կը պարզեն տակաւին այս շնորհը մտա-
 ւորական անըրջոյ :

Եթէ ըսէին ինձ թէ . Այս երեկոյ պիտ' ու-
 նենաս այդ կինը , բաց Վաղը պիտի մեռնիս ,
 կ'ընդունէի : Այլ թէ որ ըսէին . Տասն տիւտ
 նորա համանին կրնաս ըլլալ , կը մերժէի , և
 կ'արտասուէի աղու մը պէս՝ որ 'ի գարթնուէն
 չը տեսներ երազին մէջ նշմարած դղեակը :

Այսու ամենայնիւ կը փափաքէի զնա ճանչել ,
 վասն զի այս կերպով միայն կրնայի ընելիքս
 դիմանալ : Արեւմտեայ բարեկրամիս ըսի որ զիս ներ-
 կայացունելու հրաման խնդրէ , և սկսայ նեղ
 անցքերուն մէջ յամիլ՝ նորա հետ տեսնուելուս
 վրայ մտածելով , և չէի դիտեր ինչպէս շարժիլ
 նորա ստի : Ըսելու խօսքերս յառաջուց կը

պատրաստելի : Կնչպիսի՛ մանկական և վե՛րժ
բան է սէրը :

Քիչ մը ժամանակէն վերջը բարեկամս վար
իջնելով ըսաւ ինձ .

— Կրնա՛ս դալ :

— Մինա՞կ է :

— Քովն ուրիշ կին մը կայ :

— Էրիկ մարդ կա՞յ :

— Ա՛յ :

— Երթ ա՛նք ուրե՛մն :

Երբոր տեսայ բարեկամիս դէպ՛ի թատրոնին
դուռն երթալը՝ հարցուցի և ըսի .

— Ո՛ւր կ'երթաս :

— Շարքարեղէն գնելու՝ դոր Մարդարիաս
շինէն խնդրեց :

Օրէրային փողոցին մէջ եղող շարքարա՛ս
ճառներէն մէկուն խանութը մտանք :

— Կ'ուզէ՛ի բոլոր կրտսերը գնել, և մինչ կը
մտածէի թէ ինչո՞վ լեցունենք տուփը՝ բարե-
կամս խնդրեց ու ըսաւ .

— Մէկ վար սառուցեալ խաղող :

— Կը սիրէ՞ :

— Այո՛, ուրիշ շարքարեղէն ուտելը չ'եմ տե-
սած :

— Չիտե՞ս ինչպիսի կնկան պիտի ներկայա-
ցունեմ գրեղ, շարունակեց երբ դուրս ելանք
խանութէն . դքսուհի չը կարծեա զնա, այլ
պարզապէս պահճու կին մ'է, սիրեցեալ բա-
րեկամս . ուստի առանց պատկառելու խելքիդ
փչածը ըսէ :

— Ի ա՛ւ, լա՛ւ, պատասխանեցի քրթ մնջելով
և խորհելով միանդամայն որ սէրս պիտի մարտ
Մեր՝ օթեակը մտած առե՛նը՝ Մարդարիաս

բարձրաձայն կը ծիծաղէր : Ա՛ռւղէի տխրադէմ
տեսնել զինքը :

Բարեկամս ներկայացուց զիս : Մարդ արիտա
մեղմիկ ծռեց զգլուխն և ըսաւ .

— Ո՛ւր են շաքարեղէններս :

— Սհաւասիկ :

Եւ առնելով ինձ նայեցաւ : Գլուխս խո
նարհեցուցի և շառագունեցայ :

Քովը նստած կնկան ախանջին վար խօսք
մ'ըսաւ , և երկուքն ալ սկսան ծիծաղիլ :

Գիտնալով որ այն զուարթութեան պատ
ճառն ես էի՝ առաւել ևս տաղնապեցայ :

Նայն ժամանակ գորովալից և զգայուն պահ
ծու կին մ'ունէի՝ որոյ տխրալիւր և սիրայորդոր
թղթերը ծիծաղս կը շարժէին : Զգացած ցաւէս
խմանալով նորա վշտաց սատակութիւնը , հինգ
վայրկենի միջոց այնքան սիրեցի զնա , որ կին
մը բնաւ այնչափ սիրուած չ'է :

Մարդ արիտա խաղողները կ'ուտէր :

Ներկայացուցիչս չ'ուղեւով զիս այն ծաղրելի
փիճակին մէջ թողուլ ըսաւ .

— Մարդ արիտա , Պ. Տիւվալին լուսթեանը
վրայ չը վարմանաս . այնչափ այլապէցաւ զքեզ
տեսնելով որ պապանձեցաւ :

— Աւելի հաւանական է որ պարոնս հետզ
եկեր է՝ զքեզ մինակ չը թողլու համար միայն :

— Եթէ ըսածնիդ ճշմարիտ ըլլար , Պ. Էր
նէսթին չ'էի տղաչեր որ զիս ներկայացունելու
համար հրաման առնու :

Գուցէ այս կերպով միայն կրնայի աղետաւոր
վայրկեանը յապաղել :

Մարդ արիտայի պէս աղջկանց հետ սալրող
ները զիտեն թէ յանօգուտս խելք ցուցնելէ :

և իրենց առաջին անգամ տեսած մարդուն
դէմ պրուցելէ ո՛րչափ ախորժ կ'իմանան : Ան-
տարակոյս այս միջոցով միայն իրենց ասեն օր
տեսած մարդկան առջև խոնարհելնէն վրէժ
կը լուծեն :

Ուստի անոնց պատասխան տալու համար
պէտք է նոցա ընկերութեան սովորութիւնները
զիտնալ , որոց ես անտեղեակ էի : Ասկէ զատ
Մարդ արիտայի վրայ ունեցած համարմանա հա-
մար՝ առելի դժուարս եկաւ նորա ծիծաղիլը :
Այն կնկան որ և է խօսքին կամ գնացքին ան-
տարբեր չէի կրնար ըլլալ . ուստի ոտք ելայ
ու ըսի , ձայնիս սյլայլութիւնը ծածկելու չը
զօրեւոյլ :

— Տիկին , մինչ սյդ կարծիքն ունիք վրաս ,
օրիշ բան չը մնար ինձ , բայց միայն նե-
րումն խնդրել ձեզնէ անդդուչութեանա հա-
մար , և քաշուիլ միանգամայն այս բանիս
դարձեալ չը պատահելուն վրայ դձեղ ապա-
հովելոյլ :

Այս խօսքս լսելով բարեւեցի և դուրս ելայ :
Գուռը փակելէս անմիջապէս վերջը , դար-
ձեալ լսեցի ծիծաղելնին : Ա՛հ , այն ատեն ո՛րքան
կը փափաքէի մէկու մը հետ կուռիլ :

Գացի ամռոխս վրայ նստայ . վարադ ուրին
բացուելուն նշանը տրուելու ատեն՝ կրնէսթ
ալ տեղը գալով ըսաւ ինձ .

— Սպի՛ս . գիտե՞ս , յիմարամիտ կարծեցին
զքեզ :

— Ի՞նչ ըսաւ Մարդ արիտա երթալէս յետոյ :

— Ծիծաղեցաւ , և ըսաւ թէ քեզ պէս նոր-
օրինակ մարդ տակաւին չէր տեսած : Այսու
ասենայնիս յաղթուած մի՛ համարիր զքեզ .

չ'արժեք որ այս տեսակ աղջկանց ըրածին հա-
մար նեղանաա : Ասյեղութիւն և մարդավա-
րութիւն ի՞նչ է չ'են գիտեր նորա . նման են
չանց՝ որոց վրայ եթէ անուշահոտ եղ մը քսես ,
հոտն իրենց անասորժ գալով՝ կ'երթան փո-
ղոցին ուղիսին մէջ կը գլորին :

— Ի՞նչ փոյթս է , ըսի անայլայլ կերպ մը
կեղծելով , չ'եմ ուղեր այսուհետև տեսնել
այդ կիներ . գիները չը ճանչելէս առաջ՝ կ'ախոր-
ժէի իրմէ , իսկ հիսա , գարշիմ մերժիմ՝ ի նը-
մանէ :

— Կամայց . անշուշտ օր մը դքեզ նորա
օթեակին մէջ կը տեսնեմ , և ուրիշներէն ալ
կը լսեմ նորա պատճառաւ ըրած մեծամեծ
ծախքերդ : Արդ արև դաստիարակութիւն առած
չ'է , բայց գեղեցիկ հարճ մը կ'ըլլայ :

Բարեբախտաբար վարագուրին բացուելովը՝
բարեկամա լուց : Չը կրցի խաղին ուշադրու-
թիւն դնել , այլ մերթ ընդ մերթ աչերս կը
վերցունէի Մարդարիտայի օթեակին վրայ՝
ուստի այնքան բարկութեամբ դուրս ելեր էի ,
և ուր ամեն վայրկեան անձանօթ անձեր կը
մանէին կ'ելնէին :

Սակայն անկարելի էր ինձ չը մտածել Մար-
դարիտայի վրայ : Առդէի նորա ըրած նախա-
տինքը և իմ ծաղրելի վարմունքս մոռցունել ,
և միտքս կը դնէի ունեցածս զ'ունեցածս սպա-
ռել դիներն ստանալու և իրաւամբ այն տեղն
ունենալու համար՝ դոր այնչափ փութով լքեր
էի :

Խաղին աւարտելէն առաջ Մարդարիտա և
իւր բարեկամուհին օթեակին ելան :

Կս ալ այն ատեն ակնուէս ելայ :

— Ա'երթ'ա՞ս , հարցուց ինչե՞սի՞ :

— Այո՛ :

— Ինչո՞ւ համար :

Եւ նոյն ժամանակ տեսնելով որ վերոյիշեալ օթեակին մէջ մարդ չ'է մնացեր , ըսաւ .

— Գնա՛ , դնա՛ , լաւազ ոյն յաջողութիւն կը մտղթեմ քեզ :

Գուրար՝ լսեցի սանդուխին վրայ պարեգօտի շրջիւն և մարդու ձայն : Մէկդի քաշուելով տեսայ՝ առանց տեսնուելու՝ երկու կանանց և երկու երիտասարդաց անցնիլը՝ որք նոցա հետ կ'երթային :

Թատրոնին սիւնաղարդ դաւիթը պատանի ծառայ մ'առջևնին ելնելով Մարդարիտան հրամայելով ըսաւ նմա .

— Գնա՛ կառավարին ըսէ որ «Մեզդիոյ սըր-
ձանոց» ին առջև սպասէ մեզ . մինչև հոն հետի
պիտի երթանք :

Քիչ մ'առե՛նէն վերջը , «պուլվար» ին վրայ թափառելով տեսայ պանդոկին սենեակներուն մէկուն պատուհանէն զՄարդարիտան՝ որ պատշգամին վրայ յեցեալ՝ կամէլիաներու տե-
րեւերը մի առ մի կը փրցունէր :

Եւ վերոյիշեալ մարդերէն մին ուսին վրայ ծռած՝ կը խօսէր նորա հետ զած ձայնիւ :

Գացի ՚ի «Մէղօն-տ'Օր» պանդոկը , և վերի յարկին սրահներէն մէկուն մէջ նստած՝ աչքէս չ'էի փախցունէր այն պատուհանը :

Առ սուտեան ժամը մէկին Մարդարիտան կառքը մտաւ իւր երեք բարեկամացը հետ :

Ես ալ երկանիւ կառք մը բռնելով անոնց հետեւեցայ :

Կառքը «... Թէն փողոց» ին մէջ Ծ թուով

տանն մ'առջև կաննի առնելով Մարդարիտա
վար իջաւ և տունը . . . մտաւ :

Մնասրակոյս այս բանս դիպուածով հան-
դիպեր էր , սակայն ևս յոյժ ուրախացայ :

Այն օրէն սկսեալ յաճախ կը տեսնէի զՄար-
դարիտա թաարոնները և 'ի «Շանդ-Էլիզէ» :
Միշտ ուրախ դուարթ էր . իսկ ևս միշտ կ'այ-
բայէի դիմքը տեսնելուս պէս :

Տասնևհինգ օր շարունակ տեղ մը չը հան-
դիպեցայ իրեն : Օր մը Ասաթօնը տեսնելով
հարցուցի թէ Մարդարիտան ի՞նչ եղաւ :

— Ի՞նչ աղջիկը ծանր հիւանդ է , պա-
ռասխանեց :

— Ի՞նչ ունի :

— Ի՞նչ պիտի ունենայ , կուրծքը կը ցաւի ,
և սրտիկն ալ իրեն անցուցած կեանքովը չը
կրնար առողջանալ , ուստի յանկողին պառկած
է և կը մեռնի :

Արչափ տարօրինակ զգացումներ կ'ունենայ
մարդուս սիրտը : Չրեթ է ուրախացայ հիւան-
դութեանը վրայ :

Այնն օր կ'երթայի որպիսութիւնը կը հար-
ցունէի սուանց անունս տալու : Այս կերպով
խնայայ նորա ապաքինութիւնը և 'ի Պանիէր
երթալը : Յետոյ բաւական ծամանակ անցնելով
մտայս ստաւորութիւնը տակաւ առ տակաւ
ջնջուեցաւ . բայց մտցած չէի զնա : Ըրած
աւղևորութիւններս , բարեկամներս , դրօսանքս
և աշխատութիւններս այն մտածութեան տեղը
բանեցին : Աւերք խորհէի այն առաջին դէպքին
վրայ , սրատանուոյ սէր կը համարէի , ընդ որ
մարդս կը ծիծաղի քիչ մ'ատեն անցնելէն յետոյ :

Արդիսեւոր բան մը չէր մտնալ այդ յի-

շատակը , վասն զի չ'էի տեսած զՄարդարի-
տան մեկնելէն 'ի վեր , և ինչպէս արդէն ըսի ,
չը ծանեայ զնա « Աարիէթէ » թաարոնը նեղ
անցքին մէջ քովէս անցնելու ատեն : Իբար է
որ քող մ'ուներ երեսին վրայ , բայց այսու
ամենայնիւ երկու տարի առաջ հարկ չ'էր ինձ
տեսնել' ճանչելու համար զնա , այլ կրնայի
նորա ըլլալը գուշակել :

Սակայն սիրտս բարախեց' մինչ խնայայ թի
ինքն է . և երկու տարի զինքը չը տեսնելիս
յառաջ եկած կարծեցեալ հեռուանքը ծուխի
պէս ցնդեցաւ' մերձաւորութեամբ և եթ իւր
պարեգօտին :



Ը.

Սրման քիչ մ'ատեն հանդիատ ատնելէն յե-
տոյ' դարձեալ շարունակեց հեռուեալ կերպով .

Սակայն սիրահար ըլլալովս ալ ինքզինքս
առաջուրնէ պորաւորապէս զտնելով կը վա-
փաքէի Մարդարիտայի հետ խօսիլ , ցուցնելու
համար թէ իրմէ դերազանց եմ :

Մարդս իւր նպատակին հասնելու համար
ի՛նչ ճամբայներ կը բռնէ և ի՛նչպէս տեճիւն
իրաւունք կուտայ եղեր :

Քստի չը կրնալով երկար ատեն նեղ անց-
քերուն մէջ յաճիլ , գացի տեղս նստայ , և
արադութեամբ շուրջս կը նկատէի տեսնելու
համար թէ ո՞ր օթեակին մէջն է :

Գեանայարկին առաջին օթեակին մէջ մինակ նստեր էր : Փսխուած էր , ինչպէս որ արդէն լրաի , և չէի տեսներ շրթանցը վրայ իւր առաջուան անտարբեր ժպտար : Ետտ հիւանդութիւն կրած ըլլալու էր , և տակաւին հիւանդ էր :

Թէպէտև ապրիլի մէջն էինք , սակայն ճրմեռուան զգեստներ հագած և թաշեայ հագուստով ծածկուած էր :

Աչերս այնպէս յամառութեամբ վրան սեւեւեր էի՝ որ վերջապէս նայեցաւ ինձ :

Քիչ մ'ատեն գիտ զիտեղէն յետոյ՝ հեռադիտակը առաւ աւելի աղէկ տեսներու համար , և անտարտեայս կարծեց զիս ճանչել՝ առանց ճշդիւ ո՞վ ըլլալս զիտնալու , որովհետև երբ վար առաւ զհեռադիտակը , ժպտա մը , կանանց այն սիրուն սղջոցնը , շուրթներուն վրայ թափառեցաւ՝ իբր պատասխանելու համար ուղունին՝ զոր կարծես կ'սպասէր յինէն . բայց չը պատասխանեցի , որպէս զի զինքչ մտցած երևելովս՝ առաւելութիւն մ'ունենամ նորա վրայ , մինչ ինքը կը յիշէր զիս :

Ինքզինքը սխալած կարծելով՝ զլուխը յինէն դարձուց :

Այն ատեն վարադ ոյրը քաշեցին :

Ետտ անդամ զՄարդարիտան թատրոնները տեսեր եմ , բայց բնաւ չը դիտեմ որ խաղի մ'ուշադրութիւն ըրած ըլլայ :

Ես ալ նմանապէս խաղով չէի գրադիր , այլ անդադար իրեն միայն կը նայէի , ջանալով միանգամայն որ չը տեսնի :

Եւ այս կերպով տեսայ որ դիմացի օթեակը պտնուող անձին հետ հայեցուածներ կը փո-

- Ո՛չ, բայց շատ կը փախաքիմ :
- Կ'ուզե՞ս ըսեմ որ հոս դայ :
- Ո՛չ, աւելի կ'ընտրեմ որ ներկայացունեա
գիտ իրեն :
- Յի՞ւր տունը :
- Այո՛ :
- Դժուար է :
- Ինչո՞ւ :
- Վասն զի նախանձոտ ծեր դուքս մը նորա
«պաշտպանն» է :
- Ի՛նչ ախորժեցի բառ :
- Այո՛, «պաշտպանն» է, կրկնեց Բրիւ-
տանս : Մի՞թէ խեղճ ծերունին նորա համանին
կրնա՞ր ըլլալ :
- Բրիւտանս պատմեց այն տանն թէ ի՛նչպիսի
Մարգարիտա ճանչեր էր դդուքսն 'ի Պանիէր :
- Անոր համար ուրեմն օ՛րհակին մէջ մէնտեղ
նստեր է :
- Աղէ՛կ որ գիտցար :
- Հապա, ո՞վ պիտի ընկերէ իրեն :
- Նոյն ինքն դուքսը :
- Արեւմն Մարգարիտան առնելու համար
հո՞ս պիտի դայ :
- Ընդ հուտ կը տեսնեա զանի :
- Իսկ գընդ ո՞վ պիտի տանի :
- Ոչ ոք :
- Ե՛ս կը տանիմ :
- Բայց՝ կարծեմ՝ մէկու մը հետ ես :
- Ի՞նչ կ'ըլլայ • անի ալ կ'ուզայ :
- Ո՞վ է քու բարեկամդ :
- Միրուն է խելացի երիտասարդին մէկը •
որ անտարակոյս կ'ախորժի քեզնէ :
- Արեւմն, այսպէս • այս խաղս լսելնէս յե-

այս երեքնիս 'ի միասին կ'երթանք , որովհետև
վերջինը դիտեմ :

— Շա'տ լաւ . երթամ բարեկամիս խնացու-
նեմ :

— Գնա' :

— Նայէ' , նայէ' , ըսաւ Բրիւտանա դուրս
եղնելուս ատենը , ահաւասիկ դուքսը՝ որ Մար-
դարիտայի օթեակը կը մանկ :

Եօթանասնամեայ ծերունի մը մանկամարդ
կնկան ետին նստաւ , և տուփ մը շաքարեղէն
տուաւ անոր՝ որ մի առ մի սկսեց ուտել ծրու-
տելով , յետոյ դառալիւ օթեակին առաջքը մեր-
ձեցունելով Բրիւտանային նշան ըսաւ՝ իբր
« կ'ուղե՞ս » ըսելու համար :

Գլխովը « ո՛չ » պատասխանեց Բրիւտանա :

Մարդարիտա յայնժամ դառնալով դքսին
հետ սկսեց խօսիլ :

Թէպէտև այս մանրամասնութիւնները աղ-
ղայական իդեր են , բայց այն աղջկան վերա-
բերեալ ամենայն ինչ այնպէս ատյ որուած է
յիշողութեանս մէջ՝ որ անկարելի է ինձ մտ-
նալ դայնս :

Ղար իջայ Կասթօնին խնացուցի դիտաւո-
րութիւնս , ան ալ ընդունեց :

Պատի երկաքնիս ալ Տիկին Տիւփ ընուայիս
օթեակը դայինք :

Երանձտայ կայանին դուռը բանալնուս ատեն՝
կանկ առնելու առիպուեցանք՝ Մարդարիտայի
և դքսին ճամբայ տալու համար՝ որ կ'երթ այինս :

Կենացս տասը տարին կը դռնէի այն բարեմիտ
ծերունոցն տեղը ձեռք ձգելու համար :

Երբ 'ի « Պալատար » հասան , նստեցուց զնա
« փոցէթօն » ի մը մէջ՝ զոր ինքնին կը վարէր :

և աներևութացան 'ի մեծաքայլ ընդոստո եր-
կու փառաւոր ձիերու :

Վեր ելանք ու Յրիւտանաին օթեակը մտանք :
Խաղին աւարտելէն յետոյ , վար իջանք ան-
պաճոյճ կառք մը բռնեցինք , և « ա' Յնթէն »
փողոցը դացինք : Յրիւտանա իւր տանը դրան
առջև հրաւիրեց զմեզ ներս մտնելու՝ որպէս զի
ցուցնէ զիւր կրպակը՝ զոր տակաւին չէինք
տեսած , և ընդ որ կը պարծէր :

Յայտնի է որ փութով ընդունեցի հրաւերը ,
պարծէի որ սակաւ առ սակաւ կը մերձենայի
Մարգարիտայի : Ընդ հուշ նորա վրայ սկսի
խօսիլ :

— Ծերունի դուքսը դրացուհւոյդ քո՞մն է
հիմա , հարցուցի Յրիւտանաին :

— Ո՛չ . մինակ ըլլալու է :

— Մինակ ի՞նչպէս չը ձանձրանար , լատ
դասթօն :

— Գիշերները դրեթէ 'ի միասին կ'անցու-
նենք . երբ 'ի տուն վերադառնայ՝ կը կանչէ
զիս : Առաւօտեան ժամն երկուքէն առաջ չը
պառկիր , վասն զի՝ թէ որ այն ժամանակէն
առաջ պառկի՝ չը կրնար քուն ըլլալ :

— Ինչո՞ւ :

— Արտհեաւ կուրծքը կը ցաւի , և դրեթէ
միշտ տենդ ունի :

— Միթէ համանի չունի՞ :

— Ի՞՞՞՞՞՞՞ կրթալէս յետոյ քովը ոչ որ կը մնայ .
քայց չ'եմ կրնար հաստատել թէ այնուհետեւ
մարդ չը դար : Գիշերներն յաճախ կը տեսնեմ
հոն ՚՛ . անուն կոմս մը , որ իղձերը կատա-
քելու նպատակաւ ժամը տասնու մէկին կուգայ ,
և Մարգարիտայի բազմաթիւ անանակապ դար .

դեր կը նուիրէ , բայց աղջիկը նորա կենդա-
նադիրն անդամ տեսնել չ'ուզեր : Աղէկ բան
չէ ըրածը , վասն զի յոյժ մեծատուն երիտա-
սարդին մէկն է անի : Երբեմն 'ի զուր խրա-
տելով կ'ըսեմ . « Միրեցեալ աղջիկս , քեզ յար-
մար մարդն ասի է : » Ինքն որ շատ անդամ
խօսքիս կը լսէ , այն ատեն կռնակը կը դար-
ձունէ և կ'ըսէ . « Սոյն անմիտ մարդուն խօսքը
մ'ըներ ինձ : » Իրաւ է որ անմիտին մէկն է ,
բայց ի՞նչ կ'ըլլայ : Սոյն երիտասարդին ձեռքով
հաստատուն վիճակ մը կրնայ ունենալ . մինչ
ձեր դքսին մօտալուտ մահուամբը՝ մէջ տեղը
կը մնայ անօք անօդ նական : Շերերը ինքնամուլ
կ'ըլլան , դքսին ընտանիքն անդադար կը կըչ-
տամբեն զանի Մարդարիտայի վրայ ունեցած
գորովոյն պատճառաւ . ուստի յայտնի է որ
ժառանգութիւն մը չը թողուր աղջկան : Իսկ
նա իմ յորդ որներուս միշտ կը պատասխանէ և
կ'ըսէ . « Գեռ ժամանակ կայ . դքսին մեռնելէն
յետոյ՝ կ'առնուի կոմսը : »

Մարդարիտայի հիմակուան վարած կեանքը
բնաւ զուարճալի չէ : Աթէ ես ըլլայի , չէի
կրնար հանդուրժել խեղոյն կը ճամբէի խոֆած
դուքսը : Անհամին մէկն է անի . դատրիկ իմ ,
կ'անուանէ , մանկան պէս կը հոգայ զնա , և
միշտ նորա ետեւէն կը շրջի : Ապահով եմ որ
այս ժամուս իւր ժառայներէն մին փողոցը կը
յածի , ելնողները և մանաւանդ մանողները
դիտելու համար :

— Ինչ որ Մարդարիտա , չը դիտէի զայս , բաւ
կասթօն՝ դաշնակիին առջին նատելով և սխալ
մը զարնելով . սակայն քիչ մը ժամանակ , 'ի վեր
զուարթութեանը նուազած ըլլալը կ'իմանայի :

— Լուսեթիւն , ըստ Բրիւտանա աղանջ տալով : Կասթօն կեցաւ :

— Կարծեմ՝ զիս կը ձայնէ :

Մենք ալ աղանջ տուինք և լսեցինք որ ըզ Բրիւտանա կը ձայնէին :

— Տեա՛րք իմ , ելէ՛ք դայցէ՛ք , ըստ մեզ Տիկին Տիւփերնուան :

— Այսպէս հիւրընկալութիւն ընել չ'ըլլար , ըստ Կասթօն ծիծաղելով , ո՛ր ատեն ուզենք՝ այն ատեն կ'երթանք :

— Ինչո՞ւ զմեզ կը վանեն :

— Արովհետեւ Մարդարիտայի պատի երթամ :

— Արեւն մենք հո՛ս կը կենանք :

— Չ'ըլլա՛ր :

— Այն ատեն քե՛զ հետ կ'երթանք :

— Ա՛ն ալ չ'ըլլար :

— Ես կը ձանչեմ զՄարդարիտան , ըստ Կասթօն , ուստի կընամ անոր այցելութեան երթալ :

— Բայց ի՞նչ ընենք Արմանը որ չը ձանչեր զնա :

— Ես կը ներկայացունեմ զինքը :

— Անկարելի՛ է :

Մարդարիտան դարձեալ զԲրիւտանա ձայնել սկսեց :

Ասի վաղեց յարդարանաց սենեակը , ես ալ Կասթօնին հետ հոն դայցի :

Երբոր պատուհանը բացաւ , սահուեցանք որպէս զի չը տեսնուինք :

— Տա՛սը վայրկենէ՛ ՚ի վեր կը ձայնեմ զքեզ , ըստ Մարդարիտա խրոխտաձայն :

— Ի՞նչ կ'ուզես :

— Կ'ուզեմ որ հիմա հոս դաս :

- Ինչո՞ւ :
- Վասն զի Տ. կոմսը տակաւին չը դնաց ,
և մահու չափ կը ձանձրացունէ զիս իւր ներ-
կայութեամբը :
- Չ'եմ կրնար հիմա դալ :
- Ինչո՞ւ համար :
- Որովհետեւ երկու երիտասարդ տունս
եկեր , դուրս չ'են ուզեր ելնել :
- Ըսէ թէ հարկ է որ երթաս :
- Արդէն ըսի :
- Տրեմն հո՛ն թող զանոնք • քու երթալիդ
յետոյ նոքա ալ ձամբայ կ'ելնեն :
- Այո՛ , ամենայն ինչ տակնուվրայ ընելնէն
յետոյ :
- Ի՞նչ կը խնդրեն :
- Չքեզ տեսնել :
- Անունին ի՞նչ է :
- Անոնցմէ մին կը ձանչեա , որ է Պ. Կաս-
թօն Ռ. :
- Այո՛ , կը ձանչեմ զնա • իսկ մի՞ւսը :
- Պ. Սրման Տիւվալ :
- Չըդ իտեմ ո՛վ է • բայց այսու ամենայնիւ
թո՛ղ դանքեզ հետ • աւելի կ'ընարեմ զանոնք
քան զկոմսն : Ասպասեմ , չո՛ւտ եկէք :
- Մարդարիտա և Քրիտանա իրենց պատու-
հանները փակեցին :
- Մարդարիտա որ նախ պահ մը յիշեր էր
դէմքս , արդ. անունս չէր յիշեր : Աւելի կ'ու-
զէի որ տհաճութեամբ յիշեր քան թէ այնպէս
մտնար :
- Քաջ դիտելի , ըսաւ Կասթօն , որ սիրով
կ'ընդունի զմեզ :
- Այնպէս մի՛ կարծեր , պատասխանեց Քր-

բիւտանա սփսիւն և գլխարկը դնելով, կամար
ձանկելու համար է : Չանացէ՛ք որ անկէ աւելի
ախորժելի ըլլաք, ապա թէ ոչ Մարդարիտային
ձեռքէն չե՛մ կրնար ազատիլ . կը ձանչեմ գինքը :

Բրիւտանսին հետ վար իջանք : Իսկ ես կը
դողայի . ինձ կը թուէր թէ այդ այցելութիւնը
կենացս վրայ ծանրակշիւ տալաւորութիւն մը
սխալի գործէր :

Աւելի այլայլեր էի քան այն իրիկունը՝ յոր
ու՛մ աւաջին անգամ գիտ իրեն ներկայացուցին
ի թատրոն :

Երբոր հասանք դատիկոնին դրան սուջե ,
սիրտս այնչափ ուժգին կը բարախէր՝ որ մտաւ
ծելու կարողութիւն չ'ունէի :

Գաշնակի մի քանի հաճաճայնութիւններ լսե-
ցինք . և երբ Բրիւտանա դուռը դարկաւ ,
երա՛ժ շտութիւնը լսեցուցին :

Գուռը բացող կինն աւելի ընկերական տիկ-
նոջ կերպարանն ունէր քան թէ ազախ-
նոյ :

Մասն անցանք , և անտի ներքնասենեակը
սր այն ատեն նոյն վիճակին մէջն էր՝ յորու՛մ
տեսեր ես դայն ապա :

Նրիտաաարդ մը կրակարանին կռթընամ՝
սաքի վրայ կեցեր էր :


Մարդարիտա դաշնակին սուջե նստած՝ մա-
տերը քարկրուն վրայ կը վաղցունէր և անկա-
տար կտորներ կը նուազէր :

Չանճրոյթը միահեծան կը տիրէր խուղին
մէջ . մարդը կը տաղտկանար իւր անպիտա-
նութեանը համար ունեցած տաղնատէն . իսկ
կինը՝ նորա տխրաբեր այցելութենէն :

Բրիւտանսին ձայնը լսելուն պէս Մարդարիտա

տեղէն ելաւ և աչերովք նմա շնորհակալ ըլ-
լալէն յետոյ, մեզ մերձենալով բաւա .

— Բարի էք եկեր, Տեաքք իմ, հրամայեցէ՛ք:



Թ.

— Բարի իրիկունն, սիրելի Ասաթօն, բաւա.
Մարդարիտա ընկերոջս, ուրախ եմ գջեղ տես-
նելուս համար: Անչո՞ւ յօթեակս չ'եկար այս
երեկոյ:

— Անդդուչութիւն մը չ'ընելու համար:

— Բարեկամք, (և Մարդարիտա շեշտելով
մը հնչեց զայս բառս, իբր հասկըցունելու
համար հոն եղողներուն որ այդ ընտանեկան
ընդունելութիւնը տեսնելով չը կարծեն թէ
Ասաթօնին և իւր մէջ բարեկամութենէն դատ
ուրիշ յարարելութիւն մ'եղած ըլլայ), բա-
րեկամք անդգոյշ չ'են համարուիր:

— Աւրեմն, թո՛ղ տուր ինձ քեզ ներկայա-
ցունել զՊ. Արման Տիւփալ:

— Արդէն հաւաներ էի որ հրիւտանա ներ-
կայացունէ զանի:

— Տիկին, ըսի ես ալ ողջունելով և ձայնա
րեցունելով, մի անգամ ձեզ ներկայացուելու
պատիւն ունեցայ կարծեմ:

Մարդարիտա սիրուն աչերովք դողցեա իւր
խշտութեան մէջ սկսեց որոնել, բայց միայն
չ'եկաւ, և կամ չը յիշել կեղծեց:

— Տիկին, կրկնեցի այն ատեն, շնորհապարտ

եմ ձեզ առաջին անգամ ներկայացուիրս մտ-
նալնուդ համար, երկու տարի առաջ, 'ի Կա-
տակերդակ-Օրէրան, Կրնէսթ * * * ին հետ,
որովհետև շատ ծաղրելի և ձանձրանայի անձ
մը թուեցայ ձեզ:

— Սյո՛, կը յիշեմ, ըսաւ Մարդարիտա ժըպ-
տելով: Դուք ծաղրուելու արժանի բան մը
չ'ըրիր, իսկ ես հակառակեցայ ձեզ, և այդ
բնաւորութիւնը տակաւին ունիմ, բայց ո՛չ
այնչափ: Մնչուչա ներեր էք ինձ, Յէ՛ր իմ:

Սյա խօսքս ըսելով հարկաւեց ձեռնը, դոր
համբուրեցի:

— Յիրաւի յոռի և անիրաւ սովորութիւն
մ' ունիմ, որով առաջին անգամ տեսած մարդու
տաղնապէտ կ'ախորժիմ: Բժիշկս կ'ըսէ թէ
ջղոտ և միշտ հիւանդ ըլլալու հետեանքն է,
և բժշկիս խօսքին հաւատալու էք:

- Բայց քաջաւողջ կ'երևիր:
- Մակայն գիտնաք ինչե՛ր կրեցի:
- Գիտեմ:
- Ո՞վ ըսաւ:
- Սակն մարդ գիտէր: Յաճախ կուգայի
ձեր որպիսութիւնը հարցունելու, և սպարի-
նութիւննիդ ուրախութեամբ սրտի լսեցի:
- Բայց այցելու թեան տուսակնիդ բնաւ չ'եմ
ընդունած:

- Վասն զի չ'էի տար:
- Դուք չ'ըլլա՞ք այդ երիտասարդը որ ամեն
օր կուգայ եղեր զիս հարցունելու հիւանդու-
թեանս ծամանակ, առանց անունը տալու:
- Ես իսկ եմ:
- Սյն ատեն ոչ միայն ներողամիտ էք, այլ
և վեհանձն, իսկ դու, կոսմս, բնաւ այսպիսի

բանն ըրած չ'ես , յարեց Պ. Ն. ին դառնալով ,
և ինձ նայելէն յետոյ այնպիսի հայեցուածով
մը՝ որով կանայք կը հաստատեն մարդու մը
վրայ ունեցած կարծիքնին :

— Երկու ամսէ՛ ՚ի վեր միայն կը ճանչեմ
զձեզ , պատասխանեց կոմսը :

— Հապա պարտնա՛ որ հինգ վայրկենէ՛ ՚ի վեր
և եթ ծանեաւ զիս : Միշտ անխնայաւ պատաս-
խաններ կուտաս :

Կանայք քանի՛ անդ թու թեամբ կը վարուին
իրենց չը սիրած անձանցը հետ :

Կոմսը շառագ ունեցաւ և շուրթները խածաւ :
Յաւեցայ նորա վրայ , վասն զի կարծեմ
ինձ պէս կը սիրէր զՄարդարիտա , որոյ անա-
զ որոյն անկեղծութիւնը թշուառացուներու էր
զնա , մանաւանդ երկու օտարականաց առջև :

— Մեր եկած ատենը կը նուազ էիք , ըսի
խօսակցութիւնը փոխելու համար . կ'աղաչեմ
որ զիս հին բարեկամ մը համարելով շարու-
նակէիք :

— Կասթօն զիտէ՛ ի՛նչ տեսակ նուազելա ,
պատասխանեց թիկնաթոռին վրայ նետուելով .
երբ կոմսին հետ ըլլամ , լա՛ւ . բայց չ'եմ ուզեր
ձեզ զլիսի ցաւ տալ :

— Միշտ առաւելութիւնը կը շնորհես ինձ ,
հարցուց Պարոն Ն. խորամանկ ու հեղհուկան
ժպիտով :

— Ձիս կշտամբելու իրաւունք չ'ունիս , որով-
հետև առաջին անգամ է :

Խեղճ երիտասարդը բերնէն խօսք մը չ'էր
կրնար հանել առանց պատասխանն իսկոյն
ընդունելու : Մարդարիտային նայեցաւ աղեր-
ասաւ որ հայեցուածով մը :

— Երիւտանա , հարցուց աղջիկը , լսած օրիօր :

— Այո՛ :

~~Ս. Երեւոյն . ընտրուցս Մայր Եկեղ . Անտի Գաւ
շայի և Գաւազարուի դրսի միացեալ թաղոց .~~

— Ղա՛ւ , սպա կը խօսինք : Ձիս չը տեսած
չ'երթա՛ս : Ա՛լ հիմա բանակցինք :

— Աւելի չը ձանձրացունենք զձեզ , ըսի այն
տանն , և հիմա որ ներկայացուեցայ ձեզ երկ-
րորդ անգամ՝ մտացունելու համար առաջին
անգամ ներկայացուիր : Աստի՛օն և ես ա՛լ
երթանք :

— Ո՛չ . ո՛չ . ձեզ համար չ'ըսի : Մանաւանդ
թէ կ'ուզեմ որ նստիք :

Կոմսը դրախնէն շքնող ժամացոյց մը հա-
նելով ժամը նայեցաւ :

— Ժողովարան երթալու ժամանակ է , լսաւ :

Մարդարիտա չը պատասխանեց :

Կոմսն այն տանն կրակարանէն հեռացաւ ,
և Մարդարիտայի մատչելով լսաւ .

— Տիկին , մնաս բարեա՛ւ :

Մարդարիտա ոտք ելաւ ու պատասխանեց :

— Երթա՛ս բարեաւ , սիրելի կոմս . ի՛նչ ,
կը մեկնի՞ս :

— Այո՛ , զքեզ չը ձանձրացունելու համար :

— Միշտ այսօրուան շաբ կը տաղտկացունեն
զ/ս : Ե՛րբ մէկ մ'ալ կը տեսնուինք :

— Երբ որ հրամայէք :

— Երթա՛ս բարեաւ , ուրեմն :

Աստի յայտնի է ո՛րչափ անդժու թիւն բա-
նեցունելը : Բարեբախտաբար կոմսն ընտիր
դատարանի թիւն առած ըլլալով սքանչելի
հետադարձեալ ան տէր էր : Մնապատասխան

Համբարեց Մարգարիտա ձեռնը , և դմեց
ողջունելն յետոյ՝ դուրս ելաւ : Դունին անց-
նելու ասեն հրիւտանսին նայեցաւ . ասի ու-
սերը թոթմեց՝ իրք «ի՞նչ ընեմ , ձեռքս եկամն
բրի՞ ըսելու Համար :

— Դանի՛ն , դոչեց Մարգարիտա , ճրագը
բռնէ՛ Պ. կոմսին :

Երբ դրան բացուիլն և փակուիլը լսեցինք .

— Աղէ՛կ որ գնաց , աղաղակեց Մարգարի-
տա ներս մտնելով : Սա երիտասարդը ուն-
նելով՝ ջղերս սաստիկ կը գրգռին :

— Սիրեցեալ դուստր իմ , ըսաւ հրիւտանս ,
իմչո՞ւ այնքան չարութեամբ կը վարուիս նորա
հետ՝ որ քեզ բարիք ընելէ չը դադրիր : Սէս ,
տե՛ս , կրակարանին վրայ ժամացոյց մը դրեր
է՛ որ գէթ հազար սկուդ արծելու է անշուշտ :

Եւ Տիկին Տիւփերնուա վառարանին մտնե-
նալով սկսեց ժամացոյցին հետ խաղալ , և
ցանկութեամբ աչերը վրան կը սեւեռէր :

— Սիրելի , ըսաւ Մարգարիտա դաշնակին
առջև բազմելով , երբ կշռեմ մէկ կողմէն իրեն
տուածները , և միւս կողմէն ալ ըսածները ,
այցելութիւններն ածան դնամ կը թուի ինձ :

— Սակայն խեղճ երիտասարդը կը սիրէ ըզ-
քեզ :

— Եթէ ամեն զիս սիրողներուն խօսքին
ականջ տայի , ճարելու ժամանակ չէի ունենար :

Եւ դաշնակին բարերուն վրայ մատերը քա-
լեցունելի յետոյ՝ դարձաւ և հարցուց մեզ .

— Կ'ո՞րք բան մը խմել . ես քիչ մը «փոնչ»
պիտի ըմ տե՛ս :

— Իսկ ի՞նչ ժը վառեակ կ'ուտեմ : Ի՞նչ
կ'ըսես , Է. Երիք ընե՞նք :

— Շատ աղէկ կ'ըլլայ, ընթրե՛նք, ըստ
ճասթօն :

— Հո՛ւ ուտենք :

— Զանգակիկը զարկաւ, ու Նանին եկաւ :

— Գնա՛ մեզ կերակուր բե՛ր :

— Ի՞նչ կ'ուզէք :

— Ուտելու բան մը բե՛ր, բայց շուտ ըրէ՛, շո՛ւտ :

Նանին դուրս ելաւ :

— Այո՛, ըսաւ Մարգարիտա տղու մը պէս
զուարթանալով, պիտի ընթրենք : Ի՞նչ ձանձ-
րանալի մարդ է եղեր այն պակասամիտ կոմսը :

Իսկ ես կը դիտէի զայդ կիներ, և ո՛րչափ որ
նայէի, ա՛նչափ ևս գողցես կը դիւթէր դիս :
Նիհարութեամբն հանդերձ զարմանադեղ աղ-
ջիկ մ'էր :

Չ'եմ կրնար բացատրել ինչ որ կը զգայի այն
ատեն յիս : Ար ներէի իրեն իւր անցուցած
կեանքը, և կը սքանչանայի գեղոյն վրայ :
Այդ անչահասիրութիւնը՝ որով մերժեր էր
երիտասարդ, աղնուական և հարուստ մարդ
մը, որ պատրաստ էր բոլոր ստացուածքը վատ-
նելու նորա համար, կը մուցունէր ինձ իւր
անցեալ մտորութիւնները :

Անբժութեամբ նման բան մը կը տեսնուէր
այդ կնկան վրայ :

Յայտնի էր որ անառակութեան մէջ հինցած
չ'ըլլալով կուսութեան հետք մը նշմարելի էր
'ի նմա տակաւին :

Համարձակ քալուածքէն, դիւրաշարժ հա-
սակէն, վարդակարմիր և բացուած դուներէն
և կապուտակային թեթև շրջանակով պատեալ
աչերէն կ'իմացուէր նորա եռանդնոտ բնաւոյն :

բութիւնը՝ որ հեշտութեան անուշահոտութիւնը
կը տարածէր շուրջը, նսնան Արևելից փոքր
շիշերու՝ որոց քաջ փակեալ ըլլալովն անգամ՝
մէջերնին պարունակեալ հոսանուտին բուր-
մունքը դարձեալ դուրս կ'ելնէ :

Վերջապէս կամ բնաւորութեանը, և կամ
իւր հիւանդոտ վիճակին պատճառաւ, մերթ
ընդ մերթ աչերուն մէջէն ցանկութեան փայ-
լակներ կը ցոլանային՝ որոց արտաբերութիւնն
երկնային յայտնութիւն մը կ'ըլլար նորա սիրած
անձին համար : Բայց զինքը սիրողներն անթիւ-
էին, իսկ նա՝ տակաւին ոչ զոք սիրած էր :

Միով բանիւ յայտնի էր որ այն աղջիկը ոչինչ
բանով մ'այն վիճակին մէջ ինկեր էր, և թէ
կրնար նոյնպէս սիրողադոյն և անբժադոյն կոյս
մը լինել վերտաին : Մարդարիտա պատուոյ և
անկասկածութեան սէրն ունէր, երբ այս երկու
դոսցմանցս տէր եղող անձ մը վիրաւորութի-
'ի պարկեշտունէ դրդեալ անձին բոլոր ըրածը
կատարելու կարող կ'ըլլայ :

Չէի խօսեր, կարծեա հողիս արտիս մէջ
անցեր էր, և սիրտս ալ՝ աչերուս մէջ :

— Արեւն, կրկնեց յանկարծ, դո՞ւք կու-
դաք եղեր հիւանդութեան ժամանակ որպի-
սութիւնս հարցունելու համար :

— Այո՛ :

— Արչափ բարեսիրտ էք եղեր : Ի՞նչպէս
կրնամ երախտադիտութիւնս ցուցնել ձեզ :

— Թոյլ տալով ինձ որ մերթ ընդ մերթ դամ
դձեղ տեսնեմ :

— Հրամայեցէք՝ որչափ որ ուզէք, ժամը
հինգէն մինչև վեց, տասնումէկէն մինչև կէս
դիշեր :

Աստօն , « Ենթիմասիօն ալա վայց » ը մի ան-
դամ նուազէ նայինք :

— Ինչո՞ւ :

— Նախ և առաջ ասործելի բան մ'ըրած
կ'ըլլաս ինձ , երկրորդ՝ մինակ չ'եմ կրնար
նուազել դայն :

— Ո՞ր կտորը կը տազնապեցունէ գքեզ :

— Արրորդ մասը , ուր « կիսվեր » ներ
կան :

Աստօն նստաւ դաշնակին առջև , և սկսեց
նուազել Վէպէրի հրաշալի մեղեդին , որոյ
տեարակը բայ էր գրակալին վրայ :

Մարգարիտա՝ ձեռնը դաշնակին վրայ կրո-
թընցուցած՝ կը հետևէր աչօք իւրաքանչիւր
խաղերուն , և ցած ձայնով ալ կ'երգէր : Երկ
Աստօն դժուար համարած կտորին հասաւ ,
մատերը դաշնակին կռնակին վրայ դարնելով
երգեց .

— « Բէ , մի , բէ , տօ , ֆա , մի , բէ . » ահա՛ ,
դայս չ'եմ կրնար յաջողցունել դարձեալ սկսէ :

Աստօն վերստին սկսեց . յետոյ Մարգա-
րիտա ըսաւ .

— Հիմա , թո՛ղ փորձեմ :

Նստաւ և սկսեց նուազել . բայց իւր տարա-
տամբ մատերը միշտ կը սխալէին վերոյիշեալ
խաղերուն մէկուն վրայ :

— Զարմանալի՛ բան , ըսաւ մանկական ձայ-
նիւ , ինչո՞ւ չ'եմ կրնար յաջողցունել այս մասը :
Քիտէ՞ք , երբեմն առաւօտն երկու ժամ կ'աշ-
խատիմ : Իսկ այդ պակասամիտ կտանն սքան-
չելապէս կը նուազէ դայս , և առանց տեար-
ակին վրայ նայելու , գուցէ նորա դէմ ունե-
ցած կատաղութեանս պատճառն այս ըլլայ :

Եւ դարձեալ սկսեց , միշտ մի և նոյն հե-
տևանքով :

— Արո՛ղը տանի Ահալբրն ալ , երամ շառ-
թիւնն ալ , դաշնակին ալ , դոշեց տեարակը
խցին մէկ կողմը նետելով . ինչո՞ւ չեմ կրնար
ուխը «կիսվեր» հետզհետէ նուազել :

Եւ բարկութենէն ոտքերը գետինը կը դար-
նէր՝ մեզ հայելով :

Սրիւնը դըռխն եղնելով՝ այտերը ներկեց ,
և թեթեւ հազով մը շուրթները կէս մը բա-
ցուեցան :

— Հանդարտէ՛ , հանգարտէ՛ , ըսաւ Քրիս-
տանս , որ դիտարկը հանած մտղերը կ'ողորկէր
հայլիին առջև կեցած , դիտես որ բարկու-
թիւնը կը մնաս , քեզ . երթա՛նք ընթրե՛նք ,
լաւադոյն բանն այս է . ես անօթութենէս կը
մեռնիմ :

Մարդ արիտա զարձեալ դարկաւ զանդակիկը .
յետոյ դաշնակին առջև նստելով՝ անվայել
երգ մը սկսեց երգել , և առանց տաղնապի
կը նուազէր համաձայնութեամբ նոյն երգին :

Աստօնն ալ այդ երգը դիտէր , ուստի եր-
կուքը միատեղ կ'երգէին :

— Ինչո՞ւ այսպիսի անվայել բաներ կ'երգէք .
ըսի Մարդարիտային աղաչական ձայնիւ և ըն-
տանութեամբ :

— Արշափ պարկեշտ էք եղեր , ըսաւ ծրայ-
տելով և ձեռնն ինձ կարկառելով :

— Ինձ համար չ'էր ըսածս , այլ ձեզ համար :

Մարդ արիտա ձեռով մը միայն պատասխանեց .
իրը ըսելու համար՝ « ի բաղմաց հետէ պար-
կեշտութիւնը մերկացեր եմ : »

Նոյն տանն Կանին ներս մտնելով :

— Ընթրիքը պատրաստ է , հարցուց Մարտարիտա :

— Ս. յո՛ւ , Տիկին , քիչ ատենէն :

— Գատիկոնը տակաւին տեսած չես , ըստ էնձ Բրիւտանա . ե՛կ ցուցնեմ քեզ :

Գիտէ՞ք որ սրահը հրաշալիք մ'էր :

Մարդարիտա քիչ մը տեղ մեզ ընկերելն յետոյ՝ ձայնեց զԱստիժ օն , որոյ հետ ճաշարանը մտաւ տեսնելու համար թէ Ընթրիքը պատրաստ է :

— Ա. յս ի՞նչ է , ըստ Բրիւտանա բարձրաձայն՝ դարանի մը վրայէն Սաքսոնիոյ փոքրիկ արձան մ'առնելով , դասի տակաւին տեսած չ'էի :

— Ո՞րը :

— Փոքր հովիւ մը որոյ ձեռնը վանդակ և թռչուն մի կայ :

— Ս'ա , թէ որ ուղես :

— Անտարակոյս , բայց չեմ ուզեր նաև ըզձեզ գրկել . . . :

— Սենեկատանիս կ'ուղէի տալ , որովհետև չախորժեցայ , բայց այն որ սիրեցիր , ա՛ռ դայն :

Ընծայման եղանակը Բրիւտանային վրայ բընաւ տարաորուժ իւն մը չըրաւ , նա՛ նուէրը միայն նկատեց : Մէկդի դրաւ արձանիկը , և գլխ յարդարանայ խուցը տանելով ըսաւ .

— Սհաւասիկ թ . կոմար՝ որ յոյժ սիրեց ըզՄարդարիտա , որ և հարստացուց և ծանօթացուց զնա : Ար ճանչե՞ս :

— Ո՛չ . Ո՞վ է սա , հարցուցի ցուցնելով ուրիշ մանրանկար կենդանադիր մը :

— Լ . Գերակոման է , որ ստիպուեցաւ մեկնելու :

— Ինչո՞ւ .

— Արովհետեւ գրեթէ բոլոր ստացուածքը վատներ էր : Ասի սրտանց կը սիրէր զՄարգարիտա :

— Ինքն ալ անտարակոյս շատ սիրած ըլլալու է դնա :

— Այնպիսի անբարիմեակ աղջիկ մ'է , որ մարդըս ինչ ըսելը չգիտեր : Գերակումսին ճամբայ ելած օրուան իրիկունն 'ի թատրոն գնաց առ աջուան պէս , թէպէտ և անկէ բաժնու ելուտուն լացեր էր :

Նոյն ատեն Նանին գալով՝ զմեզ կերակրոյ հրաւիրեց :

Ճաշարանը՝ տեսանք զՄարգարիտա պատին կռթնած , և կասթօն ձեռնը բռնած ձած ձայնիւ կը խօսէր նորա հետ :

— Ի՞նչո՞ւ ևս , ի՞նչ ևս , կը պատասխանէր Մարգարիտա , քաջ գիտես որ գքեզ չեմ ուզեր : Երկու տարի ինձ նման կին մը ճանչելն յետոյ չը խնդրուիր նորա հոսանին ըլլալ : Մենք ինքզինքնիս կամ իսկոյն կուտանք և կամ բնաւ չենք տար : Հասցա՛ , տեարք իմ , սեզան նապինք :

Եւ կասթօնէն իտոյս տալով նառեցուց դանի՛ իւր աջակողմը , դիմ՝ ձախակողմը , յետոյ ըսաւ Նանինին .

— Նստե՛ք առաջ դնա՛ տալստի , որ դուռը չը բանան՝ եթէ վարնուի :

Այն ժամանակ առաւ օտեան ժամը մէկն էր :

Այն գիշեր շատ ծիծաղեցան , ըմպեցին և կերան :

Քիչ մ'ատենէն վերջը զուարթութեան շարժին անցնելով՝ մերթ մերթ այնպիսի խօս-

քեր կը շուէին 'ի մեծ զուարճութիւն Նանինի՞
Քրիստանի և Մարգարիտայի, յորոց կ'ախար-
ժին ոմանք, և որք միշտ ազա են գայնա ըսող
բերանին: Աստօն արձակ համարձակ կը դը-
ուարճանար: Զգայուն երիտասարդ մ'է անիօ
բայց ամա՛ս որ միտքն առաջին ունակու-
թիւններէն քիչ մը եղծեալ է:

Ես ալ կ'ուղէի զուարթանալ, անտարբեր
արտով և խորհուրդով նկատել աչքիս առջև
եզոզ բաները, և մասնակցիլ այդ ուրախութեան
որ կարծես ճաշին կերակուրներէն մին էր:
բայց սակաւ առ սակաւ ազմուկէն մեկուսա-
ցայ. դաւաթս լի մնացեր էր, և գրեթէ կը
դիտէի տեսներով չքնադադեղ քանասակայ կին
մը՝ որ բեռնակրի պէս կ'ըմպէր ու կը խօսէր,
և կը ծիծաղէր ամենէն գայթակղեցուցիչ խօս-
քերը լսելով:

Յակայն այն խնդու մը, անվայել խօսակ-
ցութիւնները և արբեցութիւնը, զորս շուայ-
տութեան հետեանք կը համարէի յայլ կոչնա-
կանս, թուէր ինձի Մարգարիտա մտնալու
կարօտութիւն մը, տենդ մը և դիւրադրող-
ութիւն ջղաց: Իւրաքանչիւր Շամբանիայի
գինւոյ դաւաթը քամելէն յետոյ այտերը կը
ծածկուէին ջերմնական կարմիր դունով. ըն-
թրոեաց սկիզբն ունեցած թեթեւ հաղը գայ-
բանալով ստիպուեր էր դըռնին ամբողջ թի-
կուքը յենլու և ամէն անդամ հազարուն
մեանովը կուրծքը կը սընդէր:

Ար փշտանայի կրած ցաւերուն վրայ, զոր
կը պատճառէին անշուշտ իւր տկար մարմնայն
կրած ամենօրեաց անկարգութիւնները:

Վերջոյնս հասաւ այն զարհուրելի պահը

դոր գուշակեր էի : Ընթրեաց վերջը Մարգարիտա սաստկադոյն հագէ մը բռնուեցաւ , կարծեցի թէ ներսէն կուրծքը կը սլաւաւառուէր : Խեղճ աղջիկը ծիրանեղոյն եղաւ , աչերը փակեց ցաւոց սաստկութենէն , և շուրթները տարաւ դենջակը՝ դոր արեան կաթիլ մի ներկեց : Այն ատեն յարեաւ և յարդարանաց խուցն ընթացաւ :

— Ի՞նչ ունի Մարգարիտա , հարցուց կասթօն :

— Ունեցածն այս է որ շատ ծիծաղելուն համար արիւն կը թքնէ , սլաւաստիսանեց Բրիւտանա : Մի՛ վախէք , բան մը չէ . ամէն որ այս բանս կը հանդիպի : Հիսնա՛ կը դառնայ : Մինակ թողունք դանի , որովհետեւ անանկ կ'ուզէ :

Իսկ ես չկրցի ինքզինքս բռնել , և Մարգարիտայի ետեւէն վաղեցի , մինչ Բրիւտանա և Նանին դարմանալով կը ձայնովին դիւ :

Ժ .

Այն սենեակն ուր քաջուեր էր՝ կը լուսաւորէր սեղանի մը վրայ դրուած կանթեղ մը Մարգարիտա «դանափէին» վրայ ինկած , սրբեղօտը քակած , մէկ ձեռնը սրտին վրայ դրեր , իսկ միւսը կախ թողուցեր էր : Սեղանին վրայ դրուած ջրով կէս լցեալ ամանի մը մէջ կը տեսնուէին արեան նուրբ թելեր :

Մարդարիտա այլադուճած և բերանը կի-
սարաց՝ կը ջանար շունչ առնել : Մերթ ընդ
մերթ կուրծքը կ'ուռնայր երկարածիդ հառա-
չով՝ որոյ արտաբերութեամբը սակաւ մի ըս-
փոփուելով քանի մը վայրկեան հանդստու-
թիւն կը վայլէր :

Աւանց իմանալուն մտակցոյ իրեն , նստայ
քովը և բռնեցի դանափի, ին վրայ դրած ձեռնը :

— Դո՞ւք էք եղեր , ըսաւ ժպտելով :

Կ'երևի թէ այլադուճած էի , վասն զի յա-
րեց և ըսաւ .

— Մի՞թէ դո՞ւք ալ հիւանդ էք :

— Ո՛չ . բայց դուք ի՞նչպէս էք հիւանա :

— Քրեթէ աղէկ եմ , և դայս ըսելով սրը-
քեց արտասուքը՝ դոր հազը բերեր էր յաչս
իւր . ես արդէն սովորեր եմ այս բանիս :

— Ձեր առողջութեան կը մնասէք , տիկին ,
ըսի այն ատեն այրայլած ձայնիւ . եթէ ձեր
բարեկամը կամ աղդակունն ըլլայի , չէի թո-
ղուր որ այդպէս կեանքերնիդ համառօտէք :

— Արդարեւ չարժեր որ աղակէք ասոր հա-
մար , կրկնեց դառն եղանակաւ , նայեցէ՛ք ,
ուրիշներուն փոյթը կ'ըլլայ՝ որովհետեւ դի-
տեն որ այս ախտիս դարման չ'իայ :

Ձայս ըսելով ելաւ և մտի կրակարանին
վրայ դնելով երեսին նայեցաւ հայելիին մէջ :

— Ի՞նչպէս այլադուճեր եմ , ըսաւ իւր սու-
րեղօտը կոճկելով և անուորի մտղերը շտկե-
լով : Հո՞գ չ'է , երթանք ճաշարան , եկէք :

Բայց ես նստած տեղէս չչարժեցայ : Հաս-
կըցաւ այդ տեսարանին յիս սրտածառած այ-
լայլութիւնը . մտակցաւ և ձեռնը կարկառե-
լով ինձ՝ ըսաւ .

— Օ՛ն երթանք :

Չեանք բռնելով համբուրեցի , և թըջեցի
զայն արտասուօքս՝ որոց երկար ատեն ժոյժ
ունեցեր էի :

— Տղայ՛ կա , ի՞նչ կա , ըսաւ քոյս նստե-
լով . նայէ , կուլաս : Ի՞նչ ունիս :

— Գուցէ անստուծիւն համարիս զայս ,
բայց տեսածս ուժգին խռովեց զսիրտս :

— Շա՛տ բարեսիրտ կա : Բայց ի՞նչ ընեմ՝
չեմ կրնար քնանալ . ուստի պէտք է որ քիչ
մը դբօսնում :

Սակէ զատ , ինձ պէս աղջիկ մ'աւելի եղեր
է , կամ պակաս , ի՞նչ կըլլայ որ : Բժիշկները
կ'ըսեն թէ թքած արիւնս սպրօնչներէն կու-
ղայ . հաւատալ կը կեղծեմ , և աւելի բան
չեմ կրնար ընել նոցա համար :

— Մտի՛կ ըրէ , Մարգարիտա , ըսի այն ա-
տեն զեղմամբ սրտի՛ զոր շիրցի սանձել . շը-
գիտեմ ո՛ր աստիճան աղղեցուծիւն պիտի
ունենաս կենացս վրայ . սակայն քաջ գիտեմ
որ այս ժամուս չըկայ մէկը , և ոչ քոյրս իսկ ,
որոց վրայ այնչափ հոգ ունենամ առաւել ,
քան ձեր վրայ : Զքեզ տեսնելէս ՚ի վեր այս-
պէս եղայ : Բարեմն կը սպաղատիմ քեզ , խը-
նամք տար առողջութեանդ վրայ , և հիմա-
կուան պէս ա՛լ մի՛ ապրիր :

— Ի՞նչ կ'ըսես . կը մեռնիմ կա՛ եթէ զիս
հոգամ : Ձիս ապրեցունող բանն իմ վարած
եռանդադին կեանքս է : Ինքզինքը խնամելն
աղէկ է այն կանանց համար՝ որք ընտանիք
կամ բարեկամներ ունին : Արբոր մենք՝ զմեզ
սիրողներուն ունայնութեանը կամ ցանկու-
թեանը չըկարենանք ծառայել , ամէն մարդ

կը բքանի զմեզ , և այն ատեն , երկարատև
դիչերները կը յաջորդեն երկարատև օրերուն :
Զայս՝ փորձով խնայայ ևս երկու ամիս յան-
կողին պատկած ատենս . երեք եօթնեկէն
վերջը ոչ ոք եկաւ զիս տեսնելու :

— Իրաւ է որ ևս ազգականդ կամ բարե-
կամդ չ'ես , կրկնեցի , սակայն եթէ ուզես՝
իրբև եղբայր կը հոգամ և բնաւ չ'ես թողուր
զքեզ , և առողջութիւնդ դարձեալ կ'ստա-
նաս : Այն ատեն , եթէ զօրաւոր համարեա
ինքզինքդ և եթէ ուզես՝ վերստին կ'սկսիս
վարել արդի կեանքդ : Բայց ապահով եմ որ
սուսաւել կ'ընարես խաղաղաւէտ կեանքը , ո-
րով բարեբառաւ ըլլալով կրնաս գեղեցկու-
թիւնդ անեղծ պահել :

— Այսպէս կը խօսիս այս գիշեր , որովհե-
տեւ դինին տխրեցուցեր է զքեզ , բայց չ'ես
կրնար այդ համբերութիւնն ունենալ՝ ընդ
որ կը պարծիս հիսն :

— Ներէ՛ ինձ , Մարդարիտա , երկու ամիս
հիւանդ էիր , և երկու ամիս , ամէն օր կու-
ղայի զքեզ հարցունելու :

— Զմարիտ է . բայց ինչո՞ւ վեր չ'էիր ել-
ներ :

— Ղասն դի այն ատեն տակաւին չ'էի
ճանչեր զքեզ :

— Միթէ ինձ պէս աղջկէ մը պէ՞տք է
պատկառիլ :

— Իմ կարծիքս է որ 'ի կանանց միշտ պատ-
կառելու է :

— Տրեւին կը հոգա՞ս զիս :

— Այո՛ :

— Ամէն օր քոյս կը կենա՞ս :

- Սյո՛ :
- Նաև ամէն գիշեր :
- Որչափ ժամանակ որ ուզես , միայն թէ չը նեղացունեմք քեզ :
- Ի՞նչ կ'անուանես զայս :
- Անձնութեամբ :
- Ուստի՞ առաջ կուգայ այդ զդայցումը :
- Բուն համակրութենէ մը՝ զոր կ'ըզզամք քեզ համար :
- Արեմն կը սիրե՞ս զիս . ըսէ՛ շուտ մ'անուկեղծութեամբ :
- Կարելի է . եթէ հարկ ըլլայ՝ օր մը կ'ըսուեմք քեզ , բայց այսօր չ'ըլլար :
- Աւելի աղէկ կ'ըլլայ որ բնառ չ'ըսես :
- Ինչո՞ւ :
- Որովհետեւ այդ խոստովանութենէ, որ երկու բան կրնան հետեւիլ :
- Ի՞նչ բան :
- Կամ չ'ընդունիմք զքեզ , այն ատեն կը թշնամանաս ինձ դէմ . և կամ ընդունիմք , այն ժամանակ ալ խեղճ հիւանդ , ջղուտ , տըխուր կամ զուարթ հարձ մը կ'ունենաս , որոյ զուարթութիւնը տխրութենէ առաւել թախճագին է , որոյ բերնէն արիւն կուգայ , որ տարուան մէջ հարիւր հազար ֆրանկ կուտէ : Ինձ նման տղջիկ մը՝ դքսին պէս ծեր բնչաւէտի մը համար աղէկ է , բայց ձեզ համար շատ ձանձրալի բան մը կ'ըլլայ : Եւ ըսածիս սպացոյցն ալ՝ այս է որ ամէն ունեցած երիտասարդ համանիներս վաղ թողուցին զիս :
- Պատասխան չէի տար , այլ կը լլակի միայն :
Սյն անկեղծ խոստովանութիւնը , այն վշտաւից կեանքը՝ զոր կը նշմարէի զայն ծածկող

տակե՛ճամուկ քողին ներքե , և դոր հէք աղջիկը
կը կը ջանար մտնալ շուպտութեամբ , ար-
բեցութեամբ և տքնութեամբ , այնպէս տը-
պաւորութիւն կ'ընէին իմ վրաս՝ որ պատան-
ձեր մնացեր էի :

— Ի՛նչ տղայական խօսքեր կ'ըսենք մենք
այլ , յարկեց Մարդարիտա : Տո՛ւր ձեռնդ և
մտնենք 'ի ճաշարան , որպէս զի չ'իմանան մեր
ուշանալուն պատճառը :

— Դու գնա՛ եթէ ուզես , բայց հրաման
տուր ինձ հոս նստելու :

— Ինչո՞ւ :

— Արովհետեւ դու արթութիւնդ կը վշտացու-
նէ զիս :

— Աւրեմն ախուր ըլլամ :

— Լսէ՛ , Մարդարիտա , թոյլ տուր ինձ բան
մ'ըսել՝ որոյ անշուշտ պիտի չ'հաւատաս՝ դայն
յաճախ լսելու սովորած ըլլալուդ համար .
բայց սցսու ամենայնիւ սուտ չ'է , և դուցէ
մէկ մ'ալ բնաւ չեմ կրկնէր դայն :

— Ի՛նչ է այն . . . ըսաւ ժպիտով մը՝ ո-
րով մանկատարդ մօյրերը կը լըսեն իրենց
մանկանց անխորհուրդ խօսքերուն :

— Այս է որ պքեզ տեսնելէս 'ի վեր , չ'դի-
տեմ ի՛նչպէս և ի՛նչու համար , մաս մ'ունեցար
իմ կենացս մէջ . 'ի դուր հաշածեցի 'ի մտացս
քու պատկերը . այսօր քեզի հանդիպելով՝ ա-
ռանց գ'քեզ տեսնելու երկու տարի անցունե-
լէս յետոյ , աւելի մեծ իշխանութիւն ունեցար
մտացս ու սրբտիտ վրայ . վերջապէս հիմա
որ ընդունեցար զ'իս , և ես ի՛նչ ծանեայ ըզ-
քեզ՝ գիտնալով միանդամայն թէ որչա՛փ տա-
րորինակ զդացումներ կան եղեր 'ի քեզ , ան-

Հրամանաց կարևոր եղար ինձ : Ար յիմարիս
ես , ոչ թէ միայն չ'սիրես դիս , այլ նաև թէ
որ արգիլես ինձ սիրել դ'քեզ :

— Բայց , ո՛ր եղկելի , ուրեմն շա՛տ հարուստ
ըլլալու ես : Չես դիտեր որ ես ամիսը վեց
եօթն հազար ֆրանսի ծախք կ'ընեմ , և թէ
առանց այդ ծախուց չ'եմ կրնար ըլլալ : Չե՞ս
դիտեր նաև , հէգ բարեկամս , որ քիչ ծամա-
նակի մէջ կ'սպառեմ բոլոր ինչքդ , և թէ
ընտանիքդ այնուհետև կ'արգիլէ քեզ ինձ պէս
կնկան մը հետ կենակից ըլլալէ : Սիրէ՛ դիս
իր բարեկամ , բայց ոչ ուրիշ կերպով : Ն'կ
դիս տեսնելու , ծիծաղի՛նք , խօսի՛նք , այլ
սակաւադիւտ կին մի՛ համարեր դիս , ար-
դիւնք մը չ'ունիս ես : Բարի սիրտ մ'ունիս ,
կարօտ ես սիրուելու , շատ երիտասարդ և
շատ զգայուն ըլլալուդ համար՝ մեր ընկերու-
թեան մէջ չ'ես կարող ապրիլ : Սիրէ՛ ամուս-
նացեալ կին մը : Ար տեսնես որ բարեսիրտ
աղջիկ մ'եմ ես , և անկեղծութեամբ այս բա-
ներս կ'ըսեմ քեզ :

— Ի՞նչ է այն , ի՞նչ կ'ընէք , աղաղակեց
Քրիւտանս՝ որոյ դալը չէինք լրամ՝ դրան
սեմին վրայ կենալով , մազերն աւրուած և
պարեգօտը քակուած : Այդ անկարդութեան
մէջ անտարակոյս Աստիօնին ձեռքն ըլլալու
էր :

— Կարևոր իրաց վրայ կը խօսինք , ըսաւ
Մարգարիտա , թողէ՛ք դ'մեզ քիչ մ'ատեն ,
հիմա կուգանք :

— Լաւ , ըսաւ , խօսեցէ՛ք տղայքս , ըսաւ
Քրիւտանս երթալով և դուռն ալ փակելով ,
իր աւելի ազդուութիւն մը տալու համար

եղանակին՝ որով ըսեր էր այս վերջին խօսքը :

— Տեսի , կրկնեց Մարդարիտա երբոր մի-
նակ մնացինք , ա՛լ մի՛ սիրեր դիս :

— Այն ատեն կ'երթամ :

— Ի՛նչ . ա՞յս աստիճան :

Շատ յառաջացած ըլլալուս համար . շէի
կրնար ետ ընկրկիլ . ատկէ դաս՝ այդ աղջի-
կը կը յուզէր դ'իս : Զուարթութեան՝ տխրու-
թեան՝ միամտութեան և պոռնկութեան խառ-
նուածք , իւր հիւանդութիւնն անդամ՝ որ
ածեցունելու էր ի նմա ազդեցութեանց զգա-
յախանութիւնը որակ , ս զիւրազրգուութիւն
ջգաց , կ'իմացունէին ինձ որ եթէ այն ատեն
իջխանութիւն չ'ունենայի այդ մտացող և թե-
թեամիտ կնկան վրայ , կը կորուսնէի զնա իս-
պառ :

— Տեսնե՛նք , ճշմարիտ է ըսածդ :

— Շատ ճշմարիտ :

— Արեմն ինչո՞ւ ասաջ չ'ըսիր ինձ դայս :

— Ե՛րբ կրնայի ըսել :

— Երկրորդ օրն այն օրուան՝ յորում ներ-
կայացուցին զքեզ ինձ ՚ի կատակերդակ Օրե-
րան :

— Կարձեմ թէ աղէկ ընդունելութիւն շէ-
իր ըներ ինձ , եթէ զքեզ տեսնելու եկած
ուլայի :

— Ի՛նչու :

— Արսի՛կտե ասջի իրիկունն ապուչ մը
համարեր էիր դիս :

— Ճշմարիտ է այդ . բայց այն ժամանակ
կը սիրես եղեր դիս :

— Այո՛ :

— Մակայն այնու հանդերձ , իսողէն վեր-

ջրն անշուշտ դացիր սրահելելու և հանդարտ
քնացար : Գիտենք մենք այդ տեսակ այլը-
փանքը :

— Մեծապէս կը սխալիս : Գիտե՞ս , ի՞նչ բ-
րի այն իրիկունք :

— Ա՛յ :

— Անդգիտեման սրճանոցին դուռը քեզ լա-
ստակէ՛ս յետոյ , կառքիդ հետեւեցայ , և կառ-
քէն միայնակ իջնելդ և միայնակ 'ի տուն մըտ-
նելդ տեսնելով յոյժ ուրախացայ :

Մարդարիտտ սկսեց ծիծաղիլ :

— Ի՞նչ բանի համար կը ծիծաղիս :

— Այի՛նչ :

— Կ'աղաչեմ՝ լա՛կ , ապա թէ՛ ոչ պիտի կար-
ծեմ թէ՛ դարձեալ կը ծաղրես դիս :

— Զե՞ս բարեկանար :

— Ի՞նչ իրաւամբք կրնամ բարեկանալ :

— Արեմն , դիտցիր որ սրաւճառ մ'ունի , ի
տունս մինակ մըտնելու :

— Ի՞նչ պատճառ :

— Մէկն ինձ կը սպասէր :

Եթէ դանակի հարուած մի տար ինձ , այն-
քան չէր վիրաւորէր դիս : Աստի ոտք ելայ ,
և դձեռնս կարկառելով լաի .

— Բարեա՛ւ մնացէք :

— Բա՛ջ դիտէի որ պիտի բարեկանայիր , բ-
սառ : Մարդիկ սաստիկ հետազոտութեամբ
կը խնդրեն դիրենք վշտացունող բանը դիտ-
նալ :

— Բայց կ'ապահովեմ դձեղ , յարեցի ան-
տարբեր կերպով , իբր ցուցնելու համար թէ
բնառ սէր չունի , կ'ապահովեմ դձեղ որ բը-
նառ ջրարկացայ : Բնական էր որ մէկն սպա-

ակր ձեզ , ինչպէս նաև բնական բան մ'է որ
ես ալ առաւօտեան ծամն երեքին մեկնիմ'
աստի :

— Միթէ քե՞զ ալ մէկը կ'սպասէ :

— Ոչ , բայց պէտք է որ երթամ :

— Երթա՞ս բարեա՛ւ , այն ատեն :

— Կը վանե՞ս զիս այսպէս :

— Ոչ երբեք :

— Ի՞նչու ուրեմն կը վշտացունէս զիս :

— Ի՞նչ վիշտ պատճառեցի քեզ :

— Ըսիր թէ մէկը քեզ կ'սպասէ եղեր :

— Չ'կրցի ծիծաղս բռնել մտածելով որ շատ
ուրախացեր ես եղեր իմ մինակ 'ի տուն մրտ-
ներս տեսնելով , մինչ պատճառ մ'ունէի այդ-
պէս դործելու :

— Մարդս յաճախ կ'ուրախանայ տղայա-
կան բանի մը վրայ , և անգթութիւն է այդ
ցնծութիւնը փարատել , երբ կրնայիր զայն
թողլով աւելի բարեբաստ ընել զայն զգացող
անձը :

— Բայց դո՞ւ կը կարծես զիս . ոչ կոյս և
ոչ ալ դքսուհի եմ՝ ես : Այս օր ևեթ ծանու-
եաց զքեզ , և պարտական չեմ իմ դործոցս
վրայ քեզ համար տալու : Դիցուք թէ օր մը
հարձդ ըլլամ , բայց նախ զիտնարու ես որ
քեզնէ առաջ ուրիշ հոմանիներ ունեցեր եմ :
Թէ որ հիմակուրնէ առ նախանձու այսչափ
ցանուս ինձ , հասցա ի՞նչ պիտի չընես յետոյ ,
եթէ հոմանիս ըլլաս : Ի՞նչ տեսակ մարդ ես
դու :

— Արովհետև ինձ պէս . ոչ ոք սիրեր է
զքեզ տակաւին մինչև ցարդ :

— Տեսնե՛նք . ստուգիւ շատ կը սիրես զիս :

- Ա՛րշամի որ կարելի է սիրել , կարծեմ :
- Ա՞ր ատենէն 'ի վեր :
- Այն օրու ընէ սկսեալ յորում կառքէն իջնելով Սիւսին խանութը մտնելդ տեսայ . անկէ 'ի վեր երեք տարի կայ :
- Շա՛տ գեղեցիկ բան է ասի , դիտե՞ս : Ըսէ՛ ուրեմն հիմա , ի՞նչպէս կրնամ շնորհապարտ ըլլալ քու իմ վրայ ունեցած գորովաւիր սիրոյդ :
- Սակաւիկ մի սիրելով դիտ , սրատախանեցի սրտի բարախանամբ որ գրեթէ լեզուս կը բռնէր . որովհետեւ , թէպէտեւ կէս մը հենդնահան ծպխանելով վերոյիշեալ խօսքերս ըսեր էր , սակայն թուէր ինձ որ Մարդարիտա կ'սկսէր մասնակից ըլլալու սրտիս յուզմանցը , և թէ 'ի բազմաց հետէ ցանկացեալ ծամուռն կը մերձենայի :
- Հասցա գդուքսն ի՞նչ ընեմ :
- Ա՞ր դուքսը :
- Իմ ծերունի նախանձոտս :
- Նա բան մը չիմանար :
- Բայց թէ որ իմանայ :
- Կը ներէ քեզ :
- Ա՛հ , ոչ . կը լքանէ գիտ , և ի՞նչ կ'ըլլամ ես այն ատեն :
- Սրդէն այն վտանգին մէջ դրի՞ր ինքզինքը ուրիշի մը համար :
- Ա՛ւստի դիտես :
- Արովհետեւ սրատուիրեցիր որ ոչ ոք ընդունին այս գիշեր 'ի տուն :
- Իրաւ է , բայց անի կարևոր բարեկամ մ'է :
- Ընտո՞ր հոգ չես ըներ , վասն զի այսպիսի

օր ծամուս նորա համար դուսդ փակեալ է :

— Քեզ կը վայլե՞նք կշտամբել զիս , մինչ
զքեզ և բարեկամդ ընդունելու համար այն-
պէս ըրի :

Սակաւ առ սակաւ Մարգարիտայի մերձե-
նալով պատեր էի զնա բազկօքս , և կ'զգայի
նորա փախուկ մարմնոյն թեթեաքեռն ծան-
րութիւնն իմ միտքերեալ ձեռացս վրայ :

— Չգիտես որքա՛ն կը սիրեմ զքեզ , կ'ըսէի
ցած ձայնիւ :

— Ջշմարի՞տ է :

— Կերդնում թէ ստոյգ է :

— Ուրեմն , եթէ խոտաանաս իմ ամեն կա-
մացս կոյր զկուրացն հնազանդիլ առանց որ և
է զխառնութիւն և հարցում ընելու , դուցէ
սիրեմ զքեզ :

— Ի՛նչ որ ուզես կը կատարեմ :

— Բայց յառաջուց ըսեմ քեզ , կ'ուզեմ ան-
կախ ըլլալ , որպէս զի ուղածս կարենամ դոր-
ձել , առանց խնայ սալու քեզ՝ վարած կե-
նացս ամենափոքր հանդամանքն ալ : Իրազ-
մաց հետէ կը խնդրէի երիտասարդ և հնա-
զանդ հոմանի մի , որ անկասկած սիրէր զիս
և սիրելի ըլլար ինձ առանց իրաւանց : Չկըր-
ցի բնաւ այսպիսի մէկը գտնել : Մարդիկ ,
փոխանակ դո՛ւ ըլլալու իրենց տրուած երախա-
եաց համար՝ զոր հազիւ մի անդամ կը յու-
սային ընդունիլ , համար կը պահանջեն ի-
րենց հոմանոյշն ներկային , անցելոյն և ա-
պագային վրայ խակ : Քանի որ ընտանեկան
կ'ուզեն նորա վրայ իշխել , և որչափ որ ու-
ղածնին ընդունին , այնչափ ալ պահանջող
կ'ըլլան : Կը խնդրեմ արդ նոր հոմանի մ'ու-

Նեկնալ, բայց կ'ուզեմ նաև որ ձոխացած երեք սակաւագիւտ բարեմասնութեամբ, որք են վատաճութիւն, հնադանդութիւն և պղտւշութիւն :

— Սմեն ուզածդ կը կատարեմ :

— Կը տեսն'ենք :

— Ե՞րբ :

— Առ յապայն :

— Ի՞նչու :

— Արտիճեալ, ըսաւ յառնելով և աւաւօտը բերուած կարմրադոյն կամելիաներու խաչոր փունջէ մը կամելիա մ'առնելով, և դայն պղեատիս օղին անցունելով, արտիճեալ դաշնադիրք 'ի դործ շէն դրուիր այն օրը՝ յորում կը ստորագրուին :

Դժուար չէր վայս հասկընալ :

— Ե՞րբ գամ, հարցուցի սեղմելով զնա բազկացս մէջ :

— Երբ այդ կամելիան թառամի :

— Ո՞ր ատեն կ'ըլլայ :

— Վաղը, տասնըմէկէն մինչև կէս գիշեր :

— Գո՞հ ես հիմա :

— Կը հարցունե՞ս :

— Չ'ըլլայ որ բարեկամիդ, Բրիւտանիան և ոչ որ և է մարդու բան մ'ըսես :

— Կը խոստանամ :

— Արդ համբուրէ դիս, և մտնենք 'ի ճաշարանս : Իւր շուրթները մատոյց ինձ 'ի համբոյր, դարձեալ շտկեց մաղերը, և սենեկէն դուրս ելանք, ինքն երդելով, իսկ ես կէս մը յիմարացած :

Արահին մէջ կանկ առնելով ցած ձայնիւ ըսաւ ինձ .

— Անշուշտ դարմացած ըլլալու ևս դքեղ,
խակոցն ընդունելուս վրայ : Չիտե՞ս ուստի
յառաջ կուգայ այս բանս : Ասանք զի յարեց
ձեռնս բռնելով և դնելով զայն սրտին վերայ՝
որոյ ուժգին և արագ աճեալ բարաստունքը
կ'իմանայի, փասն զի դիտնալով որ քիչ ժա-
մանակ ունիս սպրեւելու, միտքս դրի կրցած իս-
չստի օգուտ քաղել կեանքէս :

— Կաղաչեմ, զայս մի՛ ըսեր :

— Ո՛հ, մի՛ երկնչիր, յարեց ծիծաղելով, իմ
կարծառու կեանքս քու առիտանքէդ առաւել
երկարատեւ պիտի ըլլայ :

Զայս ըսաւ և երդելով 'ի ճաշարան մտաւ :

— Ո՛ւր է, հանին, հարցուց, զԱստիժօն և
դժբիւտանս մինակ տեսնելով :

— Սենեկիդ մէջ կը քնանայ՝ պառկելու դ-
մնալով, սրատասիտանեց թրիւտանս :

— Թշուա՛ւ աղջիկ, շատ կը նեղեմ գանի :
Օ՛ն, աեարք իմ, երթալու ժամանակ է :

Տասը վայրկենէն վերջը Աստիժօն և ևս տը-
նէն ելանք : Մարդարիտա ձեռնս թօթվեց
ողջունելով զիս, և թրիւտանսին հետ մնաց :

— Է՛յ նայիմք • ի՞նչպէս գտար զՄարդարի-
տան, հարցուց ինձ Աստիժօն :

— Հրեշտականման աղջիկ մ'է, և յոյժ կը
սիրեմ զնա :

— Կը կասկածէի • ըսի՞ր իրեն :

— Այո՛ :

— Հաւատա՞ց :


— Ո՛չ :

— Թրիւտանսին շնամիր :

— Ի՞նչ • հաւատա՞ց նա :

— Աւելի ևս ըրաւ, սիրելի • շկարծուիք :

սակայն տակաւին շատ արեկ է եղեր այդ
Տիւֆերնուան :



ԺԱ.

Արման՝ հոս համեւելով տակաւիկ մի կանկ
առաւ :

— Աղաւթեմ, պատուհանը փակէ, ըստ
իւձ, վասն զի կը մտիմ, և պիտի պառկիմ :

Պատուհանը փակելէս յետոյ, Արման, որ
տակաւին յոյժ անար կը, հանեց ցայդ անոց
հանդերձը, և անկողնոյն մէջ պառկելով
սնարից վրայ դղլաւ ինչ հանդիցուց տակա-
ւիկ մի, նման երկարատեւ ընթացքով յող-
նած կամ դառն յիշատակներով խռովու-
մարդու մը :

— Շատ խօսեցար, ըսի իրեն, եթէ ուզես,
երթամ, որպէս զի քնանաս, ուրիշ ատեն
պատմութիւնդ կը շարունակես :

— Միթէ ձանձրացա՞ր :

— Ընդ հակառակն :

— Տեսնեմ շարունակեմ, վասն զի եթէ մի-
նակ թողուս զիս՝ չեմ կրնար քնանալ :

Սկսեց պատմել առանց խորհելու, որովհե-
տե մտածելու կարօտութիւն չունի, որ այն
հանդամանաց իւր մտոյ մէջ անջինջ դրօշակաւ
ըլլարուն համար :

— Երբ որ տունս մտայ՝ շարակեցայ, սկսայ
օրուան մէջ տեղի ունեցած իրողութեանց վը-
րոյ խորհրդածել: Մարդ արիտայի հանգիստե-
լիս, ներկայացուելա և նորա ինձ ըրած խոս-
տումներն այնչափ արագադէպ և անակըն-
կալ կերպով հասեր էին՝ որ մերթ ընդ մերթ
երազ տեսած կը կարծէի: Մտկայն այս տա-
ջին անդամ չէր որ Մարդարիտայի պէս աղ-
ջիկ մը կը խոստանար մէկուն ընդունել զնա:

Ի դուր այս խորհրդածութիւնները կը կրկի-
նէի մտքիս մէջ, քանզի ապառայ հոմանոց-
չիս յիս ներդործած առաջին ապաւորութիւնն
այնքան դորաւոր եղեր էր՝ որ տակաւին կը
տեւեր: Յամառութեամբ չէի ուղեր այլոց նը-
ման աղջիկ մը կարծել զնա, և սոխորական
անապարծութեամբ պատրաստ էի հաւատալու
որ ինքն ալ ինձ համար անյաղթելի բերում
մը զգարու էր:

Մտկայն աչերուս առջև կային իրարու հա-
կառակ շշուղմութիւ օրինակներ, և լսեր էի
նաև որ Մարդարիտայի սէրը՝ ուտելեաց նը-
ման՝ երբեմն սուղ, երբեմն ալ ածան դնով
կը արուի եղեր:

Քայց միւս կողմանէ ինչպէս կրնայի հաւա-
տալ այդ համբաւոյն, մինչ տեսեր էի կոմսին
մերժուիլը, զոր յիւր տունը ճանչեր էի: Քայց
պիտի պատասխանեա որ այն մարդէն չէր ա-
խորժեր, և թէ, զուքան զնա փառաւորա-
պէս հողալուն համար թուլի կ'ընարէր իրեն
հաճելի մարդ մ'ունենալ, քան այնչափ նե-
ղութեամբ համանի մ'առնալ: Ս, յն ատեն ին-
չժժ կը մերժէր գոխուն, զհանձարիստատ և
զընչաւէս կասթնտը, և կ'ընդունէր զիս՝ զոր

այնչափ ծաղրեր էր առաջին անգամ տեսնելուն :

Սրդարե տարուց մը մէջ շկտտարուելու բաները , երբեմն վայրկենի մը մէջ 'ի դլուխ կ'ելենեն եղեր :

Ընթրիքն ընտղներէն ես միայն աղակեր էի Մարդարիտայի սեղանէն ելնելը տեսնելով : Կառէն ընթացեր էի , և սրտիս սաստիկ այլայլութիւնը ծածկել չգորելով արտասուեր էի նորա ձեռնը հասրուրելուս ատեն : Այս հանգամանքը , և երկու ամիս հիւանդութեանը ժամանակ ըրած ամենօրեայ սցցելութիւններս ցուցուցեր էին իրեն՝ որ ես շէի նմաներ յինէ յառաջ ճանցած մարդկան , և դուցէ իւր մտքէն ըսեր էր իսկ որ կրնար ընդունիլ համանի մը որ իւր սէրը այս կերպով բացատրէր և թէ սաի յաճախ պատահելուն համար՝ դէշ հեռեանք մը շէր կրնար ունենալ :

Յայանի է այս ենթադրութեանց հաւանական ըլլալը : Բայց ի՞նչ փոյթիս էր իւր հաւանութեան պատճառը , այս միայն ստոյգ էր որ դիտ ընդուներ էր :

Սրդ կը սիրէի զՄարդարիտա , նա՛ իմս պիտի ըլլար . ասկէ աւելի ի՞նչ կրնայի իրմէ խնդրել :

Սակայն , կը կրկնեմ գարձեալ , թէ ոչուե նա անատակ կին մ'էր , այլ ես դուցէ բանաստեղծական երևակայութեամբ , այնքան անյոյս սէր մ'ունեցեր էի նորա վրայ՝ որ որչափ աւելի մերձեանայի այն պահուն՝ յորում կարօտութիւնս պիտի շունենայի յուսալու՝ այնքան աւելի պարանոյսը կը տիրէր սրտիս մէջ :

Աչերս շինակեցի գիշերն 'ի բուն : Յասիտա-
կութեան մէջ էի և կէս մը յիմար դարձեր
էի : Մերթ զիս բաւական գեղեցիկ , հարուստ
և պերճաբարոյ շէի համարեր այնպիսի կին
մը ստանալու համար . մերթ սնասխառութիւն
կը գգայի յիս մտածելով թէ պիտի փայելի
զնա . յետոյ երկնշելով որ շրջայ թէ Մարգա-
րիտայի հաւանութիւնը վարանցուկ յօժարու-
թիւն մ'ըլլար , և գուշակելով նաև վաղա-
հաս անճատման դժբախտութիւնը , աւելի
չաւ կը համարէի շերթալ առ նա երեկոյն ,
այլ գրով խնայունել իմ վախս և այնպէս իր-
մէ մեկնիլ : Այս խորհրդածութիւններն ընե-
լէս յետոյ՝ անսահման յոյսերու և վատահու-
թեան մէջ կը լողայի : Ապագային վրայ ան-
հաւատալի բաներ կ'երթայէի . ինքնիրենա կը-
սէի թէ այդ աղջիկն ինձ պիտի պարտէր առ
յսպայն զիս նիւթական և բարոյական բը-
ժբշկութիւնը , թէ իրեն հետ պիտի անցու-
նէի զկեանս իմ ողջոյն , և թէ նորա սէրը
զիս առաւել պիտի երանաւեանէր քան թէ
անարատ կուսի մը սէրը :

Չեմ կրնար հիմա կրկնել այն յողնադան
մտածութիւնները՝ սրբ սրտէս 'ի գլուխս կը
բարձրանային , և կը դադրէին տակաւ ընայն
մէջ՝ որ կարաւ զիս առաւօտան մօտ :

Ժամն երկու էր՝ երբ զարթեաց : Օդը շատ
գեղեցիկ էր : Չեմ յիշեր որ կեանքս այն օ-
րէն աւելի զուարթադեղ և լի երեցած ըլլայ
ինձ : Արախտութեամբ կը յիշէի նախընթաց
օրուան յիշատակները հանդերձ երեկոյն ու-
նեցած ուրախալի ակնկալութեամբքս : Փու-
թով զգեստներս հագայ : Գոհ էի , և կարող

կը համարէի ինքզինքս ամենէն դուլելի գործոց խիզախելու : Երբեմն սիրտս կը խայտար 'ի ցնծութեանէ և 'ի սիրոյ : Մեզմիկ տենդ մը կը յուզէր զիս : Ա՛լ փոյթս շէին այն պատճառները՝ որովք պարապեր էի քնանալէս յառաջ . ոչ ևս ինչ տեսնէի բայց զարդասիս միայն , ոչ ևս ինչ խորհէի այլ 'ի ծամն յորում վերատին պիտի տեսնէի զՄարդարիտա :

Զկրցի տունս մնալ . սենեակս կարի փոքր կ'երևար ինձ պարունակելու համար դրարեբաստութիւնս . բովանդակ բնութեան կարօտ էի զսիրտս զեղլու համար . ուստի դուրս ելայ :

«Տ'Անթէն» փողոցէն անցայ : Մարդարիտայի կիսակառքը դուռը կը ստասէր «Շանդ-Կլիզէ» դաղի , և առանց ճանչելու կը սիրէի զամենայն մարդ՝ որոց կը հանդիպէի ճամբուն վարայ :

Սէրն ինչպէս բարեզուտ կը դործէ զմարդ : Ժամ մը «Մարլի» շրջակայքը յածելէս յետոյ , հեռուէն տեսայ Մարդարիտայի կառքը շճանեաց դնա , այլ դուշակեցի :

Յաւարտ «Շանդ-Կլիզէի» կառքը կեցունել տուա , այն ատեն բարձրահասակ երիտասարդ մը խօսակիցներէն հեռանալով եկա Մարդարիտայի հետ քիչ մ'ատեն խօսեցաւ . ապա դարձեալ իւր բարեկամաց քովը դնայ . և կառքն ալ աներևութացաւ : Իսկ ևս այն խմբին մօտենալով տեսայ որ Մարդարիտայի հետ խօսող երիտասարդը Ա. Աման է եղեր՝ որոց կենդանադիրը տեսեր էի , և որոց Մարդարիտա կը պարտէր իւր վիճակը :

Այն մարդուն համար առջի դիշեր դուռը

փակել տուէր էր . ուստի ենթացողքի այն-
պէս դորձելուն պատճառն խնայունելու համար
միայն կառքը կեցունել տուեր էր . և կը յու-
սայի նաև որ նոր պատճառանք մ'ալ հնարեր
էր միանդամայն՝ հետևեալ դիշերը շքնուուն-
լու համար զնա :

Չդ իտե՛մ ի'նչպիսի անցուցի օրուան մնացած
մասը . քայլեցի , ծխեցի , խօսեցայ , բայց ը-
տած խօսքերէս և տեսած բարեկամներէս և
ոչ մին կը յիշէի . երեկոյեան ժամը տասնին տ-
տենները : Այս միայն միտքս կուգայ որ տու-
նքս մտայ , երեք ժամ պճնեցայ , և դուցէ
հարիւր անգամ նայեցայ կըսողաւոր ու ծոցի
ժամացոյցներուս՝ որք դժբախտաբար հաւու-
սար կը քայլէին : Ժամը տասն ու կէսին հաս-
նելուն պէս , երթալու ժամանակն է ըսելով
դուքս ելայ :

Այն ատեն «Քրօվանա» փողոցը կը նստէի ,
ուստի «Մօն-Պան» փողոցը մտայ , անցայ «Պուլ-
փարոն» , և հետզհետէ «Ղուխ-Ղը-Արան» և
«Քօր-Մահոն» փողոցներէն քայլելէս յետոյ ,
վերջապէս տ'Անթէն փողոցը հասայ : Մար-
դարիտայի պատուհանները նայեցայ . լոյս
կար : Գուռը զարկի , ու դռնապանին հար-
ցուցի թէ օրհորդ Աթիլին տունն է :

Պատասխանեց որ ժամը տասնու մէկէն ա-
ռաջ բնաւ ՚ի տուն չդառնար եղեր : Ժամա-
ցոյցս նայեցայ : Արժէի թէ դանդաղաքայլ
եկեր եմ . մինչ հինգ վայրկենի մէջ և եթ Քր-
օվանա փողոցէն Մարդարիտայի տունը հա-
սեր եմ եղեր :

Այն ատեն յաճիլ սկսայ այն անկրակալ փո-

ըոցին մէջ՝ աւառի անցնող դարձող շկար այն ժամուն :

Ահա ժամէն Մարդարիտա եկաւ : Ահա ապա քէն իջնելու ասեն շուրջը նայեցաւ , էբբ թէ մէկը խնդրէր :

Ապա քը դարձաւ դնաց , որովհետեւ ասանք մէջ ասպատանն և կասաց կայանք շկար :

Երբոր Մարդարիտա դուռը դարձնելու վրայ էր , մերձեցայ և .

— Բարի՛ իրիկունն , ըսի :

— Ի՞նչ , դո՞ւ ևս եղեր , ըսաւ այնպիսի եղանակաւ՝ որով յայտնի էր ներկայութենիս չախորժիլը :

— Մի՛թէ շնորհակցեցի՞ր ինձ այսօր առ քեզ դու :

— Իրա՛ւ , մտցեր էի :

— Այս խօսքս խռովեց առաւօտեան խորհրդածութիւններս և օրուան մէջ ունեցած ամեն ակնկալութիւնքս : Սակայն նորա վարմանց ստիտած ըլլալուս համար կեցայ , այն որ երբեմն անշուշտ լի ըներ : Տուն մտանք :

Հանին արդէն դուռը բացեր էր :

— Բրիւտանա եկա՞ւ , հարցուց Մարդարիտա :

— Ա՛յ , Տիկին :

— Գնա՛ ասրապրէ՛ որ երբ դայ՝ տեսնի՞ զիս : Հասի և առաջ մարէ՛ պահին կանթեղքս և եթէ ոք կայ՝ պատասխանէ՛ որ հոս չեմ , և պիտի շվերադառնամ :

Յայտնի էր կանխակալ մտածութեան մը , տիրելը մտայր մէջ , և կամ տաղաուկի մը դէմ ներդայած ըլլալը : Մարդարիտա պատկերու դնաց սենեակը . խի ևս կեցած տեղս անշարժ ու անդարձառ մնացեր էի :

— Ե՛կ , ըսաւ ինձ :

— Գլխարկը և թաւչէ մեկնոցը հանելով
անկողնոցն վրայ նետեց , յետոյ թիկնաթոթ
մը վրայ նստաւ՝ կրակին քով զոր մինչև ա-
մառան սկիզբը վառել կուտար , և ծամա-
ցուցին շղթային հետ խաղալով ըսաւ .

— Ի՞նչ լուր կայ :

— Ոչինչ , միայն՝ այս իրիկուն դարուս վրայ
զղջացի :

— Ինչո՞ւ :

— Արովհետև նեղացած ես , և անտարա-
կոյս ճանճրութիւն պատճառելու եմ քեզ :

— Ոչ երբէք : Մէկու մը դէմ նեղացած չեմ ,
այլ միայն հիւանդ եմ , բոլոր օրը ցաւերու
մէջ անցուցի , չքնացայ , և սաստիկ անդար
մ'ուներիմ :

— Կուղե՞ս երթամ , որպէս դի պառկիս :

— Ո՛չ , կեցիր . թէ որ ուղեմ՝ կրնամ առ-
ջևդ պառկիլ : Նոյն ատեն լսեցինք դրան
զարնուիլը :

— Ո՞վ է դարձեալ , ըսաւ նեղանալով :

Բիչ մ'ատենէն վերջը դարձեալ զարնուե-
ցաւ :

— Ո՛չ որ կը բանայ , պէտք է որ ես եր-
թամ բանամ :

Ստուգիւ ոտք ելաւ և ըսաւ ինձ :

— Դու հոս կեցի՛ր :

Դատիկոնէն անցաւ , և լսեցի մտից դրան
բացուիլը : — Սկանջ տուի :

Ներս մտնողը ճաշարանին մէջ կեցաւ : Ս-
ուաջին խօսքերէն իմացայ որ երիտասարդ Ն-
կուման էր :

— Ի՞նչպէս ես , այս իրիկուն , կը հարցունէր :

— Գե՛ղ , պատասխանեց Մարդ արիտա կրտսեկ ձայնով :

— Մի՛թէ կը նեղե՞մ գրեց :

— Գուցէ :

— Ի՞նչ բրի քեզ , սիրեցեալդ իմ Մարդարիտա՛ որ այդպէս կ'ընդունիս դիտ :

— Սիրելի , բան մ'ըրած չունիս : Հիւանդ եմ , պիտի պառկիմ , ուստի կ'աղաչեմ դնա՛ : Անտանելի բան մ'է ինձ համար շկարեմալ երեկոյն տունս մանեղ առանց հինգ վայրկենէն վերջը գրեց տեսնելու : Ի՞նչ կը խընդրես յինէն , մի՛թէ կուզես որ ես քու հոտանոցը ըլլամ : Բայց հարիւր անգամ ըսի թէ անկարելի է , վասն զի կ'առեմ գրեց , և թէ ուրիշ մը կրնաս դիտել : Այս վերջին անգամ կը կրկնեմ այսօր , չեմ ուզեր գրեց , հասկըցար , ուրեմն երթաւ բարեաւ , հիմա : Ահա , հանին եկաւ , ճրագը բռնէ քեզ : Գիշեր բարի :

Ա՛լ ուրիշ բան չյարեց , և առանց խակ լրտելու խօսքին՝ դոր երիտասարդը քրթմնջելով կ'ըսէր՝ խկոյն սենեակը դարձաւ , և ուժգին փակեց դուռը , ուստի հանին ալ անսիջապէս ներս մտաւ :

— Հասկըցա՞ր , ըսաւ Մարդ արիտա , միշտ ըսէ այդ անսխտ մարդուն թէ ես հո՛ս չեմ , և կամ չեմ ուզեր տեսնել զինքը : Վերջապէս ձանձրացայ տեսնելով որ մարդիկ կուզան նոյն բանն անդադար յինէն վճարմամբ կը խընդրեն , և կարծեն թէ շտոր՝ մը կ'ընեն ինձ : Ա՛յ՛ թէ մեր ամօթալից արուեստը գործելու ըսկրասողները դիանային մի անգամ թէ ի՛նչ է , աւելի կ'ընարէին սենեկապան կին ըլլալ :

Բայց ոչ • պարեգօտներ , կառքեր և դոհարներ
 ստանալու սնապարծութիւնը կը դրաւ ,
 զվեզ • լամնուս կը հաւատանք , որովհետեւ
 պտենկութիւնն ալ ունի իւր հաւատքը , և
 տակաւ կը սպառենք տակաւ մեր սիրտը ,
 մարմինը և դեղեցկութիւնը : Մարդիկ կը
 սարսափին մեզնէ , իբր դադանէ մը , կ'անար-
 դեն զվեզ իբր « Գարիա » • մեր շուրջը դանու-
 տղները իրենց առածէն աւելի կ'առնուն մեզ-
 նէ , և որ մ'ալ շան պէս կը սատակինք՝ ու-
 բիշները և մեր անձը կորուսնէն յետոյ :

— Կաղաչեմ , Տիկին , հանդարտեցէք , ը-
 սաւ հանին , տալս թէ ոչ այս երեկոյ դարձ-
 եալ ջղացաւութիւն կ'աւնենար :

— Պարեգօտս կը նեղէ դիս , կրկնեց Մար-
 դարիտա զդեատին լանջաց ճարսանդները
 տառցանելով , ցայդանոցս տուր : Բրիւտա-
 նա չեկա՞ւ տակաւին :

— Ա՛յ , տիկին , բայց երբոր դայ՝ կ'աւարկեմ ձեզ :

— Կը տեսնե՛ս , շարունակեց Մարդարիտա
 պարեգօտը հանելով և ճերմակ ցայդանոցը
 վրան առնելով , կը տեսնե՛ս • եթէ ինձ կա-
 բօտութիւն ունենայ , դիտէ , դիս դանել •
 Բայց չիրնար յօժարութեամբ : Ժառայութիւն
 մը մատուցանել ինձ : Քաջ դիտէ որ այս ե-
 րեկոյ անձկութեամբ սրտի այն պատասխա-
 նին կը սպասեմ , խիստ կարեոր ըլլալուն հա-
 մար • և ստոյգ դիտեմ որ դայեր կը յաճի ա-
 ուանց փոյթ ընելու ինձ :

— Գուցէ տեղ մը բռնուեր է :

— Ըսէ՛ որ բօնչ տան մեզ :

— Գարձեալ ձեր առողջութեան միտա սփ-
 րի հասցունէք , ըսաւ հանին :

— Մեկի աղէկ : Յե՛ր նաև պատու , հաստեայ կամ վառեկի թե մը , միտլ բանիս ուտերու բան մը բեր . բայց շո՛ւտ , վասն դ՛անօթի եմ :

Հարկ չէ նկարադրել Մարդարիտայի յիս ներդործած տալաւորութիւնը , դիւրաւ կըրնաս խմանալ զայն :

— Ի միասին պիտի ընթրենք , ըսաւ ինձ , բայց արդ մատենան մ՛տու ե կարդա . քիչ մը մտեն յարդարանայ խցիս մէջ պիտի կենամ :

Այտանակի մը մտերը վառեց , ե անկողնայն վարի կողմէն դուռ մը բանալով աներևութացաւ :

Իսկ նա սկսայ այդ աղջկան կենացը վրայ խորհիլ , ե ունեցած գթութիւնս զսէրս աճեցուց :

Եւ սենեկին մէջ մեծաքայլ յաճելով մտախորհ ըլլալուս ատեն՝ Յրիւտանս ներս մտաւ ե ըսաւ :

- Ի՞նչ , հո՞ս ես . ո՛ւր է Մարդարիտա :
- Յարդարանայ սենեակը :
- Կը սպասեմ որ ելնի : Ինձ նայե՛ , դիտեն՞ս շատ ախորժեք է , քեզնի :
- Չգիտի :
- Միթէ քիչ մը շխմացուց քեզ :
- Բնաւ :
- Ի՞նչպէ՞ս հո՞ս ես :
- Այցերութիւն ընելու համար եկայ :
- Կէ՛ս գիշերը :
- Ի՞նչու չէ :
- Խեղիատա՛կ :
- Բայց դէ՛ռ ընդունելութիւն ըրաւ ինձ :

— Նաւադոյն ընդ աւնելութիւնս պիտի լինէ
հիմայ քեզ :

— Իրա՞ւ կ'ըսես :

— Աղէկ լուր մը բերի :

— Շատ լաւ : Աւրեմն իմ վրաս խօսեր է
քեզ :

— Արեկ իրիկուն , կամ մանաւանդ այս գի-
շեր՝ բարեկամիդ հետ երթալիդ յետոյ . . . :
Ի՞նչպէս մարդ է անի . Աստի՛օն թ . կը կոչուի
կարծեմ :

— Այո՛ , պատասխանեցի , չլօրեւով ծոյծ-
ունել ծիծաղիս՝ յիշեւով Աստի՛օնին ինձ լաւձ-
ները Բրիտանիան վրայօք , և տեսնելով որ
ասի հաղիւ հազ գիտէր նորա անունը :

— Սիրուն երիտասարդին մէկն է , ի՞նչ դոր-
ծի վրայ է :

— Քսան և հինգ հազար ֆրանկ եկամուտ
ունի :

— Իրա՞ւ կ'ըսես : Աւրեմն երբ Մարդարիտա
քու ո՛վ ըլլալդ , և ի՞նչ գործելդ , և հարձե-
րուդ ո՛վ ըլլալը հարցուց , միով բանիւ ինչ
որ կրնայ հարցուիլ քեզ տարեկից մարդու մը
վրայ , ինչ որ գիտէի ըսի , և յարեցի նաև
թէ սիրուն երիտասարդ մ'ես :

— Շնորհակալ եմ . իսկ արդ ըսէ՛ ինձ , ի՞նչ
յանձնարարութիւնս տուաւ քեզ երեկ իրի-
կուն :

— Աջինչ . դիմաք ճամբայ գնելու համար
է եղեր , ըայց այսօր ճամարիտ յանձնարարու-
թիւն մը տուաւ , որոյ պատասխանը հիմայ կը
բերեմ :

Նայն ատեն Մարդարիտա յարդարանայ
սենեկէն ելաւ՝ դուրսը վայելչապէս դրամ գի-

ճերուան դիխանոց մը , որ զարդարեալ էր
դեղնադոյն ծապուէններէ, շինուած վարդե-
րով՝ դոր արուեստագործք «կաղամբ» կանուա-
նեն :

Ասի շատ վայլեր էր իրեն :

Ոտքն մերկ էին , ու սնաուսէ հողաթափ-
ներ հաղած էր , և եղունգներուն յարդա-
րանքը աւարտելու վրայ էր :

— Գուքար տեսա՞ր , հարցուց Բրիւտանսին :

— Հապա՛ :

— Ի՞նչ ըսաւ :

— Տուաւ :

— Որչա՞մի :

— Վեց հաղար :

— Վրա՞դ են :

— Այո՛ :

— Կեղայա՞ւ :

— Ա՛յ :

— Խե՞ղճ մարդ :

Մարդ արիտա այս խօսքս անբացատրելի ե-
ղանակաւ մ'ըսելով վեց հաղար ֆրանկի լո-
մայադ իրն առաւ :

— Ժամանակն էր , ըսաւ : Սիրեցեա՛լ Բրիւ-
տանա , արծաթի կարօտութիւն ունի՞ս :

— Գիտեա , դաարիկս , որ երկու օրէն ամ-
սոյս է՞ն է , եթէ կարենաս երեք չորս հա-
րիւր ֆրանկ փոխ տալ՝ մեծ ծաւայութիւն
մատուցած կ'ըլլաս ինձ :

— Վաղն առաւօտ մարդ գրկի , որ տամ .
հիմայ ստենք շատ ուշ ըլլալով շեմ կ'ընար
մտերել տալ :

— Չմտնա՛ս :

— Մի՛ երկնչիր : Մեզ հետ կ'ընթրե՞ս :

— Ա՛յ , կարողոս կը սպասէ տունա :

— Ի՛նչ . կը սիրե՛ս տակաւին գնա :

— Այո՛ , սիրելի . վաղն , ուրեմն : Մնա՛ս
բարեւա , Արման :

Եւ տիկինն Տիւֆէրնուա դուրս ելաւ :

Մարդարիտա դարանը բանալով լամպար
դիրերը մէջը նետեց :

— Հրաման կուտա՞ս պատկերու , բար
ձագտելով և դէպ յանկողինն երթ ալով :

— Աչ թէ միայն հրաման կուտամ , այլ նաև
կ'աղաչեմ որ պատկիս :

Ախտուածէ ծածկոցն անկողնոցն ոտքը նե
տեց և պատկեցաւ :

— Հիմայ , բար , ե՛կ , քովս նստէ որ խօսինք :
Երիւտանս իրաւունք ունէր , վասն զի Մար
դարիտա ընդունած պատասխանին վրայ դու
արթացեր էր :

— Ներեցի՞ր ինձ՝ այս իրիկուան ունեցած
ցտակուտ թեանս համար , բար ձեռնս բրո
նելով :

— Պատրաստ եմ միշտ ներելու քեզ :

— Կը սիրե՞ս զիս :

— Յանչափա :

— Սակայն ատելի բնութիւն մ'ունիս :

— Այսու ամենայնիւ կը սիրեմ զքեզ :

— Կ'երդնո՞ւս :

— Այո՛ , պատասխանեցի ցած ձայնիս :

Նանին ներս մտաւ այն ատեն բերելով լու
կահակներ , պող վառեակ , ջիշ մը Պօրտոյի
դիմի ելակ և երկու սպասք :


— Չեզ համար բօնչ պատրաստել չտուի ,
բար Նանին , կարծեմ աւելի կ'ընտրէք դար
տուն , անանկ շէ՞ , տէ՛ր իմ :

— Անշուշտ , պատասխանեցի տակաւին գա-
լութեալ Մարդարիտայի վերջին խօսքէն , և
սիրաւատ աչերս նորա վրայ սեւեռելով :

— Քա՛ղ է , ըսաւ , դի՛ր դամկնը փոքր սե-
ղանին վրայ , մտեցո՛ւր զայն անկողնոյն քով .
մարդ չուզեր ծառայելու : Արեք դիչեր ան-
բուն անցուցեր , դնա՛ պառկէ , բանի մը կա-
րօտութիւն չունիմ :

— Արկին փակե՞մ դուռը :

— Անտարակո՛յս , և մանաւանդ սպասել
ար փողը ոչ որ բնդունին կէս օրէն առաջ :



ԺԲ.

Առաւօտեան ծամր հինդին ատենները ,
մինչ լոյսը կը սկսէր վարագոյրներուն մէջէն
խամփանցել , Մարդարիտա ըսաւ ինձ :

— Ներէ գքեղ հասրայ դներուս համար ,
բայց պէտք է երթնա , որովհետեւ դուքսն ա-
մէն առաւօտ կուգայ , և եկած ատենը՝ պի-
տի ըսեն թէ կը քնանամ , և դուցէ արթնե-
նալուս սպասէ :

Արկու ձեռքս բռնեցի Մարդարիտայի դը-
տիսը՝ որոյ խառնեալ մաղերը կը ծփային իւր
չուրջը , և վերջին անգամ հասրաբեցի գինքն
ու ըսի :

— Ե՞րբ անանեմ գքեղ :

— Ա՛ս սա ոսկեգօծ փոքր բանալին՝ որ կը

տակարանին վրայ է, դնա՛ դուռը բայց, աւ-
ստա բանալին տեղը դիր, և ե՛րթ : Օրուան
մէջ գրով հրամաններս կ'իմացունեմ քեզ
քանդի գիտեա որ կոյր գլուխայն պիտի հնա-
դանդիա ինձ :

— Այո՛ • բայց հիմա քե՛նէ բան մը պիտի
խնդրեմ :

— Ի՞նչ է նայինք :

— Չայս բանալին ինձ տո՛ւր :

— Մէկու մը տուած չեմ դայն :

— Բայց ինձ տո՛ւր, որովհետեւ կ'երդնուեմ
որ ևս այլոց պէս, չեմ սիրեր դքեղ :

— Թո՛ղ մնայ քովդ • բայց յառաջուց գիտ-
ցած ըլլաա որ երբոր ուղեմ՝ այն բանալին
բանի մը շտապեր քեզ :

— Ինչո՞ւ :

— Վասն զի դրան ներսի կողմն պարզու-
նակներ կան :

— Չարասի՛րա :

— Հանել կուտամ :

— Ուրեմն քիչ մը կը սիրե՞ս գիտ :

— Թուի ինձ թէ այո՛ : Հիմա դնա՛, ստա-
տիկ քուն ունիմ :

Պահ մը դիրկընդխառն մնալն,ս յետոյ՝
մեկնեցայ :

Այ որ կար փողոցներուն մէջ, մեծաչուք
քաղաքը տակառ ին կը քնանար • քաղցրասիւղ
գեփիւռ մը կը փչէր թողերուն մէջ՝ որք մի
քանի ժամն մարդկան աղմուկով պիտի լե-
ցուէին :

Կարծի թէ այդ քնացող քաղաքը իմա է •
կը փնտռէի մտացս մէջ դանուանս նոցա՛ ու
բոց բարեբաատութեանը վրայ կը նախանձի :

երբեմն . և շխշի մկլը՝ որ յինկն սուսել
երջանիկ ըլլար :

Մատարակոյս մեծ բարեբաատութիւն է աւ-
նարատ կուսէ մը սիրուիլ , և նախ յայտնել
նոն սիրոյ զարմանալի խորհուրդը , բայց այն
դիւրին բան մ'է . վասն զի՝ յարձակմանց
անվարժ եղող սրտի մը վրայ տիրելը՝ անպահ-
պան և բայ քաղաքի մը մէջ մտնելու կը նը-
մանի : Դաստիարակութիւնը , պարտուց դդա-
ցումը և բնտանիքն անտարակոյս զօրանոյր
պահապաններ են . սակայն ամենին արժուն
պահապանն ալ կարող է խափել վեշտասան-
ամեայ աղջիկ մը , որոյ բնութիւնը՝ սիրե-
ցեալ մարդոցն բերնովը՝ կը յայտնի , սիրոյ ա-
ռաջին խորհուրդները , որք որչափ անբիծ ե-
րեխն , այնչափ ևս կը անշօրեն նորա սիրտը :

Կանկամարդ աղջիկ մը որչափ որ հաւա-
տայ 'ի բարին , այնչափ ևս դիւրութեամբ
ինքզինքը կուտայ , եթէ ոչ սիրաչարին , դո-
նէ սիրոյ , որովհետեւ վաստի և անպօր ըլլա-
լուն համար՝ իբմէ սիրուելու յարժուածիւնն
ամէն քսան և հինգ տարեկան երիտասարդ
հեշտիւ կարող է ստանալ : Այս բանիս
ճշմարիտ բխալուն աստուծոցն ալ այս է որ
սասանիկ հսկողութեամբ և զօրանոյր պատուա-
բօք կը ջրջատատեն մանկամարդ աղջիկնե-
րը : Կուսարաններու բարձրարեւը պատերը ,
մարց ամրասակ սուճերը և կրօնից շարունակ
պարտքերն անբաւական են վտակելու համար
այդ սիրուն թուշուններն իրենց վանդակին
մէջ՝ որոյ վրայ ծաղիկներ ափուելու անհող
կ'ըլլան . անոր համար որչափ ցանկանալով
կը ցածկան արդեօք անանելու պախարհն՝ սոք

Կը ծածկեն իրենցսկ, որչա՛փ արդեօք հրա-
պարիչ կը համարին զայն, ինչպիսի հրճուա-
նօք կը բեն այն առաջին ձայնը՝ որ վանդա-
կին ձողերուն մէջէն դաղանիքները կը պատ-
մէ իրենց, որչա՛փ կ'որհնեն այն ձեռնը՝ որ
նախ կը բանայ խորհրդաւոր քողին մէկ ծայ-
րը :

Բայց ինքզինքն անտառի կնկան ճշմարտա-
պէս սիրցունելը շատ աւելի դժուարին յաղ-
թութիւն մ'է : Մարմնին սպառեր է նոցա
հողին, զգայարանքնին այրեր են նոցա սիր-
տը, և շուայտութիւնն անխոցուցեր է նոցա
զգացմունքը : Իրենց ըստած խօսքերը և սո-
խորական ճամբայները ՚ի բազմաց հետ, դի-
տեն, իրենց յայրս ներդարձած սէրը վաճառեր
են ևս : Սքուտտով կը սիրեն, և ոչ բերմամբ :
Աւելի լաւ կը պահպանին իրենց հաշիւներովը
քան կոյս մը իւր մօրը հսկողութեամբը կամ
կաւարանով, անոր համար կամածին կոչեր
են այն անշահախնդիր արիւմնքը՝ որով պոռ-
նիկ մը կը սիրէ զամն, իրը հանդէսը կամ
իրը ինքզինք արդարացունելու և կամ միտի-
թարելու համար : Եւման այն վազխատունե-
րու որ հաղարաւոր անձանց ինչքը հարստա-
հարեւն յետոյ, քաւութիւն դանել կարծեն՝
որ մը 20 Ֆրանդ փոխ տարով սովամահ ողոր-
մելի մարդու մը, առանց իրմէ շահ և ընկա-
յող իր մը պահանջելու :

Երբ Աստուած անտառի կնկան շնորհէ ըզ-
ուէր, այդ սէրը՝ որ նախ նորա մեղաց թողու-
թիւն կը թուի՝ դրեթէ՛ ճիշտ պատուհաս մը
կը դասնոյ, վասն զի առանց զեղծի արձա-
կում չոյլար : Մինչ կին մը մեղադրելի կեանք

մ'անցունելէն յետոյ՝ յանկարծ սաստիկ՝ անկեղծ և անընդդիմակ սիրով սիրէ, որոյ ինքզինքը բնաւ ենթակայ չէր կարծէր. երբ յայտնէ այդ սէրը, այն կերպով սիրուած մարդը, որչա՛փ իշխանութիւն կունենայ արդեօք նորա վրայ: Արքա՛ն արդեօք դորաւոր կը համարի ինքզինքն այդ անդուժ իրաւամբը՝ որով կ'ըսէ անոր. «արծաթի համար ըրածէդ աւելի շեռ ըներ սիրոյ համար»:

Յայն ատեն կինը չդիտէր ի՛նչպէս ցուցնէ իւր սէրը: Սասկներուն մէջ դրուած է թէ աղայ մ'երկար ատեն դուարձացեր է աղադակելով ՚ի դաչտա. «Հասէ՛ք յողնութիւն» և որպէս զի անհանդիսա ընէ դաշխատողս: Օր մը, արջ մը կը լափէ զինքը, և այն անդամ յաճախ խարուող մարդիկը շեն հաւատար ճշմարիտ վտանգի մը համար նորա արձակած աղադակներուն: Նոյն վիճակին մէջ կը դրանուին նաև այդ ողորմելի աղջիկները՝ երբ սիրելու ըլլան: Շատ անդամ սակնուն համար՝ մարդիկ շեն ուղեր հաւատալ անանց, որով խղճի մտայ խայթերուն մէջ կը մաշին ՚ի սիրոյ:

Սասի յաւած կուդան դարմանալի անձնախումբը և խտակրօն առանձնութիւնները, դոր կատարեր են անանցմէ ոմանք:

Բայց մինչ զայդ փրկաւէտ սէրը ներդարձող մարդը վեհանձնութեամբ ընդունի զնա՝ առանց յիշելու դանցեալն, մինչ ինքզինքը գոհելով անոր՝ սիրէ զնա, այն մարդը սիրուած ըլլալուն համար՝ խկոյն կ'սպասէ բար աշխարհային յոյսը, և այնուհետև սիրուոր և է սիրոյ կը փափուի:

Այս խորհրդածութիւնները չի ընէր այն
առաւօար՝ յորում տունս կը վերադառնայի .
ապա թէ ոչ կրնայի դուշակել ամեն արկած-
ները՝ որ ապա պիտի պատահէին ինձ, և թէ-
պէտ կը սիրէի զՄարդարիտա, բայց այսպիսի
հետեանք մը չի նշմարեր : Հի՛մա այսպէս կը
մտածեմ, որովհետեւ ամեն բան անդարձա-
բար կատարուած ըլլալով այս խորհրդածու-
թիւններ սանցեալ եղելու թեանց հետեանք կը
համարուին :

Բայց դառնանք վերասին Մարդարիտայի
հետ ունեցած յարաբերութեանցս առաջին օ-
րերուն : Խօշական դուարթութեամբ տունս
մտայ : Մտածելով որ երեւակայութեանս Մար-
դարիտայի և իմ մէջ հանած արդեւներն ա-
ներեութեանս լով ստացեր էի զնա, թէ մաս
մ'ալ ես ունիի նորա խորհրդաց մէջ, և թէ
գրպանիս մէջն էր նորա խցին բանալին՝ դոր
իրաւումս կրնայի գործածել, դո՛հ էի յինէն, և
կը պարծէի իմ անձիս վրայ, և կը սիրէի զԱս-
տուած՝ զթոյլ տուիչն այս բաներուս :

Օր մը երկասասարդին մէկը փողոցին մէջ
կնկան մը քովէն անցնելու ատեն, կը նայի ա-
նոր, և յետոյ դառնալով կը շարունակէ ճամ-
բան : Բնաւ շճանաչեր զայդ կինը, որոյ դրօ-
սանայ, փշտայ և՛ արսիանայ մէջ երբէք մտան
չէ ունեցած : Այնն ալ շճանաչեր զնա, և դու-
ցէ՛ եթէ մարդը խօսէր իրեն՝ կը ծագրէր զնա,
ինչպէս Մարդարիտա ծագրեր էր զիս : Եթ-
թնեակներ, ամիսներ և տարիներ կ'անցնին,
երկուքն ալ տարբեր օրինօք կը կատարեն ի-
րենց ճակատադիրը, և օր մը յանկարծ դի-
պուածին արամարանութիւնը զխնայէ զխնայ

կը բերէ զնոսա : Այն կիմը այն մարդոյն հո-
մանոյն ըլլալով կը սիրէ զնա . ի՞նչպէս . ինչո՞ւ .
իրենց երկու որիչ կեանքը կը միանան իրա-
րու : Այն ինչ մտերմութիւնը կը սկսի , կը
թուի իրենց թէ , միշտ սիրեր են զիրար . եր-
կու տարիսածուք կը մտնան զանցեալը : Ասի
զարմանալի բան մը չէ՞ :

Իսկ ես չէի յիշեր ի՞նչպէս ապրեր էի նա-
խընթաց օրէն առաջ : Արախտութենէս կը յա-
փրչտակուէի այն առաջին զիչերուան մէջ մեր
ըրած խօսակցութիւններն յիշելով : Կամ Մար-
գարիտա ճարտարութեամբ կը խափէր զիս ,
և կամ ինձ համար զդ օրեր էր այն « յանկար-
ծահաս տրիանքը » որ առաջին համբոյրէն
յայտնի կ'ըլլան , և երբեմն ալ՝ այն ինչ վառ-
եալ՝ կը շիջանին :

Արշալի մտածէի , այնչափ ևս կը համոզուէի
որ Մարգարիտա զիս սիրել կեղծելու համար
բնաւ պատճառ մը չունէր . և կըսէի նաև
ինքնիրենա որ կանայք երկու կերպով սովոր են
սիրել , այսինքն կամ՝ ՚ի սրտէ , կամ՝ ՚ի զգայա-
րանաց , և այդ երկու կերպերն ալ իրարմէ
յառաջ կուզան : Յաճախ կիմ մը մի միայն
զգայարանքը դռնացունելու նպատակաւ հո-
մանի մ'առնելով յանկարծ կ'իսկանայ աննիւ-
թական սիրոյ դադանիքը , և այնու եւթ
կ'ապրի այնուհետև : Շատ անդամ՝ մանկա-
մարդ աղջիկ մը՝ որ զամուսնութիւն ուրիշ
բան համարիր՝ այլ միայն անրիժ սիրահարաց
միութիւն , յանկարծ կ'ընդունի մարմնաւոր
տրիանայ յայտնութիւնը՝ որ հոգւոյ ամենէն
անարատ ապաւորութեանց աղղողաղոյն հե-
տևութիւնն է :

Այս բաներուս մտածելով՝ քուն եղայ :
Չարթուցին զիս , վասն զի Մարդարիտայի ն
թուղթ մ'եկեր էր , յորում հետեւեալ տողե-
րը գրուած էին :

« Կառասիկ հրամաններս • Այս երեկոյ 'ի
« Աօտրալի » թատրոնը պիտի երթամ , երբորդ
արարուածին հոն դանուխս :

Մ • Կ : »

Գարանի մը մէջ դրի զայդ թուղթը , որ-
պէս զի հասուցու թիւնը աչերուս առջև ըլլայ ,
երբ աարաւիտեւելու ըլլամ , ինչպէս երբեմն կը
պատահէր ինձ :

Օրուան մէջ զիները տեսնել չհրամայելուն
համար՝ համարձակեցայ տունն երթալ • բայց
և այնպէս սաստիկ կը փափաքէի երեկոյէն ա-
ռաջ տեսնել զնա , ուստի դացի 'ի « Շանդ—
կիպէ » ուստի՝ նախընթաց օրուան պէս՝ նա-
յա անցնիլը և վերադառնալը տեսայ :

Ժամը եօթին « Աօտրալի » թատրոնը մտայ :
Բնաւ այդքան կանուխ չի մտած թատրո-
նի մը մէջ :

Հետցհետէ ամէն օթեակները լցան • մին
և եթ գատարի մնայ , որ էր գեանայարկինը ,
տեսարանին մէջ : Երբորդ արարուածին սկիզ-
բը՝ լսեցի այդ օթեակին գրան բացուիլը , յոր
անդադար աչերս սեւուեր էի , և Մարդարի-
տա ներս մտա :

Փութով օթեակին առաջքը մերձենալով
երածչտայ կայանը փնտռեց զիս , և տեսնե-
լուն պէս՝ աջօքը շարհակալ եղաւ ինձ :

Դատ գեղեցիկ երեցաւ ինձ այն դիչեր :
Սրդեօք նս էի այն հարտանքին պատճառը :

Ս. յնչափ կը սիրէ՞ր զիս՝ որ համարէր թէ որքան դեղանի տեսնեմ զինքը՝ այնչափ ևս բարեբախտ կ'ըլլամ . տակաւին չոչխակի . բայց թէ որ դիտաւորութիւնն այդ էր՝ յաջողեցաւ որովհետեւ թատրոնին մէջ երեւելուն պէս՝ մեզն զլուխները տաւանեցան իրարու վրայ . և նոյն ժամանակը խօսող դերասանն իսկ նույնցաւ Մարգարիտային՝ որ երեւելայն և եթ այնպէս կը խռովէր զհանդիսատեսս :

Սակայն իմ քո՛վս էր այն կնիկան խոյն բունային , և երեք շորս ծամէն դարձեալ պիտի տտանայի զնա :

Կը պարտուեն զմարդիկ՝ դերասանուհեաց կամ անտակ կանանց համար ստացուածքնին սպառելուն պատճառաւ . բայց ևս ընդհակառակն կը դարմանամ թէ ի՛նչպէս աւելի խօշական դործոց շէն խիղախեր նոքա այն կանանց համար : Արդ մէկն ինձ պէս ապրի , այն առեն կ'իմանայ որ նոցա մեզն որ համարններնուն պատճառաւ սնուարժութիւնները որչա՛փ կը զօրացունեն այն մարդոցն սէրը :

Բրիւտանա եկաւ նստաւ օթեակին մէջ , յետոյ Յ. կոմսն ալ հասաւ և օթեակին խորը բազմեցաւ :

Չայս տեսնելուս պէս՝ պաղութիւն մ'անցաւ սրտիս վրայէն :

Անշուշտ Մարգարիտա խնացաւ այն մարդոցն իւր օթեակին մէջ գտնուելէն յիս ներդործեալ տարաւորութիւնը , վասն զի դարձեալ ծարսեցաւ ինձ , և կռնակը կոմսին դարձունելոյս մեղսեց ուրի . ուշով խաղին ականջ տալ : Արդորդ արարուածէն վերջը՝ դառնալով մի քանի խօսք ըսաւ կոմսին՝ որ օթեակ

ձկն դուրս ելաւ , և այն ատեն Մարդարիտա
նշանով մը դիտ քովը կոչեց :

— Բարի իրիկուն , ըսաւ մտնելու ատենս ,
և ձեռնը կարկառեց :

— Աստուծոյ բարին , ըսի Մարդարիտայի և
Բրիւտանսի :

— Նստէ՛ :

— Բայց այս ատեն իմն չէ : Մի՞թէ Ժ. կուսը
պիտի չդա՞յ դարձեալ :

— Այո՛ , շաքարեղէն անելու դրկեցի ,
որպէս դի կարենամ քիչ մը հետդ առանձին
խօսիլ : Տիկին Տիւվերնուա դիտէ ամէն բան :

— Այո՛ , տղայքս , ըսաւ ասի . բայց մի՛
երկնչիք , ուրիշի բան չեմ գրուցեր :

— Ի՞նչ ունիս այս երեկոյ , հարցուց Մար-
դարիտա , և ելնելով եկաւ ձակաստ համբու-
րեց օթեակին խորը :

— Սակաւ մ'անհանդիստ եմ :

— Գնա՛ պառկէ ուրեմն , կրկնեց հենդ նա-
կան եղանակաւ՝ որ յոյժ կը վայելէր իւր նոր-
բամբա և հանձարիմաստ դ վառն :

— Ո՛ւր :

— Ի տունդ :

— Գիտես որ չեմ կրնար քնանալ :

— Ուրեմն հոս մի՛ դարձ տհաճութիւնդ ցուց-
նելու՝ օթեակիս մէջ կրիկմարդ ատենելուդ
համար :

— Անոր համար չէ :

— Այո՛ , դիտե՛մ ես : Իրաւունք չունիս .
բայց չխօսինք ասոր վրայ : Խաղէն վերջը Բր-
բիւտանսին տունն եկաւ , և հոն կեցիւր՝ մին-
չև որ ձայնեմ դքեղ , հասկըցա՞ր :

— Այո՛ :

Միթէ կրնայի՞ մերժել :

— Ար սիրե՞ս զիս տակաւին , հարցուց :

— Ար հարցունե՞ս :

— Մտածեցի՞ր յիս :

— Զօրն 'ի բուն :

— Քիտե՞ս , շատ կը վախեամ որ չըլլայ թէ վերջապէս սիրահար ըլլամ քեզ . թէ որ չհաւատաս՝ հարցո՛ւր Բրիւտանսին :

— Այո՛ , պատասխանեց անողայ աղջիկը . բայց անմտութիւն մ'ըրած կ'ըլլաս :

— Տեղդ դարձի՞ր , քանզի ընդ հուպ կոմսը կուղայ , և պէտք չէ որ գքեզ հոս տեսնէ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ իրմէ չես ախորժիր :

— Իրաւ է , սակայն թէ որ թատրոն երթալու փափաքդ յայտնէիր ինձ , կրնայի և ես օթեակս հրամցունել քեզ :

— Իժբախտարար առանց իմ խնդրանացս նախ ինքը զայս բռնած ըլլալով ինձ ընկերանալ ուղեւուն համար՝ չկրցի մերժել : Ուրիշ բան չի կրնար ընել , բայց միայն զբով իմացունել քեզի զացած տեղս , որպէս զի ժամ մ'առաջ կարենանք տեսնել զիրար : Բայց մինչ այդպէս երախտապարտ կ'ըլլաս , ես ալ գիտեմ ընելիքս սցառհետեւ :

— Յանցաւոր եմ , ներէ՛ ինձ :

— Հա՛ սանկ . դարձի՞ր հեղութեամբ յաթուռդ , և նայէ՛ որ նախանձոտ չըլլաս :

Դարձեալ համբուրեց զիս , և յետոյ դուրս ելայ :

Նեղ անցքին մէջ հանդիպեցայ կոմսին՝ որ կը վերադառնար :

Գացի դարձեալ ասի ուս նստայ :

Պ. Ժ. ին Մարդարիտայի օթեակին մէջ դրանաւիլը զարմանալու բան չէր : Անոր հոմանին ըլլալով օթեակ մը բռներ՝ 'ի միասին թատրոն եկեր էր . ապի՛ բնական բան մ'էր : — Եւ Մարդարիտայի պէս հոմանոյշ մ'ունենալէս յետոյ՝ նորա վարմանցը սովորիլս նաև հարկ էր :

Սակայն 'ի վերայ այսր ամենայնի յոյժ վերջապայ ա՛յն երեկոյ , և շատ արիւնցայ՝ կամսին , Բրիւտանսին և Մարդարիտայի՝ դուռն իրենց սպասող կառքին մէջ մտնելով՝ երթեալնին տեսնելով :

Քառորդ մը վերջը Բրիւտանսին դացի՛ սր ինքն ալ տակաւին նոր եկեր էր :



ԺԳ.

— Ինչպէ՛ս մեղի չափ վաղ եկար , բաա Բրիւտանս :

— Ո՛ւր է Մարդարիտա , հարցուցի պաղու օթեակը :

— Տունն է :

— Մինա՞կ :

— Պ. Ժ. ին հետ :

Սկսայ մեծաքայլ յաճիլ խոյն մէջ :

— Ի՞նչ է , ի՞նչ ունիա :

— Ի՞նչ զարմանալի բան է ըրածս . հոս կը սպասեմ որ Պ. Ժ. Մարդարիտայի տունէն ելնէ :

— Անիրաւ ես , դիտե՛ս : Չե՛ս իմանար որ

Մարդարիտա չկրնար կոմար վանել : Պ. Թ. 'ի
բազմաց հետէ նորա հոմանին ըլլալով միշտ
չատ արծաթ տուեր է և կուտայ տակաւին :
Մարդարիտան տարին հարիւր հազար Փրան-
քէն աւելի ծախք , և շատ ալ պարտք ունի :
Թէպէտև դուքոր նորա ամէն խնդրածը կը
չնորհէ , բայց համարձակիր իրեն հարկաւոր
եղած բաները միշտ այն ծերունիէն խնդրել :
Կոմսին հետ աւրուիլ չլլար , որովհետև ասի'
տարին դոնէ տասն հազար Փրանք կուտայ :
Մարդարիտան շատ կը սիրէ գրեզ , բարեկա-
մրա , բայց երկուքներնուդ ալ սէրը անելու
չգար՝ թէ քու և թէ իր օգտին համար : Քու
եօթն ութն հազար Փրանք եկամուտովդ շէս
կրնար բաւել այդ աղջկան զեղխութեանը .
ի՛նչ կըսեմ , նորա կառայ ծախքն անգամ շէս
կրնար վճարել : Աւրիշ բան մի՛ համարիր ըզ-
Մարդարիտա՝ բայց միայն բարեսիրտ , հան-
ճարիմատ և սիրուն աղջիկ մը : Մի քանի ա-
միս նորա հոմանին եղիր , փունջեր , շաքարե-
ղէններ և օթեակներ հրամայուր իրեն . բայց
միտքդ ուրիշ բան չդնես , և ծաղրելի նախան-
ձուտութիւն չցուցնես նորա առջին : Քաջ գի-
տես թէ Մարդարիտա առաքինի աղջիկ մը չէ և
Անի կ'ախորժի քեզնէ , դու ալ զինքը կը սի-
րես , ա՛լ ուրիշ ի՛նչ պէտք է : Ար վայլէ՞ քեզ
նախանձիլ , Բարիդու ամենէն ախորժելի և
դոհարներով զարդարուած հարճն ունենա-
լէդ յետոյ , որ փառաւոր սենեկի մը մէջ ըն-
դունեց գրեզ , և որոյ համար՝ եթէ ուզես՝
փող մը ծախք շէս ըներ , և տակաւին դոհ
չե՛ս : Չարմա՛նք . քանի՛ պահանջող մարդ դո
եղեր :

— Իրաւունք ունիս , բայց ի՞նչ ընեմ . երբ մտածեմ թէ այն մարդը նորա հոմանին է , սաստիկ կը վշտանամ :

— Նախ և առաջ , կրկնեց Քրիստոսնա , նա-
յինք , ճշմարիտ է . այս կայ միայն որ Մար-
դարիտա այն մարդոյն կարօտ է :

Երկու օրէ ՚ի վեր դուռը փակուեր էր նո-
րա համար . այս առաւօտ կոմսն անձամբ դա-
լով ինքն ալ շիրցաւ մերժել զօթեակն և նո-
րա ընկերութիւնը : Աղջկան հետ դարձաւ ՚ի
տուն , և արդ պահ մը վեր ելաւ . երկար
ատեն պիտի չի մնայ հոն , վասն զի դու կը
սպասես հոս : Կարծեմ ըսածներս բնական
բաներ են : Բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ դքսին
հանդուրժես :

— Արովհետեւ անի ծեր ըլլալով սպահով եմ
Մարդարիտայի նորա հոմանոյշը չըլլալուն վը-
րայ : Ասկէ զատ մարդս յաճախ կ'ընդունի
մէկու մը սէրը և կը մերժէ ուրիշինը : Այս
թոյլտուութիւնը յոյժ նման է տեսակ մը հա-
շուի՝ որով սիրոյ համար ևս հաւանողը կը
մերձենայ անոնց , որ , աստիճան մը վար ըլ-
լալով , այդ հաւանութիւնը արուեստ մը
դարձուցեր են , ու շահ կը քաղեն անտի :

— Արշա՛փ յետամնաց ես եղեր , սիրելի :
Շատ մարդիկ տեսայ , ազնուականներ ու մե-
ծատուններ մանաւանդ՝ որք զասի դիւրու-
թեամբ կը կատարէին առանց ամօթոյ և ա-
ռանց խղճի : Ասի սովորական բան մ'է : Ա-
պա թէ ոչ Բարիդու պահճու կիներն ի՞նչպէս
կրնան իրենց ծախքն հանել , եթէ երեք չորս
հոմանի միանգամայն չունենան : Մեծատուն
մարդ մը , որչափ որ հարուստ ըլլայ , դարձ-

եալ շիրնար Մարդարիտայի պէս կնկան մը
ծախուց անձամբ բաւել, ուստի հինգ հարիւր
հազար Քրանք եկամուտ ունեցողն ալ շիր-
նար 'ի գլուխ հանել զայն, և պատճառն ալ
յայտնի է: Այնպիսի մարդը տուն մը, ձիեր,
ծառայներ, կառքեր և բարեկամներ կ'ունե-
նայ, որսի կ'երթայ, և սովորաբար ամուս-
նացեալ ըլլալով տղայներ կ'ունենայ. ձի-
ընթացներ ընել կուտայ, կը խաղայ, ու-
ղևորութիւններ կ'ընէ, ևս ինչ գիտնամ
դեռ: Անկարելի է որ այդ ունակութիւննե-
րէն հրաժարի, ապա թէ ոչ աղքատացեալ
համարուելով դայթակղութեան պատճառ
կ'ըլլայ: Աթէ ամէն բան հաշուես, կը տես-
նես որ այն մարդն ունեցած հինգ հարիւր
հազար Քրանք եկամուտէն շիրնար տարին
քառասուն հազար Քրանդէն առաւել տալ
կնկան մը, և այն ալ շատ խակ է: Ապա ու-
րեմն, ուրիշ հումանիտներ կ'ամբողջացունեն
աղջկան մը տարեկան ծախքը: Մարդարիտան
ստանալն աւելի դիւրին է, վասն զի հրաշ-
քով մը՝ տասը միլիոնի տէր եղող ծեր մեծա-
տան մը հանդիպեր է, որոյ կինը և աղջիկը
մեռած ըլլալով ուրիշ մարդ չունի՝ բայց մի-
այն մի բանի հարուստ աղգականներ: Այդ
մարդն աղջկան ամէն խնդրածը կուտայ ու-
ռանց բան մը պահանջելու 'ի փոխարէն: Բայց
Մարդարիտա շիրնար տարին վաթսուն կամ
եօթանասուն հազար Քրանդէն աւելի խընդ-
րել. և ապահով եմ որ եթէ ուզէ՝ ծերունին
կը մերժէ, թէպէտև շատ հարուստ է և յոյժ
կը սիրէ զնա:

Բարիգու մէջ քսան կամ երեսուն հազար

Ֆրանդ եկամուտ ունեցող ամէն երիտասարդ-
ները , որք այնչափ գումարով հասիւ հազ կա-
րող կ'ըլլան իրենց յաճախած բնակերութեանց
մէջ ապրիլ , Մարդարիտայի պէս կնկան մը
համանին ըլլալուն պէս քաջ դիտեն թէ իրենց
տուած արծաթը նորա ծառայից և խցերուն
ծախքը վճարելու խկ ջրաւեր : Չայս դիտա-
նալնին շեն խոտաւաճանիւր նսնա , բան մը չտես-
նել կը կեղծեն , և կը մեկնին՝ երբ յաղենան :
Աթէ ամէն ծախքերը վճարելու սնապարծու-
թիւնն ունենան , անստութեամբ կը վառանեն
իրենց ստացուածքը , և կ'երթան կը մեռնին
Միտիկէ՝ հարիւր հազար Ֆրանդ պարտք
թողէն յետոյ 'ի Քարիզ : Աարծես թէ կ'երթ
չարհապարտ կ'ըլլայ անանց . ո՛չ երբէք : Ընդ
հակառակն կ'ըսէ թէ նոցա պատճառաւ վի-
ճակը գոհեր է , արծաթ կորուսեր է : Ա՛հ , այս
ամէն ըսածներս անօթալից բաներ են , ա-
նանկ չէ՞ : Դու սիրուն երիտասարդ մ'ես , և
գրեց որտանց սիրելուս համար՝ կը յորդորեմ
որ այդ տեսակ աղջկան քու վրայ ունեցած
սիրոյն հաւտտաս , վասն զի քանն տարիկն
աւերի հարձերու հետ ապրելուս՝ դիտեմ ի՞նչ
ըլլալնին և ո՞ր ատիճան յարդ ունենալնին :
Ասկէ դատ , դիցուք հիմա որ Մարդարիտա
գրեց յոյժ սիրելուն համար՝ հրածարի կտնկն
և դքսն , և երբ ասի իմանայ գիրար սիրել-
նիդ և առաջարկէ աղջկան ընտրել կամ զին-
քը կամ գրեզ , յայանի է որ Մարդարիտա քեզ
համար մեծ գոհողութիւն մ'ըրած կը համար-
ուի : Դակ դու ի՞նչ հաւտտար գոհողութիւն
կրնաս ընել նորա համար . երբոր յաղենաս
ու չուզես գնա , ի՞նչ փոխարէն կրնաս ընել՝

անոր սխառման ամ փաստացի համար . ոչինչ .
 Հետացուցած կ'ըլլաս զնա այն ընկերութենէն՝
 յոր գաներ էր խր բախան ու ապագայն . իսկ
 ինքը քեզ նուիրած կ'ըլլայ խր կենաց գեղեց-
 կապոյն օգերը . և յետոյ քենէ կը մտցուի : Սո-
 փորական մարդ մը կը համարուիս . երբ . ան-
 ցուցած կեանքն երեսը դարձելով ըսես որ
 ուրիշ բան չես ընէր բայց միայն խր այլ հո-
 մանեաց պէս վարուիլ նորա հետ . և չքաւո-
 րութեան մէջ կը լքանես զնա . և կամ բարե-
 սրբութեամբ՝ պարտք կը համարիս զնա պա-
 հել . և այն ատեն անխախտաւ դժբախտու-
 թեան մէջ կը ձգես զանձնդ . որովհետեւ երի-
 տասարդ որ կրնայ արդարացունել ինքզինքն
 այդպիսի կի՛ն մը սիրելուն համար . իսկ հա-
 սուն մարդ մը . ոչ երբէք : Այն կի՛նը՝ անե-
 ճայնի խոչընդոտն կ'ըլլայ . թոյլ շատ որ ըն-
 տանեաց տէր ըլլաս . և ոչ ալ փառասիրու-
 թեան ծառայես՝ որք մարդոյս վերջին արը-
 փանքն են : Հաւատա՛ խօսքիս . բարեկամս .
 կըռէ՛ իրաց ջարդը . խնայի՛ր կանանց ի՛նչ ըլ-
 լար . և պահճու աղջկան մը մի՛ տար բնաւ
 այնպիսի իրաւունք մը որով կարենայ օր մը
 ըսել թէ յաննայնի իրեն պարտական ես :

Բրիւտանա խնատութեամբ և արամարա-
 նական խեղամտութեամբ կը խօսէր . որոյ կա-
 րող չէի կարծեր զի՛նքը : Չկրցի պատասխան
 մը տալ . իրաւունք ունէր . ձեռն կարկառեցի
 և շնորհակալ եղայ տուած յորդորներուն հա-
 մար :

— Հապա՛ ուրեմն . փարատէ՛ այդ յոռի
 վարդապետութիւնները . և զուարթացի՛ր .
 նայէ՛ որ ախորժելի կեանք մը վարես . սիրե-

լի , գնա՛ խորհուրդ հարցուր Աասթօն բարե-
կամիդ՝ որ կարծեմ սէրը ինձ պէս կը մեկնէ :

Չայս միայն գիտցի՛ր , ապա թէ ոչ անհամ
երկտասարդ մը կը համարուիս , որ հոս մօտ
գեղանի աղջիկ մ'անհամբերութեամբ քովս
եղող մարդուն մեկնելուն կը մնայ , քեզ կը
խորհի , քեզ հետ պիտի անցունէ այս գիշերը ,
և ապահով եմ որ դքեզ կը սիրէ : Հիմայ ե՛կ
ինձ հետ պատուհանին առջին , տեսնենք կոմ-
սին երթալը , որ ընդ հուպ մեզ տեղի պիտի
տայ :

Բրիւտանա պատուհան մը բացաւ , և պա-
տըշգամին վրայ քովէ քով կաթընած , ինքը
մի քանի սակաւագիւտ անցորդաց կը նայէր ,
իսկ ես մտախորհ կը լինէի :

Նորա ամէն ըսածները մտքէս կը կրկնէի ,
և կը ստիպուէի նմա իրաւունք տալու . սա-
կայն Մարգարիտայի վրայ ունեցած ճշմարիտ
սիրոյս պատճառաւ շէի կրնար այդ իրաւանց
հաւանիլ : Ուստի մերթ ընդ մերթ կը հառա-
շէի , իսկ Բրիւտանա կողմս դառնալով ուսերը
կը թօթփէր՝ հիւանդի մը առողջութենէն յոյ-
սը կտրած բժշկի մը նման : Մարդուս կեան-
քը փնչալէս կարճատև կ'երևի եղեր զգայու-
թեանց երազ ու թե՛նէն , կ'ըսէի ինքնիրենս : Եր-
կու օրէ 'ի վեր միայն կը ճանչեմ զՄարգա-
րիտա , իրիկուրնէ 'ի վեր և եթ նորա հոմանին
եղած եմ , սակայն այնչափ զբաւեց միտքս ,
սիրտս և կեանքս որ Ա. կոմսին այցելութիւնը
կը թշուառացունէ զիս » :

Վերջապէս կոմսը դուրս ելնելով կատքը
մտաւ և անհետացաւ : Բրիւտանա ալ պա-
տուհանը փակեց :

Նոյն ատեն Մարգարիտա կը ձայնէր գմեց
և կ'ըսէր .

— Շո՛ւտ եկէք, սեղանը դրուեցաւ . պիտի
ընթրենք :

Այն ինչ ներս մտի՝ Մարգարիտա ընթա-
նալով՝ ընդ առաջ իմ, բոլոր ուժովը գրկեց
և համբուրեց գիւս :

— Տակաւին տհա՞ճ ես :

— Ո՛չ, անի անցաւ, պատասխանեց Յրիւ-
տանա, քիչ մը խրատեցի գինքը և խոստացաւ
զգօն ըլլալ այսուհետև :

— Քա՛ջ է ուրեմն :

Ակամայ աչերս արագութեամբ անկողնին
մրայ դարձուցի որ չէր աւրուած . իսկ Մար-
գարիտա սպիտակագոյն ցայգանոցը գգեցած
էր :

Սեղան նստանք :

Գեղեցկութիւն, քաղցրութիւն և գեղուն
որտի, միով բանիւ ոչինչ կը պակասէր Մար-
գարիտայի, և երբեմն անիրաւ կը դատէի
ինքզինքս առաւելապահանջ ըլլալուս համար,
և կ'ըսէի ինքնիրենս թէ շատ մարդիկ իմ տե-
ղըս բարեբաատիկ կ'ըլլային, և թէ, Աիրդի-
լիոսին հովուին նման, վայելելու էի 'ի բեր-
կրանա՝ զոր դիցուհի մը կը պարզէր ինձ :

Ուստի կը ջանայի Յրիւտանաի յորդորներն
'ի դործ դնել, և կը ձգնէի երկու ընկերուհի-
եաց համի դուարթանալ : Նոքա 'ի բնէ՛ զուար-
թամիտ էին, իսկ ես կը կեղծէի, և ջղային
ծիծաղս՝ զոր բնական կը կարծէին՝ գրեթէ
լալեաց կը նմանէր :

Ընթրիքը վերջանալէն յետոյ՝ մինակ մնացի
Մարգարիտայի հետ : Ըստ իւր սովորութեանը

զորդին վրայ նստաւ կրակին առջին , և ըս-
կրսեց տրտում տխուր բոցերուն նայիլ :

Ար խորհէ՛ր : ի՞նչ բանի վրայ արդեօք . չը-
գիտէի . միայն՝ սիրաւառ աչերով կը դիտէի
զինքը , և կը սարսափիի մտածելով թէ ին-
չե՛ր արդեօք պիտի կրէի իրեն համար :

— Ե՛կ , նստէ՛ քոյս , ըսաւ յանկարծ :

Ընկողմնեցայ նորա քով :

— Գիտե՞ս ի՞նչ կը մտածեմ :

— Ի՞նչ :

— Կարդադրութիւն մը , զոր ևս հնարեցի :

— Ի՞նչ է նայինք այն հնարած կարդադ-
րութիւնդ :

— Չեմ կրնար հիսնայ յայտնել , բայց նորա
հետեանքը կրնամ ըսել Ս. յս է որ ամէ մ'ա-
զատ և սարսափերս վճարած ըլլալովս՝ պիտի
մեկնինք Յարիպէն և ամարը 'ի գիւղ պիտի
անցունենք :

— Չե՞ս կրնար ըսել ի՞նչ միջոցով պիտի կա-
տարեա գիտաւորութիւնդ :

— Ա՛չ . միայն սիրէ՛ դիտ , ինչպէ՛ս ևս կը
սիրեմ՝ զքեզ , և այն տանն ամէն բան կը յա-
ջողի մեզ :

— Գ. ո՞ւ հնարեցիր զայս կարդադրութիւնը :

— Ս. յո՛ :

— Գ. ո՞ւ միայն 'ի դ ործ պիտի դնես զայն :

— Աս միայն պիտի կրեմ՝ դիտաւորութեանս
զործադրութեան պատճառած ամէն նեղու-
թիւնները , պատասխանեց Մարդարիտա այն-
պիտի ժպիտով մը՝ զոր բնառ պիտի շնորհակ
բայց արդասեաց երկուքնիս ալ մասնակից
պիտի ըլլանք :

Ս. յս խօսքը լսելուս պէս ակամայ շատադու-

նեցայ . յիշեցի Մանօնլէսդ օյի՝ Տէկրիէօյի հետ
Պ. Պ. ին արծաթն ուտելը :

Ոտք ելայ և խատու թեամբ պատասխանեցի .

— Աիրեցեալդ իմ Մարդարիտա , թո՛ղ
տուր որ այդ ձեռնարկութիւնն անձամբ կա-
տարելով մասնակից ըլլամ արդասեաց :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Ըսել կ'ուզեմ որ յոյժ կը կատկածիմ թի,
Պ. Կ. կոմսը դ'ործակիցդ ըլլայ այդ բարեյա-
ջող կարդադրութեանդ մէջ՝ որոյ ոչ ծախքը
և ոչ արդասիքը կ'ընդունիմ :

— Տղայ՛ս ես : Աարծէի թէ կը սիրես դիս ,
բայց սխալեր եմ եղեր , քա՛ջ է , ուրեմն :

Եւ նոյն ատեն ոտք ելնելով դաշնակը բա-
ցաւ և սկսեց « Կնախիթասիտն ա լա վայց » ը
նուագել մինչև այն դեղեցիկ կտորը՝ ուր միշտ
կը տառնապէր :

Քնակութեամբ կը արդեօք , և կամ յիշե-
ցունել կ'ուզէր այն օրն ինձ՝ յորում ճանչեր
էինք զիրար : Չդիտեմ . բայց այդ քաղցրա-
լուր դաշնակութիւնը լսելով ամեն բան յիշե-
ցի , և մերձենալով՝ գլուխը բռնեցի և համ-
բուրեցի զնա :

— Ար ներե՞ս ինձ ըսի :

— Տեսա՞ր , պատասխանեց , մեր սիրոյ երկ-
րորդ օրը ներու՛մն կը խնդրես յինէ . ո՞ւր է ,
կոյր զկուրայն պիտի հնազանդէիր ինձ , խոստ-
մանդ հաւատարիմ չես :

— Ի՞նչ ընեմ , Մարդարիտա , գրեզ յոյժ
սիրելու համար՝ քու դոյզն մտածութեանցդ
համար իսկ նախանձ կը զգամ : Հիմակուան
դիտաւորութիւնդ ուրախութենէ կը յափը-

տապէր, եթէ գործադրութենէն առաջ եղող
դաշտնիքը չտխրեցունէր զիս :

— Ն'կ, մտածե'նք քիչ մը, ըսաւ ձեռնա
բռնելով և նայելով ինձ իւր սիրուն ժպտո-
վը՝ որոյ առջին կը տկարանայի. կը սիրես
զիս, այդպէս չէ՞, և երջանիկ կ'ըլլաս, թէ
որ ինձ հետ երեք չորս ամիս 'ի գիւղ անցու-
նես. ես ալ բարեբաստ կ'ըլլամ քեզ հետ ա-
ռանձնանալով, և ասկէ դատ առողջութեանս
համար առանձնութեան և օղտիտութեան
կարօտ եմ : Չեմ կրնար այնչափ ատենուան
համար մեկնիլ Բարիզէն առանց գործերս
կարդի դնելու, և ինձ պէս կնկան մը
գործերը միշտ խառնաչիտի կ'ըլլան. բայց իմ
գործերս քու վրայ ունեցած սիրոյս հետ յար-
մարցունելու հնարը գտայ. մի՛ ծիծաղիր վը-
րաս, այո՛, յոյժ կը սիրեմ գքեզ, իսկ դու
խրոխտալով մեծ մեծ խօսքեր կը ջարդես
առջիս : Մ'հ, որչա՛փ տղայամիտ ես եղեր
տակաւին. ոչ ևս ինչ մտածէ, այլ դայս մի-
այն որ կը սիրեմ գքեզ : Ռ'նչ կ'ըսես. կը հա-
ւանի՞ս :

— Սիէն ուզածիդ կը հաւանիս :

— Ուրեմն ամսէ մ'առաջ գիւղ կ'երթանք.
գետեզերքը կը շրջինք, և կաթ կը խմենք :
Անշուշտ զարմանք է քեզ որ ես, Մարգարի-
տա կօթիէ, այսպէս խօսիմ, պատճառն այս
է որ, երբ Բարիզու մէջ անցուցած կարծեց-
եալ երանաւէտ կեանքս չբորբոքէ՝ կը ձանձ-
րացունէ զիս, այն ատեն յանկարծ կը հառա-
ջեմ գհետ խաղաղաւէտ կենաց՝ յոր յիշեմ զման-
կութիւնս : Մարդս՝ ի'նչ որ ալ եղած ըլլայ՝
մանկութիւն մ'ունեցեր է : Մի՛ կարծեր թէ

պաշտօնէն դադարած գնդապետի մը դուստրը
 լինելով (աղնուական դատերց վարժարանն Բա-
 րիզու մօտ) 'ի «Մէն—Տընի» դաստիարակուած
 ըլլամ : Աղքատ գեղջուկի մ'աղջիկ էի , և վեց
 տարի առաջ զանունս անդամ գրել չգիտէի :
 Հիմա զստոյգն խնացա՞ր : Ինչո՞ւ նախ քեզ ա-
 ռաջարկեցի որ բաղձանքիս մասնակցիս . այն
 պատճառաւ որ դու ինձ համար կը սիրես զիս ,
 մինչ այլք ամէնն իրենց համար Էեթ սիրեր
 են զիս :

Յաճախ 'ի գիւղ գացեր եմ , բայց ուղածիս
 պէս բնաւ չեմ գացած : Յոյսս քու վրադ դը-
 րեր եմ , այն դիւրին բարերաստութեան
 հասնելու համար . մի' խստացուներ սիրտդ ,
 շնորհէ' , շնորհէ' ինձ զայն : Մտածէ' մէկ մը
 որ կեանքս կարճատև պիտի ըլլայ . որ մը կը
 գղջաս շկատարելուդ համար քեզնէ խընդրա-
 ծրս , զոր 'ի գործ գնելն այնչափ դիւրին է :

Ինչ պատասխան կրնայի տալ այն խօսքե-
 րուն , մանաւանդ յիշելով որ այն գիշերը սի-
 րոյս վարձատրութիւնը պիտի ընդունէի , ա-
 կրնկալութեամբ երկրորդ գիշերուան բերկ-
 րանաց :

Ժամ մը վերջը Մարգարիտա բազկացս մէջ
 էր , և եթէ հրամայէր ինձ ոճիր մը գործել
 կը հնազանդէի իրեն :

Առաւօտեան ժամը վեցին մեկնեցայ :

— Այս իրիկուն կը տեսնուինք , ըսի երթա-
 լու ատենս :

Ուժդին գրկեց զիս , բայց չպատասխանեց :

Օրուան մէջ ընդունեցի թուղթ մի' յորում
 հետեւեալը գրուած էր .

« Սիրելիս , բիշ մ'անհանդիտ ըլլալուս հա-

մար՝ բժիշկը պատուիրեց որ հանդիմ : Աստի
այս իրիկուն հանուխ պիտի պատկիմ , և չեմ
կրնար դքեղ ընդունիլ : Բայց վաղը կես օրին
կը սպասեմ , ե՛կ : Ար սիրեմ՝ դքեղ : »

Իսկոյն կարծեցի թէ կը խափէ դիս :

Պաղ քրտինք ճակատս ստուցուց , որովհե-
տև զայն կիներ սաստիկ սիրելուս համար՝ կաս-
կածը յոյժ աղմկեց դիս :

Եւ սակայն դիտնալու էի որ ասի՝ դրեթէ
ամէն օր պիտի հանդիպէր Մարդարիտայի կող-
մէն , վասն զի ուրիշ հոսանայչներս յաճախ
նոյնպէս վարուեր էին ինձ հետ , բայց փոյթս
չէր եղած : Ինչո՞ւ համար Մարդարիտան այն-
քան տպաւորութիւն ներգործէր էր յիս :

Այն ատեն մտածեցի որ երթամ տեսնեմ
զինքն ըստ սովորականին յիւր սենեակը որոյ
բանալին քովս էր , այս կերպով ստոյգը կ'ի-
մանայի , և եթէ հոն մարդ մը գտնէի կ'ապ-
տակէի :

Առ այժմ 'ի «Շանդ—Էլիզէ» գացի : Չորս
ժամ հոն պատեցայ , բայց զՄարդարիտա չը
տեսայ : Երեկոյն մտի այն ատեն թատրոննե-
րուն մէջ՝ յորս սովորաբար կ'երթար . մէկուն
մէջ ալ գտնի չգտայ :

Ժամը տասն ու մէկին 'ի «տ'Սնթէն» փողոց
ընթացայ : Թէպէտև լոյս չէր տեսնուեր Մար-
դարիտայի խցին պատուհաններին , սակայն և
այնպէս դուռը զարկի : Եւ երբ դռնապանը
հարցուց ո՛ւր երթալս .

— Մարդարիտա Կօթիէին , պատասխանե-
ցի :

— Չվերադարձաւ տակաւին :

— Վեր կ'ելնեմ կը սպասեմ :

— Աերը մարդ չկայ :

Բանալին քովս ըլլալով՝ անշուշտ այդ պատ-
ուէրին դէմ կրնայի գործել, բայց շուղելով մի-
անդամայն ծիծաղելի կռիւ մը յարուցանել,
դուրս ելայ :

Մակայն տունս չգացի, վասն զի այն փո-
ղոցէն չէի կրնար հեռանալ : Մարդարիտայի
տունը աչերէս չէի փախցուներ, կը թուէր
ինձ թէ նոր բան մը տիտի խմանայի, կամ
գոնէ կասկածներս պիտի հաստատուէին :

Ահս գիշերուան մօտ՝ ինձ քաջածանօթ կի-
տակաւք մը Ծ թուով տան առջին կանդ ա-
ռաւ :

Ժ կունսը վար իջնելով՝ ՚ի տուն մտաւ՝
կառքը ճամբելէն յետոյ :

Աայրիկ մի յուսացի ուր Մարդարիտայի հոն
չըլլալն խմանալով՝ դուրս ելնէ ինձ պէս բայց
առաւօտեան ժամը շորտին տակաւին կը սպա-
սէի :

Երեք եօթնեկէ ՚ի վեր շատ վիշտեր կրեցի,
բայց այն գիշերուան դդացած վշտակրու-
թեանցս բաղդատելով՝ ոչինչ կ'երեւին նոքա :



ԺԴ.

Տունս մտայ, և տղու պէս լացի : Ա՛վ ո՞ր
միանշամ խարուեր է՝ խմացեր է անշուշտ թէ
մարդս որչա՛փ սաստիկ ցաւերով կը վշտակրի :

Բուն բարկութեանս մէջ, միտքս դրի թո-
ղու լքանել անմիջապէս դայդ կինը, դիտա-

ւորութիւնս կատարելու գորութիւնս ունենալ
կարծելով . և անհամբերութեամբ օրուան ծա-
գելուն կը մնայի , որպէս զի երթամ տեղ մը
բռնեմ ու հօրս և քրոջս քովը վերադառնամ ,
որոց սիրոյն վրայ տարակոյս չունէի :

Սակայն չէի ուզեր մեկնիլ առանց Մարգա-
րիտայի խնայունելու մեկնելուս պատճառը :
Ով որ իւր հոմանոյշը կը լքանէ առայ խնայ
տալու , ըսել է թէ ա՛լ շփրեր զնա :

Մտքիս մէջ քսան թուղթ շարադրեցի , ու
մէկուն ալ չհաւանեցայ :

Մերեր էի ամէն պահժու կանանց նման աղ-
ջիկ մը , զոր շատ ազնուասիրտ համարեր էի .
իսկ անի՛ զիս անսիրտ պատանուոյ մը տեղ
դնելով՝ նախատական պարզութեամբ նեն-
գութիւն մը բանեցուցեր էր զիս խաբելու
համար . ո՞վ չէր կրնար զայն հասկընալ : Հուսկ
ուրեմն անձնասիրութիւնս յաղթելով որոշեցի
լքանել զանի՛ առանց իրակ մեկնելուս վրայ
զգացած վիշտս խմանալու . գոհութիւնը իրեն
տալու . և իմ գեղեցկագոյն գրովս հետեւեա-
լը գրեցի իրեն՝ ՚ի կատարութենէ և ՚ի վշտաց
արտասուելով .

« Իմս Մարգարիտա .

« Կը յուսամ թէ երէկուան անհանգստու-
թիւնդ անմնաս եղած ըլլայ : Ժամը տասն ու
մէկին դացի հարցուցի զքեզ , բայց պատաս-
խանեցին թէ ՚ի տուն շես վերադարձած :
Պ. Ժ. . . բախտաւոր եղաւ քան զիս , ո-
րովհետեւ քիչ մ'ատենէն վերջը ինքն ալ դա-
լով՝ ներս մտաւ , և առաւօտեան ժամը չոր-
սին տակաւին առ քեզ էր :

« Ներէ՛ ինձ մի քանի ժամ քեզ ձանձրոյթ

պատճառերու համար, և սպառնով եղիր որ բնաւ պիտի չմոռնամ այն բարերաստիկ ծառները՝ որոց համար երախտապարտ եմ քեզ:

« Սյուր կը տեսնէի զքեզ, եթէ հօրս երթալու որոշումն ըրած չըլլայի: »

« Մնա՛ բարեաւ, սիրեցեալդ իմ Մարգարիտա: Ոչ այնքան հարուստ եմ որ ուզածիս պէս սիրեմ զքեզ, և ոչ ալ այնքան աղքատ՝ որ ուզածիդ պէս սիրեմ զքեզ: Մոռցի՛ր ուրեմն քեզ անտարբեր անձ մը, իսկ ես մոռնամ բարերաստութիւն մի՛ յոր պիտի շիարենամ վայելել այսուհետեւ: »

« Ար դարձունեմ քեզ դրանալիդ, զոր բնաւ չեմ գործածած, բայց կարեոր կրնայ ըլլալ քեզ, եթէ երէկուան պէս յաճախ հիւանդ ըլլամ: »

Ար տեսնե՞ս, շէի կրցած դնամակա աւարտել առանց վիրք հեղնութեան մը, որով յայտնի էր ո՛րչափ կը սիրէի դնա տակաւին:

Տասն անգամ կարդացի զայդ թուղթը, և խաղաղեցայ սակաւ մի՛ մտածելով որ պիտի վշտացունէի զՄարգարիտա, և յայնմ բացատրուած կեղծ զգացմամբ ջանացի քաջալերել դանձս: Մինչ ծառայս ծամը շորսին սենեակս մտաւ, նամակը ատի իրեն, և սպասարեցի զայն իսկոյն տանիլ:

— Հա՛րկ է պատասխանի սպասել, հարցուց Յովսէփ: (Իմ ծառայս ալ ուրիշ ծառայից պէս Յովսէփ կը կոչուէր):

— Եթէ հարցունեն որ պատասխան մը կայ, ըսէ թէ չես գիտեր, և սպասէ: »

Ար յուսայի որ Մարգարիտա թղթիւ պատասխանէր:

Մարդիկ քանի՛ տկարասիրտ և ողորմելի են
եղեր :

Մառայիս դուրս ելած ժամանակը սաստիկ
խռովութեան մէջ էի : Մերթ յիշելով Մար-
դարիտայի գիտ սիրելի՛ այդ արախոս թուղթը
դրեք անիրաւութիւն կը համարէի , որովհե-
տե կրնար պատասխանել որ ոչ թէ Պ. Ժ. կը
խարէր գիտ , այլ ես պինքը . դիտէ՛ որ այս
խելամտութեամբ կանայք մի քանի հոմանի-
ներ միանդամայն կրնան ունենալ Եւ մերթ-մ
յիշելով նորա ըրած երդմունքը՝ կը ջանայի
համոզուելու որ բաւական խտութեամբ չէի
դրած նմա , և թէ ամենէն անարդական բա-
ցատրութեամբք նշաւակերու էի այն կինը , որ
իմ անկեղծ սէրս ծաղրեր էր :

Յետոյ կը մտածէի որ լաւագոյն կ'ըլլար , ե-
թէ բնաւ չգրէի իրեն , այլ միայն պէտք էր
ինձ օրուան մէջ տունն երթալ և դանի լա-
ղունելով մրէժ լուծել : Մէկ մ'ալ տալիք պա-
տասխանին խորհելով յառաջագոյն հաւատա-
լու կը պատրաստուէի , եթէ արդարացունէր
ինքզինքը :

Նոյն ատեն Յովսէփ եկաւ :

— Ի՞նչ ըրիր , հարցուցի :

— Տէ՛ք իմ , սրտասխանեց , տիկինը պառ-
կած էր և տակաւին կը քնանար , բայց ար-
թըննաղուն պէս թուղթը պիտի տրուի , և
եթէ պատասխան մը գրէ , խկոյն հոս պիտի
բերեն :

Ար քնանա՛յ եղեր :

Քսան անգամ որոշեցի ծառայս առաքել
նամակս ետ բերելու համար , բայց ամէն ան-
գամ ինքնիրենս կ'ըլալի . դուցէ՛ արդէն թուղ-

Թէրս տուած ըլլան • ջրլայ որ այսու գղջայած
կարծէ զիս :

Արչափ մերձենար ժամը , յորում հաւանա-
կան էր որ պատասխանէր , այնչափ ևս գրե-
բուս վրայ կը գղջայի :

Տասներորդ . մետասաններորդ ժամերը և
կէս օրն անցան :

Աէս օրին քիչ մնաց պիտի երթայի որոշեալ
ժամուն , ինչպէս թէ ոչինչ հանդիպած ըլլար :
Չգիտէի ինչպէս սպասիլ երկաթէ շրջանակէն ,
որ կը սրկէր զիս :

Ժամը մէկին տակաւին կը սպասէի :

Այն ատեն կարծեցի , սպասող մարդկան
նախապաշարմամբ , որ եթէ դուրս ելնեմ , 'ի
դարձին պատասխան մը կ'առնուի : Անհամ-
բերութեամբ սպասուած պատասխանները
միշտ 'ի տուն շեղած ժամանակնիս կը հառ-
նին :

Դուրս ելայ ուրեմն նախաձայելու պատ-
րուակաւ : Փոխանակ՝ ըստ սովորութեանս 'ի
Տոյ սրձանոցը նախաձայելու , ընտրեցի եր-
թալ 'ի « Բայէ—Քուակալ » տ'Անթէն » փողո-
ցէն անցնելու համար : Քանի անգամ որ հե-
ռուէն կին մը տեսնէի , կարծէի թէ հանին
ինձ թուղթ մը կը բերէ : « տ'Անթէն » փողո-
ցէն անցայ առանց բեռնակիր մ'ալ տեսնե-
լու : Հասայ 'ի « Բայէ—Քուակալ » , ուր « Աէս »
րիկս սրձանոցը մտայ : Շատայն ուղածը բե-
րաւ առջիս , որովհետև ոչինչ կերայ :

Աչքս միշտ ժամացուցին վրայ էր :

Տունս վերադարձայ Մարդարիտայէն նա-
մակ մ'եկած կարծելով :

Դռնապանը բան մ'ընդունած չէր , Շատա-

իս վրայ յոյսս դրեր էի աակաւին , այն ալ
իմ երթալէս վերջը մէկը տեսած չէ կողեր :

Աթէ Մարդարիտա ուզէր պատասխանել
ինձ , 'ի բաղմաց հետէ գրած ըլլալու էր :

Յայնժամ ցաւեցայ դրած բաներուս վրայ .
պէտք էր բոլորովին լուել և սրոշուած ժամուն
տունը շերտալ . որով անձկութեանն պիտի
հարկադրուէր հարցունել ինձ բացակայու-
թեանս պատճառը , և այն ատեն միայն յայտ-
նելու էի դայն . ինքն ալ ուրիշ բան չէր կր-
նար ընել , բայց միայն ինքզինքն արդարա-
ցունել , և իմ ուղածս ալ այն էր : Յառա-
ջուց կ'իմանայի թէ ի'նչ պատճառ որ ալ տար'
պիտի հաւատայի . վասն զի չէի կրնար առանց
նորա տեսութեան ապրիլ :

Յուսայի նաև թէ դուցէ ինքնին ելնէ 'ի
տունս դայ , բայց ժամեր անցան և նա չե-
կաւ :

Ստուգիւ Մարդարիտա ուրիշ կանանց նման
չէ կողեր , որովհետև քիչ կին տեսնուեր է , որ
իմ գրած թղթիս պէս նամակ մ'ընդունելէն
յետոյ՝ լուէ :

Ժամը հնգին դուրս ելայ 'ի « Շանդ—Կլիզ »
երթալու համար . ճամբան կ'ըսէի ինքնիրենս .

— Աթէ հանդիպիմ իրեն՝ անտարրերու-
թեամբ կը բարեէի զինքը , իբր հասկըցունե-
լու համար որ ա'լ չեմ խորհիր իրեն վրայ :

Յաւարտ « Տուսեալ » մտղացին յանկարծ
նմա հանդիպելով այլագունեցայ : Չգիտեմ
տեսա՞ւ արդեօք զայլայլութիւնս . իսկ ես
յուզմանցս սաստիութեանն կառքէն դատ ու-
րիշ բան չկրցի տեսնել :

Չգացի 'ի « Շանդ—Կլիզ » : Քաարոմններու

ծանուցումները աչքէ անցուցի, վասն զի զանի տեսնելու տակաւին առիթ մը կրնայի ունենայ :

Առաջին ներկայացում մը կար 'ի « Բալէ—Ռուսեայ թատրոնը: Մադարիտա անշուշտ պիտի երթար :

Ժամը եօթնին թատրոնն էի:

Սիւն օթեակները լեցուեցան, բայց Մարգարիտա չ'երեցաւ :

Այն ատեն « Բալէ—Ռուսեայէն » ելնելով մտայ այն ամէն թատրոններուն մէջ, յոր յաճախ կ'երթար, այսինքն 'ի « Աօտրվիլ » 'ի « Վարիէթէ » և 'ի կատակերգակ Օրէրան, բայց մէկուն մէջ ալ զանի չտեսայ :

Կամ այն էր որ թղթիս պատճառած սառափիկ վշակն սիրտ չունէր 'ի թատրոն երթալու, և կամ կ'երկնչէր ինձ հանդիպելու, և բացարձակօրէն մը տալէն փախուսաւ կուտար :

Մինչ իմ սնասարժութիւնս այս խորհրդածութիւններս ինձ կը թելադրէր, « Պուլխարին վրայ հանդիպեցայ Կասթօնին, որ ուստի դարս հարցուց :

— « Բալէ—Ռուսեայէն », պատասխանեցի:

— Իսկ ես նուազաթատրէն, դքեզ հոն տեսնել կը կարծէի :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ Մարգարիտան ալ հոն էր :

— Ի՞նչ, ա՞նդ էր նա :

— Այո՞ :

— Մինա՞կ :

— Ո՛չ, իւր բարեկամուհեաց մէկուն հետ:

— Այր չկա՞ր քովը :

— Ժ. կամը վայրիկ մի նորա օթեակը մը:

տաւ . բայց Մարդարիտա դքսին հետ վերա-
դարձաւ : Միշտ կը յուսայի թէ կուգաս : Քո-
վի ամթուս մինչև վերջը պարտազ մնաց , կար-
ծեցի թէ քու բռնածդ է :

— Բայց ինչո՞ւ համար երթալու եմ՝ ուր որ
Մարդարիտա երթայ :

— Զարմա՛նք . որովհետև հոմանին ես :

— Ո՞վ ըսաւ :

— Բրիւտանա , որոյ երէկ հանդիպեցայ : Աւ-
րախակից եմ քեզ , սիրելի . անի դեղեցիկ հո-
մանոյ՞ մ'է՞՝ զոր ուզողը չկրնար ստանալ : Պա-
հէ՞ դնա , պատիւ կ'ընէ քեզ :

Կասթօնին այս սարդ խորհրդածութիւնը
հասկըցուց ինձ դիւրակրութեանցս ո՛ր աստի-
ճան ծիծաղելի ըլլալը :

Նթէ առջի օրն ինձ հանդիպելով , վերոյիշ-
եալ խօսքերն ըսէր , անշուշտ առաւօտուան
անսխտ թուղթս չէի գրեր :

Քիչ մնաց որ Բրիւտանային պիտի երթայի
և զանի Մարդարիտային պիտի առաքէի , ը-
նելու համար թէ կ'ուզեմ քիչ մը հետը տես-
նուիլ . բայց երկնչելով որ չըլլայ թէ վրէժ-
խընդիր հոգւով մերժէ , տունս դացի՞ տ'Ան-
թէն փողոցէն անցնելէ յետոյ :

Գարձեալ հարցուցի դռնապանիս թէ թուղթ
մը կա՞ր ինձ համար . — Աչինչ :

Անկողին մտնելուս ատեն , ինքնիրենս կ'ը-
սէի թէ գուցէ սպասեր է որ յետս կոչեմ այ-
սօր պթուղթս , բայց տեսնելով նաև որ չեմ
գրեր իրեն , վաղը կը պատասխանէ նամակիս :

Մանաւանդ այդ իրիկունը զղջացի ըրածիս
միտայ : Մինակ էի խցիս մէջ , չէի կրնար քնա-
նող , անձկութենէս և նախանձէս շարաշար կը

առանջուէի : Աթէ իրաց բնական ընթացքին
հետեւէի , Մարդարիտայի քով կ'ըլլայի , և կը
բնի դարձեալ այն ախորժարուք խօսքերը
զոր երկու անգամ միայն բեր էի , և որք կը
տոչորէին ականջներս՝ առանձնութեանս մէջ :

Իմ վիճակիս մէջ սարսափելի բանն ալ այս
էր որ խելամտութեան իրաւունք չէր տար
ինձ . և յիշաւի Մարդարիտայի զիս սիրելուն
վրայ տարակոյս չունէի , վասն զի խորհեր էր
ինձ հետ ամառ մը 'ի դիւղ անցունել . նա
բանով մ'ալ ստիպեալ չէր հարձս ըլլալու ,
որովհետեւ դրամական կարողութիւնս անբաւ
ւական էր նորա պիտոյքը և ոչ իսկ հաճոյքը
դռնացունելու համար : Արեւմտեան բան չէր
յուսացեր դռնել յիս , այլ անկեղծ սէր մը՝
վարձական տրիանքներէն յետոյ հանդէսու
համար . իսկ ես , երկրորդ օրը այդ ակնկա
լութիւնը վարատելով վիրք հենդնութեամբ
վարձատրեցի երկու դիւեր ընդունած վայել
քրս՝ զոր շնորհեր էր ինձ : Սպա ուրեմն բ
րածս ոչ թէ միայն ծիծաղելի էր , այլ նաեւ
անվայել : Բան մը վճարե՞ր էի այդ կնկան ,
որ զանի մեղադրելու իրաւունքն ունենայի
անցուցած կենացը համար . և երկրորդ օրը
մեկնելովս՝ միթէ չէի՞ նմանիր հացկատակի մը՝
որ ճաշոյն հաշիւը տեսնելէն փախուստ կու
տայ : Զարմա՛նք . երեսուն և վեց ժամէ 'ի
վեր միայն կը ճանչէի զՄարդարիտա , քսան
և չորս ժամէ 'ի վեր միայն հոմանին եղած էի
և նախանձ կը ցուցնէի : Փոխանակ զիս մաս
նակից ընելուն համար ինքզինքս երջանիկ հա
մարելու , կ'ուզէի ամբողջն ունենալ և ստի
պել զինքն իսկոյն լքանելու իւր անցեւոյն յա

բարեբաւթիւնները , որով և եթէ կրնար ապրիւր
ն'նչ բանի համար զանի կրնայի մեղադրել :
Գրեր էր ինձ թէ հիւանդ է , փոխանակ կա-
նանց ունանց դարչելի անկեղծութեամբն ըսե-
լու թէ հոսանի մը պիտի ընդունի : Իսկ ես փո-
խանակ գրածին հաւատարու , փոխանակ Բա-
րիզու ամեն փողոցներուն մէջ շրջելու , բայց
'ի «ա՛ Սնթէն» փողոցէն , փոխանակ երեկոյն
բարեկամացս հետ անցունելու , և երկրորդ
օրն ալ որչուած ժամուն իրեն երթալու ,
Սնթէնոյի պէս կը լրտեսէի դինքը , և տունը
չերթալով պատուհասել կարծէի դինքը : Բայց
ընդհակառակն ինքն ուրախանալով մեր ան-
ջառանան վրայ՝ դիտ վերջին աստիճանի անսխա-
մարդ մը համարելու էր , և իւր լուսնիւնը
ոչ թէ 'ի քենէ առաջ կուգար , այլ յարհամար-
հանաց : Ս. յն աստեն ընծայ մը նուիրելու էի
իրեն , որով իմ առատածեռնութիւնս ցուցնե-
լով և իրր պահճու կնկան մը պէս իրեն հետ
վարուելով պարտահատոյց կրնայի համարել
դիտ : Բայց տուրեւառի դուզնաքեայ ցոյցով մը
կը վախէի անարդելու , ոչ նորա իմ վրայ ու-
նեցած սէրն , այլ իմ նորա վրայ ունեցած սէ-
րրա , որոյ յոյժ անրիժ և անկեղծ ըլլալուն հա-
մար կը մերժէի զմասնակցութիւն , ուստի չը-
քեղադոյն նուէրով մ'ալ չէի կրնար փոխարի-
նել զանի ընդունած կարճատև բարեբաւ-
տութեան համար :

Ս. յս խորհրդածութիւնները մտքէս կը կըրկ-
նէի այն դիչեր , և ամէն անգամ կը պատ-
բաատուէի երթալու և Մարդ արխային հաղոր-
դելու :

Սրը ծագեցու , բայց տակաւին չէի քրնա-

ցած . տենդ . ունի . ոչ յայլ ինչ խորհի այլ
միայն 'ի Մարգարիտա :

- Արեմն ընկիքս որոշելու էի . պարտի բո-
լորովին լքանել դանի , կամ բնաւ դիւրակրու-
թեամբ տեղի չտալ , եթէ ինքը հաւանելը վիս
դարձեալ ընդունելու :

Բայց , գիտես որ մարդս միշտ կը յամէ բան
Տ' որոշելու : Չ' էի կրնար տունս նստիլ , և ոչ
կ'իջիտի Մարգարիտայի երթալ . ուստի իրեն
մերձենալու հնար մը փորձեցի , որ եթէ յա-
ջողէր , անձնասիրութեամբ դիպուած մը լռի
պիտի համարէի :

Ժամն իննին , Տրիւտանսին տունը վաղեցի-
ասի առաւօտեան այցելութեանս պատճառն
հարցուց :

Չհամարձակեցայ ստոյգը խոստովանիլ . պա-
տասխան տուի և ըսի թէ կանուխ դուրս ելեր
էի , որպէս զի ճեպընթացին միջ տեղ մը բլա-
նեմ' երթալու համար 'ի Ք . , ուր կը բնակէր
հայրս :

— Արշա' փ բարեբախտ ես . ուղեորութիւ-
նդդ զեղեցիկ օդով պիտի կատարես :

Երեսը նայեցայ Տրիւտանսին և մտքիս կը
հարցունէի թէ արդեօք կը ծագրէ վիս . բայց
ծանր կերպարան մ' ունէր :

— Բարեա'ւ երթաւ . պիտի տեսնե՞ս զՄար-
գարիտա , հարցուց միևնոյն ծանրութեամբ :

— Ա՛չ :

— Լա'ւ կ'ընես :

— Կատա'կ է ըսածդ :

— Ա՛չ , միթէ անօգուտ չէ՞ տեսնել զնո՞ւ
անճատուելի դ յետոյ :

— Արեմն գիտի՞ր մեր անճատումը :

— Յրած թուղթդ ինձ ցոյց տուաւ :

— Ի՞նչ ըսաւ :

— Սիրելիդ իմ Յրիւտանա , ըսաւ , բարեկամդ քաղաքավար չէ եղեր . այդ բաները կը մըտածուին , բայց չեն դրուիր :

— Ի՞նչ եղանակաւ ըսաւ դայս :

— Ծիծաղելով , և յարեց նաև , երկու անգամ ընթրեց առ իա , և մարտդութեան այցելութիւն մ'անդամ ջրներ ինձ :

Աւրեմն իմ թուղթս և նախանձս նորա վերայ դայս տալաւ որութիւնը պիտի ներդործեն եղեր : Իմ սիրոյս սնասարժութեանը համար սակէ աւելի սաստիկ խոնարհում չէր բլար :

— Ի՞նչ ըրաւ երկ կ երեկոյ :

— Նուադաթ ասր դնաց :

— Քիտեմ յետո՞յ :

— Տուն վերադարձաւ և ընթրեց :

— Միայնա՞կ :

— Եւ կոմսին հետ , կարծեմ :

Աւրեմն իմ մեկնելովս Մարդարիտայի տալարութիւնները չէին փոխուած :

Ասոր համար է որ ոմանք կըրան , սկտք չէր բնաւ մտածել այդ կնկան վրայ որ դքեղ չէր սիրէր :

— Նաև ուրեմն , շատ ուրախ եմ Մարդարիտայի ինձ համար չվշտանալուն վրայ , ըսի կեղծեալ ժպտով :

— Եւ շատ իրաւունք ունի , դու ինչ որ պարտէիր ընել կատարեցիր և իրակ առ աւել խոհականութեամբ վարուեցար , փասն զի ինքն դքեղ կը սիրէր , միշտ քու վրայօրդ կը խօսէր և կարող էր յիմարտկան դործի մ'ալ խիղախել :

— Եթէ զիս կը սիրէ , ինչո՞ւ համար թըլ-
թիս չպատասխանեց :

— Արովհետեւ խնայաւ որ պէտք չէր սիրել
դքեզ : Ասկէ զատ կանայք երբեմն կը ներեն
մարդկան իրենց սէրը խարելնուն համար բայց
անողորբելի են երբ անձնասիրութիւննին վի-
րաւորուի . և կնկան մը անձնասիրութիւնն այն
ատեն վիրաւորած կ'ըլլաս երբ , երկու օր նո-
րա հոմանին ըլլալէդ յետոյ , զանի որ և է պատ-
ճառով լքանես : Ար ճանչեմ ես զՄարդարիտա-
տաւել կ'ընտրէ մեռնիլ քան թղթիդ պա-
տասխանել :

— Ի՞նչ ընելու եմ այն ատեն :

— Ոչինչ , նա դքեզ կը մոռնայ , դու ալ զին-
քը , և զիրար բամբասելու բան մը չէք ունե-
նար :

— Կ'ուզեմ գրել իրեն՝ ներումն խնդրելու
համար :

— Չըլլայ թէ ընես , վասն զի կը ներէ :

Քիչ մնաց Բրիւտանիան վիզը պիտի պըլլուէի :

Քառորդ մը վերջը տունս երթալով հետե-
կալը գրեցի Մարդարիտային :

« Մէկը՝ որ երէկուան գրած թղթին վրայ
կը զղջայ , և վաղը կը մեկնի , եթէ իրեն չը-
պատասխանես , կուզէ գիտնալ թէ ո՞ր ատեն
կրնայ յոտս քո ներումն խնդրել :

« Ե՞րբ դքեզ միայնակ կը գտնուի , վասն զի
խոստովանութիւններն երբորդի մ'առջին չեն
ըլլար : »

Չայդ տունն աւաքեցի Յովսէփով , որ Մար-
դարիտային տուեր է , նա ալ խոստացեր է
դպատասխանն ապա տալ :

Ճաշելու համար միայն դուրս ելայ , և երե-

կոյեան ժամը տասն ու մէկին պատասխանը
տակաւին չէր եկած :

Այն ատեն առաջադրեցի առաւել երկար
ժամանակ չիշտանալով՝ երկրորդ օրը Յարիզէն
մեկնիլ :

Զայս որոշելէս յետոյ սկսեցի արկղերս լե-
ցունել , քանցի դիտելի որ եթէ պատկիմ , պի-
տի չկարենամ քնանալ :



ԺԵ.

Գրեթէ ժամ մը կար որ Յովսէփ և ես առ
մեն բան կը պատրաստէինք ուղևորութեանս
համար , մինչ դուռս ուժղին դարնուեցաւ :

— Բանա՞մ , հարցուց Յովսէփ :

— Բա՛ց ըսի , մտածելով միանգամայն թէ
ո՞վ կրնար այն ժամուն դալ առ իս , և չէի հա-
մարձակեր կարծել թէ Մարդարիտան ըլլայ :

Յովսէփ դարձաւ և ըսաւ .

— Տէր իմ , երկու կին եկեր են :

— Մենք ենք , Արման , աղաղակեց ձայն մը ,
դոր լսելով խնայայ թէ Յրիւտանն է :

Սենեկէս դուրս ելայ :

Յրիւտանս ոտքի վրայ կեցած՝ սրահիս մի
քանի հետադրող առկան իրերը կը գննէր . Մար-
դարիտս՝ «գանարէին վրայ նստած՝ կըխորհէր :

Ներս մտնելուս պէս քովը դացի , ի ծունր
իջայ և ձեռները բռնելով ներէ՛ , ըսի սյլայլած
ձայնիւ :

Ճակատս համբուրելով պատասխանեց .

— Գիտե՞ս, երրորդ անգամն է որ կը նե-
կմ' քեզ :

— Վաղը պիտի մեկնէի :

— Ինչո՞ւ համար դիտաւորութիւնդ փոխե-
ցիր . այցելութիւնս արդեւք մը չըլլայ ուղե-
ւորութեանդ : Օրուան մէջ թղթիդ պատաս-
խանելու ժամանակ չգտնելուս համար՝ հիմա
եկայ, որպէս զի ցատեալ չկարծես զիս : Բը-
րիւտանս չէր հաւաներ դալատեանս՝ քեզ նե-
ղութիւն չտալու համար :

— Դո՞ւ, նեղութի՛ւն տալ ինձ, ի՞նչ կըսես
սիրելիդ իմ Մարգարիտա :

— Զարմա՛նք . կընայիր տունդ կին մ' ունե-
նալ որ ուրիշ երկու կանանց դալատենէն շա-
խորժէր :

Բրիւտանսին այս դիտողութիւնն ըրած ա-
տենը Մարգարիտա ուշի ուշով երեսս կը նայէր :

— Սիրելի Բրիւտանս, պատասխանեցի, ը-
սածդ չես զիտեր :

— Բայց, զիտես, բնակարանդ շատ սիրուն
է, կըկնեց . կընամ' տեսնել պառկելու սեն-
եակդ :

— Այո՛ :

Բրիւտանս սենեակս մտաւ, ոչ թէ գայն
տեսնելու, հապա իւր ըսած անմիտ խօսքը
ջրելու և զՄարգարիտան ու զիս առանձին
թողլու համար :

— Ինչո՞ւ զԲրիւտանս հետդ բերիր, ըսի
Մարգարիտային :

— Արովհետեւ ի թատրոն ի միասին ըլլալուս
համար՝ ուզեցի քովս մէկն ունենալ առաջի ել-
նելուս ատեն :

— Միթէ ևս չկայի՞ :

— Այո՛, բայց Կախ և առաջ չէի ուզեր ներ-
դրութիւն տալ քեզ, և րկորորդ, և ապահով էի որ
մինչև դուռս գալէդ յետոյ պիտի խնդրէիր
վեր երնել, և ինչպէս որ չէի կրնար շնորհել ըզ
խնդիրդ, և չէի ուզեր որ զիս մեղադրելու ի-
րաւունք ունենաս :

— Բայց ինչո՞ւ չիր կրնար ընդունել զիս :

— Վասն զի հսկողութեան տակ ըլլալովս
դուզնաքեաց կասկածն խի կարող է մեծ աղէտ
հասուցանել ինձ :

— Այո է միայն պատճառը :

— Եթէ ուրիշ պատճառ մ'ըլլար, կ'ըսէի
քեզ, ո՛ւր այսուհետև իրարմէ ծածկելու բան
չունի՛նք :

— Միով բանիս, Մարդարիտա, չեմ ուզեր
երկար դարձուածներ բանեցունել ուզածս ը-
սելու համար : Ճշմարիտ ըսէ, և կը սիրե՞ս զիս
սակաւ մի :

— Դաս :

— Այն ատեն ինչո՞ւ խափեցիր զիս :

— Բարեկամս, եթէ դքսուհի մ'ըլլալով՝ եր-
կու հարիւր հազար ֆրանք եկամուտի տէր ըլ-
լայի, և քու հովանոյշդ լինելով հանդերձ ու-
րիշ հովանի մ'ունենայի, այն ատեն միայն ի-
րաւունք կ'ունենայիր ինձ հարցունելու թէ, և
ինչո՞ւ կը խարեմ գ.քեզ, բայց ևս Մարդարիտա
Վօթիէ օրիորդն եմ, քառասուն հազար ֆրանգ
պարտք ունիմ, փող մը չ'ունիմ, և տարին հա-
րիւր հազար ֆրանգի ծախք կ'ընեմ, ուրեմն
փայրապար հարցում է ըրածդ, և իմ պատաս-
խանս ալ անօգուտ :

— Այդ այդպէս է, ըսի զ լուխս ծնդ աչր վը-

բայ դնելով, բայց ևս յանչափա կը սիրեմ ըզ-
քեզ :

— Արեմն, բարեկամս, պէտք էիր նուազ
սիրել, կամ աւելի աղէկ ճանչել զիս : Շահ
փռայտաց զիս քու թուղթդ : Աթէ աղատ ըլ-
լայի . կոմար շէի ընդուներ, և կամ ընդունե-
լէս յետոյ կուգայի քեզնէ : ներումն կը խընդ-
րէի, փոխանակ զի հիմայ դու յինէ խնդրեցիր,
և այնուհետե քեզնէ զատ համանի չէի ունե-
նար : Պահ մը կարծեցի որ կրնայի հայթայթել
ինձ վեց ամիս այդ երջանկութիւնը . իսկ դու
մերթեցիր զայն . ուղեցիր տեղեկանալ միջոց-
ներուս, զոր շատ դիւրութեամբ կրնայիր դու-
շակել : Այդ միջոցները դործածելով կարծա-
ծէդ աւելի մեծ գոհողութիւն մ'ըրած պիտի
ըլլայի : Արնայի քեզնէ քսան հազար ֆրանկ
ուղել . զիս սիրելուդ համար՝ կը գանձի այդ
դուստրը, բայց ապա կը մեղադրէիր զիս : Ա-
ւելի ընտրեցի ոչինչ պարտիլ քեզ, այլ դու ըզ-
գացմանս խելամուտ շեղար : Արբոր առ մեզ
ոէրը տակաւին շիջած չըլլայ, բառերու և ի-
րաց այնպիսի ընդարձակութիւն և պարզում
կ'ընծայենք, որ այլ կանանց անձանօթ են :
Արեմն դարձեալ կը կրկնեմ . Մարգարիտա Աօ-
թիէի իւր պարտքերը վճարելու համար հրնա-
րած միջոցը և կարևոր եղած արժաթը քեզնէ
չխնդրելը յառաջ կուգար փոխուկ զգացումէ
մը, յորմէ օդուտ քաղելու էիր սուանց բան
մ'ըսելու : Աթէ զիս այսօր լսի ճանչցած ըլլա-
յիր, խոստումներս դքեզ բարեբաւասիկ ընե-
լով առջի օրուան ըրածս չէիր հարցուներ ինձ :
Արեմն մենք կառիպուինք՝ մեր մարմնոյն վը-
նաստիք հաճութիւն մը դնել ի շնորհս մեր հոգ-

ապն , և յոյժ կը վշտանանք , մինչ այդ հա-
ձուժիւնը ձեռքէ փախցունենք :

Աչերս Մարդարիտայի վրայ սեւեւած՝ խօս-
քերուն կը լսէի :

Երբ մտածէի որ այդ հրաշագեղ կիներ , որոյ
երբեմն ստքերը համբուրել կը ցանկայի , խոր-
հէր յիս սակաւ մի և իւր կենաց գործոց մէջ
մաս մ'ալ ինձ կը շնորհէր , և թէ ես ինձ տը-
ուածէն տակաւին գոհ չէի և կը հարցունէի
ինքնիրենս թէ մի՞թէ՞ մարդուս փափաքները
սահման չեն ունենար . փասն զի իղձերս գո-
հացունելէս անմիջապէս յետոյ , դեռ ուրիշ բա-
նի կը կարկառէի ձեռներս :

Արդարեւ , յարեց , մենք արարածքս դիպ-
ուածի , այլանդակ փափաքներ և անհասկընա-
լի արմանքներ կ'ունենանք : Միշտ իրարմէ
տարբեր բաներու կուտանք ինքդինքնիս : Մար-
դիկ կան որ բոլոր ստացուածքնին կը վատնեն
մեզ համար՝ առանց մեզնէ շնորհ մ'ընդ ունե-
լու , իսկ մարդիկ ալ կան , որ ծաղկանց փուն-
ջով մը կը ստանան զմեզ : Մեր սրտին հաճոյ-
քը՝ մեր միակ սիրտիանքը և շքմեղն են : Ա'երդ-
նուժ որ մարդու մը այնչափ վաղ ինքդինքս չեմ
տուած՝ որչափ քեզ , որովհետեւ արիւն թըք-
նելլոս տեսնելով՝ ձեռնս բռնեցիր , և լացիր .
որովհետեւ մարդկային արարածոց մէջէն մի-
այն դու ցաւեցար վրաս : Միծաղաշարժ բան
մը պիտ' ըսեմ քեզ , ատենօջ փոքր շուն մը ու-
նէի , որ հազարու ատենս՝ արտում տխուր ե-
րեսս կը նայէր . միայն զայդ արարածը սիրե-
լի ցարդ : Երբոր մեռաւ , աւելի լացի նորս
վրայ քան մօրս մահուան . այս ալ կայ որ «մայ-
րա տասներկու տարի զիս ծեծեր էր : » Այո՛

իմ շանս չափ վաղ սիրեցի զքեզ : Յթէ մարդիկ
դիտնային թէ արտառնքով մ'ինչե՛ր կրնան ըս-
տանալ , առաւել կը սիրուէին և մենք ալ նոցա
ինչքն այնպէս չէինք սպառեր :

Գրած թղթէդ խնայայ ինչպիսի ոք ըլլալդ :
Գու , սրտի ամեն փափկութիւնները չունիա
եղեր : Նամակդ աւելի վնասեց քու վրայ ու-
նեցած սիրոյս քան ամեն չարիք՝ զոր կըր-
նայիր հասուցանել ինձ : Յիրաւի նախանձ էր
այն , բայց հենդնական և լիրք նախանձ մը :
Քու թուղթդ ընդունած ատենս արդէն շատ
տխուր էի . կը յուսայի կէս օրին տեսնել զքեզ ,
ճաշել քեզ հետ , և վերջապէս մտնալ ի տես
քո բան մը՝ յոր մտածէի անդադար , և զոր
գիւրաւ ընդուներ էի զքեզ ճանչելէս առաջ :

Ասկէ դատ , յարեց Մարդարիտան , կարծէի
թէ քու առջիդ միայն կրնամ ազատաբար խոր-
հիլ և խօսիլ : Ինձ պէս աղջկանց քով գանուող-
ները կը ջանան հետադօտել նոցա դոյզն խօս-
քերն իսկ . կը հնարեն հետևանք մը հանել
նոցա ամէն աննշան դործերէն , որով բնակա-
նապէս բարեկամ չենք ունենար , այլ միայն
ինքնամօլ հոմանիներ , որք ինչքերնին կը վատ-
նեն ոչ մեզ համար , ինչպէս որ կ'ըսեն , հապա
մի միայն սնապարծութիւննին գոհացունելու
համար :

Այդ տեսակ մարդկան առջին զուարթերեւ
ըլլալու ենք , երբ ուրախ ըլլան , քաջառողջ՝
երբ ընթրել ուղեւան , սկեպափկեան՝ երբ նո-
քա պահանջեն : Զդայնութիւնն արդիլուած է
մեզ , ապա թէ ոչ կը ծաղրուինք և յարգ չենք
ունենար :

Մենք մեր անձին տէրը չենք : Իսկ չենք՝

այլ իր : Անձնասիրութեամբ կը պարծին մեր
վրայ , սակայն կ'արհամարհեն զմեզ :

Քեզինք նաև բարեկամութիւններ , բայց Յրիշ-
տանախ պէս , որոնք երբեմն պահծու կին ըլ-
լալէն յետոյ , տակաւին կ'ուզեն պերճութեամբ
ապրիլ , զայն որ իրենց տիքն ա'լ թող չտար-
այն ատեն մեզ բարեկամութի կամ մանաւանդ
սեղանակից կ'ըլլան , իրենց բարեկամութիւնը
մինչև 'ի ծառայութիւն կը նուստանայ , այլ
չբարձրանար մինչև յանչախասիրութիւն : Ան-
դամար շահու յորդորներ միայն կուտան մեզ
փոյթերնին չըլլար եթէ տասը համանի աւելի
ու նենամք , միայն թէ կարենան մեզնէ պա-
րեզ օտներ և ապարանջաններ տանուլ , երբե-
մքն մեր կտուայ մէջ շրջիլ և 'ի թատրոն գալ
մեր օթեակին մէջ : Սեր աւջի օրումն փուն-
ջերը իրենցն են , և մեր զգիտիները փոխ կ'առ-
նուեն : Բնաւ փոքր ծառայութիւն մը շեն մա-
տուցաներ մեզ՝ առանց նորա արժէքին կրկինը
մեզ վճարել շտուած : Գու ալ տեսար թէ այն
կրկիններ՝ յորում Յրիշտանա բերաւ ինձ վեց
չուրսը ֆրանսոյ՝ զոր խնդրելու համար աղաչեի
էի իրեն երթալ գրասին՝ որ փոխ առաւ յինն
հինգ հարիւր ֆրանսոյ , զոր ամենեին պիտի
չգարծուէն ինձ և կամ պիտի վճարէ գլխարկ-
ներով , որք առաջերնն , և բնաւ պիտի չեղնեն :

Քրեմն մեր կրնանք ունենալ , կամ մանա-
ւանդ ևս կրնայի ունենալ բարերաստութիւն
մը և եթէ , օրսինքն , իմ մերթ տխուր և հանա-
պայ հիւանդոտ վիճակիս մէջ գտնել մարդ մը՝
որ ապնուութեամբ համար շղահանջեր յինն
անցուցած կենացս վրայ , և աւելի տալաւ որո-
թեամբ համանին ըլլար , քան մարմնոյս : Զայդ

մարդը գտեր էի 'ի դուքսն , բայց դուքսը ծնե
է , և ծերութիւնը կարող է պաշտպանել և մի-
խիթարել : Աստուծոյ թէ նորա ինձ առաջար-
կած կեանքը պիտի կարենամ վարել . բայց ի՞նչ
ընեմ . ձանձրոյթիս կը մեռնէի . աւելի աղէկ
է խկոյն սպառիլ հրդեհի մէջ նեւաւելով , քան
ածխով տակաւ անչնչանալ : Յայնժամ հանդի-
պեցայ քեզ , քու աշխոյժդ , երջանկութիւնդ
և երիտասարդութիւնդ անանելով իմ աղմկա-
լից առանձնութեանս մէջ երազած մարդս կար-
ծեցի գրեզ : Այս սիրելի գրեզ ոչ ի ներկայն ,
այլ յապագայն : Օ՛հ ս ընդունիր այդ պաշտո-
նը . կը մերժե՛ս դայն՝ իբր անարժան քեզ .
ուրեմն դու սովորական հոմանի մ'ես . արդ-
այլոց ալ ս վճարէ ինձ , ու ա՛լ չխօսինք այս քա-
նիս վրայ :

Մարդարիտա , այս երկարատեւ խոստովա-
նութեան յողներով , «դ անարկ» ին թիկունքին
վրայ կը թնցաւ , ու բռնեց զանի թեթև հող
մը , զոր անցունելու համար թաշկինակը շուրթ-
ները և մինչև աչերը տարաւ :

— Հերի՛ , ների՛ ինձ , ըսի քրթմնջելով , այդ
ամեն ըսածներդ դիտելի , բայց բերնիդ կ'ու-
ղի լսել , պաշտելիդ իմ Մարդարիտա : Մո-
նա՛նք զանցեալը , և մտածենք միայն որ երի-
տասարդ ենք և կը սիրենք զիրար :

Մարդարիտա , ի՛նչ որ կ'ուզես՝ բրէ՛ զիս , ես
քու գերիդ՝ չունդ եմ . բայց յանուն Աստուծոյ
պատէ՛ քեզ դրած թուղթս , և մի՛ թողուր
որ մեկնիմ վաղը , ապա թէ ոչ կը մեռնիմ :

Մարդարիտա պարեզ օտին լանջ քէն թուղթը
քաշելով ինձ տուաւ , և անպատմելի քաղցրա-
թեամբ ժպտելով ըսաւ :

— Ահա՛, բերի զայն :

Պատուեցի նամակս և արտասուեալ թոր աչերով
ամբուրեցի նորա ձեռնը, ցոր ինձ կարկառէր:
Նոյն ժամանակ Բրիւտանս ներս մտաւ :

— Գիտես, Բրիւտանս, ի՞նչ կը խնդրէ յինձ,
ըսաւ Մարգարիտա :

— Ներու՛մն կը խնդրէ :

— Այո՛ :

— Անշուշտ ներեցիր :

— Անտարակոյս, բայց դեռ ուրիշ բան մ'ալ
կը խնդրէ :

— Ի՞նչ է այդ բանը :

— Կ'ուզէ գալ մեզ հետ ընթրել :

— Պիտի հաւանի՞ս :

— Դու ի՞նչ կ'ըսես :

— Կ'ըսեմ թէ երկուքնիդ ալ տղայ էք, և
երկուքնիդ ալ խելք չունիք : Բայց կը մտածեմ
նաև որ շատ անօթի ըլլալովս՝ որչափ որ վաղ
հաւանիս, այնչափ ալ վաղ կ'ընթրենք :

— Արթանք ուրե՛մն ըսաւ Մարգարիտա, ե-
րեքնիս կրնանք կառքիս մէջ նասիլ : Յետոյ ինձ
դառնալով յարեց . Նանին հիմա պառկած ըլ-
լալու է, ուստի ա՛ռ բանալիս ու դուռը բաց,
բայց չկորուսնես :

Խեղդելու շափ գրկեցի զանի :


Նոյն միջոցին Յովսէփ ներս մտնելով .

— Տէր իմ, ըսաւ ինքիւր վրայ դ ո՛հ եղող մար-
դու մը պէս, արկղերը կապեցի :

— Բոլորովի՞ն :

— Այո՛, տէր իմ :

— Քակէ ուրե՛մն, պիտի չերթամ :



Կրնայի, ըսաւ Արման, պատմել քեզ հա-
մառօտիւ մեր սիրոյ սկիզբը, բայց ուզեցի
յայտնել թէ ո՞րպիսի եղև լուծեամբք և ի՞նչպէս
տատիճանարար Մարգարիտայի ամեն ուզած-
ներուն հաւանեցայ և ի՞նչպէս Մարգարիտան
ու որոշեց ինձ հետ և եթէ կենակցիլ :

Մարգարիտայի տունս եկած իրիկունան երկ-
րորդ օրը «Մանօն-լէսդօն դրկեցի իրեն :

Այն ատենէն սկսեալ կեանքիս ընթացքը փո-
խեցի, որովհետև հոմանոյչիս սովորութիւննե-
րը փոխելու անկարող էի : Ամեն բանէն առաջ
կը ջանայի որ ընդունած պաշտօնիս վրայ խոր-
հելու ժամանակ չունենամ, ապա թէ ոչ՝ ըստ
ոչ կամացս՝ կրնայի մեծապէս վշտանալ : Աս-
տի իմ կեանքս՝ որ սովորաբար անդորրաւէտ
էր, յուզեալ և խռովեալ կերպարան մ'առաւ :
Մի՛ կարծեր թէ պահճու կնկան մը ձրի տրր-
փանքն առանց ծախքի ըլլայ, ծաղիկներէ, օթ-
եակներէ, ընթրիքներէ և ՚ի դիւզ սիտիանք-
ներէ առաւել սուղ բան չկայ :

Հոմանոյչդ յաճախ կը խնդրէ դասունք, և դու
չես կրնար մերժել :

Արպէս ըսի քեզ՝ անինչ երիտասարդ մ'էի
ես : Իմ հայրս ընդհանուր հարկապահանջ էր
և է տակաւին ի Ժ. : Ազդասիրութեանը հա-
մար մեծ համբաւ ստացած ըլլալով կրցաւ ե-
րաջիսը դտնել, որոյ կարօտէր վերոյիշեալ պաշ-
տօնին մէջ մտնելու համար : Իւր գործը քա-
ռասուն հազար ֆրանդ կը բերէ տարին, և

ասար տարուան մէջ երաշխի հաստեցանելն
 յետոյ, քրոջս օժիտ պատրաստելու սկսեր էր :
 իմ հայրս շատ պատուաւոր մարդ մ'է : Մայ-
 րս՝ մեռնելու ատեն վեց հազար ֆրանկ եկա-
 մուտ թողուց, զոր հայրս՝ քրոջս և իմ մէջ բաժ-
 նեց՝ իւր խնդրած պաշտօնը ընդունած օրը :
 Յետոյ, երբ քսան տարեկան եղայ, այդ փո-
 քրք եկամուտին վրայ տարին հինգ հազար ֆր-
 րանկ նաև աւելցուց՝ ապահովելով զիս որ ու-
 թը հազար ֆրանկով կրնայի բարեբաւանիկ ապ-
 րիլ 'ի Քարիդ, եթէ ուղեւայի այդ եկամուտին
 հետ հաստատուն վիճակ մ'ունենալ կամ ատե-
 նարանու թեամբ և կամ բժշկու թեամբ զբաղե-
 լով : Աւստի 'ի Քարիդ եկայ, իրաւագիտութիւն
 ուսայ, փաստարան եղայ, և շատ երիտասար-
 դայ ախ, մկայսական ծոցս դրած՝ սկսեցի Քա-
 րիդու մէջ անփայթ կեանք մը վարել : Քիչ
 ժամք կ'ընէի, միայն իմ տարեկան եկամուտ
 ու թն անոց մէջ սպասելով ամարան չորս ամի-
 սին ալ իմ հօրս տունը կ'անցունէի, որով ընդ-
 ամենը տասնեկու հազար ֆրանկ եկամուտ
 ունեցած համարուելով բարի զաւակի ալ համ-
 բաւ ստացեր էի : Չայս ալ զխանայր է որ
 փող մը պարտք չունէի :

Այսպիսի վիճակի մէջ էի, երբ ծանկոյ ըզ-
 Մարդարիտա .

Հետեարար ծախքերս սկսանայ աճեցուցի :
 Մարդարիտան շատ մտահաճոյ ընտւորութիւն
 մ'ունէր, և կը նմանէր այն կանանց, որք ի-
 րենց կեանքը բաղկացունող հազարաւոր ըզ-
 բօսանքները ծախքի տեղ շէն դներ : Եւ ու-
 ղելով ինձ հետ ըստ կարելոյն՝ աւելի թամա-
 նակ անցունել, առաւօտը կը գրէր թէ ընդ իս

ճաշել կը խնդրէ՝ ոչ յիւր տունը՝ այլ պանդակ
 մը , կամ 'ի Քարիդ և կամ 'ի դիւղ : Աստի 'ի
 միասին կը ճաշէինք , թատրոն կ'երթայինք ,
 և շատ անգամ ալ կ'ընթրէինք . երեկոյին շորս
 կամ հինգ Նուգովիկոս սակի սպառած կ'ըլլայի
 որ ամիսն երկու հազար հինգ հարիւր կամ ե-
 րեք հազար Փրանդ կ'ընէ , ուստի իմ տարե-
 կան եկամուտս երեք ու կէս ամսուան միայն
 բաւելով պարագ ընելու . և կամ զՄարդարիտա
 լքանելու հարկադրութեան մէջ կը դանուէի :

Բայց ամենայն բան աչքս կ'տեսուի , այլ ոչ
 սա երկրորդ դիտաւորութիւնը :

Երէ ինձ այս բաներս մանրամասնաբար
 պատմելուս համար , բայց պիտի տեսնես որ
 սորա եղանկեւեկալ եղելու թեանց շարժա-
 սիթ : Ասի ճշմարիտ և սարգ պատմութիւն մ'է ,
 յորմէ շեմ ուղեր երկարապատում մանրամաս-
 նութեանց պարզութիւնը բառնալ :

Աստի հասկանալով որ կերպով մ'ալ պիտի
 շխարհնայի մտնող զհարձս՝ առիպուեցայ այն-
 պիտի հնար մը դանել՝ որով բաւեմ նորա պատ-
 ճառաւ ըրած ծախքերուս : Եւ դարձեալ այդ
 սէրը զիս յոյժ ազնկելուն համար՝ Մարդարի-
 տայէն հեռի անցուցած ժամանակս՝ տարիներ
 կ'երեւար ինձ , և կարօտ էի որ և է կրից օդ-
 նականութեամբ ստանել այդ ժամանակը , որ-
 ակս զի անցնիլը շիմանամ :

Փոքր դրամադիսիս վերայ հինգ վեց հազար
 Փրանդ փոխ առնելով ձկնեցի խաղալ , վստն
 զի խաղուտեղեաց արդիւուելէն 'ի վեր՝ հիմն
 ամենուրեք կը խաղան : 'ի Պրասպիթիօ մըտ-
 նողներուն բախան երբեմն յաջող կ'երթար ,
 քանի իրենց աչաց առջին արժաթ՝ տեսնելով

կը խաղային , և եթէ յանկարծ կորուսնէին՝ այսու կը մխիթարուէին թէ կարելի էր շահիլ մինչ արդ , բայց յակումբներէն՝ ուր վճարման համար տակաւին խառութիւն կը բանեցունեն , եթէ որ մեծ դումար մը շահի դայն չընդունելուն վրայ ապահով է , և պատճառն ալ այս է :

Այն երիտասարդները միայն կը խաղան , որ բազմաթիւ պիտոյք ունին և կամ իրենց վարած կեանքին պատճառած ծախքերուն գիմանալու համար կարենոր եղած ստացուածքէն գուրկ են . ուստի բնական հետեանքով կամ կը շահին , այն ատեն կորուսնողները կը վճարեն նոցա ձիոց և հումանոյշներուն դիւնը , որ շատ ծաղրելի բան մ'է , կամ կը կորուսնեն , այն ատեն ալ , իրենց ապրուստին համար արդէն արծաթ շունենալով՝ կորուսածնին չեն կարող վճարել , որ շատ անախարժ բան մ'է , և հետեարար պարտք կ'ընեն : Ասանաչադոյն գորդին շուրջն սկսեալ յարարելութիւնները կ'աւարտին կռիւներով յորս մարդուս պատիւն ու կեանքը սակաւ մի կը վնասուին : Քարելաւ մարդն ալ յաճախ կը յաղթուի բարելաւ երիտասարդներէն , որոց մի միակ պակասութիւնն է երկու հարիւր հազար ֆրանց եկամուտ շունենալնին :

Չեմ յիշեր խաղու մէջ դողցողները , որոց անհրաժեշտ երթը կամ յապաղեալ դատասարտութիւնը որ մը կը լսուի :

Քստի նետուեցայ այդ արագ սասակ , աղմկալից և եռանդնոտ կեանքին մէջ , յոր երբեմն ստակամբ կը մտածէի , և որ հիմա՝ Մարդարիտայի վրայ ունեցած սիրոյս անխախտ ստորումն էր :

Ուրիշ ի՞նչ կրնայի ընել :

Եթէ Մարգարիտայի տունը չանցուցած դի-
չերներս՝ տունս նստելի՝ չէի կրնար քնանալ :
Վասն զի նախանձը զիս արթուն բռնելով՝ գը-
լուխըս կը տոչորէր : մինչդեռ խաղը պահ մը
զտենդս շրջելով՝ որ կրնար ճարակիլ ի սիրա-
խմ՝ կը փոխադրէր զայն ուրիշ կրից վրայ , յոր
կը զառածանկի աղամայ մինչև այն ժամը՝ յո-
րում պիտի երթայի առ Մարգարիտա . յայն-
ժամ, ասկէ մանաւանդ կ'իմանայի սիրոյս սաստ-
կութիւնը , թէ շահած և թէ կորուսած ըլլայի
անդ թութեամբ սեղանը կը լքանէի , զաւելով
միանգամայն հոն մնացողներուն վրայ , որով-
հետև խաղէն վերջը՝ ինձ պէս պիտի չկարն-
նային երջանկութեան մը մի՞ճակիլ :

Խաղը բազմաց համար կարևոր բան մ'էր ,
իսկ ինձ համար դարման էր :

Մարգարիտան լքանելով միայն կրնայի խա-
ղէն քաշուիլ :

Անոր համար անխուով կը խաղայի , կը կո-
րուսէի՝ որչափ կրնայի տալ , և կը շահէի , որ-
չափ կրնայի կորուսնել :

Սակայն բախտս անցածող կ'երթար : Պարտք
չէի ընել , բայց զխաղած ժամանակս ալ երեք
անգամ աւելի արծաթ կ'ուռաի : Նիւրին չէր
ինձ հրաժարել այն կեանքէն որ թոյլ կուտար
ինձ Մարգարիտայի բիւրաւոր սարոյթները
(քէյֆ) գոհացունել : Իսկ նորա խմ վրայ ունե-
ցած սերը երթալով կ'աճէր :

Արպէս ըսի , առ աջները կէս զիշերէն մինչև
առաւօտեան ժամը վեցին կրնայի միայն նորա
տունն երթալ . յետոյ մերթ յիւր օթեակն ըն-
դունեց զիս , և մերթ ալ ինքն եկաւ ինձ հետ :

ճարելու : Մ. ա. ա. օ. ա մը ծամն ութին դացի , և օր մ'ալ եղաւ որ կէս օրին դանուեցայ նորա սենեակը :

Մարդարիտայի վրայ բարոյական այլակերպութիւն սպասած ատենս , նիւթական այլակերպութեան գործուիլը տեսայ : Նորա առողջութեան ձեռնարկեր էի , և հէդ աղջիկը նպատակս գուշակելով կը հնարանդէր ինձ՝ շնորհապարտութիւնը ցուցնելու համար : Տակաւ և դիւրութեամբ առջի սովորութիւններէն հեռացուցեր էի զանի : Բժիշկս՝ Մարդարիտան տեսնելով ըսաւ որ անդորրաւէտ կեանքը միայն կրնար սրահել նորա առողջութիւնը . ուստի փոխանակ ընթրեաց և արնութեան առողջապահիկ կանոն մ'ընդունել տուի իրեն : Տակաւ առ տակաւ կը սովորէր այն նոր կենաց , որոյ օգտակար արդասիքն ինքն ալ կ'իմանար : Սկսեցի մի քանի երեկոյ նորա տունը անցունել և եթէ օղք դեղեցիկ ըլլար , վրան ցփախնէր կ'առնուր և երեսին վրայ ալ քօղք մը կը ձգէր , և այնպէս հետի կ'երթայինք մանկանց նման , ու Շանդ-Կլիպէի նախնաւորներ ծառուղւոյն վրայ կը յաճէինք : Յոգնած կը վերադառնար ի տուն , սակաւ մի քան կ'ուտէր , և կը սրահէր՝ քիչ մ'առնեն նուազելէն կամ կարդալէն յետոյ , զոր նախ ամենեւին ըրած չէր : Անոր համար առողջութիւնն արագ արագ տեղը կուգար : Իսկ հագը , զոր իւրաքանչիւր անգամ լնելուս դողցես կուրծքս կը պատուրուէր , գրեթէ բոլորովին անցեր էր :

Վեց ամիս անցնելէն յետոյ ա'լ կուսը փոյթօ չէր : Մարդարիտան ա'լ զանի թողեր էր . դըբախն համար միայն կ'առիպուէի զսէրս ծած-

կերու , սակայն զանի ալ երբեմն , Մարդ արի-
տայի հետ եղած ժամանակս , ճամբայ գրե-
կին , պատճառելով թէ տիկինը ի քուն ըլլա-
լով չուզեր որ զարթուցանեն զինքը :

Մարդարիտայի զիս յաճախ տեսնելու սուխ-
րած ըլլալուն , և դարձեալ իմ տեսութեանս
միշտ կարօտելուն համար հարկ եղաւ ինձ խաղը
լքանել , այլ բարեբազդ արարի ճարտար խաղա-
ցողի պէս՝ յաջող առ թիւն մեկնեցայ : Տասն հա-
պար Քրանք շահած ըլլալուս՝ կարծէի թէ ա-
նրապառ դրամագլխոյ տէր եմ :

Հօրս և քրոջս երթալու ժամանակը հասեր
էր , և սակաւին չէի երթար , որով երկուքէն
ալ թուզիմ եր կ'ընդունէի . յորս թ ախանձանօք
զիս կը խնդրէին :

Իսկ ես իրենց աղաչանաց կրցածիս շափ կը
պատասխանէի և կը դրէի թէ , որջ և առ որջ ըլ-
լարով արծաթի ա՛յ կարօտութիւն չունիմ . և
կը յուսայի այսպէս մխիթարել զհայրս , տարե-
կան այցելութիւնս ու շայնելուս համար :

Նոյն ժամանակ առաւօտ մը Մարդարիտա
զարթեալ , և օդոյն գեղեցկութիւնը տեսնե-
լով անկողնէն վար զսիծկեց և խնդրեց յինձ
որ դիւզ տանիմ պէճքը :

Յրիւտանք բերել տուինք և երեքնիս ի միա-
սին դացինք : Մարդարիտա ապապրեց Նանի-
նին որ եթէ դու ըսը դայ , ըսէ թէ օդոյն գե-
ղեցկութենէն հրապուրուելով Տիւֆէրնուս
տիկնոջ հետ դիւզ գնացեր է :

Յրիւտանսին ներկայութիւնը նախ և առ աջ
կարեւոր էր , ծերունի դքսին մտառանջութիւ-
նը փարատելու համար , և երկրորդ՝ Յրիւտանու
այն կիներէն է , որք կարծէս զիւզական ըլ-
լալով :

բօսանաց համար ծներ են : Իւր անսպառ զը-
ռարթութեամբը և մշտնջենական ախորժակո-
վը՝ իրեն հետ եղողներուն ձանձրութեան ժա-
մանակ չէր թողուր , և անտարակոյս քաջ գիտ-
նալու էր հաւկիթներ , կերասներ , կաթ և
համեմեալ ճաշար և միով բանիւ Բարիդու շր-
ջակոյից աւանդական նախածաշր կազմող ա-
մէն բաներն ապաստելու եղանակը : Արթալու
տեղերնիս միայն որոշել կը մնար մեզ :

Գարձեալ Բրիւտանա այս հողէն աղատեց
զմեզ :

— Համարի՞տ , գի՞ւղ մը կուզէք երթալ , հար-
ցուց :

— Այո՛ , պատասխանեցինք :

— Ուրեմն ի Պուժիվալ երթանք , և Բուան-
Տիւ-Յուր անուանեալ պանդոկն իջնենք :

Արման , գնա՛ կառք մը վարձէ :

Մէկ ու կէս ժամէն վերջը յիշեալ պանդոկը
հասանք :

Գուցէ գիտես զայն , որ եօթնեկի մէջ պան-
դոկ , իսկ կիրակին՝ գինեատուն է : Պարտիպէն
որ սովորական առաջին յարկի շափ բարձր դիրք
մ՞ուռնէր , առջիդ հրաշալի տեսարան մը կը
պարզի Չախակողմը՝ Մարլիի ջրմուղը կը փա-
կէ զհորիզոնս աջակողմը բազմաթիւ բլուրներ
կը տեսնես . դետը , որոյ բնթացքը քիչ զգալի
է հոն լայն , սպիտակագոյն և վէտ վէտ ժա-
պաւէնի մը կերպարանն ունի ի մէջ Ասպիյօն
դաշտին և Գրուասի կղզւոյն , զոր յաւերժ կ'ո-
րորեն իւր բարձրակատար կազամախեաց սօ-
սափիւնքը և ուռեմեաց շրջիւնքը :

Ի հեռոտտանէ , արեգական լայնասփիւռ ճա-
ռագայթի մը մէջ՝ կը բարձրահաս կարմրագոյն

տանիքով փոքր տուններ և գործարաններ , որք
հեռաւորութեամբ իրենց խիտ և առւտրա-
կան գրոշմը կորուսնելով սքանչելապէս կ'ամ-
բողջացունեն զայս տեսարանը :

Հեռուն կը տեսնես զԲարիզ՝ մառախլապատ :
Բրիւտանիս ըսածին համեմատ յիրաւի գե-
ղազուարճ գիւղ մ'էր ասի , ուր պատուական
նախաճաշ մ'ըրինք :

Մի' կարծեր թէ այն գիւղին մէջ վայելած
բարեբաստութեանս պատճառաւ շնորհապարտ
ըլլալուս համար է որ այդպէս կը գովեմ . Պու-
ժիվալ՝ իւր անախորժ անուամբն իսկ՝ գեղա-
զուարթ գիւղերէն մին է : Շատ տեղեր քայ-
լեր եմ , շատ աւելի մեծաչէն բաներ տեսեր
եմ . բայց ոչ երբէք այնքան սիրուն վայր մը
որչափ այդ աւանը , որ կը տարածուի իրեն
պաշտպան բլրոյն ստորոտը :

Պանդոկին տիրուհին առաջարկեց մեզ նա-
ւակով շրջագայութիւն մ'ընել , զոր Մարգա-
րիտա և Բրիւտանս մեծաւ ուրախութեամբ
ընդունեցին :

Իրաւամբ զգիւղը միշտ սիրոյ հետ ընկերա-
ցուցեր են . վասն զի կապուտակային երկին-
քէն , անուշահոտ բուրմունքներէն , ծաղիկնե-
րէն , գեփիւռներէն և դաշտաց կամ անտա-
ռաց զուարթ աղւեղ առանձնութիւններէն զատ
ոչինչ կրնայ առաւել արժանապէս շուրջ պա-
տել սիրուհիդ : Արչափ որ յոյժ սիրես զայդ
կինը , որչափ որ վստահ ըլլաս նորա վրայ ,
որչափ որ նորա անցեալն ապահովէ զքեզ ա-
պագային վրայ , միշտ նուազ կամ առաւել
նախաճաշ կըզգաս : Յիժէ մի անգամ սաստկա-
պէս սիրեր ես կին մը , անտարակոյս իմացեր

ևս նաև կարօտութիւնք մեկուսացունելու յաշ-
 խարհէս զայն էակք՝ յորում կ'ուզես կեալ բո-
 ւորալին : Աարժեա թէ սիրուհիդ մերձաւորու-
 թեամբ մարդկան և իրաց՝ սակաւ մի խոք բուր-
 մունքն կը կարուանէ որչափ որ ալ անտարբե-
 րութեամբ նկատէ խոք շուրջն եղող անձերն
 ու իրերը : Կս ամենն առաւել կ'խմանայի զայս
 վասն զի իմ արիւմնքս սովորական սէր մը չէր
 այլ կը սիրէի որչափ որ մարդկային արարած
 մը դոյն սիրել , բայց զՄարդարիստա Աթմիէ ,
 սյակնքն , ի Քարիդ , ամեն քայլախոխի կրնայի
 հանդիպել ումեք՝ որ այն կնոջ համանին եղած
 ըլլայ , և կամ պիտի ըլլայ երկրորդ օրը : Բակ
 ի դիւղ , մեզ անձանօթ և անտարբեր եղող
 մարդկան մէջ , ի ծոց բնութեան սղնէտլ գար-
 նամբ , որ զողցես տարեկան ներում մ'է , և
 քաղաքին աղմուկներն հետի ըլլալով կրնայի
 սէրս ծածկել , և անկասկած ու աներկիւղ սի-
 բել զանի :

Տակաւ առ սակաւ՝ Մարդարիստայի երբեմն
 հարձ մ'ըլլալը մտնալով ուրիշ բան չի նըշ-
 մարեր քոխս բայց միայն մանկամարդ , ըը-
 նորհատեղ կին մի , զոր սիրէի և յորմէ կը սիր-
 ուէի . անցեալն անհետանալով ապագայն կը
 տեսնուէր՝ սքոշ և պայծառ : Արեղը լուսառ-
 բէր զսիրուհիս իբրև զանարատ խօսեցեալ մի :
 Դուռ գայինք այն սիրուն վայրաց մէջ , որք
 կարճես Վանարթիմի սասերը կամ Սքուտոյի
 մեզեղ ինեքը յիշեցունելու զխամամբ ստեղծուեր
 են : Մարդարիստա սպիտակագոյն պարեղօտ
 մը հողած էր . բաղկիս միայ կը թնելով կը
 կրկնէր ինձ երեկոյին , աստեղազարդ երկնից
 տակ , առջի օրուան ըսածները , և աշխարհ

ամենայն ի հեռատանէ իւր կեանքը շարու-
նակելով ստուերովը ջր նանձացուներ մեր ման-
կութեան և տրիանայ գեղապաւարձ տեսա-
րանք :

Սոյն օրուան բողաճաճանչ արեգը՝ տերևնե-
րու մէջէն՝ այս տեսիլն ինձ կը ցուցնէր , մինչ
մեր ելած կղզւոյն մարդապետանին վրայ ընկող-
մանամ , թոյլ կուտայի խորհրդոցս , զերձ մարդ-
կացին ամէն կապերէ , երևակայութեան աշ-
խարհին մէջ ընթանալ և հանդիպած յոյսերնին
քաղել : Անցած ակողս կը տեսնէի գետեղեր-
քին վրայ երկայարկ փոքրիկ և սիրուն տուն
մի , որոյ առջին կիսարտըր փանդակապատ կար-
փանդակապատին մէջէն կը նշմարէի թ աշանդ-
ման ողորդապետ մարդապետին և շինուած ին
տանին խորհրդաւոր առանձնութիւններով լի
սրբակ մ'որոյ մամուռն անշուշտ ամէն առա-
ւօտ կը ջնջէր առջի օրուան անցնողին քայլից
հետքը :

Մայրցոյ ծաղիկներ կը ծածկէին այդ ան-
բընակ տան դռան սանդուղները , և մինչև
առաջին յարկը կ'երևէին :

Այնչափ նայեցայ այն տան՝ որ վերջապէս
համոզուեցայ թէ ինձ համար կատարեալ է ,
վասն զի լիովին բովանդակէր զիս՝ երազած բա-
րերաստութիւնս : Երևակայութեամբ կը տես-
նէի հոն զՄարգարիտա և զիս , կէս օրին բը-
լարը ծածկող սնտառին մէջ կը նստիմք , իսկ
երեկոցին դալարեաց վրայ , և կը հարցունէի
յիս թէ մի՞թէ երկու մարդկացին արարածներ
կրնային մեզնէ՝ առաւել բարեբաստիկ ըլ-
լալ :

— Ննչ սիրուն տուն է սա , ըստ ինձ Մար-

դարիտա , որ իմ հայեցուած իա ուղղութեանը
և դուցէ խորհրդոցս հետեւէր :

— Ո՞րք հարցուց Քրիւտանա :

— Սա՛ , պատասխանելով Մարդարիտա մա-
տովը ցուցուց զայն :

— Յիրաւի շատ աղւոր է , ըսաւ Քրիւտանա ,
միրեցի՞ր զայն :

— Յո՛յժ :

— Գքսին ըսէ որ վարձէ քեզ համար , ան-
տարակոյս շտերժեր : Ա՛յժէ ուղես , ես ի դըրու-
կը հանեմ այս գործը :

Մարդարիտա երեսն նայեցաւ իբր խորհուրդ-
հարցունելու համար :

Երազած տեսիլս աներևութացաւ Քրիւտան-
սին վերջին խօսքերը լսելովս , և այնպիսի տը-
մարդութեամբ իրականութեան մէջ նետեց
զիս՝ որ պահ մը ապշութեան մէջ մնացի :

— Յիրաւի , շատ աղէկ մտածեց , նպատա-
սանեցի թո՛թովելով , առանց ըսածս զիտնալու

— Ուրեմն ես կը յարմարցունեմ , կրկնեց
Մարդարիտա՝ ձեռնս սեղմելով , որովհետեւ իւր
փափաքներուն համեմատ կը մեկնէր խօսքերս :
Երթանք փութով իմանալու թէ վարձո՞ւ է :

Տունը պարապ էր , երկու հազար ֆրանքի,
վարձու էր :

— Հոս երջանիկ կ'ըլլա՞ս , հարցուց ինձ Մար-
դարիտա :

— Պիտի կարենա՞մ հոս դալ :

— Ուրիշի համար պիտի շղամ հոս թ աղուե-
լու , բայց միայն քեզ համար :


— Ուրեմն , Մարդարիտա , թո՛ղ որ ես վար-
ձեմ տունը :

— Խե՞նդ ես , ոչ միայն անօգուտ է այն ,

այլ վտանգաւոր ևս կրնայ ըլլալ • զիտես սր
աշխարհիս վրայ մարդէ մը միայն ընդունելու
իրաւունքն ունիս՝ ինձ թ' ո՛ր այս գործը, մեծ
տղայ, ու դու լսէ՛ :

— Ուստի պարտաւոր ծամանակներս հոս կու
դամ ձեզ հետ կ'անցունեմ, ըսաւ Բրիւտանա :

Տնէն ելնելով Բարիդու ճամբան բռնեցինք՝
խօսելով միանգամայն մեր նոր դիտաւորու
թեան վրայ : Բազկացս մէջ ունէի զՄարդարի
տա, այնպէս որ երբ կառքէն իջանք՝ նաւադ
նախանձով կը նկատէի հոսանոցիս հնարած
կարգադրութիւնները :



ԺԷ.

Երկրորդ օրը Մարդարիտա դիս վաղ ճամբ
բեց՝ դքսին դալուստը պատճառելով, և խոս
տացաւ, նորա մեկնելէն յետոյ, զրով խնացու
նել ինձ թէ ուր տեսնուիս իրեն հետ երեկոցին :

Օրուան մէջ ընդունեցի թուղթ մի, յոր հե
տեւալը գրուած էր •

« Դքսին հետ 'ի Պուժիվալ կ'երթամ • այս ե
րեկոյ ժամն ութին ե'կ աւ Բրիւտանա : »

Արտշեալ ժամուն Մարդարիտա եկաւ դտաւ
դիս տիկին Տիւվէրնուայի տունը :

— Ամէն բան կարգի դրինք, ըսաւ ներս
մտնելով :

— Տունը վարձեցիք, հարցուց Բրիւտանա :

— Այո՛, խնայն հաւանեցաւ :

Գուքսը չէի ճանչեր, սակայն դիմքը խուս-
փեշուս վրայ անաչեցայ :

— Բայց, դեռ ուրիշ բան մ'ալ կար, կըրկ-
նեց անդրէն Մարդարիտա :

— Ի՞նչ բան :

— Սղաննի համար ալ բնակութիւն մը դ տայ :

— Ես յն տանը մէջ, հարցուց իրաւամբ ծի-
ծ աղելով :

— Ա՛յ, ի որու ան տիւ ժուր, ուր դուքսը ե-
կա նախաձայ ըրինք : Եորա տեսարանը դիտե-
լու համար դացած ատենը, պանդոկիւն տի-
րուհւոյն հարցուցի թէ պատշաճ դատիկոն մ'ու-
նի : Սրահ մը, ներքնատեւեակ մը և պառկե-
լու խուց մ'ունի եղեր, որ կարծեմ կը բաւե-
քեղ : Եւ դարձեալ այնպէս լու յարդարեալ է
այն դատիկոնը, որ ախտնդանտ մի ևս գրո-
ւացնելու կարող է : Քառի բունեցի դայն, ա-
ղէկ ըրի՞ :

Փոխանակ պատասխանի՝ համբարեցի Մար-
դարիտան :

— Ի՞նչ աղէկ պիտի ըլլայ, յարեց փոքր դը-
րան բանալին քեզ կուտամ, դքսին ալ վան-
դակապատքինը խոստացայ, բայց նա պիտի
չառնու, վստան դի օրուան մէջ պիտի դայ դիտ-
տեսնելու : Մէջերնիս մնայ խօսքը, կարծեմ
թէ յոյժ ուրախացաւ այս իմ սարոյթիս վրայ,
որով Բարիզէն հետ անարով կը լուեցունեմ մի-
անգամայն նորա ընտանիքը : Սակայն հարցուց
նաև թէ՛ ի՞նչպէս կ'ըլլայ որ ես՝ Բարիզը յոյժ
սիրելով՝ երթամ այն դիւրին մէջ փակուիմ,
պատասխան տուի և ըսի թէ հիւանդութեանս
պատճառաւ կուզեմ հանդ ըլլի՝ բայց կարծեմ
քոյարովին չհաւատայ խօսքիս :

Այդ հեղ ծերը միշտ կատկամի մէջ է . ուս-
տի շատ զգուշութիւն բանեցուներու կնք , սի-
րեցեալդ իմ Յոսման , սրտէկեռու հոն ալ ազգի
պիտի շխտացունէ զիս . և ինձ տուն մի վար-
ձեթն յետոյ՝ պարտքերս ալ վճարելու է , վա-
սըն զի դժբախտարար մի քանի պարտք ունիմ :

— Այս պատասխանեցի : Չանարով միան-
դամայն խաղաղել նախանձն որ երբեմն կը
բորբոքէր ի տես այդ պիտի կենաց :

— Տեսանք տան ամեն կողմը . շատ կը յար-
մարի մեզ : Դուքսն ամեն բանի վրայ սիրտը
կը հարուցունէր : Ա՛հ , սիրելիդ իմ , բառ Մար-
դարիտա՝ յիմարարար պագանոցիս պլլուելով ,
չարարաստիկ շեռ դու , վասն զի մեծատուն
մարդ մը կը յարդարէ զանկողինդ :

— Ե՛րբ պիտի երթամ , հարցուց Բրիւտանու :

— Պիտի ջանամ ժամ մ'առաջ մեկնելու :

— Կառքդ և ձիերդ պիտի տանի՞ս :

— Անկն ունեցածներս հոն պիտի փոխադ-
րեմ . միայն՝ բացակայութեանս ժամանակ
դատիկոնիս խնայք տա՛ր :

Քեթն օրէն վերջը Մարդարիտա դնաց ի գիւղ
յիւր տունը , իսկ ես՝ ի սրտան տիւ ժուրս :

Այն ամենուան վարած կեանքս շատ դժ-
ուարաւ կրնամ նկարագրել :

Մարդարիտա ի Պու ժ ի վաղ դարէն տակաւ ին-
քիչ մը վերջն ալ շիրցաւ իւր ունակութիւննե-
րէն հրածարիլ . ուստի տունը միշտ ուրախու-
թեան մէջ ըլլալուն պատճառաւ՝ ամէն բարե-
կամուհիները զինքը տեսնելու կուգային : Ամ-
բողջ ամիս մը ամէն օր Մարդարիտա ութը
տասը հոգեով սեղան կը նստէր : Բրիւտանա ալ

իւր ամէն ծանօթները հոն բերելով տան ար-
բուհւոյ մը պէս դնտա կ'ընդունէր :

Այս ծախքերը դքսին արծաթովը կ'ըլլուէին .
տակայն տան մը Յրիւտանա հազար Ֆրանսի
տոմսակ մը խնդրեց յինէ իրր Մարդարիտայի
կողմանի, և ալ խաղու մէջ շահած ըլլալու և
համար՝ Մարդարիտայի նորա բերնով խնդրած
դումարն իսկոյն տուի, բայց երկնչելով միանա-
դամայն որ ունեցածս Մարդարիտայի պիտոյի-
ցը չբաւէ, դացի փոխա տուի այնչափ արծաթ
որչափ որ երբեմն առեր էի, և զոր ապա ճըշ-
դիւ հատուցեր էի :

Քստի դարձեալ տասն հազար Ֆրանսի տէր
եղայ տասնց թուելու իմ եկամուտս :

Սակայն Մարդարիտա սկսեց բարեկամու-
հիներն ա'լ յաճախ շհրաւիրել, վասն զի այդ
գրօսանաց համար շատ ծախք կ'ընէր, և եր-
բեմն ալ յինէ արծաթ խնդրելու կը հարկադ-
րուէր : Դուքսը, որ այն տունը վարձեր էր
աղջկան հանդատութեանը համար, բնաւ չէր
գար, վասն զի դուարթ և բազմաթիւ ընկե-
րութեան մը հանդիպելն կերկնչէր, և որոյ
չէր ուղիւ ինքզինքը ցուցնել, որովհետեւ որ
մը յուսալով Մարդարիտայի հետ առանձին ճա-
շել՝ տասնուհինգ հոգւոյ մէջ գտեր էր ինք-
զինքը՝ նոցա նախաձայ ըրած ատեն : Անկաս-
կած՝ ճաշարանին դուռը բանալու ատեն, հր-
բաւիրեալ աղջիկները ընդհանուր ծիծաղով մը
ընդունէր էին զինքը, և նոցա անվայել դուար-
թութիւնը տեսնելով ստիպուեր էր իսկոյն
մեկնիլ :

Մարդարիտա սեղանէն ելնելով ըստի սեն-
եակը դացեր էր դքսին քով, և ի դուր կրթ-

ցածին շափ ջանացեր էր մոռցունել՝ նմա եւ
դամ նախատինքը • բայց ծերունին՝ իւր անձ-
նասիրութեանը վիրաւորեալ ըլլալուն համար՝
ոխ պահելով և անդ թու թեամբ պատասխաներ
էր • «Մէլ չեմ ուղեր ծախք ընել հաճոյիցը հա-
մար խենդ աղջկան մը , որ չկրնար գիտ յար-
դել տալ իւր տան մէջ :» Եւ զայս լսելէն յե-
տոյ սաստիկ բարկութեամբ ելեր դայեր , ու
այն օրէն ՚ի վեր ոչ ևս եկած էր :

Ի դուր Մարգարիտա ՚ի բայ արձակեր էր
ընկամուհիները • ՚ի դուր սովորութիւնները վա-
խեր էր • դուքսը դարձեալ լռութեանը մէջ
հաստատուն մնացեր էր : Ինձ այն բարիքն ե-
ղաւ որ անարդել ստացայ դժամանոյշս , և ե-
րազս վերջապէս կատարուեցաւ : Մարգարի-
տա ա՛յ առանց գիտ տեսներու շէր կրնար ըլ-
լալ • մեր սէրը հաշակելէն շէր երկնշէր • իսկ
եւ միշտ քովն էի : Յառայները գիտ իրր տան
տէր համարելով «տէր խն կոչէին :

Բրիւտանա՝ զայս տեսներով բազում անդ ամ
յորդորեց զՄարգարիտա , բայց ասի պատաս-
խանէր թէ կը սիրէ գիտ , չկրնար առանց ինձ
ապրիլ , և թէ՛ ինչ որ ալ ըլլայ՝ պիտի չհրա-
ժարի գիտ միշտ առ իւր տեսներու բարեբա-
տութենէն , յարելով միանդամայն որ այս բա-
նէս շախորժողները թող չզան :

Օր մը Բրիւտանա Մարգարիտայի կարեւոր
բան մը հարցողելու համար եկաւ • և նոցա խցի
մը մէջ մտկաւած ատեննոյն , եւ ալ գացի՝
դանէն յիշեալ խօսքերը լսեցի :

Քանի մ'օրէն վերջը Բրիւտանա դարձեալ
եկաւ :

Նորա եկած ատենը ՚ի պարտ, զն ըլլալուս հա-

մար՝ չտեսաւ զիս : Մարդարիտայի ընդ առաջ
նորա երթալու կերպէն խնամարով որ նոյն լը-
սած խօսքերս վերապին պիտի կրկնուէին , ո-
րպէցի դարձեալ ականջ դնել , նոցա յարդա-
րանայ սենեակը փակուած ծամանակ , դացի
ու դռնէն հեռեւեալ բանակցութիւնը լսեցի :

— Ի՞նչ բրիր , հարցուց Մարդարիտա :

— Տեսայ զգաքսր :

— Ի՞նչ ըսաւ :

— Սիրով ներեց քեզ այն նախատանայ հա-
մար , բայց ըսաւ որ Պ. Արման Տիւփալին հեա-
կեալդ աններելի է : Մարդարիտա թողու սյդ
երիտասարդը , յարեց , և յայնժամ դարձեալ
ամեն ուղածը կուտամ իրեն , ապա թէ ոչ յի-
նէ բան չխնդրէ :

— Ի՞նչ պատասխան տուիր :

— Խոստացայ իւր սրտումբ խնայունել և
համոզել զքեզ : Մտածէ մէկ մը , սիրեցեալ
աղջիկս , այն վիճակին վրայ՝ զոր պիտի կո-
րուանես , և զոր Արման բնաւ չկրնար պար-
զուել քեզ : Բոլորով սրախ կը սիրէ զքեզ ,
բայց պիտոյքդ գահացունելու համար բաւա-
կան հարստութիւն չունի , որով անշուշտ օր
մը պիտի ստիպուի լքանել զքեզ , բայց կարի-
անադան , և դուքան ալ յայնժամ պիտի չօղ-
նէ քեզ : Առդե՞ս Արմանին հետ խօսիմ :

Մարդարիտա կը խորհէր , և չէր պատասխա-
նէր . իսկ իմ սիրտս կը բարտխէր :

— Ո՛չ , ըսաւ , չեմ թողուր զԱրման , և նո-
րա հետ ապրիլս պիտի չծած կեմ : Գուցէ խեն-
դութիւն ըլլայ ըրածս , բայց ի՞նչ ընեմ , կը սի-
րեմ զինքը : Ասկէ դատ անի՝ զիս անարդեչ
սիրելու սովորած ըլլալով , հիսնա՛նի՛է ծամ մ'եւ

լինելն մեկնելու առիագուի , սաստիկ կը վշտու-
նայ : Արկարատե կեանք մի պիտի չունենամ ,
որ տխրատեսիլ ծերուանոց մը կանքը կատա-
րելու համար ինքզինքս դժբախտ ընեմ : Թող
պահէ արժամէք այն , կարօտ չեմ :

— Բայց ի՞նչ պիտի ընես առանց նորա :

— Չգիտեմ :

Երիւտանս պատասխանելու վրայ էր , մինչ
ես յանկարծ ներս մտնելով վազեցի Մարգա-
րիտայի սաքերն ընկայ՝ թրջելով նորա ձեռնե-
րը արտասուքս , զոր հասէ ի իրակ , այնչափ սիր-
ուելուս ուրախութեանն :

— Բոլոր իմ կեանքս քեզ կը նուիրեմ , իսկ
Մարգարիտա , ո՛չ ես կարօտութիւնս ունիս այս
մարդուն . միթէ ես չկամ . միթէ կրնամ եր-
թէք լքանել դքեզ , կրնամ քու ինծի պարդե-
ւած երջանկութեանս փոխարէն վարձահատոց
լինել քեզ : Այսուհետեւ անդգոյշ սիրենք պի-
րար , ցանկալիդ իմ Մարգարիտա . փոյթ եր-
նիս չըլլայ ուրիշ բան :

— Այո՛ , կը սիրեմ դքեզ , տարիալիդ իմ Ար-
ման , ըսաւ ձած ձայնով բազկօքք պարանո-
ցիս պըտուելով , կը սիրեմ դքեզ , և բնաւ չէի
կարծեր որ այսպէս կարենամ սիրել : Արջա-
նիկ պիտի ըլլանք , անդ որրաւէտ կեանք մը պի-
տի վարենք , և ես մշտնջենաւ որ հրածեչտա պի-
տի սամ այն կենաց՝ ընդ որ կամաչեմ հիսա :
Պիտի չկատարես դիս անցելոյն համար , այն-
պէս չէ՞ Արման :

Արտասուելէս չգօրկի բարբառիլ , սրտիս վը-
րայ զՄարգարիտա պնդելով միայն կրցի պա-
տասխանել :

— Պատե՛՛ղ , դքսին տեսածդ , ըսաւ դոյզա-

Զուն ձայնիւ՝ Բրիւտանիոն դառնալով, և առեւ-
ցուր նաև որ մենք նորա արձաթիւն կարօտու-
թիւն չունինք :

Նոյն օրէն ի վեր դքսին վրայ ա՛լ խօսք չեղաւ :
Մարդարիտա շէր ևս այն աղջիկը՝ զոր ճան-
շխ երբեմն : Արդ ուշանար այն ամէն բանէն,
որ կրնար ինձ յիշեցունել նորա անցուցած
կեանքը : Բնաւ ամուսին մը կամ քոյր մը այն-
չափ խնամք և սէր չէ ունեցած իւր էրկանե կամ
եղբոր վրայ, որչափ որ Մարդարիտա ունէր
իմ վրաս : Այն հիւանդ օտ աղջիկը դիւրամտ-
տոյց էր ամեն տպաւորութեանց և զգացմանց :
Հրածարեր էր իւր բարեկամու հիներէն և ու-
նակութիւններէն, լեզուն փոխեր էր, և ա-
ռաջուան պէս մեծամեծ ծախքեր շէր ընել :
Եթէ տեսնէիր զմեզ՝ երբ անէն դուրս կ'եղ-
նէինք շրջադայութիւն մ'ընելու համար փոք-
րիկ և սիրուն նաւակի մը մէջ՝ զոր դներ էի,
շէիր կրնար կարծել որ այդ սպիտակադէակ
կիներ, որոյ գլուխը մեծ յարդէս վատկով մը
ծածկեալ էր, և բաղկին վրայ ալ մետաքսէ,
անպաճոյճ մուշտակ մը կը բռնէր՝ ջրոյն դո-
ւութեան ինքզինքը պաշտպանելու համար,
այն Մարդարիտա կօթիէն ըլլար, որոյ գեղատ-
թեան և գոյթակզութեան համբաւը շորս ամիս
առաջ ամենուրեք տարածեալ էր :

Աւա՛ղ, կը փութայինք բարեբաւտ ըլլալ,
կարծես գիտնալով մեր երջանկութեան կար-
ճատե ըլլալը :

Երկու ամսէն ի վեր ի Բարիդ անդամ շէինք
գացած : Ոչ ոք եկեր էր զմեզ տեսնելու, բայց
միայն Բրիւտանա և Քիւլի Տիւփրա, որով խօ-
սեցայ քեզ, և որոյ Մարդարիտա յանձնելը

էր ապա այն սրտաշարժ պատմութիւնը, զոր
քովս պահած եմ տակաւին :

Զօրն ի բուն համանոյճիս քովէն չի հեռա-
նար : Պարտիզին վրայ նայող պատուհանները
կը բանայինք և ընդ հովանեաւ ծառոց բացուած
ծաղիկներուն ամարան հրածեշտ տալը տես-
նելով, կը վայելէինք իրարու քով այն ճշմարիտ
կեանքը, զոր ոչ Մարգարիտա և ոչ եւ իմա-
ցեր էինք մինչև այն ատեն :


Այդ կիներ՝ զօրէն մանկուոյ՝ կը զարմանար
առենէն աննշան իրաց խի : Օր կ'ըլլար որ պար-
տիզին մէջ կը վազէր՝ տաանամեաց աղջկան պէս
թիթ եռնիկի մ'եռուէն : Այն անտառակ կիներ որ
ամբողջ ընտանիքի մը ապրուստին կարեւոր ե-
ղած արծաթէն առելի ծախք ընել տուեր էր
ծաղկանց փունջերու համար, կը նստէր հիմա
երբեմն մարդագետնին վրայ ընդ երկար, և
կը դիտէր այն անդարդ ծաղիկը, որոյ անունը
կը կրէր :

Նոյն ժամանակ յաճախ կը կարդար «ՊՄա-
նոն Ղևոյօ» : Շատ անդամ տեսի այն մատենին
մէջ դիտողութիւնները նշանակելը և ինձ միշտ
կը կրկնէր թէ սիրատարսի կին մը Մանոնի ը-
րածը ճիշդար գործել :

Երկու երեք անգամ դուքսը դրեց. Մար-
գարիտա դիրք ծանեաւ, և առանց կարգալու-
թիւթերն ինձ տուաւ : Այն նամակաց խօսքե-
րը երբեմն կը լացունէին զիս : Քաակին բերա-
նը փակելով զանի վերտաին իրեն դարձունել
կարծեր էր. բայց այն հնարքին անողուտ ըլ-
լալը տեսնելով, չէր կրցած դիմանալ, և Մար-
գարիտայէն հրաման կը խնդրէր որ և է պայ-
մանաւ զանի տեսնելու :

Կարդացի այն ատիպողական նամակները ,
 և պատուեցի՝ առանց Մարդարիտայի խնայու-
 նելու նոցա սխարունակեալը , և առանց յորդո-
 բելու դանի որ քնդունի ծերունին , թէ պէտե
 դութա կը շարժէր հէք մարդոցն վշտացը վրայ .
 քայց կ'երկնչէի միանդամայն որ շրլայ թէ Մար-
 դարիտա կարծէր թէ այդ խորհուրդը տարախօ-
 կը փախաքիս ծերունոցն վերասին դարստեան ,
 որպէս զի տան ծախքը նորա վրայ ձգեմ . կը
 ստեղայի մանաւանդ որ չկարծէ թէ իւր կենաց
 պատասխանատու թիւնը մերժել կ'ուզեմ ա-
 մէն հանդամանաց մէջ , յոր կրնար ձգել դիմ-
 քը իւր՝ իս վրայ ունեցած սէրը :

Այս եղաւ որ դուքսը՝ պատասխան չընդու-
 նելով՝ գրելին ալ դադրեցաւ , իսկ մենք շա-
 բունակեցինք այնպէս սպրեշու՝ ապագային
 զիրոյ բնաւ չմտածելով :



ԺԸ.

Գծուար է մանրամասնաբար պատմել մեր
 կենցաղը , ի տղայական բաներով որ ախոր-
 ժելի էին մեզ , այլ ունկնդրաց համար յիշա-
 ւանիս արժանի չեն : Գիտես անչուչա թէ ի՞նչ
 է կին մը սիրել , ի՞նչպէս կարճատե կ'երեւին
 առքը , և թէ ի՞նչպիսի սիցալիք մեզկու թեամք
 մարդս երկրորդ օրուան կը հասնի : Ամեն բան
 կը մտնաս , երբոր ստատիկ սէր և բովանդակ
 մտառ՝ թիւն ունենալով՝ սիրուհիէդ սիրուիս .

իրմէ դատ՝ ուրիշ որ և է կակներն անօրօտ
 արարածներ կը համարիս : Արցաւիս՝ ուրիշ կա-
 նանց սրտէդ մտանիկներ տուած ըլլալուդ վը-
 րայ , և այնպէս կը թախ քեզ թէ բռնած ձեռ-
 քէդ դատ՝ ուրիշ ձեռք ոչ երբէք պիտի կարե-
 նաս սեղմել : Քլուխդ կը մերժէ որ և է աշխա-
 տութիւն և յիշատակ , մտածութեանցդ ան-
 դադար նպատակ եղող բանէն դատ ուրիշ իրի
 վրայ խորհիլ չես ուզեր : Յմէն որ սիրուհւոցդ
 վրայ նոր դեզ և անձանօթ հրապոյրներ կը
 նշմարես :

Յայնժամ մարդուս կեանքն ուրիշ բան չըլ-
 լար՝ բայց միայն անընդհատ փափաքի մը շու-
 րունակ կատարումն , հողին՝ վետեան կու-
 սան մը , որ վաս կը բռնէ սիրոյ սրբանուէր
 հուրը :

Արեկոյին յաճախ կ'երթայինք կը նստիկնք
 տան վրայ իշխող վարք պարակին մէջ , և կը
 լսիկնք անդ երեկոյեան դուարթալուր դաշնա-
 կութիւնները , և կը մտածէինք այն մտալուա-
 ժամուն , յորում ի տուն մտնելով՝ դիրկ ընդ-
 խառն պիտի մնայինք մինչև առաւօտ : Արեմն
 ալ գորն ի բուն կը պառկիինք առանց վարա-
 դոյրները բանալու , և քիչ մ'ատեն կը մտնա-
 յինք արաքին աշխարհք : Հանին միայն մեր
 դուռը բանալու հրաման ունէր , այն ալ ճա-
 շերնիս բերելու համար , զոր՝ առանց անկող-
 նէն ելնելու կուտիինք՝ անդադար դուարթու-
 թեամբ ծիծաղելով : Չաչէն վերջը սակաւ մի
 կը քնանայինք , որովհետեւ՝ հեշտութեանց մէջ
 անհետանալով՝ նման էինք յամառ լուղորդնե-
 րու , որ շունջ առնելու համար ևեթ ջրոյն
 երեսը կ'ելնեն :

Սակայն Մարդարիտայի մերթ՝ տխրիւր և մերթ
արտասուելը տեսնելով՝ այդ յանկարծակի վըշ-
տայ սրաածառը կը հարցունէի իրեն, որ կը
պատասխանէր և կ'ըսէր.

— Սիրեցեալդ իմ՝ Արման, այլոյ նման չենք
սիրեր մեք զկտար: Գու զիս այնպէս կը սիրես՝
իրիւ թէ յառաջագոյն այլ ոք ստացած չըլլար
զիս. կը դողամ մտածելով որ չըլլայ թէ որ մը
զիս սիրելուդ վրայ գղջարով և անցուցած կեան-
քըս երեսս դարնելով առիակս զիս նետուե-
լու դարձեալ այն կենցաղին մէջ, ուստի յար-
տաքս ձգ եցիր զիս: Մտածէ մի անդամ որ ար-
դի կեանքս վայելելէս յետոյ՝ կը մեռնիմ՝ եթէ
վերապիս մտնեմ առաջնայն մէջ: Խոստացիր
ինձ, Արման, որ պիտի չըքանես զիս:

— Կ'երդ նու՛մ:

Այս խօսքս լսելուն պէս՝ աչերուս մէջ պիւշ
կը նայէր՝ իրր խնայալու համար թէ արդեօք
անկեղծաբար կ'երդ նու՛ի, և յետոյ բազկացս
մէջ նետուելով՝ ի ծոցիս կը ծածկէր դու ին
ու կ'ըսէր.

— Ահ, չես զիտեր, ո՛րչափ կը սիրեմ գրեգը
իրիկուն մը պատուհանին պատշգամին վրայ
յեցեալ՝ կը դիտէինք լուսինը, որ դողցես դըժ-
ուարաւ իւր տնակն անկողնէն դուրս կ'ելնէր.
ականջ կուտայինք հողմոյ, որ մեծուս սօսափ-
մամբ ծառերը կը շարժէր: Չենն ի ձենն, քա-
ւորդէ մ'ի վեր լուր անբարբառ կը կենայինք:
Յանկարծ Մարդարիտա դարձու և լուսս ինձ.

— Չմեռը մօտեցաւ, կ'աւղե՞ս երթ մեր:

— Ո՛ւր:

— Դատալիս:

— Միթէ կը ձանձրանամ՞ս հոս:

— Չմեռէն կ'երկնչիս՝ մաճաւանդ Բարիպէն :

— Ինչո՞ւ :

— Շատ բանի համար :

Եւ կրկնեց իսկոյն՝ առանց երկխոյի մտաւորները յայտնելու :

— Կ'ուզե՞ս երթալ . ամեն ունեցածներս կը վաճառեմ և կ'երթանք հոն՝ առաջին վիճակէս բան մը շունենալովս՝ ոչ ոք կրնայ ճանչիլ դիս, ըսէ՛, կ'ուզե՞ս :

— Երթանք, Մարգարիտա, եթէ ուզես, պատասխանեցի . ուղևորութիւն մ'ընենք, բայց ինչո՞ւ կը խնդրես վաճառել այն բաները որ ՚ի դարձին դռներով կ'աւրախանաս : Շատ հարուստ չեմ որ այսպիսի զոհողութիւն մը կարենամ յանձն առնուլ, սակայն ունեցածովս կրնանք հինգ վեց ամիս շրջիլ, եթէ այսու կարենաս գրօնուլ :

— Բայց, ոչ, շարունակեց՝ պատուհանէն հեռանալով և գանարէին վրայ նստելով մութ սենեկին մէջ . անօդուտ բան է հոն երթալ և ծախք ընել . արդէն հոս բաւական ծախքի տակ ես ինձ համար :

— Ինչո՞ւ կը մեղադրես դիս ասոր համար, Մարգարիտա, գիտնաս որ վեհանձն դործ չէ ըրածդ :

Համբուրեց դիս, և յետոյ երկարատև մտախոհութեան մէջ ինկաւ :

Այսպիսի տեսարաններ յաճախ կը հանդիպէին, և թէպէտ պատճառը չդիտէի, սակայն կը տեսնէի որ ապագայն մտատանջութիւն կուտար Մարգարիտայի : Չէր կրնար սիրոյս վրայ կտակած ունենալ բայց ստէպ կը տեսնէի նա-

ըստ թախիծը, որոյ պատճառ մարմնոյ անհան-
գըտութիւնը կը ցուցնէր ինձ :

Ի Բարիդ դառնալ կ'առ աջարկէի իրեն, վախ-
նալով որ չըլլայ թէ այն միօրինակ կեանքէն
ձանձրանայ, բայց միշտ կը մերժէր զայս, և
կ'ապահովէր զիս թէ այլուրեք չկրնար առա-
ւել բարեբաւասիկ ըլլալ :

Գուն ուրեք Բրիւտանա կուգար առ մեզ,
բայց Մարգարիտայի թուղթ կը գրէր, զոր
ամենեւին չէի ուզեր ընթեռնուլ, թէպէտ և
այն նամակներն ամեն անդամ զՄարգարիտա
խորին մտաւանջութեան մէջ կը թողուին : Ու-
րիշ բան չէի կրնար դորձել, բայց միայն եւն-
թաղբութիւններ ընել :

Օր մը մինչ Մարգարիտա խցէն դուրս չէր
ելնէր, ներս մտի յանկարծ և տեսայ որ կը
գրէր :

— Ո՛ւմ կը գրես, Հարցուցի :

— Բրիւտանան, կ'ուզե՞ս կարդալ :

Կատկածէն դարչելուս Համար՝ պատասխան
տաի և լաի թէ գրածը զիտնալու կարօտու-
թիւն չունէի, և սակայն ստացի զիտէի որ այն
թուղթն ընթեռնուլ իւր ախրութեան բուն
պատճառը պիտի իմանայի :

Երբ առաւօտն անկողնէն ելանք, օղը շատ
զեղեցիկ ըլլալուն Համար՝ Մարգարիտա ու-
րախ դուարիժ առ աջարկեց ինձ նաւակով Գրո-
ուտաի կղզին երթալ : Ետմը Հնդին ՚ի առն
դարձանք :

— Տիւղթն առ տիկինն եկաւ, ըսաւ Հանին՝
զմեզ սեռնելով :

— Գնա՞ց, Հարցուց Մարգարիտա :

— Սյո՛, ձեր կառքով, և ըսաւ թէ յաջողեի է :

— Շատ լաւ , սրտատեսիանեց Մարդ արիւտ
ուրախութեամբ . կերակուրը տրուի :

Երկու օրէն վերջը Յրիւտանալն թուղթ մը
դարձ տաան ու հինգ օր փառատեցաւ Մար-
դ արիտայի խորհրդաւոր ակորութիւնը , որոյ
համար անդադար ներուժն կը խնդրէր յին՝
Սակայն կառքը չէր դառնար :

— Ինչո՞ւ Յրիւտանա չուղարկէր զկիտակաւ
բըդ , հարցուցի օր մի :

— Զիերէն մին հիւանդ է , և կառքը նորու-
ղութեան տէտք ունի . լաւադոյն է որ այս
բաները հիսնա ըլլաին , մինչ հոս կարօտ չեմք
կառաց , քան թէ յետ մեր դարձին ի Յարիդ :

Մի քանի օրէն վերջը Յրիւտանա դարձ հա-
ւատեց ինձ Մարդ արիտայի լուսնները :

Երկու քն ի միասին ի սարտիպին ծուռ գո-
յին , և մինչ իրենց քով դացի խօսակցութիւն-
նին փոխեցին :

Երեկոյին , երբ Յրիւտանա պիտի երթար ,
օդը ցուրտ է ըսելով , աղաչեց առաւ զմին
Մարդ արիտայի ցփահներէն :

Սյապէս անցաւ ամիս մի յորում Մարդ արի-
տա աւելի դուարթ էր և աւելի կը սիրէր դիտ :

Սակայն ոչ կառքը դարձաւ և ոչ ցփահն :
Այս բաներն ակրտեց մտատանջութիւն տա-
յին ինձ , և որովհետև դիտէի թէ Մարդ արիտա
ո՞ր դարանիկին մէջ կը դնէր Յրիւտանայի թըղ-
թերը , նորա ի սարտէղ կըլած ժամանակը վա-
ղեցի , ու դարանիկը բանալ փորձեցի , բայց
ի դուր , զի կրկին կըլարւած էր :

Յայնժամ ի խոյղ ընկաց այն դարանիկնե-
րուն մէջ ուր դանուէին սովորաբար իր դար-
դերն ու աղամանդները : Ախրաւ բացի զայ-

նրա , բայց գգրոցներն աներևոյթ եղեր էին՝
պարունակեալներով հանդերձ :

Քուռն երկիւղ մի ձմեց զսիրտաւ Պատի եր-
թայի ստիպէի գՄարդարիտա որ այն անհե-
տացեալ իրաց ինչ ըլլալն յայտնէ ինձ , բայց
անշուշտ պիտի չղբուցէր :

— Միրեցեալդ իմ Մարդարիտա , ըսի յայն-
ձամ , հրաման տուր ինձ Քարիդ երթալ : Չեն
զիտեր 'ի տուն թէ ո՛ւր եմ և հօրակ, և անտա-
րակոյս թուղթ եկած ըլլալու է , անշուշտ անձ-
կութեան մէջ է , պարտ է ինձ պատասխա-
նել իրեն :

— Գնա՛ , բարեկամս , լուս , բայց վաղ դար-
ձիր առ իս :

Մեկնեցայ և փութով առ Յրիւտանա ընթա-
ցայ :

— Հապա , ըսի իրեն՝ առանց այլ յառաջա-
բանի , առա ինձ ստոյգը , ո՛ւր են Մարդարի-
տայի ձիերը :

— Վաճառուեցան :

— Տիտի՞ն :

— Վաճառուեցաւ :

— Սգամանդնե՞րը :

— 'ի դրաւ դրուեցան :

— Ո՞վ վաճառեցր ո՞վ 'ի դրաւ դրաւ :

— Ես :

— Ինչո՞ւ չ'իսնացուցիր ինձ :

— Վասն զի Մարդարիտա արդիւնք էր :

— Ուրեմն ինչո՞ւ յինէ արձաթ չ'իսնդրեցիր :

— Վասն զի ինքը չուզեց :

— Ի՞նչ բանի ծառայեց այն արձաթը :

— Պարտք հատուցանելու :

— Միթէ շա՞տ պարտք ունէր :

— Տակաւին գրեթէ երեսուն հազար ֆրանկ :
 Ս'է, սիրելիս և դուշակեցի ես զայս և բայց չու-
 գեցիք խօսքիս հաւատալ . իսկ արդ համոզուե-
 ցաք : Օթոցարարը : որոյ ամէլե դուքսն երազ-
 խառնոր եղեր էր Մարգարիտայի համար , վան-
 ուեցաւ ' ի սուսն գրսին երթալուն պէս , և ծե-
 բունին երկրորդ օրը գրով խնայուց նմա որ
 այսուհետև Կոթիկ օրիորդին համար բան մը
 պիտի չընէ : Երբոր նոյն մարդը արժամիտ պա-
 հանջեց , առ հաշիւ մի քանի հազար ֆրանկ
 տուինք , դոր քեզնէ խնդրեր առեր էի . յե-
 րոյ բարեգուծ անձինք խնաց տուեր են իրեն
 որ իւր պարտապանը՝ չքեալ ' ի դքսին՝ անինչ
 երխաաարդի մը հետ կ'ապրի եղեր . այն ա-
 տեն միւս պարտատեարք ալ զայս խնայալով ,
 արժամիտ խնդրեցին ու գրաւ տուին : Մարգա-
 րիտա աւեն բան վաճառել ուզեց , բայց ժա-
 մանակն անցեր էր , ասկէ զատ ես չէի թողուր :
 Պարտքերը հատուցանելու ստիպուելով , և քե-
 նէ արժամիտ չխնդրելու համար՝ ծիւրը կառքե-
 րը վաճառեց և անանակապ դարդերն ալ ի դը-
 բաւ տուաւ : Ա՛ռեղե՞ս տեսնել գնողաց և «Մոն
 ար Բիէթի (1) ընկալագիրերը :

Զայս ըսելով դարանիկ մը բացաւ և այն
 թուղթերը ինձ սոյց տուաւ :

— Ապրիլեա թէ և յարեց և ըսաւ իրաւունք
 ունեցող կնիկան մը պ'դու թեամբ , կարծես թէ
 բաւակա՞ն է սիրել զիրար և ' ի դիւզ հովուական
 և անհաստատ կեանք մը վարել :

Ա՛յ , բարեկամս , այդպէս չըլլար : Բարոյական

(1) Հաստատութիւն մ'է ուր գրաւ տալով
 ազրատք և չքաւորք՝ փոխ արժամիտ կ'առնուն :

կենցաղաւորութեան քով կը գտնուի նաև նիւթական կեանքը, որով ամենէն նուիրական առաջադրութիւններն իսկ կը կապուին յերկիր՝ ծաղրական, բայց անխղելի կասկանօք: Մարդարիտայի դքեղ շխարեւն ալ՝ իւր արտաքոյ կարգի ունեցած բնութենէն կը հեռուի: Նմանաւ՝ յորդորներս յանցանք չեա կրնար համարել, որովհետև կը ցաւէի խեղճ աղջկան վերայ՝ ամեն բանէն զրկուելը տեսնելով: Ի՞նչ ընեմ, մերժեց յորդորներս, պատասխանելով թէ կը սիրէ, և թէ ամենեին պիտի շխարի, դքեղ: Սորա յոյժ գեղեցիկ ու բանաստեղծական բաներ են, բայց չկրնար այս կերպով քուեցունել իւր պարտատէրները, որոց ձեռքէն երեւուն հազար ֆրանկով միայն կրնայ ազատիլ:

- Ըստ ուրեմն, տամ քեզ այդ գումարը:
- Փո՞խ պիտի առնուս:
- Անտարակոյս:
- Գէշ բան կ'ընես, վասն զի կը ցատուցանես հայրդ, կը խափանես եկամուտդ: Ասկի գատ երեսուն հազար ֆրանկը օրուան մը մէջ դիւրաւ չդաճուիր: Սիրեցեսալ Արման, քաջ խորհէ, այդ յիմարտաւայել գործոյդ վրայ օր մը գու ալ կը դիջաս: Զեմ' ըսեր թո՞ղ դՄարդարիտա, ընդհակառակն նորա հետ ապրէ՝ որպէ՛ս 'ի սկիզբն անդ տմարան: Թո՞ղ որ այս ստղնապէ՛ս անձամբ գանձն իւր ազատէ: Դու քոր տակաւ կուգայ: Ն. կոմսն ալ դեռ երէկ ինձ կը խոստանար նորա ամեն պարտքերը հատուցանել, եթէ Մարդարիտա դարձեալ ընդունի զինքը, և թէ ամիսը չորս հինգ հազար ֆրանկ կը կապէ նմա: Այն կոմսն երկու հա-

բիւր հազար ֆրանկ եկամուտ ունի : Յայնժամ
 Մարդարիտա ալ նախանձելի մի՛նչակի միջ կ'ըլլայ :
 Իսկ դու որ մը պիտի ստիպուիս անշուշտ
 էքանել զնա . սասցաւ անոքս ապաւելուն մի՛
 սպասեր՝ այն կէտին հասնելու համար : Ամառ
 օրանոցը որ ըլլալով Մարդարիտա միշտ քայլ
 կ'ըլլայ : Յիրաւի նախ և առաջ սակաւ մի կ'ար-
 տասուէ , բայց վերջապէս սակարելով որ մը ըս-
 նորհակալ կ'ըլլայ քեզ ըրած իդ համար : Ենթադ-
 րէ թէ Մարդարիտա կարգուած ըլլալով նորա-
 այրը կը խորեւ :

Այս բաները միանգամ ըսի քեզ , այլ այն-
 ասուն իրբև յորդոր , մինչ հիմա՝ իրբև հարկ :

Ի՞՞՞րազդարար Յրիւտանա իրաւունք ունէ՞ր :
 Պահէց ցոյց տուած թուղթերը և շարունակե-
 լով ըսաւ .

— Այո՛ , պահժու կանայք սիրուելին կը
 գուշակեն , բայց ոչ սիրելին , ապա թէ ոչ
 արժաթ ծողվելով երեսնամեայ հասակինն
 կրնային ձրի համանի մ'ունենալ , և այդ դեղ-
 խաթ կան ծախքը վճարել : Եթէ գիտնայի՛ եր-
 բեմն զոր ինչ գիտեմ արդ . . . :

Միով բանիւ առանց Մարդարիտայի բուն մ'ը-
 սելու՝ ի Բարիզ բե՛ր զանի՛ : Այլ կ'ըրիր որ հինգ
 սախ նորա հետ ի գիւղ բնակեցար . հիմա մի-
 այն աք փակել կը խնդրուի քե՛նէ : Տանն ու
 հինգ օրէն կառքերը դարձեալ կրտսամայ , այս
 անկա խնայողութեամբ կ'ապրի , և ամառը գա-
 ջուն պէս՝ վերստին կ'սկսիք : Այսպէ՛ս գործե-
 լու եւ , սիրեցեալ Արման :

Յրիւտանա այս բաներն լսելէն յետոյ կ'ու-
 թախանար իւր տուած յորդորներուն վերայ
 զոր եւ սրամտութեամբ կը մերժէ :

Ոչ միայն սիրոյս և վայելչութեանս դէմ էր
այդպէս դործելը, այլ նաև քաջ համոզուած
էի որ Մարգարիտա այն ատեն առաւել կ'ընա-
րէր մեռնիլ, քան այդ մասնակցութեան հա-
սանիլ:

— Կատակը մէկդի թողունք, ըսի Բրի-
տանսին. որչա՞փ Ֆրանզ պէտք է Մարգարի-
տայի:

— Ըսի քեզ միանգամ, երեսուն հարստ ֆը-
րանզի չտո՞ք:

— Ո՞ր ատեն հատուցանելու է:

— Երկու ամսէն առաջ:

— Աք բերեմ այդ դու մարդ:

Բրիտանս վեր թո՞թ վեց ուսերը:


— Քեզ պիտի յանձնեմ զարծաթը, բայց եր-
գում ըրէ՛ որ չըսես Մարգարիտայի՝ քեզ յանձ-
նելու:

— Հանդ ա՛րա եղիր:

— Եթէ վաճառելու կամ ի դրառ տալու իր
մը դրկելու ըլլայ քեզ, իմացո՛ւր ինձ:

— Մի՛ երկնչիր, ա՛լ բան չմնայ:

Կախ և առաջ տունս դայի նայելու համար
թէ հօրսէս նամակ կայ, չորս հատ թուղթ
ընդունեցի:



ԺԹ.

Երեք թղթերու մէջ հայրս իմ ընտելեանս
մրայ ունեցած անձկութիւնը յայտնելով պատ-
ճառք կը հարցունէր ինձ. իսկ չորրորդին մէջ

կենցաղավարութեանս փութութեանն ան-
տեղեակ չսլալն խնայունելով՝ զիւր մտակաց
գալուստը կ'աւետէր :

Միշտ խորին մեծարանք մատուցեր եւ՛ հօրա-
ն անկեղծ սիրով սիրեր եւ՛ զինքը : Պատաս-
խանեցի որ ուղեորութիւն մ'ընելուս պատ-
ճառաւ՝ շէի կրցած գրել իրեն , և աղաչեցի
խնայունել ինձ գալատեան օրը , որպէս զի ընդ-
առաջ նորա երթամ :

Չանուանաղ իրս ծառայիս սալով ապաստեցի
որ երբ Գ. քաղաքէն դուրսեալ թուղթ մը գայ-
րերէ՝ ի գիւղ . յետոյ փութով դարձայ ի Պու-
ժիվալ , ուր Մարգարիտա անձկութեամբ ինձ
կրտապաէր պարտիզին դրան առջին :

Ձիս տեսնելուն պէս , ողջագութեց զիս , և
անձոյժ հարցուց ինձ և ըսաւ .

- Բրիւտանիան գացի՞ր :
- Այ .
- Ի՞նչ ուսքան ու շացար :
- Հարկ եղաւ ինձ հօրմէս եկած թղթոց
պատասխանել :

Յետ սակաւ միոյ Նանին շնչապառ ներս
մտնելով Մարգարիտա հեռացաւ յինէ , և ցած
ձայնով իրարու հետ խօսեցան :

Սոյն ինչ Նանին դուրս ելաւ Մարգարիտա
ուս իս եկաւ , քոյս նստաւ և դձեռնա բռնե-
լով ըսաւ .

- Ինչո՞ւ խափեցիր զիս . Բրիւտանիան գա-
ցեր ես եղեր :
- Ա՞յ ըսաւ :
- Նանին :
- Ինքն ուստի՞ գիտէ :
- Քեզ հետե ելով խնայեր է :

— Պո՞ւ հրամայեր էիր որ հեռուէ ինձ ի Քա-
ջիդ :

— Այո՛, ես ինքն , վասն զի մտածեցի թէ
հոք պատճառ մ'ուենենալու էիր 'ի Քաջիդ եր-
թալու համար , դու որ չորս ամսէ , 'ի վեր յի-
նէ շէիր մեկնած , և վախցայ որ չըլլայ թէ ճա-
խարդութիւն մը պատահի քեզ , և կամ ուրիշ
կնոջ երթնա :

— Տղա՛յ ես , ի՛նչ ես :

— Քայց արդ ապահով եմ , զի գիտեմ ըրա-
ճող , բայց շղիտեմ 'ի՛նչ լսին քեզ :

Յոյց առի Մարդարիտայի հօրս թուղթերը :

— Այո շէ խնդրածս . կուղեմ դիտնալ թէ
ինչո՞ւ համար Քրիստանսին գացիր :

— Ձինքը տեսնելու համար :

— Սաւ է , բարեկամս :

— Ուրեմն դիտցած ըլլաա որ Քրիստանսին
հարցս ցի թէ ի՛նչպէս են ձիերդ , և թէ տա-
կաւին պիտո՞յ են նմա ցփախներդ և տկանա-
կապ դարդերդ :

Մարդարիտա շառաղուենեցաւ , և շարտաս-
խանեց :

— Իննցայ նաև ձիերուդ , ցփախներուդ և ա-
ղամա՛մ դներուդ ի՛նչը լլալը :

— Մի՛թէ նեղացա՞ր ինձ դէմ սոսր համար :

— Այո՛ , վասն զի յինէ շեա խնդրած պի-
տոյիցդ կարևոր եղած բանը :

— Եթէ կին մ'ինձ պէս սիրելով ուենեայ
տակաւին տակաւիկ մի պատուոյ գգացում , ա-
ռաւել կ'ընարէ՛ ամեն տեսակ գրկմունք կրել ,
բան իւր համանիէն արծաթ խնդրելով սիրոյն
մէջ մէկ կողմէն շահախնդիր երևիլ : Սպահով
եմ գիտ սիրելուդ վրայ , բայց շե՛ս գիտեր քա-

նի՛ դիւրաբեկ է այն թեւը , որ մարդուս արեւ-
տին մէջ կը բռնէ ինձ նման աղջկանց վրայ
եղած սէրը : Ո՞վ գիտէ , դուցէ՛ որ մը նեղա-
նալով կամ ճանճրանալով իմ քու վրայ ունե-
ցած սէրս ճարտարութեամբ կարո՞ւ աւարեալ հա-
շիւ մ'եղած համարես : Յրիւտանս շտապաւ
որ է : Չիերուս կարօտութիւն չունենալուս հա-
մար՝ խնայողութեան պատճառաւ վաճառեցի
դայնս , և հիմա այն ծախքէն ալ ազատ եմ :

Քերիչ բան չեմ խնդրեր քե՛նէ , բայց միայն
սիրես դիս , և անշուշտ առաջուան պէս պիտի
սիրես դիս , թէ՛ պէտ և ճիերիս , ցիտիներէս և
և աղամանդներէս գուրկ եմ :

Այնպիսի բնական կերպով դուցեց այս բա-
ները որ աչերս յցան արտասօր :

— Բայց , իմա Մարդ արիտա , պատասխան
տուի և ըսի նորա ձեռնը սիրով սեղմելով՝ գի-
տէիր որ որ մը խնանալով պիտի չընդունէի
դայդ գոհողութիւնդ :

— Ինչո՞ւ

— Արովհետեւ , սիրելիս , իմ վրայ ունեցած
սիրոյդ պատճառաւ՝ գոհարէ մ'ալ գրկուիր
չեմ ուղեր և կը վախնամ որ չըլլայ թէ՛ որ մը
նեղանալով կամ ճանճրանալով կարենաս մը-
տածել , որ եթէ ուրիշի հետ եղած ըլլայիր ,
այդ նեղութիւնը չէր պատահիր , և թէ՛ գըղ-
ջաս ինձ հետ սակաւիկ մ'ապրելուդ վերայ :
Քանի մ'որէն ճիերդ ցիտիներդ և աղամանդ-
ներդ դարձեալ պիտի ստանաս : Ինչպէ՛ս օդը
կարեօր է կենաց , այնպէ՛ս ալ նորա կարեօր
են քեզ : Գուցէ ծաղրելի ըլլայ սա խօսքս ,
բայց դքեդ առաւել պճնեալ կուզեմ տեսնել
քան անպաճոյճ :

— Արեւնն ըսել է թէ չես սիրեր զիս :

— Ի՞նչ անտեղի խօսք :

— Եթէ սիրէիր զիս՝ թող կուտայիր նաև ինձ ըստ իմ կամեացս սիրել զքեզ . ընդհակառակըն դու միշտ միտքդ դրեր ես որ ես այնպիսի աղջիկ մ'եմ , որոյ անհրաժեշտ կարևոր է զեղխութիւնը , և զոր փոխարինելու պարտաւորեալ կը դատես զանձդ : Ամենայն ընդունել զսիրոյս անհաւատչեայն . ահամայ կը մտարեքես որ մը չքանել զիս , և այն պատճառաւ կը ջանաս զստատաձեռնութիւնդ . կասկածի տակ չթողուլ : Կրաւունք ունիս , բարեկամն , բայց ես լաւադոյն ինչ յուսացեր էի քենէ :

Մարդ արիտա ուղեց յառնել , այլ զինքը կեցունելով ըսի .

— Կը ցանկամ որ բարեբաւտիկ ըլլալով՝ զիս մեղադրելու պատճառ շունենաս . այս է իմ միակ իղձս :

— Պիտի դատուի՞նք ուրեմն իրարմէ :

— Ինչո՞ւ , իմն Մարդ արիտա . ո՞վ կարող է անջատել զմեզ իրարմէ :

— Դու , կը մերժես քեզ խնայելս , և որ անպարճութեամբ կուզես զիս իմ միճակիս մէջ պահել . դու , որ չ'եսացունելով զիս այնպեղխութեան , յորտ մ'տպրեր եմ , կը ջանաս պահել միշտ պարտցական հեռաւորութիւնը . որ զիս քենէ կը դնուի . դու , որ զիս սիրաւնչաւհասնողիք չհամարելով կը մերժես բաժնել մեր մէջ ունեցածդ , և առաւել կ'ընտրես զառնել զդոյսդ ծաղրելի մտահոճութեան մը գերի ըլլալով : Կարծես թէ կրնամ համեմատել կարք մը և գոհարներ քու սիրոյդ հետ .

հարձեւ թէ տարիանքը կը համարի՛մ եւս սը-
 նասարժուեթիւն , որով շատանայ մարդ՝ երբ
 շիրէ , և որ աննշան բան կ'երևի յայս խո-
 երբ սիրելու ըլլայ : Առպէս սպարքերս հա-
 տուցանելու նեցածդ կորուսնել և պահէ՛լ զիս
 թայց այն՝ որչա՞փ ժամանակ կրնայ տնել . եր-
 կու երեք ամիս . ապա վայելուչ չըլլաք ընդու-
 նել գկենցադաւարուեթիւն՝ զոր արդ կ'առա-
 ջարկեմ քեզ , վասն զի յայնժամ ամեն բան
 ընդու նելու կ'ստիպուիս մինչ պատու աւոր մարդ
 մ'այնպէս չդորձելու է : Իսկ արդ , ութը կամ
 տասն հազար Ֆրանկ եկամուտովդ կրնանք
 ապրիլ : Ամեն աւելորդ բաներս կը վաճառեմ ,
 և այն արժանթով տարին երկու հազար Ֆրանկ
 եկամուտ կ'աւնենանք : Փարսի ու սիրուն զըս-
 տիկոն մը կը վարձենք և հոն երկու քնիս կը բը-
 նակինք : Սնաք ՚ի զիսդ կուգանք , և կը նըս-
 տինք փոքր տան մը մէջ , որ մեզ բաւական
 ըլլայ : Երկու քնիս ալ անկախ և երկոտարդ
 ենք : Ինչ , Սրման , Աստուծոյ համար ըլլայ ,
 մի՛ թողուր դիս դարձեալ այն կեանքին մէջ ,
 յոր երբեմն ստիպուած էի ապրելու :

Չկարկի խօսիլ . շնորհասպարտութեան և սիս-
 րոյ տրտառք լցուցեր էին աչերս , և ընթա-
 ցայ ողջադուրեցի զՅարսպիտա :

— Առպէի աւանց քեզ բան մ'իմացնելու՝
 ամենայն ինչ կարգի դնել , սպարքերս վը-
 ճարել և նոր դասիկոնս պատրաստել տալ :
 Հոկտեմբեր ամսոյն ՚ի Քարիզ կը դառնայինք և
 ամեն բան կաւարակք . թայց սրովհետև Քը-
 յիստանս յայտնել է քեզ զայս , պարս է որ
 յառաջուց հաւանիս , փոխանակ ապա հաւա-
 նութիւնդ տարա : Միթէ բաւական կը սիրե՞ս

զիս զառաջարկութիւնս ընդունելու համար
Չկրնայով սյնքան անձնութեան զիս զնել
զեղմանք սրտի համբարեցի Մարդարիտայի
ձեռնը և պատասխանեցի :

— Քու ամեն ուզածդ ընդունելի է ինձ :

Յայնժամ սկսեց խօրաբար զուարթանալ
պարել ու երգել . յառաջուց կ'ուրախանար
պարզութեանը վրայ իւր դատիկանին , որոյ
համար կը հարցունէր ինձ թէ ար թաղին մէջ
բռնելու և ինչպէս յարդարելու էր :

Ա' երանաւետէր և կը խրոխտացունէր զինքն
իմ առաջարկութիւնս , որով բարոյապէս բա-
զորովին իրարու կը մերձենայինք :

Վայրկենի մէջ որոշեցի կենցաղաւարութիւ-
նս ստացուածքս կարդի դրի . Մարդարիտայի
կը թողուի մօրմէս ունեցած եկամուտս որ ան-
բաւական կ'երևէր ինձ փոխարինելու զանի
իմ պատճառաւս ըրած զոհողութեանցը համար

Ար մնար ինձ տարուէ տարի հօրս զրկած
հինգ հազար ֆրանքը , որով կրնայի ապրիլ
ինչ որ ալ հանդիպէր :

Մարդարիտայի շայտնեցի ըրած որոշումս ,
որովհետև քաջ զխախի որ պիտի շընդունէր այդ
պարդեր :

Այն եկամուտը կուգար վաթսուէն հազար
ֆրանգի գրաւէ մը տան , զոր բնաւ չէի տե-
սած : Բնտանեացս հին բարեկամ նօտար մի
երեք ամիսը մէկ մը եօթը հարիւր յիսուէն ֆր-
րանգ կը յանձնէր ինձ ընկողադիրս անելով :

Մարդարիտայի հետ դատիկան մը փնտռելու
համար 'ի Բարիդ եկած ատենս , զացի նայե
նօտարին հարցուցի թէ ինչ կերպով ուրիշի
վրայ կրնայի դարձունել այդ եկամուտը :

Բարեւիրտ մարդը զիս կործանած կարծե-
լով որոշմանս արամաւը հարցուց , և որպէս
վաղ կամ անագան հարկ տիրախ ըլլար ինձ ան-
ուանել զայն անձը՝ որոյ կ'ընէի այդ պարզ և բո-
ւաւանել ընտրեցի ամեն բան ուղղութեամբ
պատմել :

Բնաւ ընդդիմութիւն չըրաւ , թէպէտ՝ իբր
նօտար և բարեկամ՝ իշխանութիւն ունէր զիս
յորդորելու , և ապահովեց զիս ամեն բան ըստ
խմ կամայս կարգի զնելու :

Եւ ապաւրելով որ հօրս բան չըսէ , զացի
Մարգարիտային , որ կըսպասէր ինձ առ Յի-
ւի Տիրբա , ապ որ ընտրել էր իջնել , քան ՚ի
տուն Բրիւտանիան և լսել նորա յորդորները :

Սկսեցինք դատիկոն խնդրել . Մարգարիտա
չամէնն ալ առ զ կը դռնէր , իսկ ես՝ յոյժ ան-
պաճոյճ : Բայց վերջապէս Բարիպու ամենէն
խաղաղ ու լուռ թաղերէն մէկուն մէջ շինուած
մը գտանք , զիսաւոր ամենէն պատուած՝ և մի-
արանութեամբ զայն բռնեցինք :

Նոյն շինուածին ետին կար սիրուն պար-
տէզ մը , որոյ պատերը բաւական բարձր էին
զմեզ դրացիներուն աչերէն ծածկելու համար
և բաւական զած՝ տեսարանը շաւիանելու հա-
մար : Միով բանիւ մեր բղձից համեմատ դըս-
տիկոն մ'էր :

Երբ ես դատիկոնս թողլու համար դացի
Մարգարիտան ալ կ'երթար դործակալի մը բան
մը խնդրելու համար , զորն որ արդէն իւր բա-
րեկամութեացը համար այն մարդն ըրած է
եղեր :

Ուրախութեամբ վերադարձաւ և դտաւ զիս
Բրովանս վտղոցը : Նոյն մարդը խոստացեր է

Քղեր նորա ամեն պարտքերը հասուցանել և
ընկալազ իր մը ու ըսան հազար ֆրանդ ալ տա-
լու՝ աղջկան բոլոր կարասեաց աէր ըլլալու պայ-
մանաւ ։

Մարդ արխտայի ստացուածոց վաճառման դը-
նէն կ'իմացուի նաև որ այն մարդը երեսուն
հազար ֆրանդէն աւելի կրնար շահիլ Մարդ ա-
րխտայէն ։

Որ բախու թեամբ դարձանք ի Պուժիվալ՝ ըզ-
ձանապարհայն իրարու հաղորդելով մեր երկ-
նած առաջադրութիւնները սպառային վրայ ։
Գոր՝ մեր անհող ու թեան և տարիանաց պատ-
ճառաւ՝ ոսկեփայլ դոյներով սլծնեալ կը նը-
կատելինք ։

Աթն որ վերջը ։ նախաձայնի ամեն հանին
եկաւ իմաց տալու որ ծառայա զիս տեսնեց
կ'ուզէր ։

Եկրս կանչեցի զանի ։

— Տէ՛ր իմ ըսաւ ։ հայրերնիդ ՚ի Բարիդ վերա-
դարձաւ և անպատճառ ձեզ հետ խօսիլ կուզէ ։
արդ ձեր առնը կ'սպասէ ։ Վախնալու բան չը
կար ։ սակայն Մարդ արխտա և ես իրարու ե-
րեար նայեցանք և այս եղելութեան մէջ ձա-
խարդութիւն մը կը նշմարելինք ։

Աստի ։ ինքը զիս երկիւղը շայտնած՝ ձեռ-
նը բռնեցի և ըսի ։

— Մի՛ երկնչիր ։

— Արշափ կարելի է վաղ դարձի՛ր առ իս ։
ըստ ձած ձայնիս և ողջագործելով զիս ։ պա-
տուհանք պիտի սպասեմ դարձիդ ։

Յովտիփը հօրս ճամբեցի ։ որպէս զի գալուա-
տըս իմացունէ ։ Եւ արդարև ես ալ երկու ժա-
մէն վերջը Բրուփանա փողոցը հասայ ։

Հայրս ցայդ անոց զդեատով սենեակս նստած
կը դրէր :

Երբ ներս մտայ , հայեցուած էն զուշակեցի
որ կարեւոր իրաց վրայ խօսք պիտի բացուէր :

Սակայն մերձեցայ իրեն իբրև թէ ոչինչ զու-
շակած ըլլայի երեսէն , համարեցի գինքը և
հարցուցի .

— Ե՞րբ հասաք , հայր իմ :

— Երէկ երեկոյ :

— Առ ի՞նչ իջաք ըստ սովորականին :

— Այո՛ :

— Յոյժ կը ցաւ իմ զձեզ ընդունելու համար
հոս շղանուելուս վրայ :

Այս խօսքին կարծեցի թէ նախադուշակեալ
յորդորները պիտի սկսէին , բայց անպատաս-
խան կնքեց զբաժ թուղթը , և Յովսէփին աղ-
ուաւ որ թղթատարութեան տանի :

Մինակ մնալնուս պէս , հայրս յարեաւ և
կրակարանին վրայ կռթնելով ըսաւ .

— Միեցեալ Արմանս , ծանրակշիտ խորն-
դ իրներու վրայ պիտի խօսիմ քեզ հետ :

— Խօսեցե՛ք հայր իմ :

— Կը խօսաւանամ ստոյգն ըսել :

— Ես միշտ ճշմարտախօս եղեր եմ :

— Իրա՞ն է որ Մարգարիտա Աօթիէ անտեսա՛ծ
կնկան մը հետ կ'ապրիս եղեր :

— Այո՛ :

— Գիտէ՞՞ր այդ կնոջ ո՛վ ըլլաւ :

— Այո՛ , պահծու կին մը :

— Մոյն անձին պատճառաւ մտացար այս
տարի ինձ և քրոջդ քով վերադառնալու :

— Սոյն, հայր իմ, կը խոստովանիմ զայս :

— Յոյժ կը սիրես ուրե՛նն զանի :

— Յայանի է, հայր իմ, վասն զի նուիրա-
կան պարաք մը մտցուց ինձ, որոյ համար խո-
նարհութեամբ ներու՛նն կը խնդրեմ այսօր :

Հայրս անշուշտ շկարճէր որ այնչափ յայտնի
և հատու պատասխաններ տամ, վասն զի յեւ
տակաւի մի խորհելու ըսաւ .

— Անտարակոյս հասկցած ըլլալու ես որ շեռ
կրնար միշտ այդ կերպով ապրիլ :

— Երկիւղ ունեցեր եմ, բայց շեմ հասկցած :

— Տեսն՛ն հասկնալու էիր որ ես բնաւ պի-
տի չհանդուրժի քու այդ սխալ ապրելուդ, յա-
րեց հայրս աւելի խիստ եղանակաւ :

— Մտածեցի որ կրնամ այդ կեանքը վարել,
մինչ ձեր մրայ ունեցած յարդութեան և մեր
ընտանեաց աւանդական ուղղասիրութեանդ էմ
շեմ մեղանչեր, և այս խորհրդով երկիւղս քեզ
մը փարատեցի :

Արքերը զմարդ կը գորացուցանեն ընդդէմ
չդայմանց : Չարդարիտա շարունակելու հա-
մար պատրաստ էի ամենուն հետ, և հօրս հետ
իսկ կուտելու :

— Աստի կենցաղաւարութիւնդ փոխելու
ձամանակը հասաւ :

— Ինչո՞ւ, հայր իմ :

— Տրովհետեւ այնպիսի բաներ գործելու վը-
րայ ես, որք կը մեասեն յարդութեան, որք
կարծես մատուցանել ընտանեացդ :

— Չեմ հասկնար :

— Հասկցունեմ քեզ : Քո՞ղ համանոյշ մ'ուրե-

ցիւր, վճարէ նմա՝ որպէս իդասելք որ վճարելը
 պարտի պահճու կնոջ՝ ընդունած սիրոյն փո-
 խարէն. բայց այն կնկան պատճառաւ պէտք
 չէ մտնալ ամենէն նուիրական բաները պէտք
 չէ թող տալ որ քու դայթակղեցուցիչ կենացդ
 համբաւը մինչև բնական գաւառս հասնելով
 բիծ մը թողու պատուաւոր անուանա վրայ,
 զոր տուեր եմ քեզ: Այս բանս շիրնար լլաւ
 և պիտի ջրլայ:

— Ներկեցէք հայր իմ, ձեզ հետ իմ վրաս
 խօսողները քաջ աեղեկութիւն չունին եղեր
 իրաց: Ես կը սիրեմ զՎոթիէ օրիորդս, և հիմա
 նորա հետ կապրիմ, այս ճշմարիտ է. բայց
 ձեզնէ ընդունած անունս նմա չեմ տուած.
 քակիս կարողութեանը համեմատ ծախք ըրի
 նորա համար. մէկու մը պարտք չունիմ, և
 դարձեալ չեմ գտնուիր այնպիսի վիճակի մէջ,
 որ հօր մ'իշխանութիւն կուտայ ձեր հիմակը
 ուան ըսած խօսքերը որչւոյն ըսելու:

— Հայր մը միշտ իշխանութիւն ունի դիւր
 օրդին խոտոր ճանապարհէն հեռացունելու.
 առկաւին չար բան մը չեա գործած, բայց կըր-
 նաս գործել:

— Հայր իմ . . . :

— Պարտն, քեզնէ քաջ կը ճանչեմ զմարդ իկ
 թշուրտիմն պարկեշտ և անարատ զգայմունք
 յամենապարկեշտ կանայս միայն կը գտնուին:
 Մանունի նման կին մը կրնայ Տէ-Արիէօ մ'ու-
 նենալ, բայց արդ այն ժամանակն անցեր է
 և բարք ժողովրդաց փոխուեր են: Անողու
 կը վինէր աշխարհիս ծերանալը, եթէ չուզը-
 ուէր: Ար հրամայեմ քեզ թողուլ զհոմա-
 նոյնդ:

— Ար փրտանամ ձեզ շնորհակալեալս վրայ ,
հայր ի՛նչ , բայց ի՛նչ ընեմ , անկարելի է :

— Արեմն պիտի բռնադատեմ զքեզ :

— Գժբախտարար , հայր իմ , շիան հիմա
Սուրբ Մարդարիտա կղզիները : որպէս զի ա-
նասակ կիները հոն արսորեն . եթէ ըլլային ,
և թէ կարենայիք զձօթիէ օրիորդը վարել տալ
անդ , և ես հետեւի նմա : Գուցէ անիրաւ
բան մ'ըլլայ ըրածս , բայց իրեն հետ ապրե-
լով միայն երջանիկ կրնամ ըլլալ :

— Անամ' ինձ , Արմանա , տե՛ս և ծանի՛ր դիւ ,
զհայրդ , որ անդադար սիրելով զքեզ՝ բարօ-
րութիւնդ խնդրեր է միշտ : Միթէ կը վայել՞
քեզ իրր ամուսնաւոր՝ կենակից ըլլալ աղջկան
մը՝ զոր ամեն մարդ ունեցեր է :

— Ի՞նչ փոյթս է այն , հայր իմ , վասն զի
այսուհետև ա՛լ ոչ ոք պիտի ունենայ զանի ,
ի՞նչ փոյթս է , որովհետև կը սիրէ դիւ և ի բա-
ւութիւն կը դառնայ մեր փոխադարձ սիրոյն
շնորհիւր . և վերջապէս ի՞նչ փոյթս է , նորա՛
դարձի դալին յետոյ :

— Ի՞նչ , միթէ պատուաւոր մարդոյն պաշ-
տօնը՝ պոռնիկները դարձի՞ բերել է , միթէ
Սատուած այս ծաղրակա՞ն նպատակին համար
կեանք պարզ և եր է մեզ , միթէ մարդկային
սիրտը շիրնա՞ր ուրիշ դովելի ջանքով պարսպի
Արդ հրաշալի բժշկութեան վասնձանն ի՞նչ պի-
տի ըլլայ , երբ քստասուն տարեկան ըլլաս ,
ի՞նչ պիտի ըսես հիմա խօսածիդ վրայ : Ախի
ծիժաղիս սիրոյդ վրայ , եթէ կարենաս տա-
կաւին ծիժաղի և եթէ այն տրիանքը քա-
անցելոյդ մէջ խորին հետք թողած չըլլայ : Ի՞նչ
կ'ըլլայիդ արդ եթէ ես ալ քեզ պէս մտածելով

կեանքս նետէի այնպիսի անկայուն սիրոյ մէջ ,
փոխանակ զայն պատուաւոր և ուղղամիտ խոր-
հըրդոյ մը վրայ հաստատելու : Խորհէ , Սր-
ման , և այնպիսի անխնայ խօսք այսուհետև
մ'ըսեր ինձ : Ա'աղաչեմ քեզ , որդեակ իմ , թո՛ղ
այդ կիներ :

Պատասխան չէի տար : Ուստի հայրս շարու-
նակեց և ըսաւ .

— Իմա Սրման , յանուն որբուհւոյ մօրդ ,
հրաժարէ՛ այդ կեանքէն . հաւատա՛ ինձ , որ
կարծածէդ վաղ պիտի մոռնաս զայն , որոյ
յարիս արդ անդործադրելի տեսականութեամբ
մը : Քսան և չորս տարեկան ես , մտածէ մի-
անգամ ասպագային վրայ . չես կրնար միշտ սի-
րել այդ կիներ , որոյ սէրն ալ հոնասպառ պիտի
չաւէ , ի զուր երկուքնիդ անշէջ կը համարիք
ձեր սէրը : Գու անձամբ ճանապարհը փակելու
վրայ ես . որովհետև եթէ քայլ մ'լս տակաւին
յառաջ մատչիս՝ ա՛լ այնուհետև անկարելի է
եա դառնալ , և բոլոր կենացդ մէջ՝ խիղճդ կը
տանջէ զքեզ : Ե՛լ Բարիդէն , գնա քրոջդ քով
մէկ երկու ամիս անցուր , հանգստեամբ և ըն-
տանեաց սուրբ սիրովը այդ տենդդ կ'անցնի ,
վասն զի ուրիշ անուն չեմ կրնար տալ տրտա-
նացդ :

Նոյն ժամանակ հարձդ ալ մխիթարուելով
այլ հոմանի մը կ'առնու . և յայնժամ տեսնելով
թէ որպիսի կնոջ համար հօրմէդ հրաժարելու և
նորա սէրը կորուսնելու մօտեցեր էիր , կ'օրհ-
նես զիս զքեզ ազատելու համար :

Հասա՛ , երթա՛նք , իմա Սրման :

Ա'իմանայի որ հօրս ըսած խօսքը ճշմարիտ
էին ամեն կանանց , բայց ոչ Մարգարիտայի

համար : Մակայն վերջին խօսքերը այնպիսի քաղցր և աղաչաւոր ձայնիւ ըսաւ որ չիշխեցի պատասխանել :

— Ինչո՞ւ կը մտածես :

— Հա՛յր իմ , բան չեմ կրնար խտտանալ ձեզ , ըսի հուսկ ուրեմն . ձեր յինչ խնդրածը կարողութենէս վեր է : Յետոյ նեղանալը տեսնելով յարեցի և ըսի՝ սիրոյս հետեւանքը կարի վտանգաւոր կը համարիք , վտանգի դՄարդ աբխտա չէք ճանչեր : Այդ սէրը՝ ոչ միայն դիտարար ճանապարհէն կը հեռացունէ , այլ նաև կարող է աղնուազոյն զդացմունքները յիտպարդել : Աթէ որ որ և իցէ կին մը անկեղծ սիրով սիրէ՝ միշտ լաւագոյն կ'ըլլայ : Աթէ ըզՄարդ արիտա ճանչէիք , վտանգ չէիք նշմարեր յապաղայն : Ամենէն աղնիւ կանանց չափ աղնուասիրտ է նա . ո՛րչափ որ այլ կանայք ընչասէր են , ինքն ալ այնքան անչափասէր է :

— Մակայն այսու ամենայնիւ , բոլոր ինչքդ ընդուներ է . քաջ դիտնաս որ քու մօրսկիդ ժառանգած վաթսուն հազար ֆրանգը մի միայն ստացուածքդ է :

Հայրս զայս վերջաբանը կամ սպառնալիքը անտարակոյս վերջը թողեր էր , ինձ յետին հարուած մը տալու համար :

Իւր սպառնալիքը այնչափ շողդէին յիտ , որքան իւր աղաչանքը :

— Ա՛յ ըսաւ թէ այդ գումարը նորա վրայ անցուցեր եմ , հարցուցի :

— Նօտարս : Օրինաւոր որ ատանց ինձ իմաց տալու այսպիսի գործ պէտք չէր ընել : Ի Բարիգ և կայ որպէս զի չթողում քեզ աղջկան մը համար անինչ մնալդ : Մայրդ մեռնելու տան :

նր այս ժառանգութիւնը քեզ թողուց, որպէս
զի կարենաս պատուաւոր կերպով տարիլ, և
ոչ թէ զայն հարձերուդ առատաձեռնես :

— Կերդնում ձեզ, հայր իմ, որ Մարդարի-
տա չղիտէր տակաւին իրեն պարզ և մ'ընելու :

— Ուրեմն ինչո՞ւ ընծայեցիր զայն :

— Որովհետև այդ կինը, զորմէ կը չարախո-
սէք, և զոր թողուլ կ'առիարէք զիս, իւր բո-
լոր ունեցածէն զրկուեր էր՝ ինձ հետ տարե-
լու համար :

— Ինչպէ՞ս հաւանեցար այդ բանին . ի՞նչ
տեսակ մարդ էս դու որ Մարդարիտա անուն
աղջկան մը քեզ համար զրկմունք կրելուն հա-
ւաներ էս : Ս'լ շատ է, պիտի լքանես այդ կի-
նը : Սակաւ մ'առաջ կ'աղաչէի քեզ, իսկ արդ-
կը հրամայեմ. վասն զի չեմ հանդուրժեր այդ-
պիտի անարդական դործոց ընտանեացս մէջ :
Հապա՛, պատրաստէ՛ արկղներդ, և հետևէ ինձ :

— Պատասխան տուի և ըսի :

— Ներեցէ՛ք, հայր իմ, շկարեմ երթալ :

— Որովհետև :

— Որովհետև իմ տարիքս ունեցող երիտա-
տարդ մը հնազանդելու պարտաւորութիւն չու-
նենար :

Հայրս զայս պատասխանա ըսելով այլադու-
նեցաւ և կրկնեց .

— Քաջ է, պարոն, էս գիտեմ ընելիքս :

Յետոյ գծառայս ձայնելով ըսաւ .

— Արկղներս տանել տուր «Բարիգու պան-
դոկ»ը : Ու զայս ըսելով սենեակը մտաւ հաղ-
ուելու համար :

Դուրս ելնելու ատենը՝ ընդ առաջ նորա եր-
թալով ըսի .

— Խոստացէք ինձ , հայր իմ , Մարգարիտայի վիշտ հպատճառել :

Հայրս կանգ առաւ , արհամարհանօք երեսս նայեցաւ և պատասխանեց .

— Յիմա՛ր երիտասարդ :

Եւ յետոյ դուրս ելաւ՝ դուռն ուժդին փակելով :

Ես ալ վար իջայ ու կառք մը բռնեցի՝ ՚ի Պուժիվալ երթալու համար :

Մարգարիտա պատուհանը կը սպասէր ինձ :



ԻԱ.

— Վե՛րջապէս եկար , աղաղակեց սիրուհիս ողջագուրելով զիս : Բայց ինչո՞ւ երեսդ այլադուռներ է :

Այն ժամանակ գլխէս անցածը պատմեցի նմա :

— Վա՛յ ինձ . դուշակեցի ես այն ձախորդուժիւնը , ըսաւ : Երբ Յովսէփ եկաւ , և իմացուց մեզ հօրդ դալուստը , դողացի , իբր թէ գոյժ մ'առած ըլլայի : Հէ՛ղ բարեկամս , ե՛ս եմ քու ցաւոցդ պատճառը : Գուցէ աւելի լաւ է որ լքանես զիս , քան թէ հօրմէդ բաժնուիս : Սակայն ես ի՞նչ ըրի իրեն : Մինչև հիմա խաղաղաւէտ կեանք մը վարեցինք , և աւելի ալ հանգարտ սփտի ասրէինք : Հայրդ գիտէ որ պահճու կին մ'ունենալու ես , ուստի ուրա-

խանարու էր ինձ հետ ըլլալուդ վրայ, վասն
զի ես կը սիրեմ գքեզ և դրամական կարողու-
թեանէդ վեր բանի մը չեմ փախաքիր: Ըսի՞ր ի-
րեն ի՛նչպէս կարգի դրեր էինք մեր ապագայ
կեանքը:

— Այո՛, և ասոր համար մանաւանդ կատ-
ղեցաւ, վասն զի այս որոշման մէջ յայտնի տե-
սաւ մեր սէրը:

— Ռբրեմն ի՞նչ ընենք:

— Ի միասին ապրինք, սիրեցեալդ իմ Մար-
գարիտա, և այդ փոթորկին անցնելուն ըս-
պասեմք:

— Միթէ կ'անցնի՞:

— Անշուշտ:

— Բայց հայրդ այդչափով գոհ չըլլար:

— Ի՞նչ կրնայ ընել:

— Ես ի՞նչ գիտեմ, ամեն կերպով կը ջա-
նայ ի հնազանդութիւն բերել իւր որդին. զիմ
անցեալ կենցաղավարութիւնս քեզ յիշեցունե-
լով գուցէ նոր պատմութիւն մը կը հնարէ վը-
րաս, որպէս զի թողուս զիս:

— Քաջ գիտես որ կը սիրեմ գքեզ:

— Այո՛, բայց զայս ալ գիտեմ նաև որ վաղ
կամ անագան հորդ հնազանդելու պիտի պար-
տաւորուիս՝ ըսածներուն համոզուելով:

— Ո՛չ, իմն Մարգարիտա, ե՛ս պիտի հա-
մոզեմ զինքը: Իւր բարեկամներէն ոմանց շա-
տախօսութիւնները միայն յարուցեր են նորա
ցասումը. բայց ինքը բարեպէր և արդարակո-
րով մարդ ըլլալով միտքը կը փոխէ, և եթէ
չփոխէ փոյթս չըլլար:

— Մի՛ այդպէս ըսեր, Արման. զամէն շա-
րիք յանձն կ'առնում, բայց չեմ կրնար բնաւ

Հաւանիլ որ ընտանեացդ հետ աւրուելուդ
սրտաւս կարծեն քիս :

Թո՛ղ այս օրս անցնի , բայց վաղը դարձիր ի
Բարիդ : Հայրդ մինչև այն ժամանակ կը խոր-
հի , ինչպէս և դու , և որո՛ցէ կընար միարա-
նիլ : Մի՛ հակառակ խօսիլ նորա սկզբանց ,
ասիաւ մի հաւանութիւն ցուցուր փափաքնե-
լուն , յինչ արհաւան կախուալ մը ցուցներ ինք-
զինքդ , և այստե կը հաւանի իրաց արդի վի-
ճակին : Անցոյ : մի ըլլար , բարեկամս , և դայս
ապրիդ զիսնաւ որ բան մը կարող է Վարդա-
րիտաւոր քեզէ անձամբ :

— Ա՛րդ ճաշս ինձ :

— Մի՛՛մ հար՛ի է երդնուլ :

Քանի՛ քաղցր է էրբ սիրելի ճայն մը ասիս ,
հովէ գլեղ : Բոլոր օրս Վարդարիտա և ես կը
կրկնէինք իրարու գիտաւորութիւններս , իր թէ
հասկցած ըլլայինք զայնս վաղ կատարելու կա-
րօտութիւնը : Անձն պահ նոր եղելութեան ը-
կը մտայնիմք , բայց բարեբախտաբար նայն ա-
ւար մէջ բան մը պատահէցաւ :

Երկրորդ օրս ժամը առանին ճամբայ ելնե-
լով , կէս օրս պաշտօնիս հասայ :

Հայրս արդէն դուրս ելած է եղեր :

Ի տուն գացի՞ զինքը հոն գտնելու յուսով .
բայց ոչ , օ եկած ըլլալով նօտանիս դարի , այլ
ի դուր :

Ի պանդոկ վերադարձայ , ուր մինչև ժամը
վեց սպասելէս յետոյ , և տեսնելով թէ Պ. Տիւ-
փալ չդար , անդրին ի Պաժ խիտ դարձայ :

Վարդարիտան առջի օրուան պէս չէր լա-
պատեր ինձ , այլ նստած էր կրակին քով գոր-
կեղանակը պահանջի :

Խորհրդածութեանց մէջ թաղուած ըլլալով ջիւնացաւ մերձենալս բաղկաթ ու ին՝ յոր նստած էր : Արք համբուրեցի ճակատը՝ դողաց , որովն թէ տուած համբոյրս զինքը յանկարծ զարթուցած ըլլար , և ըսաւ .

— Վախցուցիր զիս , ի՞նչ ըրիր :

— Չաւեսաց հայրս , ոչ նորա իջած պանդուկը դտայ զինքը , և ոչ ալ այն տեղերն ուր դրանու ինն հաւանական էր :

— Արեմն վաղը դարձեալ գնա՛ :

— Միտք ունիմ սպասել մինչև որ խնդրել տայ զիս , որովհետև պարտքս կատարեցի , կարծեմ :

— Ա՛յ , բարեկամս , մի՛ այդ ջախով շատանար . պարտիս դարձեալ երթալ հօրդ , մանաւանդ վաղը :

— Ինչո՞ւ մանաւանդ վաղը . միթէ ուրիշ օր չըլլա՞ր :

— Վասն զի , կրկնեց Մարդարիտա այս հարցմանս սակաւ մի շառաղուենելով , վասն զի քու անխոնջ ծրութեամբդ՝ աւելի վաղ ներու մըն կրնանք ստանալ :

Մարդարիտա զօրն ՚ի բուն խորհրդածութեանց մէջ ընկղմեցաւ . միտքը ցրուած և արխարադէմ էր : Հարկ էր ինձ խօսքերս կրկնել պատասխան մ՛ընդունելու համար : Արդու օրէ ՚ի վեր հանդիպած պատահարներուն համար սպադային վրայ ունեցած երկիւղը՝ մըտատանջութեանցը պատճառ կը ցուցնէր :

Բոլոր գիշերը ապահովեցի զինքը , և երբ առաւօտը հասաւ , ուղարկեց զիս ժպտելով ինձ անձկութեամբ մը՝ որոյ պատճառը չը կարէի հասկանալ :

Առջի օրուան պէս հայրս հոն շէր • բայց դուրս ելնելու ատեն զայս հետեւեալ թուղթը թողեր էր •

« Եթէ այս օր դարձեալ դաս դիս տեսնելու , մինչև ժամը չորս սպասէ ինձ • եթէ մինչև այն ատեն չվերադառնամ , վաղը ե՛կ ինձ հետ ճաշելու , վասն զի խօսք ունիմ քեզ : »

Մինչև որոշեալ ժամը հօրս դարստեան ըստասեցի , բայց երբ անի չեկաւ , ես ալ ելայ ՚ի Պուժիվայ վերադարձայ :

Առջի օրը Մարդարիտա տխուր էր , իսկ այն օրը բուռն խռովութեան մէջ դտայ դինքը : Չիս տեսնելուն պէս , ընթացաւ , ողջադուրեց զիս , և բազկացս մէջ երկար ժամանակ լացաւ :

Հարցուցի պատճառը նորա յանկարծական վշտին , որոյ զայրանալը կ'աղմկէր զիս : Հաւանական պատճառ մը չտուաւ , այլ դտաւ այնպիսի պատճառանքներ , զոր իրեն ստուգութիւնը յայտնել չուզող կին մ'ի մէջ կը բերէ :

Եւ երբ սակաւիկ մի հանդարտեցաւ , ի Յարիզ երթալու ունեցած հետեւանքն իմացուցի իրեն , ցուցի նաև հօրս թուղթը և հասկցուցի իրեն թէ անտի բարեյաջող գուշակութիւն մը կրնայինք հետեցունել :

Սյդ նամակը տեսնելով և իմ ըրած դիտողութիւնս ալ լսելով այնքան սաստիկ սկսեց արտասուել որ ձայնեցի գՆանին , և վախնալով որ չըլլայ թէ ջղաց բռնութեան որս ըլլայ՝ պառկեցուցինք հէզ աղջիկը , որ անբարբառ կուշար , և իմ ձեռներս բռնած՝ անդադար կը համբուրէր :

Նանինին հարցուցի թէ արդեօք իմ բացակայութեան ժամանակ թուղթ մը կամ մարդ

մը զ ալում նորա այդ վիճակին պատճառ եղեր էր • բայց Նանին պատասխանեց որ ոչ նամակ և ոչ ալ մէկն եկեր էր :

Սակայն առջի օրէն 'ի վեր տան մէջ բան մը կ'անցնէր որոյ համար անձկութեան մէջ էիս վասն զի Մարգարիտա զայն յինէ կը ծածկէր :

Երեկոյին աւելի հանդարտ էր • և զիս իւր անկողնոյն քով նստեցունելով երկարածիզ բանիւք կը հաստատէր ինձ իւր սէրը : Ար ժրպտէր ինձ , բայց բռնի , վասն զի աչերն արտասուօք կը լեցուէին :

Ամեն կերպով կը ջանայի վշտացը ճշմարիտ պատճառն իմանալու , բայց միշտ անորոշ պատճառներ կուտար , ինչպէս որ յառաջագոյն ըսի :

Հուսկ ուրեմն քնացաւ գրկացս մէջ , բայց այն քնով , որ փոխանակ հանդ չեցուներու՝ կը յոգնեցունէ մարդուս մարմինը • երբեմն աղաղակ մ'արձակէր , ընդոտտ կը զարթնուր քնէն և երդնուլ տար ինձ սիրել միշտ զինքը՝ յետ ապահով ըլլալու թէ քովն եմ :

Չկարէի գիտնալ զչարժառիթ այն ընդհատ վշտին , որ մինչև առաւօտ տեւեց : Այն ժամանակ Մարգարիտա թմբրութեան մէջ ինկաւ , որովհետև երկու գիշերէ 'ի վեր քնացած չէր :

Այն թմբրութիւնն երկար չքշեց : Ժամը տանն ու մէկին Մարգարիտա զարթեաւ , և զիս ելած տեսնելով շուրջը նայեցաւ ու

— Կ'երթա՞ս , հարցուց :

— Ա՛յ , ըսի նորա ձեռները բռնելով , բայց տակաւին յոյժ կանուխ ըլլալով շուղեցի գրեզ զարթուցանել :

— Ժամը քանի՞ն 'ի Բարիդ պիտի երթաս :

— Չորաին :

— Ինչո՞ւ այնքան վաղ . դուն, մինչև այն ժա-
մանակ քույս կեցիր :

— Մատարակոյս : Մի՞թէ միշտ այնպէս չե՞մ
ըրած :

— Նախաճաշե՞նք , հարցուց դու արթաղէմ :

— Ա՛յ՛ թէ ուղես , լաւ :

— Նախաճաշն վերջը քույս մի՛ հեռանար
մինչև մեկնելդ :

— Քա՛ջ է . և ըստ կարելւոյն վաղ կը դառ-
նամ հոս :

— Մի՞թէ հոս պիտի դառնա՞ս , հարցուց խո-
ժարահայեաց ինձ նայելով :

— Սնչուչո :

— Ճշմարիտ է , երեկոյին հոս պիտի վերա-
դառնաս , ես ալ քեզ պիտի սպասեմ՝ որպէս
երբեմն պիտի սիրես դիս և երջանիկ պիտի ըլ-
լանք , ինչպէս որ եղանք դիրար ճանչելնս՝ ի
վեր :

Այս խօսքերս այնպիսի դողդոջուն ճայնիւ-
րութեցան , այնպիսի անընդհատ վշտալից խօր-
հարդ մը կը ծածկէին , որ ամեն պահու կը
վախնայի որ չըլլայ թէ Մարգարիտս ցնորի
ուստի ըսի իրեն .

— Դու հիւանդ ես , չկարեմ գքեզ այս վի-
ճակիս մէջ թողուլ : Հօրս գրեմ որ չսպասէ ինձ :

— Ա՛յ , ո՛չ , աղաղակեց փութով , մի՛ ըներ
այդ բանը : Հայրդ կրնայ մեղադրել դիս դարձ-
եալ՝ երթալուդ արդեւք ըլլալուս համար . ին-
քը գքեզ անսնել կ'ուզէ . ոչ , սկստք է երթալ
պէտք է : Ես հիւանդ չեմ , քաջատղջ եմ : Մն-
ախորժ երազ մը տեսնելուս սպասճառաւ՝ չը
կրցի կատարեալ քուն ըլլալ :

Նոյն ժամանակէն սկսեալ ուղեց ուրախ զը-
ւարթ երեւիլ, և ալ չբացաւ :

Երբ մեկնելու ժամը հասաւ, համբուրեցի
զինքը և աղաչեցի որ մինչև երկաթ ուղին ըն-
կերէ ինձ, կուղէի կարելի եղածին չափ եր-
կար ժամանակ իրեն հետ ըլլալ :

Ընդունեց զխնդիրս : և մեկնոց մ'առնելով
եկաւ ինձ հետ, Նանինն ալ առաւ՝ միայնակ
չվերադառնալու համար :

Յաճախ միտքս դրի շերթալ բայց վաղ դառ-
նալու յոյս և զհայրս բարկացնելու երկիւզ
արդիւնցին զիս : Շողեկառքը մտայ ու ճամբայ
ելայ : Մարդարիտայէն մեկնելու ժամանակս .

— Երեկոյին կը տեսնուիմք, ըսի բայց պա-
տասխան չառի :

Ար յիշեա որ միանդամ նոյն հարցման պա-
տասխան չէր առած, և Ա. կոմսը զիշերը նո-
րա տունն անցուցեր էր . բայց այն ժամանա-
կը շատ հեռաւոր ըլլալուն համար մտցեր էի
դայն, և Մարդարիտայէն խափուելու վախ
չունէի :

Երբ ՚ի Բարիզ հասայ, Բրիւտանիան դայի
աղաչեցի որ Մարդարիտային երթայ . կը յու-
սայի որ իւր զուարթ բնութեամբը կարենայ
սխախել զսիրուհիս :

Ս. Բանց իմաց տալու ներս մտայ . Բրիւտան
կը յարդարուէր :

— Դո՛ւ ես, հարցուց անձկութեամբ . միթէ
Մարդարիտա քեզ հետ չեկա՞ւ :

— Ո՛չ :

— Արպէ՞ս է :

— Հիւանդ է :

— Միթէ պիտի չդա՞յ :

— Մի՛թէ պիտի գա՞ր :

Տիւմէրնուա տիկինը շառագունեցաւ , և տաղնաւորով սրտատախանեց ու ըսաւ .

— Այսինքն , դէտա քո պիտի չգա՞յ 'ի Բարիդ :

— Ա՛յ :

Նայեցայ Բրիւտանսին , որ խոնարհեցուց աչերը , և իւր երեսէն յայանի էր իմ երկար ժամանակ հոն մնալէս երկնչելը :

— Եկայ , ընդհակառակն , աղաչել քեզ , որ եթէ գործ չունիս , այսօր Մարդարիտայի երթաւ , և յետ բոլոր օրն իրեն ընկերութիւն ընելու՝ դիչերն ալ հոն պառկիս : Այլ վախճամ որ չըլլայ թէ ծանր հիւանդ ըլլայ , որովհետև այնպիսի վիճակի մէջ տակաւին տեսած չէի դինքը :

— Այս երեկոյ ճաշի մը հրաւիրեալ ըլլալովս՝ չկարեմ Մարդարիտայի երթալ . բայց վաղը կը տեսնեմ դանի :

Աքի դճրիւտանս , որ Մարդարիտայի չափ մտայոյզ երեցաւ ինձ . դացի հօրս , որ ուշի ուշով երեսս նայելէն յետոյ , ձեռնն ինձ կարկառելով ըսաւ .

— Քու երկու անգամ դալդ հաճելի եղաւ ինձ , Արման , ուստի կը յուսամ որ մտածեր ես , որպէս ես ալ իմ կողմանէս խորհեցայ :

— Ներեցէք , հայր իմ , ձեզ հարցունելուս համար թէ ի՞նչ հետեանք ունեցան ձեր խորհրդածութիւնները :

— Հասկցայ թէ սխալեր եմ եղեր՝ ինձ տըռւած տեղեկութեանց կարգէ դուրս կարևորութիւն տալով . ուստի միտքս դրի այնքան խատուութեամբ չվարուիլ քեզ հետ :

— Մտո՞յգ է, բարեսիրտ հայր իմ, ազատա-
կեցի ուրախութեամբ :

— Մտածելով ըսի ինքնիրենս թէ երիտա-
սարդ ոք պահճու կին մ'ուներնալու է. և նոր
քաղած տեղեկութեանցս համեմատ՝ աւելի
կ'ընտրեմ որ Աօթիէ օրիորդին համանին ըլլաս,
քան թէ այն կնոջ :

— Քանի՛ բարեբաստիկ ըրիք զիս, ո՛վ ազ-
նուասիրտ հայրս :

Սակաւ մի այսպէս խօսելնէս յետոյ, սեղան
նստանք : Ճաշին ժամանակ հայրս ուրախ զը-
ւարթ էր, և բերանէն սիրալիր խօսքեր կ'ել-
նէին :

Կուզէի նոյնժամայն երթալ 'ի Պուժիվալ՝ և
այս բարեյաջող փոփոխութիւնը Մարդ արիտայի
աւետել. ուստի յաճախ ժամացուցին կընայէի :

— Ժամացուցին կը նայիս, և կուզես զիս ըստ
կարելոյն վաղ լքանել : Ա՛յ յիմարամիտ երի-
տասարդներ, միթէ զանկեղծ սէրը երկբայա-
կան սիրոյ համար պիտի զոհէ՞ք միշտ :

— Հա՛յր իմ, մի՛ ըսէք զայս, ապահով եմ
որ Մարդ արիտա կը սիրէ զիս :

Հայրս չպատասխանեց. ոչ տարակուսել և
ոչ ալ հաւատալ ցուցուց :

Շատ ջանաց համոզել որ գիշերն իրեն հետ
անցունեմ և առաւօտին երթամ, բայց Մար-
դ արիտայի հիւանդ ըլլալն իմացունելով՝ հրա-
ման խնդրեցի իրմէ՝ երթալ առ նա, և խոս-
տացայ յաջորդ օրը դարձեալ գալ :

Օղը գեղեցիկ ըլլալով՝ մինչև երկաթուղւոյն
կայանքը հետս եկաւ : Մինչև այն ժամանակ
այնքան բարեբաստ չէի եղած, զապագայն ըղ-
ձիցս համեմատ կը տեսնէի :

Չհայրս սովորականն աւելի կը սիրէի :
 Իրո՞վ մեկնելու ժամանակս վերջին անգամ
 մ'ալ առաջարկեց ինձ կենալ , բայց մերժեցի :
 — Աւրեմն յոյժ կը սիրես զանի , հարցուց :
 — Յանչարիս :

— Գնա՛ւ ուրեմն , ըսաւ և ձեռքը հակասին
 վրայ տարաւ , իբր խորհուրդ մը հալածելու
 համար . յետոյ բերանը բացաւ՝ իբր թէ բան
 մ'ուզէր ըսել , բայց ձեռնս միայն սեղմեց , և
 փութով մեկնեցաւ յինչ՝ աղաղակելով .
 — Ապա՛ն ուրեմն կը տեսնուինք :



ԻԲ.

Ար թ ուէր ինձ թէ շողեկաւքը չէր քայլեր :
 Ժամը տասն ու մէկին՝ ի Պաւլոսի վայ հասայ :
 Տանը պատուհաններէն լոյս չէր տեսնուէր ,
 դուռը դարկի սլա բացող չեղաւ :

Ասի՛ առջի անգամ կը հանդ իսկէր ինձ : Ա եր-
 ջապէս պարտիզպանը դուռը բանալով՝ ներս
 մտայ :

Նանին ճրագով մ'եկաւ , և Մարդարիտայի
 սենեակը դայինք :

— Տիկինն ո՞ւր է :

— Տիկինն ՚ի Բարիզ դնաց , պատասխանեց
 Նանին :

— Ի Բարիզ :

— Այո՛ , տէր խմ :

— Ե՞րբ :

— Չեր մեկնելէն ժամ մը վերջը :

— Թուղթ մը շթողուց ինձ համար :

— Ո՛չ :

— Չարմա՛նք, ո՞ր առե՛ն պիտի վերադառնար, գիտե՞ս :

— Ո՛չ :

Նանին դուրս ելաւ :

Կասկած մ'ունենալով՝ ի Բարիզ դացած ըլլալու է՝ ստուգելու համար թէ հօրս երթալս պատրուակ մը չլլայ օր մ'ադատ ըլլալուս համար :

Գուցէ Բրիւտանիան թուղթ գրած ըլլալու է կարևոր դործի մը վրայօք, կ'ըսէի ինքնիրենս. բայց տեսեր էի գրիւտանս, բայց բան չէր ըսած ինձ, որով այդ ենթադրութիւնըն անհաւանական էր :

Յանկարծ յիշեցի, որ երբ Տիւմբինուա տիկնոջ Մարդարիտայի հիւանդութիւնը իմացուցեր էի, հարցուցեր և ըսեր էր ինձ. «Միթէ այսօր ինքը պիտի չգա՞յ՝ ի Բարիզ» : Յիշեցի նաև Բրիւտանի տաղնապը, մինչ երեսը նայեր էի այն հարցումէն վերջը, որով այնպէս կը կարծուէր թէ ժամադիր եղած ըլլան : Յիշեցի նաև ապէս Մարդարիտայի բոլոր օրը հոսած արտաառքը դոր քիչ մը մոռցեր էի հօրս ինձ ըրած քաղցր ընդունելութեամբը :

Նոյն ժամանակէն սկսեալ աւուր մէջ հանդիպած ամեն սրտահարմերն եկան դումարեցան առջի կասկածիս շուրջը, և դայն այնպէս դորացուցին մտացս մէջ որ ամէն բան, մինչև հօրս ինձ ցուցած գթութիւնն ալ, հաստատեց դայն :

Մարդարիտա դրեթէ պահանջեր էր ի Բաւ

րից երթալս , և իմ կենալ ուղեւ տեսնելով
ապահովեր էր ինձ թէ հիւանդ չէ : Արողայթ ի՞
մէջ արդեօք բռնուած էի . արդեօք Մարգա-
րիտա կը խափէ՞ր զիս . ժամանակին վերադառ-
նալ յուսացեր էր երթալը շխմանալուս համար
և դիպուածով մը հո՞ն բռնուեր էր : Ինչո՞ւ
ուրեմն Նանինին բան չէր լսած . ինչո՞ւ թուղթ
մը չէր գրած . ի՞նչ կը նշանակէին հոսած ար-
տասութիւնք , բացակայութիւնը , և այս դաղտ-
նիքը :

Ահա այս բաները սարսափով կը հարցնէի
ինքնիրենս այն դատարկ խցին մէջ՝ աչերս սե-
ւեռած ժամացուցին վրայ , որ կէս գիշերը նը-
շանակելով կարծես հոսանայչիս մնալուս անօ-
գուտ ըլլալը կ'իմացունէր :

Մակայն ջանացի կասկածներս փարատել ,
վասն զի մեր ըրած կարդադրութիւններէն ,
և իրեն ինձ համար ըրած ու իմ ընդունած
զոհողութենէն վերջը կարելի՞ էր որ Մարգա-
րիտա զիս խափէր . ո՛չ :

Խեղճ աղջիկն՝ իւր կարասեաց գնող մը գրա-
նելով գործն աւարտելու համար՝ ի Բարիզ գա-
ցած պիտի ըլլայ կրտսի : Չէ ուղեր իմաց տալ
ինձ , որովհետև զիտէ թէ , թէպէտ կ'ընդու-
նիմ , այլ կը վշտացունէ զիս այն վաճառումը ,
որ սակայն կարևոր է մեր բարեբաւտութեան ,
և անձնասիրութիւնս ու վայելչութիւնս փրա-
ւորելու վախով զայն չէ լսած ինձ : Ամեն բան
ի գլուխ հանելէն յետոյ պիտի վերադառնայ
հոս : Սնշուշտ Բրիւտանս ալ այս պատճառիս
համար կրասպասէր իրեն , վասն զի առջիս ինք-
զինքը մատնեց : Գուցէ Մարգարիտա չկարե-
նալով այսօր իւր գործն աւարտել Բրիւտան-

սին դայեր է՝ պառկելու համար, կամ թէ
գուցէ հիմայ դայ՝ զիս անձկութեան մէջ թո-
ղուլ չուզելով :

Եայց, եթէ այդ այդպէս է, ինչո՞ւ այնքան
արտասուեց : Սնտարակոյս հէգ աղջիկն իմ
վրայ ունեցած սիրովն ալ հանդերձ՝ չէ կըր-
ցած անլայ աչօք հրաժարիլ այն զեղխութե-
նէն, յոր մինչև հիմա բարեբաատիկ ապրեր
էր :

Սիրով կը ներէի Մարգարիտայի՝ նորա այդ
վիշտը : Սնհամբերութեամբ դարձին կը սպա-
սէի՝ ըսելու համար իրեն՝ ծածկելով զանի
համբոյրներովս՝ թէ հուսկ ուրեմն բացակա-
յութեանը պատճառը դուշակեր էի :

Սակայն դիչերը կը յառաջանար և Մարգա-
րիտա տակաւին չէր վերադառնար :

Մնձկութիւնս տակաւ զայրանալով՝ դուխս
և սիրտս կը ձմիլի : Վտանգ մը հանդիպած
չըլլա՞յ իրեն կ'ըսէի. վիրաւորուած, հիւան-
դացած կամ մեռած չըլլա՞յ. գուցէ որ դայ
ցաւալի դիպուած գուժէ ինձ. գուցէ մինչև
առաւօտ մի և նոյն անձկութեան և երկիւղի
մէջ տատանիմ :

Սմեռելին չէի մտածէր որ բացակայութեա-
նը վրայ սարսափելով՝ իրեն սպասած ժամա-
նակս Մարգարիտա կը խափէր զիս : Ար մը-
տածէի թէ անակնկալ պատճառով մը միայն
ի Բարիդ մնացեր էր. և որչափ որ մտածէի այն-
քան կը համոզուէի թէ այն պատճառն այլ ինչ
չէր կրնար ըլլալ, բայց միայն ճախորդութիւն
մը : Ո՞ մարդկային սնասպարձութիւն, ամեն ձև
կ'զգենու՞ դու :

Ժամը մէկը զարկեր էր. միտքս դրի ժամ

Տ'ալ սպասել, և յետոյ՝ եթէ Մարգարիտան չը
վերադառնայ՝ երթալ 'ի Քարիզ :

Ժամանակն անցունելու նպատակաւ մատեան
մ'ուղեցի կարդալ, որովհետեւ խոհիլ չիշ-
խէի :

Մանօն Ղէսդօն սեղանին վրայ բացուած
էր : Տեղ տեղ էջերը յարաստուաց թրջած էին :
Յետ սակաւ մի թղթատելու, փակեցի այդ
մատեանը, որոյ նշանագիրերը անխնայաւ կը
թուէին ինձ՝ տարակոյսներու քողին մէջէն :

Ժամը դանդաղ կը յառաջանար : Երկինքն
ամպամած էր : Մշնանային անձրև մը սպակի-
ները կը ծեծէր, կարծէի թէ դատարկ անկո-
ղինն երբեմն դերեզմանի կերպարանք կ'առնէր
և կ'երկնչէի :

Դուռը բացի : Սկանջ տուի, և այլ ինչ չը
լեցի, բայց միայն ծառերու սոսափիւնքը :
Կառք մ'ևս չէր անցնէր ճանապարհէն : Եկե-
ղեցւոյն զանգակատան մէջէն ժամացոյցը տրխ-
րածայն կէս դարկաւ :

Ար վախէի չըլլայ թէ մէկն 'ի տուն մտած
ըլլայ, վասն զի կը թուէր ինձ թէ այն ժամուն
և այնքան խաւարային գիշերուան մէջ ձախոր-
դութիւն միայն կրնար ինձ պատահիլ :

Ժամացոյցն երկու դարկաւ : Մակառիկ մի
տակաւ ին սպասեցի : Չօճանակը միայն իւր նոյ-
նաձայն և կանոնաւոր ճոխնչովք կ'աղմկէր գի-
շերուան լռութիւնը :

Վերջապէս ելայ այդ խուցէն, որոյ դոյզն
առարկայներն ալ ունէին այն տխուր տեսքը՝
որով մէկը շուրջը դտնուող իրերը կը տեսնէ,
երբ միայնակ և անձկարեկ ըլլայ :

Բովի սենեկին մէջ Նանին ձեռակերտին վը-

Տ'ալ սպասել, և յետոյ՝ եթէ Մարգարիտան չը
վերադառնայ՝ երթալ 'ի Քարիզ :

Ժամանակն անցունելու նպատակաւ մատեան
մ'ուղեցի կարդալ, որովհետեւ խոհիլ չիշ-
խէի :

Մանօն Ղէսդօն սեղանին վրայ բացուած
էր : Տեղ տեղ էջերը յարաստուաց թրջած էին :
Յետ սակաւ մի թղթատելու, փակեցի այդ
մատեանը, որոյ նշանագիրերը անխնայաւ կը
թուէին ինձ՝ տարակոյսներու քողին մէջէն :

Ժամը դանդաղ կը յառաջանար : Երկինքն
ամպամած էր : Մշնանային անձրև մը սպակի-
ները կը ծեծէր, կարծէի թէ դատարկ անկո-
ղինն երբեմն դերեզմանի կերպարանք կ'առնէր
և կ'երկնչէի :

Դուռը բացի : Սկանջ տուի, և այլ ինչ չը
լեցի, բայց միայն ծառերու սոսափիւնքը :
Կառք մ'ևս չէր անցնէր ճանապարհէն : Եկե-
ղեցւոյն զանգակատան մէջէն ժամացոյցը տրխ-
րածայն կէս դարկաւ :

Ար վախէի չըլլայ թէ մէկն 'ի տուն մտած
ըլլայ, վասն զի կը թուէր ինձ թէ այն ժամուն
և այնքան խաւարային գիշերուան մէջ ձախոր-
դութիւն միայն կրնար ինձ պատահիլ :

Ժամացոյցն երկու դարկաւ : Մակառիկ մի
տակաւին սպասեցի : Չօճանակը միայն իւր նոյ-
նաձայն և կանոնաւոր ճոխնչովք կ'աղմկէր գի-
շերուան լռութիւնը :

Վերջապէս ելայ այդ խուցէն, որոյ դոյզն
առարկայներն ալ ունէին այն տխուր տեսքը՝
որով մէկը շուրջը դտնուող իրերը կը տեսնէ,
երբ միայնակ և անձկարեկ ըլլայ :

Բովի սենեկին մէջ Նանին ձեռակերտին վը-

բայ քնացած էր : Դռան բացուելուն ձայնէն
զարթեալ , և զտիրուհին հարցուց :

— Տակաւին չեկաւ , բայց , եթէ դայ , ըսկ
իրեն որ , անձկութեանս չդիմանալով , 'ի Բար
րիզ դացի :

— Այս ժամուս :

— Այո՛ :

— Բայց ինչպէ՞ս . հիմա կառք չէք կրնար
դանել :

— Հետի պիտի երթամ :

— Բայց կ'անձրեւէ :

— Փոյթս չէ :

Տիկինը հիմայ կ'ուզայ , եթէ չդայ ալ՝ վաղը
դացէք ինչ ըլլալն խմանալու ճանապարհին վը
րայ կ'սպաննուիք :

— Վտանդ չկայ , սիրելի Նանին , վաղը կը
տեսնուի՞ք :

Բարեսիրտ աղջիկը դնաց մեկնոցս բերելու ,
վրաս նետեց դայն և ուղեց պանդոկին տիրու
հին զարթուցանել , իրմէ տեղեկանալու հա
մար թէ արդեօք կառք մը կը դանուի . բայց
ես դէմ կեցայ , վասն զի այն անօգուտ փոր
ձին ժամանակ ճանապարհին կէսը քայլելուս
վրայ սուղահով էի :

Ասկէ զատ օդ շնչելու և յողնելու կարօտ
էի՝ զիս լափող բունն զրգռութիւնը խաղա
ղելու համար :

Մարդարիտայի 'ի Բարիզ ունեցած դասիկո
նին բանալին առնելէս յետոյ , մնաս բարեա
լաի Նանինին , որ մինչև վանդակապատքը հե
տըս եկեր էր :

Նախ և սուաջ վաղելով դացի , բայց հօղը
նոր թռչած ըլլալով՝ կրկին յողնեցայ : Այս ժա

Տու չափս այնպէս ընթանալէն յետոյ՝ կանգ առնել ստիպուեցայ, որովհետեւ ջրոյ մէջ մտեր էի: Սակաւիկ մի շունջ առի և զուզիս շարունակեցի: Սյնքան մթին էր գիշերը որ ամեն անդամ կ'երկնչէի բախելու ճանապարհին ծառերէն մէկուն, որք յանկարծակի երևելով, կարծես վրաս յարձակող հսկայածե ուրուականներ էին: Մի քանի սայլերու հանդիպեցայ՝ զոր ընդ հուպ զկնի իմ թողուցի:

Կառք մ'արագ կ'ընթանար դէպ ի Պուժի վայր կողմը. առջևէս անցնելու ատենը յուսալով որ գուցէ Մարգարիտա մէջն ըլլայ, կանգ առի և Մարգարիտա, Մարգարիտա՛, գոչեցի:

Բայց ոչ որ պատասխանեց, ու կառքն անցաւ դնայ: Քիչ մ'ատեն ետեւէն նայելէն յետոյ, սկսեցի քայլել:

Երկու ժամէն վերջը Եթուալ պատուարը հասայ:

Պարիսկ տեսնելով՝ նոր ոյժ մ'առի, և վազելով երկայն ծառուղիէն իջայ, աւտի յաճախ անցեր էի:

Նոյն գիշերն անառի ոչ որ կ'անցնէր:

Կարծես մեռեալ քաղաքի մը ճեմելիքն էր:

Արշալոյսը կը սկսէր ծագել:

Երբ տ'Սնթէն փողոցը հասայ, հոյակապ քաղաքն արդէն սակաւ մի կը շարժէր՝ բոլորովին զարթնու լէն առաջ:

Մարգարիտայի ատենը մտնելուս ատեն Սուրբ Թորոս եկեղեցւոյն ժամացոյցը հինգ զարկաւ:

Չանուանաղ իրա նկտեցի դռնապանին, որ յինէ բաւական քսան ֆրանկնոցներ ընդ ունած:

ըզալով, գիտէր ժամը հինգին Վոթիէ օրիորդին երթալու իշխանութիւն ունենալս :

Ուստի անարդել ներս մտայ :

Կրնայի նաև իրմէ տեղեկանայ Մարգարիտայի հոն ըզալուն վրայ, բայց կարելի էր որ բացասական պատասխան մը տար. իսկ ետ երկու վայրկեան աւելի տարակուսից կուզէի, բանզի ասով միայն կը յուսայի տակաւին :

Ուստի վեր ելայ :

Դռնէն անանջ առի, և ջանացի շուկ մը, շարժում մը դադարուկ լսել :

Ոչինչ կը լսուէր. կարծես դեղին յուսութիւնը մինչև հոն ալ կը շարունակուէր տակաւին :

Վերջապէս դուռը բացի և ներս մտայ :

Ամեն վարագոյրները քով փակուեր էին : Ճաշարանին վարագոյրները բանալէս յետոյ՝ պատկերու խուցը դացի, որոյ դուռը փութով բացի :

Վաղեցի վարագոյրները արագութեամբ բացի. աղօտ լոյս մը ներս մտաւ. անկողին բնութացայ :

Մարդ չկար հոն :

Ամեն խցերուն դռները հետզհետէ բանալով ամենուն մէջ ալ նայեցայ :

Մէկը չտեսայ :

Սակաւ մ'ևս և կը յիմարէի :

Յարդարանաց սենեակն երթալով պատուհանը բացի և մի քանի անգամ դճրիւտանա ձայնեցի :

Տիւվէրնուտա տիկնոջ պատուհանը դոց մնաց :

Այն ասէն դռնապանին քով իջնելով հարցուցի թէ արդեօք Վոթիէ օրիորդն աւուր մէջ եկեր էր տունը :

- Այո՛, Տիւփէրնուա տիկնոջ հետ :
- Ինձ համար բան մ'ըսա՞ւ :
- Ո՛չ :
- Քիտե՞ս յետոյ ի՞նչ ըրին :
- Կառքով դային :
- Ի՞նչ տեսակ կառքով :
- Կիսակառքով մը :
- Ի՞նչ կը նշանակէին այս բաները :
- Քովի դուռը դարկի :
- Ո՛ւր կերթաք տէր խմ, հարցուց դռնաօրանը դուռը բանալէն յետոյ :
- Առ տիկին Տիւփէրնուա :
- Տակաւին չվերադարձաւ ի տուն :
- Աստուծո՞վ ես :
- Այո՛, տէր խմ, ահա երկի իրեն բերին նամակ մը, դոր տակաւին չկրցի տալ :
- Քայս ըսելով դռնաօրանը ցոյց տուաւ թուղթ մը որոյ վրայ անտարբերութեամբ նայեցայ :
- Անի՛ Մարդարիտայի գիրն էր :
- Առի նամակը :
- Երեսադիրը հեռեկալ կերպով դրուած էր :
- «Առ Տիկինն Տիւփէրնուա, Պ. Տիւփալին յանձնելու աղաչանք :»
- Այս թուղթս ինձ դրուած է, ըսի դռնաօրանին, և դանուապտմաս ցոյց տուի իրեն :
- Դո՞ւք էք Պ. Տիւփալ, հարցուց մարդը :
- Այո՛ :
- Հիմա ծանեայ դձեղ, յաճախ Տիւփէրնուա տիկնոջ կուգայիք :
- Փողոց ելայ և թուղթը բացի :
- Եթէ կայծակն որտարնդ սաս առջիս ինկնար, այնչափ չէի սարսափեր, որչափ զարհուրեցայ այն նամակը կարդալով :

« Արման, այս գիտնաս որ թուղթս կարդա-
ցած ժամանակդ ես ուրիշ մարդու մը հոսանոյշն
եղած եմ: Ա՛լ իրարու հետ բան չունինք:

« Գարձիր, սիրելիդ իմ, հօրդ քով, գնա՛
տե՛ս քոյրդ, որ մեզ պէս տարաբախտ չէ ե-
ղած, և որոյ քով կը մտնաս Աթթիկ: անուն
աղջկան քեզ պատճառած վիշտերը, այն կըն-
կան զոր հաճեցար սակաւիկ մի սիրել, և որ
քեզ միայն կը պարտի իւր կենաց միմիայն բա-
րեբաստիկ օրերը, որք, ինչպէս յուսայ, ա՛լ
երկար ատեն չեն տւեր: »

Թուղթը կարդալիս յետոյ կարծեցի թէ պի-
տի յիմարիմ:

Պահ մի վախցայ որ քարերուն վրայ չինկ-
նամ. քօղ մը իջաւ աչերուս վրայ, քունքերս
կը բախէին:

Վերջապէս քիչ մը սդաստանալիս յետոյ,
չուրջս նայեցայ, և դարմացայ այլոց կեանքին
չարունակուիլը տեսնելով, փոխանակ իմ աղէտ-
քէս վերջը դադրելու:

Մարդ արիտայի ինձ տուած հարուածը մի-
այնակ կրելու անզօր, ըլլալովս՝ յիշեցի հօրս
նոյն քաղաքն ըլլալը, և որոյ տասը վայրկենէն
կրնայի երթալ, ու անչուչտ ցաւակից կ'ըլլար
ինձ՝ առանց վշտացս պատճառին նայելու:

Խենդի և դողի պէս մինչև «Գարիզու պան-
դոկ» ը վազեցի, և հօրս դատիկոնին բանալին
դրան վրան տեսնելով՝ բացի ներս մտայ:

Կը կարդար:

Ձիս տեսած ժամանակ ցուցած քիչ դարման-
քէն կը կարծուէր թէ ինձ կ'սպասէր:

Անբարբառ՝ բազկոյցը մէջ նետուեցայ. սուրի
Մարդ արիտայի թուղթը, և անկողնոյն առջին
ինկնալով՝ սկսեցի ջերաջերմ արտասուք հոսել:

Երբ զգաստացայ, անկարելի եղաւ ինձ հաւատալ թէ այն օրն՝ անցեալ աւուրց համանման շրջայ : Երբեմն կը խորհէի որ եղելու թիւն մը, զոր չի յիշեր, գիշեր մը զիս Մարգարիտայէն հեռացուցած ըլլալով եթէ 'ի Պուժիվալ դառնայի, զինքն անձկարեկ պիտի տեսնէի, ու պիտի հարցունէր բացակայութեանս պատճառը :

Եթէ մէկն եմ զգացած սիրոյս նման ունակութիւն մ'ունեցած ըլլայ, այն սովորութեան դադրիլն անկարելի կը թուի իրեն՝ առանց կենաց ուրիշ շարժառիթներն ալ դադրեցունելու :

Ուստի մերթ ընդ մերթ Մարգարիտայի թուղթը կը կարդայի՝ համոզուելու համար թէ տեսածս երազ չէր :

Մարմինս անշարժ էր՝ հոգւոյս սասանութեանէն ընկճեալ ըլլալուն համար :

Անձկութիւնը, գիշերուան տաղնապս և առաւօտուան լուրը զիս սաստիկ յողնեցուցած ըլլալնուն պատճառաւ, հայրս իմ տկարութեանէս օգուտ քաղելով իրեն հետ երթալու բացայայտ խոստմունքը յինչ պահանջեց :

Սմէն ուղածը խոստացայ, որովհետեւ վիճելու կարողութիւն չունէի նա մանաւանդ ճշմարիտ սիրոյ մը պիտոյքը կ'զգայի՝ զլուխս եկած արկածներէն վերջը՝ աստիճան քաջութիւն ունենալու համար :

Յոյժ կը փափաքէի որ հայրս՝ իմ սրտածըմ-
լիկ ցաւոցս մէջ մխիթարէր զիս :

Այս միայն կը յիշեմ որ նոյն օրը թեթեւըն-
թաց կառքի մը մէջ դնելով՝ տարաւ զիս : Ա-
ռանց ինձ բան մ'ըսելու արկղներս պատրաս-
տել տալէն յետոյ՝ իրեններուն հետ կառքին
ետին կապել տուեր էր :

Քաղաքէն մեկնելէն յետոյ միայն ըրածս
կրցի իմանալ , և ճանապարհին ամայութիւնը
յիշեցուց ինձ սրտիս թափուր ըլլալը :

Այն ժամանակ սկսեցի դարձեալ լսալ :

Հայրս իմանալով որ բանիւ չեմ կրնար մը-
խիթարուիլ , առանց բան մ'ըսելու՝ թոյլ կու-
տար որ արտասուեմ , և երբեմն ձեռներս կը
սեղմէր՝ իբր իմացունելու համար ինձ թէ քո-
վըս բարեկամ մ'ունիս :

Գիշերը քիչ մը քնացայ , երազիս մէջ Մար-
դարիտան տեսայ :

Յանկարծ զարթեայ , և կառքի մէջ ըլլալուս
վրայ դարմացայ :

Տակաւ իրականութիւնը միտքս գալով՝ դը-
րուխս կուրծքիս վրայ ծռեցի :

Չէի համարձակեր հօրս հետ խօսիլ , վասն
զի կը վախէի որ չըլլայ թէ այն կնկան սիրոյն
ճշմարտութեանը վրայ չհաւատարուն իրաւունք
տար :

Բայց իւր առաւելութեամբը չդեղծաւ , և
հասանք 'ի Գ . . . մինչև հոն իմ ուղեորու-
թեանս շարժառիթն եղող նիւթին վրայ խօսք
չբացաւ :

Քրոջս հետ սլաղ տուելու ատենս՝ Մարդա-
րիտայի թղթին մէջ նորա վրայօք դրուած խօս-
քերը յիշեցի , բայց իմացայ նաև թէ քոյրս՝ իւր

բարեարտութեամբը հանդերձ պիտի շկարենայ
մասցունել ինձ զհամանոցս :

Արարդութեան ժամանակն ըլլալով, հայրս
կարծեց այնու կարենայ սիրտիել զիս : Աստի
յաճախ իւր զբացիներն և բարեկամները դու-
մարելով՝ որսի կ'երթար : Ես ալ նոցա հետ
կ'երթայի առանց դժկամակութեան, բայց նաև
առանց սխորժի, այլ անզգայութեամբ մը,
զոր Բարիպէն մեկնելէս 'ի վեր ամեն զործոցս
մէջ կը տեսնուէր :

Երէները համախմբելով կ'որսայինք : Տեղ մը
կը կեցունելին զիս. իսկ ես՝ դատարկ հրացա-
նէս քովս դրած՝ մտախորհ կ'ըլլայի. ամպե-
րուն ընթանալուն կը նայէի, և խորհուրդքս
թփառիկ կը թողուի ամայի դաշտաց մէջ.
մերթ ընդ մերթ ձայնը կը լսէի որսորդի մը,
որ յինչ տասը քայլ հեռու եզող նապաստակ
մը կը ցուցնէր ինձ :

Այս ամեն մանրորդները հայրս աչքէն չը
փախցունելով արտաքին հանդարտութենէս
չէր խափուէր : Ա'իմանար որ վշտաբեկ սիրաս
օր մը պիտի յեռաչրջէր. ուստի թէ կողուչա-
նար զիս մխիթարելէն և թէ կրցածին շատ
կը ջանար սիրտիել զիս :

Քոյրս բնակամապէս այս եղելութեանց տեղ-
եակ չըլլալով չէր կրնար հասկնալ իմ մտա-
տանջութեանս և տխրութեանս պատճառը,
զիս միշտ ուրախ դուարթ տեսնելուն համար :

Մերթ ընդ մերթ՝ տխրութեանս մէջ՝ հօրս
նայուածին հանդիպելով ձեռնը կը սեղմէի,
իբր՝ անկամայ իրեն նեղութիւնս պատճառելու
ներումն խնդրելու համար :

Ամիս մ'ամբողջ պսակէս անցնելէն յետոյ ա' ի

չկրցի ցաւոցս աւելի հանդուրժել որովհետեւ
անդադար Մարգարիտայի վրայ կը մտածէի :
Չանի յոյժ սիրած ըլլալու և տակաւին սիրե-
լու սրատճառաւ՝ քիչ ծամանակէն չի կըր-
նար դինքը մոռնալ : Ասմ սիրելու և կամ ատե-
լու էի զանի : Նա մանաւանդ ծամ մ' առաջ
տեսնելու էի դինքը՝ որ և է զգացում որ տա-
ծէի նորա նկատմամբ :

Այս փափաքն այնպիսի զօրութեամբ հաս-
տատուեցաւ սրտիս մէջ, որ անկարելի եղաւ
զայն խելէ, և այնքան յամառ կամօք, որոյ եր-
կար ծամանակէ՝ ՚ի վեր անդորժ մնացած մար-
մին մ'ենթակայ կ'ըլլայ :

ՉՄարգարիտան տեսնելու համար չի կըր-
նար երկար ծամանակ, ոչ ամիս մը և ոչ ալ
որ մը սպասել, այլ կը փափաքէի այս իղձը
յղացած օրուանս երկրորդ օրը կատարել զայն :
Ուստի դացի հօրս ըսի թէ կարեւոր գործի մը
համար ՚ի Բարիդ սխտի երթամ, և նաև խոս-
տացայ թէ ընդ հուլ կը վերադառնամ :

Անուշտ գուշակեց երթալուս սրատճառը,
վասն զի շատ յորդորեց որ չմեկնիմ, բայց
գիտնալով նաև թէ դիւրադրդիւ վիճակիս
մէջ՝ փափաքիս չըրանակէն սպիտալի հետեանք-
ներ կրնային ծագել ինձ համար, ողջադուրեց
զիս և գրեթէ արատուաթոր աչերով ազանցեց
որ վաղ դառնամ :

՚ի Բարիդ շատած քուն չեղայ :

Հոն հասնելէս յետոյ ընելիքս չի դիտեր. բայց
ամէն բանէ առաջ զՄարգարիտան տեսնելու էի :

Ուստի դացի ՚ի տունս հագուեցայ, և օղը
զեղեցիկ ու ծամանակն ալ կանուխ ըլլալով
՚ի Շունդ Ալիզէ դացի :

Այն ժամէն վերջը տեսայ Մարդ արիտայի կառ-
քին 'ի «Գօնդօրտ» հրապարակն երթալը :

Գարձեալ գներ էր իւր ձիերը , առաջուան
կառքն էր , բայց ինքը մէջը չէր :

Իւր բացակայութիւնը հազիւ թէ նշմարեր
էի՝ մէկ մ'ալ աչերս շուրջս գարձուներով տե-
սայ Մարդ արիտայի ինձ անժանօթ կնկան մը
հետ երթալը :

Քովէս անցնելու առեւնն երեսին գոյնը նե-
տեց , և ջղային ժպիտ մը կարսիւր ներկեց շուրթ-
ները : Իսկ իմ կուրծքս մեծապէս ստսանեցաւ
որտիս ուժգին բախմանէն . բայց վերջապէս
կրցի անտարբեր կերպարան մը կեղծել , և
պաղութեամբ բարեկցի իմ նախնի հոմա-
նոյն , որ վտւթով կառքը մտաւ բարեկամուհ-
ւոյն հետ :

Ար ճանչի զՄարդ արիտա . իմ անսկնկալ
տեսութիւնս խռոված ըլլալու էր գինքը : Իմ
մեկնիրս լսելով մեր բաժանման աղիտայի հե-
տեանք մը շունենալուն վրայ անշուշտ ապա-
հով եղեր էր . բայց իմ դարձս և տժգոյն ե-
րեսս տեսնելով իմացած ըլլալու էր անտա-
րակոյս իմ գարտեանս նսլատակ մ'ունենալը ,
և խորհելու էր թէ արդեօք ի'նչ բան պիտի
պատահէր :

Եթէ Մարդ արիտան աղքատ գտնելով վրէժ-
լուծելու համար օգնէի իրեն , անշուշտ կը
ներէի և գինքը վշտացունելու չէի մտածեր :
Իսկ արդ գոնէ արտաքուստ բարեբաստ կ'ե-
րեէր . այլ որ դարձեալ շնորհեր էր նմա այն
զեղխութիւնը՝ զոր ես չէի կրցեր շարունակել
տալ և մեր բաժանման առիթն ինքն ըլլալուն
պատճառաւ՝ հետևաբար նուաստագոյն շա-

հաւ մը դրոշմն ունէր . ուստի՝ թէ յանձնասիրութեամբ և թէ 'ի սիրոյս խոնարհած համարելով զիս՝ կ'ուզէի իմ կրած վշտացս պատուհասն ալ իրեն կրել տալ :

Այդ կնկան ինձ ըրածներուն անտարբեր չէի կրնար ըլլալ . արդ, իմ անտարբերութիւնս ալ նորա ամենէն սաստիկ վիշտն ըլլալու էր . ուստի այդ զգացումս առ երեսս ցուցնելու էի ոչ միայն իրեն , այլ ամէնուն առջին :

Չանացի դուարթ երես կեղծել զիս , ու Յրբիւտանսին գացի :

Սենեկապան կինն իմ դալուստս իմացունելու համար զնաց ու զիս սրահին մէջ քիչ մ'ատեն սպասցուց :

Վերջապէս Տիւմէրնուա տիկինն երևնալով յարդարանաց սենեակը մտանք :

Հստեղու ատենս սրահին դրան բացուիլը , և մէկուն թեթեաքայլ հեռանալուն և դրան ուժգին փակուելուն ձայները լսեցի :

— Գուցէ դորձ մ'ունէիր , ըսի Յրբիւտանսին :

— Աչ . Մարդ արիտան հոս էր հիմայ , դալուստը իմանալով՝ փախաւ . դուրս ելնողն ինքն էր :

— Ըսել է թէ յինէ կ'երկնչի :

— Աչ . բայց կը փախնայ թէ իւր տեսութիւնըն անախարժ չըլլայ քեզ :

— Ի՞նչու , ըսի ազատաբար շունչ առնուլ ջանալով , որովհետեւ սիրտս սաստիկ այլայլած էր . խեղճ աղջիկն իւր կատքը , կահ կարասիքը և գոհարները դարձեալ ստանալու համար թողուց զիս . աղէկ ըրաւ , իրեն դէմ բարկանալու իրաւունք չունիս : Այսօր տեսայ զինքը , յարեցի անտարբերութեամբ :

— Ո՛ւր , հարցուց Բրիտանա , որ երեսն
նայելով՝ կ'ուզէր խմանալ թէ՛ ես այն մարդն
եմ որ երբեմն զՄարգարիտան այնչափ սիրեր
էի :

— Ի Շանդ էլիզէ • քովը չքնադադեղ կին մը
կար • ո՞վ է անի :

— Ի՞նչպէս կին :

— Գեղին դանդաղեղ մազերով , նրբաշնորհ
հասակաւ , կապուտաչեայ և ճոխազգեայ :

— Սո՛ւ , Ուիսակիան է • յիրաւի շնորհազեղ
աղջիկ մ'է :

Որո՞ւ հետ է :

— Մէկու մը հետ չէ , ամենուն հետ է :

— Ո՛ւր կը բնակի :

— Ի «Թրօնչէ» փողոց , թիւ . . . ինչո՞ւ կը
հարցունես , միթէ՛ նորա հոմանի՞ն կուզես ըլլալ :

— Գուցէ :

— Հապա Մարգարիտա՞ն :

— Սուտ կ'ըլլար ըսելը թէ՛ նորա վրայ բնաւ
չեմ մտածեր • բայց ես այն տեսակ մարդերէն
եմ որոց վրայ հրաժարելու եղանակը յոյժ կ'աղ-
ղէ : Վասն զի Մարգարիտան զիս այնքան դիւ-
րաւ ճամբեց որ դանի այնչափ սիրելուս հա-
մար դանձաւ անմիտ համարեցայ , քանզի յոյժ
սիրեցի ես զայդ աղջիկը :

Կրնաս գուշակել թէ՛ ի՞նչպիսի կեղծեալ ճայ-
նիւ այս բաներս կը ջանայի ըսել • ճակտիս
վրայէն քրտինքը յորդառատ կը հոսէր :

— Բայց ինքը յոյժ կը սիրէր զքեզ , և կը սի-
րէ տակաւին • ապացոյցն ալ այս է որ այսօր
զքեզ տեսնելէն յետոյ , եկաւ խնայ տուաւ
ինձ : Հոս եկած ժամանակը սաստիկ կը դողար
և մարելու վրայ էր :

— Ի՞նչ ըսաւ նայինք :

— Ըսաւ թէ երբ դաս տեսնես դիտ , իրեն կողմանէ ներսումն խնդրեմ քեզնէ :

— Արնաս ըսել որ ներեր եմ իրեն : Ինքն արդարեւ բարեսիրտ աղջիկ մ'է , բայց վերջապէս աղջիկ է . խնամարտ էի որ որ մ'այնպէս պիտի վարուէր ինձ հետ : Ենորհասարտ եմ իրեն այդ առաջադրութեան համար , որովհետեւ հիմա կը մտածեմ թէ ի միտսին այնպէս ապրելով վերջերնիս ի՞նչ պիտի ըլլար : Խենդութիւն էր մեր ըրածը :

— Իւր առաջուան կարօտութիւնքը տեսնելով այսպէս որոշելի խնամարտով շատ դժուար պիտի ըլլայ : Սիրելի , գրեզ թողլու ժամանակը եկեր հասեր էր : Սյն թշուառական դործակալը՝ որոյ առաջարկեր էր իւր ամեն կարասիքը վաճառել՝ դայեր հարցուցեր է նորա պարտատէրներուն թէ իրենց ո՞րչափ կը պարտի . սորա ալ վախնալով երկու օրէն ամեն բան պիտի վաճառէին :

— Պարտքերը վճարուեցան հիմայ :

— Քիչ բան մնաց :

— Արծաթը ո՞վ տուաւ :

— Ն. Ամար : Սյս տեսակ բաներու համար մասնաւոր մարդիկ կան : Միով բանիւ քան հազար ֆրանկ տուաւ . բայց այսուհետեւ աւելի բան պիտի չընէ :

Մարդարիտա ղինքը շսիրելը քաջ դիտնալով հանդերձ շատ բարութեամբ կը վարուի աղջկան հետ : Դու ալ տեսար , դարձեալ դնեց նորա ձիերը , աղատեց անանակապ դարդերը և դքոսին տուածին շափ ալ արծաթ կուտայ նմա , եթէ Մարդարիտա հանդարտ կենայ՝

այն մարդն երկար ատեն տակաւին կը սիրէ
զինքը :

— Ի՞նչ կ'ընէ հիմա . մի՞թէ ի Բարի՞՞զ կը բը-
նակի տակաւին :

— Քու Պաժիպալէն մեկնելէդ յետոյ , ա՛լ
չուզեց հոն սաք կօխել : Ես դացի բերելու նո-
րա ատեն բաները , և քու կիներդ խկ , զոր
կապոց մ'ընելով հոս պահեցի . ուզած ատե-
նըդ մարդ զրկէ , առնել տուր , ատեն բան մէ-
ջըն է , բաց ի քու նշանագիրովդ թղթապա-
նակ մը՝ զոր Մարդարիտա խնդրեց առաւ .
եթէ՛ ուզես ետ կ'առնեմ իրակ :

— Թո՛ղ սրահէ գայն , ըսի թո՛թովելով , վա-
սըն զի կզգայի արտասուացս սրտէս աչերուս
մէջ ելնելը ի յուշ այդ աւանին ուր այնքան
բարեբաւանիկ եղեր էի , և մտածելով որ Մար-
դարիտա յինէ յիշատակ մ'առնենալ ուզեր էր՝
զիս յիշելու համար :

Եթէ նայն միջոցին ներս մտած ըլլար , ուսիցն
առջին կ'ինկնայի , և վրէժ խնդրու թեան առա-
ջադրութիւններս խկոյն կ'անհետանային :

— Հիմա շա՛տ փոխուած է , յարեց և ըսաւ
Յրիւտանա . զրեթէ չքնանար . պարահանդէս
կ'երթայ , կ'ընթրէ և քիչ մ'ալ կ'արբենայ :
Նորերս ընթրելէն յետոյ ութ որ յանկողին
մնաց . և բժիշկն սաք ելնելու հրաման տալուն
սկս' դարձեալ սկսեց մահառիթ կենցաղաւա-
րութիւնը շարունակել : Պատի երթա՞ս զինքը
տեսնելու :

— Ինչո՞ւ երթամ . զքե՛ղ տեսնելու համար
միայն եկայ , որովհետեւ դու՛ միշտ ինձ հետ
բարեօրատութեամբ փարուեր ես . ասկէ դատ
զքեզ Մարդարիտան ճանչելէս առաջ կը ճանն-

չէի : Նորա համանին եղած ըլլալս քեզ կը պարտախմ , ինչպէս նաեւ իրակէ բաժնուիրս ալ , առանկ չէ :

— Չեռքէս եկածն ըրի որպէս զի թողու ըզքեզ , կարծեմ թէ ասեմ անցնելէն յետոյ շրնորհակալ կ'ըլլաս ինձ :

— Արկին երախտապարտ եմ , ըսի ոտք ելնելով , վասն զի այդ կիներ կը տաղադրացու նկըղիս՝ ըսածներս ճշմարիտ կարծելով :

— Ի՛նչ , կ'երթա՞ս :

— Այո՛ :

Քաղածս իմացեր էի :

— Ե՞րբ մէկ մ'ալ կը աւեսնուիր :

— Ընդ հուսլ . բարեա՛ւ մնամ :

— Երթա՞ս բարեալ :

Բարեալս մինչև դ.ու.ու.ն ընկերեց ինձ :

Ի տունս մտայ կատաղութեան արտասուք հոսելով ու վրէժխնդրութիւնս յաղեցունելու կարօտութիւն զգալով :

Քրեմն արդեամբ Մարդարիտա ուրիշ աղջկանց համանման է եղեր . ուրեմն նորա իմ վրայ ունեցած սէրն՝ անցեալ կենցաղավարութիւնը վերտփին ձեռք ձղելու , կառք մ'ունենալու և շուայտութիւն ընելու կարօտութեան հետ չէր կրցած մարտիլ ի նմա :

Սնքուն վիճակիս միջ այսպէս կը մտածէի , իսկ եթէ կեղծած անտարբերութեանս չափ տաղ արեամբ խորհէի , կը աւեսնէի որ Մարդարիտա այդ աղմկալից կեանքը վարելով կը յուսար մշտատե մտածութիւն մը , յարանորոգ յիշատակ մը մտքէն ՚ի բաց հաղածել :

Գծբախտաբար չար կիրքը տիրելով յիս՝ այդ չէզ աղջիկը տանջելու հետք մը կը խնդրէի :

Արչա՛ւի մարդս անարդ ու նուաաս կ'ըլլայ ե-
զեր՛ երբ իւր դորաւոր կիրքերէն մին վիրա-
ւորուի :

Այդ Ափսնայիան , զոր իրեն հետ տեսեր էի ,
էր , եթէ ոչ Մարգարիտայի բարեկամուհին , գէթ
այն կինը՝ որոյ տունը կը յաճախէր ի Քարիզ
դառնալէն յետոյ : Պարահանդէս մը պիտի
տրուէր նորա տունը , և գիտնալով որ Մար-
գարիտան ալ հան պիտի երթար , ջանացի զիս
հրաւիրել տալ , ու յաջողեցայ :

Երբ որ իմ ցաւալի յուզմամբքս լի՛ դացի հոն ,
արդէն հանդէսը շատ բորբոքած էր : Ար պա-
րէին , կ'աղաղակէին ևս , և «դատրիլի» մը մէջ
տեսայ Մարգարիտայի պարելը Ն. Ասմին հետ
որ խրոխտալով այդպիսի հոմանոյշ մ'ուներնա-
լուն վրայ՝ կարծես ամենուն «Սյա կինն իմն
է» , ըսել կ'ուզէր :

Գացի կրակարանին կռթնեցայ՝ դէմ յանդի-
ման Մարգարիտայի , ու պարելը կը դիտէի :
Զիս տեսնելուն պէս այլայլեցաւ . իսկ ևս ձեռ-
նով ու աչերով անտարբերութեամբ բարեկցի
դինքը :

Երբ կը մտածէի թէ պարահանդէսէն վեր-
ջը , ոչ ինձ , այլ այն անասակ մարդուն հետ
պիտի սեկնէր , երբ կը յիշէի ինչ որ պիտի հե-
տեէր նոցա ՚ի տուն երթալն յետոյ , արիւնու
գլուխս կը վազէր , և նոցա արսիանքը խառ-
վելու կարօտութիւնը կը տոչորէր զիս :

Պարէն վերջը դացի ողջունեցի տան տիրու-
հին , որ հրաւիրելոց առջին կը պարզէր իւր
փառաւոր ուսերը և ակնախառնի պարանոցին
կէսը :

Այդ աղջիկը Մարգարիտայէն ալ աստուի

դեղեցիկ էր : Չայս առեցի աղէկ խնացայ՝ Անխա-
պիային հետ խօսած ատենս Մարգարիտայի
սորա վրայ նետած մի քանի ակնարկներէն :
Ո՛վ որ այդ աղջկան հոմանին ըլլար՝ Ն. Կով-
սին սէս կրնար խորխտալ . և նա՛ իւր գեղու-
վը Մարգարիտայի շափ կրնար սիրուիլ :

Այն ժամանակ հոմանի շունենարուն պատ-
ճառաւ՝ դժուար չէր հոմանին ըլլալ , եթէ բա-
ւական ոսկի ունենայիր զանի գրաւելու հա-
մար :

Սուաջագրեցի այդ կինը հոմանոյչս ընել :

Եւ հետամտութիւնս՝ Ախնապիային հետ պա-
րելով սկսեցի :

Կէս ժամէն վերջը Մարգարիտա դիակի մը
սէս գունասթափ՝ մաշկեակը դրաւ ու պարա-
հանդէսէն մեկնեցաւ :



ԻԴ.

Յրաժս գէշ չէր՝ բայց բաւական չէր :

Այդ կնկան վրայ ունեցած իշխանութիւնս
դիտնարով վատութեամբ այնու զեղծայ :

Երբ կը մտածեմ հիմա՝ մեռնելէն յետոյ, նմա՛ն
ըրած չարեացս վրայ , կը հարցունեմ ինքնիքե-
նրս թէ արդեօք Աստուած սխալի ներէ՞ ինձ :

Աղակալից ընթրիքէ մը վերջը՝ խաղալ սկս-
եցի :

Ախնապիային քովը նստայ , ու մեծ յանդգ-

նախեւամբ խաղալով՝ ուշադրութիւնը դրաւ եօ-
շի : Յետ առկաւ միայ շահեցայ 200 լուղովի-
կոս ոսկի , զոր անդանին միայ ցոյց կ'ընէի ,
և որոց միայ աչերը զանկութեամբ կը տնկէր :

Եւ միայն ամէնուն մէջէն խաղին բնաւ չը
մտածելով՝ նորա միայ կը խորհէի : Բոլոր գի-
շերն ես միայն շահեցայ և դարձեալ ես նմա-
արծաթ տուի խաղը շարունակելու համար ,
որովհետեւ առջին և հաւանականապէս տանը
մէջ ունեցած ամէն արծաթը կորուսեր էր :

Ս. աւուօտեան ծամը հնդին մեկնեցանք :

Երեք հարիւր լուղովիկոս ոսկի շահեր էի :

Ամեն մարդ մար իջեր էր , ես միայն սուսմայ
մէկուն իմանարուն վեր մնացեր էի , որովհետեւ
այն մարդկան մէջ ծանօթ չունէի :

Ուխտակիան անձամբ ճրայը կը բռնէր , և մինչ-
դեռ ես ալ այլոց պէս վար պիտի իջնէի , դար-
ձայ ու ըսի իրեն .

- Խօսք ունիմ քեզ :
- Վաղը , սխառասխանեց :
- Ա՛յ , հիմա :
- Ի՛նչ պիտի ըսես :
- Կը ս.եանես :

Սենեակը մտայ ու ըսի .

- Խաղին մէջ կորուսիր :
- Այո՛ :
- Բոլոր ունեցած նե՞րդ :

Երբ երկմտիլը տեսայ յարեցի ու ըսի .

- Ստոյգն ըսէ :
- Այո՛ , այդպէս է :

— Իսկ ես շահեցայ երեք հարիւր ոսկի , զոր
քեզ կուտամ եթէ՛ ուզես այս դիջեր վիս տու-
նդ . ստահել :

Եւ այս խօսքերն ըսելով՝ ոսկիները սեղանին
սրայ նետեցի :

— Ինչո՞ւ համար այս առաջարկու թիւնը կ'ըս-
եսու ինձ :

— Զարմա՛նք , դքեզ սիրելաւ համար :

— Այնպէս չէ , զՄարգարիտաւ սիրելաւ հա-
մար՝ իմ համանիս երևելով՝ կը խնդրես իբրև
վրէժդ լուծել : Սիրելիս , ինձ պէս ազջիկ մը
ունա ջխտաւիր , դժբախտաբար եւս աակա-
ւին յոյժ մանկամարդ ու յոյժ գեղեցիկ ըլլալու
պատճառաւ՝ առաջարկու թիւնը կը մերժեմ :

— Ռասա չե՛ս ընդունիր :

— Այո՞ :

— Ժամանակ անցնելէն յետոյ դիս ձրի սիրել
կուղես , բայց այն ատեն ալ ես կը մերժեմ :
Մտածէ՛ , սիրեցեալդ իմ Ախմայիս , եթէ իմ
չողմանէս մէկը յուզարկէի ձեզ երեք հարիւր
սկւով և առաջարկած պայմաններովս , ան-
տարակոյս կ'ընդունէիր : Աւելի լաւ համարե-
այ քեզ հետ օղղակի բանակցիլ : Առանց իմ
պայէս գործելուս պատճառներուն նայելու ,
ընդունէ՞ք , գեղեցիկ ըլլալուդ համար՝ հա-
մանիդ ըլլալս գարնանը շտապաւոր :

Մարգարիտաւ ալ Ախմայիսին պէս պահճու-
կին մ'էր , ասկայն զանի առաջին անգամ
տեսնելուս չէի կրնար Ախմայիսի ըսած իրա-
քերս նմա ըսել , վասն զի կը սիրէի զՄարգա-
րիտա , և նշմարեր էի ի նմա այնպիսի բնազ-
դումներ , յորոց դիրկ էր Ախմայիսն , և այդ-
տակն առաջարկած ատենս՝ կը գարջէի այն ան-
ձէն , որոց հետ պիտի կատարէի զայն :

Արջապէս ընդունեց , ինչպէս որ յայտնի է ,
և կէս օրս անէն ելաց նորս համանին եղած :

բայց անկողինը թողուցեր էի յիշատակը նորա
դո՛ւսանաց որովք ծածկեր էր զիս , և սիրալիք
խօսքերուն՝ զոր ըսեր էր ինձ վեց հաղար Ֆր-
րանդի համար :

Եւ սակայն այդ կնկան համար շատերը ըս-
տացուածքնին վատներ էին :

Հոյն օրէն 'ի վեր սկսեցի ամէն վայրկեան
տանջել զՄարդարիտա : Ալիմսլիան և նա ա՛լ
իրարու հետ տեսնուիլը դադրեցուցին . պատ-
ճառն ալ յայտնի է : Կոր հոմանոյշիս կառք մը
և անանահապ զարդեր տուի , խաղացի , և մի-
ով բանիւ ըրի ամեն տեսակ յիմարական դոր-
ժեր , զոր կարող է կատարել Ալիմսլիայի տէս
չքնադագեղ կնկան մը համանին ըլլողը : Իմ
նոր տարիանացս համբաւն իսկոյն ամենուրեք
տարածուեցաւ :

Երիւտանան անդ ամ խառնուելով կարծեց թէ
բարբոսին մտցեր եմ զՄարդարիտա : Իսկ ա-
ռի , կամ ըրածներուս պատճառը դուշակելով
կամ այլոց նման խառնուելով իրեն ըրած նա-
խատանացս ազնուութեամբ կը պատասխանէր :
Միայն՝ մշտակիր կը թուէր ինձ , վասն զի ուր
որ հանդիպէի իրեն՝ առաջուրնէ աւելի դու-
նաթմափ և աւելի տխրադէմ կը տեսնէի զինքը :
Իմ նորա վրայ ունեցած սէրս այնքան դայրա-
ցեր էր՝ որ յատելութիւն փոխակալ կը համարէի
դայն , և կ'ուրախանայի Մարդարիտայի կրած
հանապաղորդ կրած ցաւերը տեսնելով : Յա-
ճախ , անվայել անդ թուեթիւն մը դորժելէս յե-
տոյ՝ Մարդարիտա աչերը այնպիսի աղերասկան
կերպով վրաս կը վերցունէր որ ըրածիս վրայ
եւ ալ կ'ամաչէի և ներումն խնդրել կ'ուզէի :

Բայց այն զղջումները կայծակի արագութեամբ

կ'անցնէին . իսկ Ախմալիա , անձնասիրութիւնը մէկդի թողլով՝ հասկցեր էր որ եթէ Մարգարիտան վշտացունէ ամէն ուզածը յինէ կ'ընդունի , ուստի զիս անդադար նորա գէմ կը գրգռէր , և առիթը գտնելուն պէս կը ծաղրէր զանի՝ էրիկ մարդէ մ'իշխանութիւն առած կնկան հաստատուն վատութեամբը :

Հուսկ ուրեմն Մարգարիտա ոչ պարահանդէս և ոչ ալ թատրոն կ'երթար՝ Ախմալիայի և ինձ չըհանդիպելու համար : Սոյն տոտեն՝ ուղղակի լրբութեանց յաջորդեցին անանուն թղթերը յորս Մարգարիտայի վրայօք ամեն անթաղի բաները պատմել կուտայի հոմանոյշիս և կամ ես անձամբ կը գրէի :

Իենդ . ըլլալու էի այս բաներս ընելու համար : Ար նմանէի յորի գինիով արբեցեալ մարդու մը , որ ջղային գրգռութիւն մ'ունենալով ձեռնը ոճիր մը կը գործէ առանց իւր մտաց գործակցութեան : Սակայն և ես վշտօք կը տառապէի :

Մարգարիտայի իմ ամէն յարձակմանցս առանց արհամարհանաց և անարդանաց՝ հանդարտութեամբ ու վայելչութեամբ դէմ դնելը տեսնելով յինէ գերադանց կը համարէի զինքը , և այս պատճառաւ առաւել ևս կը դայրանայի :

Երեկոյ մ'Ախմալիա չգիտեմ՝ ո՛ւր երթալով հանդիպեր էր Մարգարիտայի , որ այս անդամ ալ շնորհք չէր ըրած զինքը նախատող անմիտաղջկան . այնպէս որ ասի ստիպուեր էր տեղի տալ : Ախմալիան կատաղած ի տուն դարձեր էր , իսկ Մարգարիտան մարած տարեր էին :

Տունն երթալուս պէս Ախմալիան պատմեց

ինձ դիմէն անցածը , և ըսաւ թէ Մարգարի-
տան զինքը մինակ տեսնելով՝ ուզեր էր իրակ-
վիշտ լուծել իմ հարձա ըլլալուն համար , և ըս-
տիպէց զիս Մարգարիտայի դրով խնայունել
որ ես հետը ըլլամ չըլլամ յարդէ իմ սիրած
կինս :

Հարկ չէ ըսել որ հաւանեցայ ու նոյն օրը
Մարգարիտային դրեցի թուղթ մը յորում ա-
մէն իմ դիտցած անօթալից , կծու և անդուժ-
խօսքերս գումարեր էի :

Ս'լ այս անդամ հարուածը յոյժ զօրաւոր ըլ-
լալուն հէդ աղջիկը շիրցաւ անբարբառ հան-
դուրժել :

Եւ դիտնալով թէ պիտի պատասխանէր՝ միա-
քըս դրի բոլոր օրը տնէն չ'ելնել :

Ժամը երկուքին դուռը դարնուեցաւ , ու Տը-
րխատանս ներս մտաւ :

Մնասրբեր կերպարան մը կեղծել ջանալով
այցելութեան պատճառը հարցուցի . բայց այն
օրը Տիւվէրնուա տիկինը դուարթերես չէր , և
դորոված ձայնով ըսաւ թէ ի Տարիզ դառնալիս
այսինքն երեք եօթնեկէ 'ի վեր , Մարգարիտան
փտացունելու համար առիթ մը ձեռքէ չէի
փախուցած , որով հիւանդացեր էր , ու առջի
օրուան կռիւն ու իմ առաւօտը դրած նամա-
կըս յանկողին ձգեր էին զինքը :

Միով բանիւ Մարգարիտա , առանց մեղա-
դրելու զիս՝ շնորհք կը խնդրէր յինէն , ըսելով
միանգամայն թէ իրեն ըրածներս կրելու հա-
մար ոչ բարոյական և ոչ ալ նիւթական դորու-
թիւն ունի :

— Թո՛ղ կօթիկ օրիորդը , ըսի Տրխատանսին ,
համբէ զիս տնէն , այսմ ըսելիք չունիմ , իւր

իրաւունքն է • բայց չեմ կրնար թողլ ասլ որ
իմ սիրած կինս , իմ համանոցս նախատէ :

— Բարեկամս , անմիտ և անզգայ աղջկան
մ'աղղեցութեան զերի եղեր ևս , սքաւաս-
խանեց Բրիւտանս՝ զանի սիրելու զ համար ան-
պաշտպան կին մը չսարտիս ասնջել :

— Թո՛ղ Աթիլի օրիորդն իւր Ն • կումսն ինձ
տուարէ , և կռիւը կ'աւարտի :

— Գիտես որ շհաւանիր : Ռեստի , սիրեցեալ
Արմանս , հանդարտ թող զինքը , եթէ մէկ մը
տեսնես զանի՝ կ'ամչնաս իրեն հետ այդպէս
վարուելու զ վրայ : Յար դժգոյն է , միշտ կը
հաղայ , ա՛լ շատ չկրնար ապրիլ :

Եւ Բրիւտանս ձեռնը կարկառեց՝ յարելով .

— Ե՛կ , տես զինքը • այցելութիւնդ կ'երա-
նաւետէ զինքը :

— Զեմ ախորժիր Ն • Պարտնին հանդիպիլ :

— Ն • Պարտնն ա՛լ հիմա չգար , վասն զի
Մարգարիտա նորա տեսութեանը չկրնար հան-
դուրժել :

— Եթէ Մարգարիտա զիս տեսնել փափարի ,
ո՛ւր նստիլս քաջ գիտէ , թո՛ղ հրամայէ • բայց
ես տ'Անթիէն փողոցը ոտքս չեմ կոխեր :

— Աղէկ ընդունելութիւն կ'ընե՞ս նմա :

— Անտարակոյս :

— Ռեստի գալուն վրայ ապահով եմ :

— Թո՛ղ գայ :

— Այսօր դուրս սլիտի ելնե՞ս :

— Ամբողջ երեկոյն ի տուն եմ :

— Երթամ իրեն իմացունեմ :

Բրիւտանս մեկնեցաւ :

Ախմայիային շղթեցի որ պիտի շտեմնեմ զին-
քը , վասն զի այն աղջկէն բնառ չէի տկնամներ :

Եօթնեկի մէջ հաղիւ զիշեր մը նորա հետ կ'ան-
ցունէի : Աարծեմ չգիտեմ որ թաարունին զե-
րասանի մը հետ կը մխիթարուէր :

Ճաշելու համար դուրս ելայ , ու գրեթէ ան-
միջապէս 'ի տուն վերդարձայ :

Տանս մէջ ամէն տեղ կրակ . վառել տակն
յետոյ՝ Յովսէփը ճամբեցի :

Զեմ կրնար նկարագրել ժամ մը սպասելու
ատենս յողնախուռն տալաորութեանց զիս
տակն ու վրայ ընելը . բայց երբ ժամը իննին
դռան դարնուիլը լսեցի , ամէնը մէկէն այն-
պիսի սաստիկ այլայլութեան մը համառօտե-
ցան , որ դուռը բանալու ժամանակ՝ չինկնա-
լու համար՝ ստիպուեցայ սլատին յենուլ :

Բարեբախտաբար ներքնասենեակը մութ ըլ-
լալով՝ դէմքիս այլայլութիւնը չէր տեսնուէր :

Մարդարիտա ներս մտաւ :

Սեւեր հաղած էր , ու երեսին վրայ քօղ մը
ձգեր էր :

Ախտուածին տակէն երեսը հաղիւ կը տես-
նուէր :

Արահն անցնելով՝ քօղը հանեց :

Մարմարիտնի պէս դեղնած էր :

— Ահաւասիկ եմ , Այսման , ըսաւ . փափա-
քեր էիր զիս տեսնել , ուստի եկայ :

Եւ գլուխը ձեռներուն մէջ ծածկելով՝ ըս-
կսեց արտասուել :

Իրեն մերձենալով՝

— Ի՞նչ ունիս , ըսի այլայլած ձայնով :

Անրարբաւ՝ ձեռնս սեղմեց , որովհետեւ ար-
տասուքը տակաւին կը խեղդէին ձայնը :

Բայց քիչ մ'ատեն վերջը սակաւիկ մի հան-
դարտելով ըսաւ .

— Շատ մշտացուցիր դիս, Արման, ես քեզ
ի՛նչ ըրեր էի :

— Ի՛նչ ըրեր էիր, հարցուցի դառն ծովի-
տով :

— Միայն զայն՝ զոր իրաց հանգամանքները
ստիպեցին դիս գործելու :

Չգիտեմ թէ արդեօք կենացդ մէջ զգացեր
ես կամ պիտի զգաս ի՛նչ որ ես կ'իմանայի ըզ-
Մարգարիտա տեսնելով :

Տունս վերջին անգամ եկած ատենը նստեր
էր նոյն տեղը, ուր որ հիսա կը բազմէր, մի-
այն թէ այն ատենէն ի վեր ուրիշի մը հոսա-
նոյն ըլլալով՝ օտար շուրթներ մատչեր էին
նորա շուրթներուն՝ յոր տկամայ կը ձգէին ի-
միններս ալ, և սակայն կ'իմանայի որ ամեն
ատենէն աւելի դուցէ կը սիրէի զանի :

Այլ, դժուարին էր ինձ գալստեանը մրայօք
խօսք բանալ : Անշուշտ Մարգարիտա զայս ի-
մանալով կրկնեց անդրէն և ըսաւ .

— Արման, դքեզ տաղակացունելու համար
եկայ, վասն զի երկու բան պիտի խնդրեմ
քենէ . նախ և առաջ երէկ Ալիսպիա օրիորդին
ըսած իս համար ներումն, երկրորդ՝ շնորհք մը
կը հայցեմ այն բանին համար զոր դուցէ տա-
կաւին մատուցանես ինձ : Արմայ կամ տկամայ
դարձէր ի վեր այնքան մշտացուցիր դիս որ
մինչև այս առաւօտ կրած տառապանացս քա-
ւորդին չեմ կարող տանել հիսա : Աղորակ՝ ինձ,
Արման, և գիտնաս որ այնուասիրտ մարդու
մը կան ուրիշ աւելի վատաւոր բաներ գործել-
լու քան թէ ինձ պէս հիւանդոտ և տարաբաղդ
կինէ մը վրէժ լուծել : Նայէ՛, բունէ՛ ձեռնս,
տեսնդ ունիմ, անկողնէս ելեր եկեր եմ ոչ բա-

քեզամեթիւնդ՝ այլ անտարբերութիւնդ խնդրելու համար :

Արդեամբ ձեռնք կ'այրէք , և խեղճ կիներ կը սարսուէք թաւիչէ մեկնոցին տակ :

Արակին մերձեցուցի զաթոռն՝ ուր նստեքէք :

— Կարծես ես ալ չվշտակրեցայ , կրկնեցի , այն գիշերը , յարուսի՛ ի գիւղ սպասելէ , ո յետոյ՝ ի Բարիդ եկայ զքեզ խնդրելու համար ու զըստայ միայն թուղթը որ քիչ մնաց զիս պիտի խենդեցունէք : Ինչպէ՞ս կրցար խամիել զիս , Մարգարիտա , ես որ այնչափ կը սիրէի զքեզ :

— Այս բանիս վրայ չխօսիմք , Արման . ես ուրիշ բանի համար հաս եկայ : Զքեզ իբր թըշնամի չուզեցի տեսնել , այլ փախաքեցայ վերջին անգամ մ'ալ գձեռնդ սեղմել : Ռենիս մանկամարդ . ու գեղեցիկ հումանոյշ մը , զոր կը սիրես , կ'ըսեն . նորա հետ երջանիկ եղիւր , ու մտոցի՛ր զիս :

— Իսկ դու , անշուշտ երջանիկ ըլլալու ես :

— Բարեբաւտ կնկան կերպարան ունի՞մ , Արման : Մի՛ ծաղր ընէք իմ վիշտերս , դու որ նոցա պատճառն ու ստատիութիւնը քաջ գիտես :

— Քեզնէ միայն կը կախուէք դժբախտ չըլլալ , եթէ ըսածիդ համեմատ թշուառ ես :

— Ո՛չ , բարեկամս , իրաց հանդամանքներն իմ կամքիս յողթ եցին : Հնազանդ եցայ ես , ոչ իմ աղջկան բնաղդ մանցս , յոր ահնարիկէ կը խնդրես՝ այլ անհրաժեշտ հարկի մը և այնպիսի գորսուոր պատճառներու զոր օր մը դիտնալով պիտի ներես ինձ :

— Ինչո՞ւ հիմա այն պատճառները չես յայտնէր ինձ :

— Արտփհեռե շեն կրնար զմեզ դարձեալ մի-
այտենել, և դուցէ կը հեռացունեն զքեզ այն-
պիսի անձերի, յոյոց պէտք է հեռանաս :

— Ո՞վ են նորա :

— Չեմ կրնար ըսել :

— Արեմն կը ստեա :

Մարդարիտա յանենլով՝ դէպ 'ի դուռն ըս-
կաւ երթալ :

Չէի կարող առանց գորովելոյ տեսնել նորա
անբարբառ կրած ցաւերը, և երբ կը համե-
մատի յիս այդ այլադունեալ և արտասուս-
թոր կիներ՝ այն զուարթ երես աղջկան որ ծաղ-
րեր էր զիս ի նուագ ակնարն :

— Ախրի շերթա, ըսի դուան առջին կե-
նարով :

— Ինչո՞ւ :

— Արտփհեռե քու ինձ պատճառած վշտե-
րովն հանդերձ կը սիրեմ զքեզ, և կուզեմ ի-
տունս պահել զքեզ այս դիշեր :

— Արախ ո՞ր վաղը հալածես զիս, անանկ
է՞: Ա՛յ, անկարելի է այն : Մեր բախտերը
դատուած են, 'ի դուր ջնանանք զայնս դարձ-
եալ միացունել, դուցէ այն ատեն անարդեա
զիս, մինչ հիմա ատել միայն կրնաս :

— Ա՛յ Մարդարիտա, ազադակեցի զգալով
յիս, 'ի տես այդ կնկան, տարփանքիս և ցան-
կութեանս դայրանալը, ո՛չ, ամէն բան կը մոռ-
նամ, և երջանիկ կըլլամք, ինչպէս որ յառա-
ջագոյն յուսացեր էինք :

Մարդարիտա՝ ի նշան ասորակութի՝ գլուխը
չարժեց և ըսաւ .

— Չե՞մ ես գերիդ, շունդ . ի՞նչ որ կ'ու-
զես՝ ըրէ զիս, մ'ա զիս, քուկդ եմ :

Եւ քակեցնոցն ու զգլխարկը հանելով դա-
նարէին վրայ նետեց, ու սկսաւ փութով խա-
րեգօտին իրանին կարթերը քակել, որովհե-
տե իւր հիւանդութեան յաճախողէսլ յետա-
շրջութեամբ մը՝ արիւնը սրտէն գլուխը կ'ել-
նէր ու կը խեղդէր զինքը :

Չոր և կարուկ հազ մ'ունեցաւ :

— Ըսել տուր կառապանիս, կրկնեց, որ
կառքս տանի :

Սնճամբ վար իջայ ու ճամբեցի մարդը :

Երբ ներս մտայ, Մարդարիտաս կրակին առ-
ջին տարածուած էր, ու ակռայները ցրտէն
կը կափկափէին :

Բազկացս մէջ առնելով հանուեցուցի ու յան-
կողինը տարի զինքը. անշարժ ու պաղած էր :

Յայնժամ քովը նստայ ու ջանացի գգուանք-
ներովս տաքցունել զանի: Անբարբառ կը ժպտէր
ինձ :

Քանի՛ տարօրինակ կերպով անցաւ այն գի-
շերը : Կարծես Մարդարիտայի բոլոր կենդա-
նութիւնն անցեր էր իւր համբոյրներուն մէջ,
որովք ծածկէր զիս, և իւր սատակ ու ջերմ-
նոտ սիրոյն մէջ այնչափ կը սիրէի զինքը որ՝
կ'ուզէի սպանել որպէս զի այլ ոք չստանայ ըզ-
նա :

Եթէ մէկն՝ ամիս մ'այտափախ նխթական և
բարոյական սիրով ապրելու ըլլայ՝ դիակ մը
կը դառնայ :

Առաւօտն երկուքնիս ալ արթնցանք :

Մարդարիտայի դէմքը կապուտակեալ էր
խօսք մը չէր արտաբերէր : Արտասուաց գե-
ղափայլ խոշոր կաթիլներ աչերէն այտիցը վը-
րայ ինկնալով կը կենային : Իւր խոնջեալ բա-

դու կեներք մերթ ընդ մերթ կը պարզէին՝ զիս
բռնելու համար, ու անդոր կ'ինկնային անկող-
նոյն վրայ:

Պահ մը կարծելով որ Պու ժիւլարէն մեկնած
ատենէս ՚ի վեր պատահած բաները կրնամ մտ-
նալ՝ դարձայ ու ըսի.

— Կուզե՞ս Բարիդէն ելնենք երթանք:

— Ա՛յ, ո՛չ, պատասխանեց գրեթէ սարսա-
փելով, շատ դժբաղդ կ'ըլլանք, ես քու բա-
րեբաատութեանդ ա՛լ չկարեմ ծառայել, բայց
մինչև մահս քու հաճոյիցդ գերին պիտի ըլլամ:
Սուր կամ գիշերուան ո՛ր ժամուն որ ուզես,
ե՛կ, քու կողմ կ'ըլլամ. բայց քու ապագայ կեանքդ
մի՛ ընկերացուներ իմ կենացս հետ. երկուքն իս-
պալ շարարտատ կ'ըլլանք:

Տակաւ ինքիչ մ'ատենուան համար դեղեցիկ
աղջիկ մ'եմ. օգուտ քաղէ, այլ ուրիշ բան մի
խնդրեր:

Մեկնելէն յետոյ՝ սարսափեցայ առանձնու-
թենէն՝ յոր թողեր էր զիս. երթալէն եր-
կու ժամ վերջը տակաւին նորա լքած անկող-
նոյն վրայ նստեր՝ սնարքին վրայ գլխոյն ձեին
դրոշմեայ ծաղածները կը նկատէի, և կը մը-
տածէի թէ ես ի՛նչ պիտի ըլլայի սիրոյս ու
նախանձիս գերի եղած:

Ժամը հինգ ինն տ' Յնթէն փողոց դացի՝ սուտոյ
հոն ընկիքս դիտնալու:

Հանին բացաւ դուռը:

— Տիկինը չկրնար դձեղ ընդունել, ըստ
տաղնապով:

— Ինչո՞ւ:

— Վասն զի Ն. կոմսը վերն է, և տիկինը
պատուիրեց որ մարդ ներս չառնում:

— Իրաւունք ունիս , ըսի թո՛թ օվելով , մտոցեր էի :

Արբեցեալ մարդու սխա տունս վերադարձայ , և գիտես ի՛նչ ըրի կտտադի նախանձիս մէջ՝ որ ընկելք անվայել վարմանս կատարմանը կը բաւէր : Ըսի ինքնիրենս թէ այդ կինը կը խափէ զիս . միտքս կը բերէի որ է . կտտաին հետ դրախ գլխի տուած տոտնձին խօսած ատենը , ստջի գիշերն ինձ ըսած խօսքերը կը կրկնէր նմա . ուստի հինդ հարիւր ֆրանքի թղթադրամ մը դրկեցի՝ այս հետեւեալ տոմսով .

Այս առաւօտ այնչափ փութով մեկնեցար , որ չկրցի գիշերուանդ գինը վճարել , ուստի հիմա կը դրկեմ զայն :

Այս նամակը դրկելէս յետոյ դուրս ելայ , որովէս զի այդ թշնամանքն ընկուս համար խիղճս խկոյն չտանջէ զիս :

Ախմայիային դացի , որ պարեգ օտներ կը փորձէր , և երբոր մինակ մնացինք՝ անվայել երգեր նուագեց՝ զիս զուարթացունելու համար :

Սի՛ անտախթ , անդգայ և անմիտ օրունկի ճշգրիտ օրինակն էր , գէթ ըստ իս , վասն զի կարելի էր որ այլ սք նոյն երջանկութիւնը գտնել երազած ըլլար նորս հետ , ինչպէս ես բարեբաւասիկ ըլլալ երանք էի Մարգարիտայի հետ :

Արժաթ խնդրեց , ես ալ տուի , ու ինքզինքս ազատ համարելով ի տունս վերադարձայ :

Մարգարիտա պատասխան չէր գրած :

Անօգուտ է ըսել թէ երկրորդ օրը սաստիկ յուզմանց մէջ անցուցի :

Ժամը վեց ու կէսին բանքեր մը բերաւ ինձ

Տրար մը յոր կային գրած նամակա ու հինգ
հարիւր Քրանքի թղթադրանք՝ առանց ուրիշ
պատասխանի :

— Ո՞վ տուաւ քեզ զայս , հարցուցի մարդուն :

— Տիկին մը , որ իւր սենեկապան կնկան
հետ ի Պուլօները կ'երթար , և ապապրեց որ
կտրքերնին բակէն դուրս ելնելէն յետոյ քե-
րեմ ձեզ այս ծրարը :

Իսկոյն Մարգարիտայի տունը վազեցի :

— Տիկինն այսօր ժամը վեցին ճամբայ ելաւ
յԱնդղիա երթալու համար , պատասխանեց
դռնապանը :

Ա՛լ ՚ի Բարիդ մնալու պատճառ չունէի , ոչ
սէր և ոչ ատելութիւն , և կրած խռովութիւն-
ներէս յոյժ յողնած ըլլալու համար որոշեց-
մեկնիլ : Բարեկամներէս մին յարեւրս ուղևոյ
բութիւն պիտ' ընէր , գացի յայտնեցի հօրս նո-
րա հետ երթալու փափաքս . փոխանակագիր-
ներ , յանձնարարական թղթեր տուաւ ինձ ,
և ութ օրէն վերջը Մարտիիայէն ճամբայ ե-
լանք :

Աղէքսանդրիոյ մէջ լսեցի Մարգարիտայի
հիւանդանալը՝ դեսպանատան պաշտօնեայնե-
րէն մէկէն , զոր երբեմն Մարգարիտայի տունը
տեսեր էի :

Յայնժամ թուղթ մը գրեցի նմա , որոյ պա-
տասխանը կարդացիր և զոր ի թուլօն ընդու-
ներ էի :

Իսկոյն ճամբայ ելայ . մնացածը գիտես :

Հիմա կարդալու ես թիւի Տիւփրային ինձ
տուած թղթերը , որք իմ պատմած պատմու-
թեանս ամբողջութեանը անհրաժեշտ կարևոր
են :

Մրման յողներով այս երկարատև պատմութեամբ, զոր յաճախ արտասուքն ընդհատեր էին, ձեռները ճակտին վրայ դրաւ՝ խորհելու կամ քնանալու համար՝ Մարդարիտայի դրամ թղթերն ինձ տալէն յետոյ :

Քիչ ատենէն վերջը շնչառութեան երազաւարը լսելով իմացայ որ Մրման կը քնանար, բայց այն թեթև քնով զոր դոյզն շուկ մը կը խռովէ :

Ահա կարդացի հետեւեալները, զոր առանց բառ մ'աւելցնելու կամ պակասեցունելու օրինակեցի .

«Մյսօր դեկտեմբերի 15ն է : Երեք չորս օրէ 'ի վեր հիւանդ եմ, այս առաւօտ անկողնէս չելայ : Երկինքն ամալամած է : Ես ալ տխուր եմ : Քոյս ոչ ոք կայ . քեզ կը մտածեմ, ո՞ր Մրմանիսկ դու, ո՞ր ես այս տողերս գրելուս ծամանակ : Քարիզէն շատ հեռու գացեր ես եղեր և գուցէ արդէն մոռցած ըլլաս զՄարդարիտայ : Ինչ և իցէ կը մաղթեմ որ բարեբաստ ըլլաս, վասն զի քեզ կը պարտիմ կենացս միմիայն բարեբաստիկ վայրկեանները :

«Զկարենալով վարմանս պատճառն իմացունելու փափաքին դէմ դնել՝ թուղթ մը դրամ էի քեզ . բայց ինձ նման աղջկան դրամ թուղթը սուտ կրնայ համարուիլ՝ եթէ մահը իւր կնքովը չվաւերացունէ զայն, և փոխանակ պարզ նամակ մ'ըլլալու՝ խոստովանութիւն մը չըլլայ :

Մյսօր հիւանդ եմ, հիւանդութենէս կըր-

Նամ մեռնից, որովհետեւ միշտ մանկամարդ մեռ
 ներս նախազգացումնը ունեցեր եմ: Մայրս
 հաբժքի աստէն մեռաւ, և ին՝ մինչև հիմայ
 անցուցած կեանքս ալ առաւել ևս զայրացուց
 այդ հիւանդութիւնը, զոր մայրս թողուց ինձ
 իբր մի միակ ծառանդութիւն. բայց մեռ-
 նելէս առաջ կ'ուզեմ զիս արդարացունել, եթէ
 'ի դարձին սակաւին մտածես իմ վրայ, ինչո՞ւ
 ազգիան մը վրայ՝ զոր մեկնելէդ առաջ կը սի-
 բէիր:

Մհաւասիկ այն թուղթը հետեւեալները կը
 պարուծակէր, և զոր ուրախութեամբ դարձ-
 եալ կը դրեմ, անմեղութեանս նոր ցոյց մը
 տարու համար:

«Կը յիշե՞ս, Արման, հորդ դարտեան լուրը
 ո՛րչափ խռովեց զմեզ 'ի Պեժիսալ, կը յիշե՞ս
 նաև այն դարտեան յիս տարաորած սարսափը
 և ձեր երկուքին բանակցութիւնը՝ զոր երեկո-
 յին պատմեցիր ինձ:

«Երկրորդ օրը մինչ 'ի Բարիդ երթալով 'ի զուր
 կ'ստատէիր հորդ, մարդ մ'իրեն կողմանէ թուղթ-
 բերաւ ինձ:

«Սյն նամակին մէջ, զոր այս գրութեանս
 հետ կը պահեմ, Պ. Տիւփալ՝ թախանձանօք կ'ս-
 ղաղէր ինձ որ գքեզ հեռացունեմ և զինքն ըն-
 դուծիմ. ինձ հետ խօսիլ կ'ուզէր, և խաախ
 կ'ապաստէր զայս քեզ շիմացունել:

«Գիտես նաև թէ դառնալէդ յետոյ քանի՞
 ծառութեամբ 'ի Բարիդ մեկնելու յորդորեցի ըզ-
 քեդ:

«Երթալէդ ծամ մը վերջը հայրդ եկաւ: Ան-
 օգուտ է նորա խիտ կերպարանքին յիս ներ-
 դարձած տղաւ որութիւնը նկարագրել: Հայրդ

Հին վարդապետութեամբք լի ըլլալով կարծիք
թէ անառակ կին մը միշտ անդդայ՝ անբան
ու ռակի քաշելու յատուկ մեքենայ մ'է, յար
կազմ ու սլառաստ երկաթի մեքենայներու
նման՝ իրեն բան մը տուող ձեռքը փոքելու
ու անխախտ՝ անողորմաբար պատուելու զանի
որ կը սնուցանէ և կը շարժէ գինքը :

«Հայրդ շատ վայելուչ թուղթ մը գրած ըլ
լալուն համար ընդունեցի գինքը, սակայն սու
ջիս իւր գրածին համեմատ չներկայացաւ: Իւր
սաջի խօսքերուն մէջ մեծամտութիւն, լրբու
թիւն և սպառնալիք անդամ ցուցնելուն պատ
ճառաւ, ստիպուեցայ իրեն հասկցնել թէ տա
նքս մէջ եմ, և թէ իւր որդւոյն վրայ անկեղծ
սէր մ'ունենարուս համար և եթ' կենացս հա
մարը պիտի տամ իրեն :

«Պ. Տիւփալ սակաւ մի մեղմանալով լուս
թէ իւր որդւոյն ինձ համար ստացուածքը
վառնելը չուզէր. և գեղեցկութիւնս գործի մ'ը
նելով երիտասարդի մ'ապաղայն ջնջելու չեմ :

«Սյս խօսքերուս պատասխան ունէի, անանկ
չէ՞, Սրման. այսինքն ցուցնել թէ համանոյշդ
ըլլալէս ի վեր՝ ամէն դրկմունք յանձն առեր էի
քեզ հաւատարիմ մնալու ու կարողութենէդ
վեր քեզնէ արծաթ չուղելու համար : Քստի
ցոյց տուի իրեն «Մոն-ար-Տիէթէ»-ի և այն մարդ
կան ընկալազ իրերը, որոց վաճառեր էի 'ի
դրաւ դնել չկրցած վրերս, խնայուցի նաև
հօրդ՝ կաշ կարասիքս վաճառելու նկատմամբ
բրած որոշումս առանց բեռ մ'ըլլալու քեզ հեա
տաքելու համար : Նկարագրեցի մեր բարե
բախտութիւնը. յայտնեցի վերջապէս աւելի
խաղաղաւէս ու երջանիկ կենցաղավարութիւն

ժը վարելու համար երկնած առաջադրութիւնը՝ զոր հաղորդեր էիր ինձ օ հուսկ ուրեմն խօսքերուս ճշմարտութեանը հաւատարմով՝ ձեռնը կարկառեց ինձ ու ներումն խնդրեց առաջուման ըսածներուն համար :

«Յետոյ ըսաւ ինձ .

«—Տերեմն , Տիկին , ոչ թէ յանդիմանութիւններով ու սպառնալեօք , այլ սղազանօք պիտի խնդրեմ ձեզէ զոհողութիւն մը , որ մինչև հիմա որդւոյս համար ըրած զոհողութիւններէդ շատ աւելի մեծ է :

«Այս յառաջարանը լսելով՝ դողացի :

«Հայրդ մերձեցաւ ինձ ու ձեռներս բռնելով շարունակեց օիրալիր ձայնիւ .

«—Աղջիկս , ըսելիքս դէշ մտքի մ'առնէք . միայն հասկցէք որ մարդ կային կեանքն երբեմն սրտին համար անողորմ հարկեր կուենեայ՝ որոց պարտինք հնազանդիլ : Բարեօիրտ էք , եւ ճօխացեր էք այնպիսի վեհանձնութեամբ , զոր զձեզ անարդող կիները բնաւ չձանչեն : Բայց խորհեցէք նաև զի հոմանոյշին մերձ կը գրտնուի ընտանիքը . թէ տրտմանքէն զատ կան եւ որարարեր . թէ կրից հասակին կը յաջորդէ այնպիսի հասակ մը , յորում մարդս՝ մեծարելի ըլլալու համար՝ հաստատուն վիճակ մ'ունենալու է : Տրդիս անինչ լինելով հանդերձ՝ մօրմէն ժառանգած եկամուտը ձեզ պարզապէս ուղեր է : Եթէ ձեր ըրած զոհողութիւնն ընդունելու ըլլար , պատիւն ու վայելչութիւնը կը պահանջէին որ ի փոխարէն՝ այդ պարգևը բնէր ձեզ՝ որպէս զի չքաւորութենէն վախ չունենար : Բայց այդ զոհողութիւնը չընդունելու է , վասն զի աշխարհս զձեզ չձանչելով՝ նորա

Հառանու թեան անարժան սրտաճառ մը կու-
տայ, որով մեր անունն ալ կ'արասի: Չեն
խորհիր թէ Արման զձեզ կը սիրէ, դուք ալ
զինքը կը սիրէք, թէ այդ փոխադարձ սէրը
զանի կ'երջանկացունէ ու զձեզ կը սրբէ. այլ
դայս միայն կ'ըսեն թէ Արման Տիւփալ Հառա-
ներ է որ պահճու կին մը, ներեցէ՛ք, ալջիկս,
այս անունը և եթ ըսելու ստիպուած ըլլալուս
Համար, իրեն Համար ամէն ունեցածը վաճա-
ռէ: Ասկէ դատ, ապահով եղէք որ ցաւոց ու
մեղադրանաց օրերը գալով, ինչպէս ամէն
մարդու, երկուքնիդ ալ անխղելի շղթայի մը
լուծը կը կրէք: Ի՞նչ կ'ընէք այն ատեն: Չեր
երիտասարդութիւնն անցած ու որդւոյս ալ
ապագայն ի սպառ կորուսեալ կ'ըլլայ. իսկ ես
նորա Հայրը, իմ աղայներէս մէկէն միայն կ'ըն-
դունիմ Հայրակոն սիրոյս փոխարէնը, զոր եր-
կուքէն ալ կը յուսամ ընդունիլ:

Մանկամարդ ու գեղեցիկ ըլլալովնիդ՝ ընդ
Հուդ կը մխիթարուիք. և ազնուասիրտ ըլլալով-
նիդ՝ բարի դորձի մը յիշատակը՝ ձեր անցու-
ցած կեանքին մոլորութիւնները կը մոռցունէ
ձեզ: Վեց ամսէ՛ ի վեր Արման շիշեց զիս՝ ըզ-
ձեզ սիրելուն Համար: Չորս անգամ գրեցի
մի անգամ ևս մտքէն չանցուց ինձ պատասխա-
նել, այնպէս որ եթէ մեռնէի՝ մահս անշուշտ
էր իմանար:

Արշալի որ առաջուան պէս կեանք չվարելու
առաջադրութիւնն ըրած ըլլաք, Արման՝ ըզ-
ձեզ սիրելուն Համար՝ բնաւ չկրնար Հառանիկ
այդ արդեւման՝ որոյ պիտի դատապարտէր ըզ-
ձեզ իւր չափաւոր փիճակը, և որ ձեր գեղեց-
կութեան չղար: Ա՛՛վ գիտէ ի՞նչ կ'ընէր այն

աստեւ : Քիտեմ որ առանց ձեզ խնայուներու
 խաղացեր է . կրնար պահ մը անխորհրդարար
 կորուսնել մէկ մասը խնայած արծաթիս , զոր
 շատ տարիներէ ի վեր կը գիտեմ թէ իրեն .
 թէ աղջկանս օժիտ ընելու և թէ ծերու .
 թեանս աստեւ գիւրութեան մէջ ապրելու հա-
 մար : Ս,յն որ կարելի էր , տակաւին կրնայ
 պատահիլ :

«Ուրիշ բան մ'այ կայ . ապահո՞ւմ էք որ նորա
 համար ձեր դռնէլ ուղած կեանքը՝ դարձեալ
 չհրապուրէ զձեզ : Դուք որ սիրեցիք զանի , ա-
 պահո՞ւմ էք պսուհեաւ զայլ որ բնա չօիրել :
 Միտք բանիւ միթէ պիտի չվշտակրի՞ք ձեր հո-
 մանւոյն կենաց մէջ ձեր սիրոյն պատճառաւ
 հանդիարող խոչընդոտներուն համար , ընդ որ
 չկարենաք դուցէ միսթարել զինքը՝ եթէ տի-
 ոց հետ՝ մառապիրութեան դաղափարները
 յաջորդեն սիրոյ երազներուն : Քաջ խորհեցէք .
 Տիկին , ըսածներուս վրայ : Ար սիրէք զԱրման ,
 ուստի յայտնեցէք ձեր սէրը մի միակ միջոցաւ
 որ տակաւին մնայ ձեզ զայն՝ նորա ապագա-
 յին դռնէլով : Տակաւին ձախորդութիւն մի չէ
 պատահած , բայց կրնայ հանդիպիլ , և դուցէ
 դու շակածէս աւելի ապիտապի ձախորդութիւն
 մը : Արման կրնայ նախանձիլ զձեզ սիրած մար-
 դու մը , զանի մենամարտի հրաւիրել , կառիւ
 նորա հետ և միտք բանիւ մեռնիլ . այն աստեւ
 օրչա՛փ պիտի տառապիք հօր մ'առջև՝ որ իւր
 օրդւոյն կենացը համար հաշիւ պիտի պահան-
 ջէ ձեզնի :

«Արջատիւս , աղջիկս , աստեւ բան գիտնալ-
 նիդ կուզեմ , մասն զի տակաւին աստեւ բան
 չյայտնեցի . խնայէ՞ք ուրեմն ի Քարիդ զայուս

պատճառք : Ըսի թէ դուստր մ'ուենիմ , որ հը-
րեշտակի նման մանկամարդ , գեղեցիկ ու ա-
նարատ է : Ար սիրէ , ու այն սէրը՝ իւր կենացն
ամենէն հեշտովի երազն է : Արմանին արդէն
դրամ էի վայս , բայց ձեզնէ զատ ուրիշ բանի
չմտածելուն համար՝ շտապախանեց ինձ : Հի-
մա դուստրս պիտի ամուսնանայ իւր սիրած
մարդուն հետ , որոյ ընտանիքը պատուաւոր
ըլլալով կուզէ որ իմ ընտանեացս մէջն ալ ա-
մենայն ոք պատուաւոր ըլլայ : Ինձ յիշաց ըլ-
լալու մարդուն ընտանիքը՝ Արմանին 'ի Բարիւր
բռնած ընթացքն խնայալով՝ յայտնեց ինձ թէ
խօսքը ետ կ'առնու թէ որ Արման նոյնպէս
չարունակէ : Չեզ շմեղանչած աղջկան մ'ապա-
գայն՝ որոյ յուսարու իրաւունք ունի , ձեր ձեռ-
քըն է :

«Նորա յոյսն ի դերև հանելու իրաւունք ու-
նի՞ք , կամ կարող կը համարի՞ք զձեզ : Մար-
գարիտա՛ , յանուն ձեր սիրոյն և զղջման , աղջ-
կանս բարեբաւատութիւնը շնորհեցէք ինձ :

«Ասիկ մեջիկ կ'արտասուէի ես , բարեկամս ,
թելով այդ խորհրդածութիւնները՝ զոր յաճախ
մտքէս անցուցեր էի , բայց քու հօրդ բերնէն
եղնելով այդ ճշմարտութիւններն աւելի աղ-
դու կը թուէին ինձ . ինքնիրենս կըսէի՝ ինչ որ
հայրդ ըսելու չէր համարձակեր , և սակայն քա-
նի՛ցս լեզուին ծայրն եկեր էր , այսինքն թէ
ես ուրիշ բան չէի բայց միայն պահճու կին մը
թէ ինչ պատճառանք որ ալ տայի սիրոյս , միշտ
հաշուի կերպարան պիտ'առնուր . թէ այնպիսի
սպառազ մ'երազելու իրաւունք չունէի՝ անցու-
ցած կենացս համար . և թէ այնպիսի պատաս-
խանատուութիւն մը կ'ստանձնէի՝ ընդ որ իմ

ունակութիւններս ու համբաւս երաշխաւոր չէին
 կրնար ըլլալ : Միով բանիւ դքեղ կը սիրէի ,
 Արման : Պ. Տիւվալին հայրական կերպով ինձ
 ըսած խօսքերը , յիս յարուցած անարատ զգա-
 ցումները , այդ պատուաւոր ծերունւոյն մե-
 ծարանքը՝ զոր պիտի շահէի , և քուկդ իսկ՝
 ատեն անցնելէն յետոյ , կը զարթօնցանէին յիս
 այնպիսի աղնիւ , սուրբ և մինչև այն ատեն ինձ
 անձանօթ զգացումներ , ընդ որ կը պարծէի
 դադար և յաջս իմ կ'ազնուանայի . Մտածելով
 որ իւր որդւոյն ապագային համար ինձ աղա-
 շող հայրը՝ պիտի պատուիրէր օր մ'աղջկան՝
 աղօթիցը մէջ յիշել նաև իմ անունս՝ իբր խոր-
 հրդաւոր բարեկամութեոյ մ'անունը , ուրա-
 խութենէս յափշտակեալ կը պարծէի իմ վրաս :

«Նոյն պահուն ունեցած յափշտակութիւնս
 կ'աճեցունէր դուցէ՛ ազդեցութեանս ճշմարտուի
 թիւնը . բայց արդեամբ այս բաները կ'զգայ-
 յիս , ո՛ր բարեկամս , և այդ նոր զգացումները
 կը լռեցունէին յիս՝ քեզ հետ անցուցած բարե-
 բաստ օրերուս յիշատակին թելադրած խոր-
 հուրդները :

«— Քաջ է , տէր իմ , պատասխանեցի , հօրդ
 զարտասուտ սրբելով . կը հաւատա՞ք ձեր որդ-
 ւոյն վրայ ունեցած սիրոյս :

«— Այո՛ , ըսաւ Պ. Տիւվալ :

«— Անչափանդիր ըլլալո՞ւս :

«— Այո՛ :

«— Կը հաւատա՞ք նաև թէ այն սէրն իմ կե-
 նացս յոյսը՝ երազն և ներումն էր :

«— Հաստատապէ՛ս կը հաւատամ :

«— Ռերեմն , տէր իմ , համբուրեցէք զիս ձեզ
 դասեր պէ՛ս , և կ'երդնու՞մ որ՝ այն անարատ

Համբոսցրը սիրոյս դէմ պիտի գորացունէ: զիս և որով ութը օր շանցած քովերնիդ պիտի գառնայ ձեր սրդին, գուցէ քիչ մ'ատեն վշտակրի, բայց յետոյ խալառ կը մոռնայ վիշտերը:

«— Ազնուասի՛րտ աղջիկ, աղաղակեց Հայրըք ճակատս Համբուրելով, ձեր այդ փորձած տառապանքը բնաւ պիտի չմոռնայ Սասուն՝ բայց փախեմ չկարենաք Համոզել զորդիս:

«— Սարահով եղէք, տէր իմ, պիտ'ատէ զիս: Մեր երկուքին մէջ բարձր պատ մի քաշելու էր:

«Սասնի Բրիւտանսին գրեցի որ Ն. Առնսին տառաջարկութիւնները կ'ընդունիմ, և խնայուցի նաև թէ երեկոյն երկուքին հետ պիտի ընթրեմ:

«Անքեցի թուղթս և սուանց դրածս հօրդ ի մացունելու՝ իրեն յանձնեցի որպէս զի Բարիդ Հասնելուն պէս զրկէ զայն:

«Բայց մինչ ինքը հարցուց ի'նչ դրած ըլլալս:

«— Ձեր սրդւոյն բարեբաւասութիւնը, պատասխանեցի:

«Հայրդ վերջին անգամ մ'ալ զիս Համբուրելու ատենը՝ ճակտիս վրայ ի շնորհակալեաց յառաջ եկած արտասուաց երկու կաթիլներու հոսիլը զգացի՝ իբր ի մկրտութիւն իմ գործած մեղացս, և այն ատեն մանաւանդ յորում ինքզինքս ուրիշի մը տալաւ կը հաւանելի, պարձանքով կ'ուրախանայի նոր յանցանքով մը ձեռք բերածիս վրայ:

«Սի բնակիան բան մ'էր, Սրման, վասն զի հօրդ պատուաւոր ու բարետէր մարդ ըլլալը յայտներ է իր ինձ:

«Պարոն Տիւֆալ կատքը մտաւ ու դնաց:

«Մակայն կին եմ ես , որով զքեզ տեսնե-
լուս պէս չկրցի արտասուացս ծոյծ ունել ,
բայց չտկարացայ :

«Միթէ աղէ՛կ ըրի . այսօր գուցէ մահուան
անկողնոյս մէջ այս հարցմունքը կ'ընեմ ինձ :

«Տեսար իմ անպատմելի վշտերս քանի որ
մեր բաժանման անխախտ առ ժամը կը մերձե-
նար . հայրդ քովս չէր որպէս զի զօրացունէր
զիս . և ատեն մը քիչ մնաց ամէն բան պիտի
յայտնէի քեզ , որովհետև քու ապագայ ատե-
լութիւնդ ու անարդանքդ սարսափ կ'աղղէին
յիս :

«Գուցէ չհաւատաս , Սրման , բայց Յատու-
ծոյ աղաչեցի որ զօրութիւն շնորհէ ինձ , ու
բնդունեց աղօթքս՝ զիս զօրացունելով , որով
խնայցայ ըրած զոհոյութեանս բնդունուած ըլ-
լայր :

«Ս,յն երեկոյն ընթրած ատենս օղնութեան
դարձեալ կարօտ եղայ , վասն զի ընելիքս չէի
ուզեր մտածել՝ տկարանալու վախէս :

«Տ՛ի կարծէր թէ ես , Մարգարիտա Աօթիկ ,
նոր հոմանի մ'առնելու համար այնքան պիտի
վշտանայի :

«Ս,յս խորհուրդը մտնալու համար ըմպեցի ,
և երկրորդ առաւօտ արթննալով՝ կոմսին ան-
կողնին մէջ գտայ ինքզինքս :

«Ս,յս է ստոյգը , բարեկամս , դատէ ու նե-
րէ ինձ , ինչպէս որ ես ալ քու այն օրէն՝ ի վեր
ինձ բրածներուդ համար բոլորով արտիւ նե-
րեր եմ քեզ :



«Մյն աղիտալի գիշերէն վերջն ամեն պատահած եղելու թիւններն ինձ չափ գիտեա , բայց մեր բաժնու ելէն ի վեր կրած ցաւերս չես կրնար երեւակայել :

«Իմացայ հորդ գրեզ տանելը , այլ գիտէի նաև որ երկար ատեն առանց զիս տեսնելու պիտի չկարենայիր ասորիլ , ուստի գրեզ ի Շանդկլիդէ տեսնելով խռովեցայ , այլ չզարմացայ :

«Մյն ատենէն ի վեր առանց նախատինք մը կրելուս որ մը չէր անցնէր . այլ այն նախատինքները գրեթէ որախուժեամբ կ'ընդունէի , վասն զի սիրոյդ ցոյցն էին , և կարծէի թէ որչափ որ հալածէիր զիս , այնքան աւելի վեհանձն պիտի համարէիր զիս ճշմարտութիւնն իմանալուդ օրը :

«Մի՛ զարմանար , Սրման , այդ նահատակութեան ուրախ սրտով տանելուս համար , զի քու սէրդ ազնիւ զգացումներ ներշնչեր էր ի սիրտս :

«Սակայն այնչափ զօրանալս դիւրաւ չէր եղած :

«Քեզ համար ըրած զտհողութեանս լրմանէն մինչև դարձդ բուական ժամանակ անցաւ , յորում նիւթական միջոցներու դիմելու ըստախալուեցայ՝ շխենդենալու և մոռնալու համար այն կեանքը՝ զոր դարձեալ վարել սկսեր էի : Երիւտանս քեզ ըսած ըլլալու է ամեն խնջոյից և ամեն պարահանդէսներու մէջ գտնուիլս :

«Զեղծմամբ կը յուսայի սպանել զիս , և

անկնկալութեանս ընդ հոսպ կատարուելուն
կ'սպասէի :

« Հետևարար առողջութիւնս խանդարեցաւ ,
և զհրիւտանս քեզ առարած օրս հոգւով մար-
մնով մաշեր էի :

« Չեմ յիշեցուներ քեզ , Սրման , իմ սիրոյս
վերջին ցոյցը փոխարինելուդ եղանակը , և նա-
խատանօք Բարիդէն վանելդ կին մը , որ կի-
տամեա՝ անկարող էր եղած այն զիշեր խըն-
դիրդ մերժել , և պահ մի՝ զանցեալը ներ-
կային մերձեցունելը կարելի համարեր էր :
Դու իրաւամբ այդպէս գործեցիր , Սրման .
իմ զիշերներուս զինը միշտ այնքան սուղ չէին
վճարուած :

« Յայնժամ ամեն բան թողուցի : Ազխմախա
ինձ յաջորդեց Ն. Պարոնին քով , որոյ իմ մեկ-
նելուս պատճառն խնայունելը յանձն առեր
է եղեր , ըսին : Կ. Կոման ի Լոնարա էր : Ասի՝
այն մարդերէն է սրբ ինձ նման աղջիկները՝
իբր զուարճալի դրօսանք մը համարելով ու սի-
րելով իրենց ունեցած կանանց բարեկամ կը
մնան . բնաւ նախանձ չզգտնուն համար՝ ա-
տելութիւն ալ չեն ունենար . ինքն այն մե-
ծամիտ ազնուակամներէն է , որ իրենց քու-
կին երկու բերանն ալ մեզ կը բանան , բայց
օրտերնուն միայն մէկ կողմը կը շնորհեն մեզ :
Տեսաի խկոյն յիշելով զանի՝ դացի . բայց հոն
ընտանեաց տէր կնկան մը սիրահարն ըլլալով
կը վախէր՝ զիս հրապարակաւ սիրելով տըր-
փանացը վնասել : Բարեկամացը ներկայացուց ,
նորա ալ ընթրիքի մը հրաւիրեցին , որմէ յե-
տոյ այն մարդերէն մէկն առաւ տարաւ զիս :
« Ի՞նչ կընայի ընել , բարեկամս :

«Մայանե՞լ զիս , անօղուտ ցաւերով կը ծան-
րացունէի կեանքդ , որ բարեբաստիկ ըլլարու
է . ասկէ զատ անձնասպանութիւնն ի՞նչ օ-
գուտ կ'ունենայ երբ մակը մօտեցած ըլլայ :

«Ես այն ատեն անհողի մարմնայ և անքան
իրի մը վիճակին մէջն էի . թիչ մ'ատեն այն
մեքենայական կենօք ապրելն յետոյ , ի Բարիդ
վերադարձայ ու գրեզ հարցուցի . յայնժամ
իմացայ երկարատե ուղեորութեան մը համար
մեկնած ըլլալդ : Զօրութիւնս ա՛լ սարսեր էր .
իմ առողջութիւնս՝ գրեզ ճանչելիս երկու տա-
րի առաջ ինչ վիճակի մէջ որ կը դանտէր՝ վե-
րատին ի նոյն դարձաւ : Փորձեցի դարձեալ
դքսին հետ հաշտուիլ , բայց սառտիկ վիրա-
ւորեր էի զինքը . և ծերերը համբերատար չեն
ըլլար , անչուչս իրենց երկարակեաց ջրլալն
իմանալուն համար : Հիւանդութիւնս օր ըստ
օրէ կը դարձանար . գունատի , ակտիւ , և
առաջուրնէ , առտուել վատոյժ էի : Սէրը գը-
նողները՝ վաճառքը առնելէն առաջ կը քննեն
Ռատի Բարիդու մէջ յինէ , ու ելի քաջառողջ ,
զուարթ ու գէր կիներ գտնուելուն պատ-
ճառաւ՝ տակաւ զիս մտցան : Սյս է անհա ան-
ցելոյն պատմութիւնը մինչեւ երէկ :

«Հիմա բարորոսին հիւանդ եմ : Գրտին գրեցի
արձաթ խնդրելու համար , վասն զի բնա-
ջունիմ , և պարտատէքներս դարձ վանդորմ
յամատութեամբ իրենց հաշիւները ներկայա-
ցուցին : Դու քան արդեօք պիտի պատասխանե՞
ինձ : Ս , Կ , Արմանա , եթէ ի Բարիդ ըլլայիր՝
զիս տեսնելու կուգայիր . ու կը մխիթարէիր
զիս :

«20 Գեղարկութիւնք .

«Այսօրուան օգը շատ գէշ է . ձիւն կուգայ .
և մինակէ եմ ի տուն : Երեք օր այնպիսի ամառ
կութեամբ ջերմա բռնեց որ՝ շկրցի բառ մը
գրել : Նոր բան չկայ , բարեկամս . ամեն օր
քեզնէ թուղթ մ'ընդունելու յուսոյ նշոյլ մը
կը ծագի յիս . բայց կարծեմ բնառ պիտի չըն-
դունիմ : Արք միայն չներելու կարողութիւնն
ունին եղեր Գուքսը տակաւին չպատասխանեց :

«Բրիւտանա սկսաւ դարձեալ յանախել ի
Մօն-տը-Բիէթէ :»

«Անդադար արիւն կը թքնեմ , եթէ տեսնէիր
դիս՝ սիրտդ կը ճմլիր : Տաք երկինքի տակ լա-
լալուդ համար երջանիկ ես , մինչ հոս ձիւնա-
սառայց ձմեռը կուրծքիս մրայ կը ծանրանայ :
Այսօր անկողնէս քիչ մ'ելնելով պատուհանէս
նայեցայ Բարիդու կենօք ապրողներուն անց-
նիլը , այն կեանքով որր ա'լ պիտի չկարեմ վա-
րել , կարծեմ . ծանօթ ներէս ոմանք դուար-
թերես ու անխցիթ՝ արատութեամբ անցան
փողոցէն . անոնցմէ և ոչ մէկն աչերը վեր վե-
րուց : Սակայն մի քանի երիտասարդներ եկեր
անուննին գրեր են Միանդամ , դիտես , հիւան-
դութեանս ժամանակ ամէն առտուս որպիստ
թիւնս հարցունելու կուգաս եղեր , դու որ
տակաւին դիս չճանչէիր , և յինէ որիչ բան
չէիր տեսած բայց միայն յրբութիւն՝ զքեզ ա-
ռաջին անգամ տեսած ատենս : Ահա տիկ
դարձեալ հիւանդ ինկայ . վեց ամիս ի միասին
ապրեցանք . ես զքեզ սիրեցի որչափ որ կլին
օք կրնայ սիրել . իսկ դու այժմ յինէ շատ հե-
ռու ես . կ'անիծես դիս ու միթէ արակամ խօսք
մ'ի բէն չեմ ընդունիր : Բայց դունէ սպաւով

եմ որ դիպուածը միայն գրեզ հեռի կը բռնէ,
յինէ, ասլա թէ ոչ՝ եթէ 'ի Բարիզ ըլլայիր՝
անտարակոյս կուգայիր կը տեսնէիր զիս, ու
սնարքիս քովէն չէիր բաժնուեր:

25 Դեկտեմբեր .

«Բժիշկա թոյլ չտար ամէն օր գրելու: Եւ
արդեամբ յիշատակները զտեսնդս կը զայրա-
ցունեն. բայց երէկ նամակ մ'ընդունելով շատ
աղէկութիւն իմացայ, աւելի մէջի բացատրուած
զգացմանցը քան թէ բերած նարատին համար:
Քատի այսօր կրնամ գրել: Հայրդ գրեր էր
այն թուղթը, որ ահաւասիկ:

Տիկին .

«Ձեր հիւանդութիւնը նոր իմացայ. եթէ 'ի
Բարիզ ըլլայի անձամբ կ'երթայի կը տեսնէի
զձեզ, կամ եթէ որդիս քովս ըլլար՝ առ ձեզ
կ'առաքէի. բայց ոչ ես դժբախտաբար Գ. Էն
կրնամ հեռանալ, և ոչ ալ որդիս 'ի Բարիզ եր-
թալ, վասն զի տատի վեց եօթը փարտախ հե-
ռու կը գտնուի: Քերեմն գրով միայն կ'իմա-
ցունեմ ձեր հիւանդութեան ցոյն ինձ պատե-
ճառած վիշտը, և հաւատացէք որ ձեր առող-
ջանալուն համար անկեղծ մաղթանքներ կ'ը-
նեմ:

«Բարեհաճեցէք ընդունիլ լուսագոյն բարե-
կամներէս մին՝ զՊ. Հ. որ ձեզ պիտի երթայ
իմ կողմանէս յանձնարարութեան մը համար,
որոյ ելքին անհամբերութեամբ կը մնամ:

«Բարեհաճեցէք, Տիկին, իմ խորին մեծարա-
նացս զգացումներն ընդունելու:»

«Այս էր հորդ դրած թուղթը: Հայրդ աղ-
նուատիրա ոք է, բարեկամս, միշտ սիրէ զին»

բը , վասն զի աշխարհիս մէջ նորա պէս սիր-
ուելու քիչ մարդ կը գտնուի : Սյն իւր ստո-
րագրութիւնը կրող նամակը բժշկիս գեղերէն
աւելի աղէկութիւն պատճառեց ինձ :

«Սյս առաւօտ Պ. Հ. ինձ եկաւ : Շատ տաղ-
նապած կը թուէր Պ. Տիւվալին իրեն յանձ-
նած փախուկ պաշտօնը կատարելու համար :
Հօրդ կողմանէ հազար սկուդ բերեր էր ինձ :
Նախ և առաջ մերժեցի , բայց ըսաւ թէ Պ.
Տիւվալ մերժումս նախատինք պիտի համարէր
և թէ հայրդ իրեն իշխանութիւն առեր էր ոչ
թէ միայն այդ գումարն ինձ յանձնելու , այլ
նաև ամէն կարօտութիւններս հողալու : Ըն-
դունեցի այդ ծառայութիւնը , որ հօրդ կող-
մանէ ըլլալուն համար՝ ողորմութիւն չէր կըր-
նար համարուիլ : Երբոր ՚ի Բարիդ դառնայ ու
ես մեռած ըլլամ , ցուցուր հօրդ իրեն համար
դրածս , ու ըսէ նաև թէ հէք աղջիկը՝ որոյ
հաճեր է այդ մխիթարական թուղթն ուղղե-
լու՝ շնորհապարտութեան արտասուք հոսելով
Պատուծոյ աղօթեր է իրեն համար : »

« 4 Յունվար .

«Շատ ցաւալի օրեր անցուցի : Մարդոյս
մարմնոյն այնքան ցաւեր կրելու ենթակայ ըլ-
լալը չէի գիտեր : Ա՛հ , անցուցած յանցաւոր
կենացս կրկին պատուհասը կրելու վրայ եմ
հիսնա :

«Ամէն գիշեր քովս մարդ կը կենար : Շնչա-
ռութիւնս բռնուած էր . ցնորք ու հալն իրենց
մէջ բաժներ էին իմ խեղճ գոյութեանս նըշ-
խարը :

«Ճաշարանս լի է շաքարեղէններով և ամէն

տեսակ կաղանդ չեն երով, զոր բարեկամներս
ցերեր են: Անշուշտ ան մարդկան մէջ յուսա-
բողներ կան որ օր մ'իրենց հարձն ըլլամ: Ե-
թէ մէկ մը տեսնեն հիւանդութեան ինչ վի-
ճակի դիտ հասուցած ըլլալը՝ սարսափով քովէս
խոյս կուտան:

«Բրիւտան» ընդունած ընծայներովս՝ ամի-
նուն նուէրներ կ'ընէ:

«Օղն այսօր շատ ցուրտ է: Բժիշկն ըսաւ որ
մի քանի օրէն կրնամ դուրս ելնել՝ եթէ օղը
գեղեցիկ ըլլայ:»

«Յ Յունիար»

«Երէկ կառքով շրջագայութեան դացի. օղը
յոյժ գեղեցիկ էր: Ի Շանգ Էլիզէ շատ մարդ-
կար: Կարծես դարնան սկիզբն էր: Ամէնուն
երեսը ուրախութեամբ կը փայլէր: Բնաւ չէի
կարծեր որ արեգական ճառագայթ մ'այնքամ
զուարթութիւն, քաղցրութիւն և մխիթարու-
թիւն հայթայթէ, որչափ որ զգացի երէկ:

«Գրեթէ ամէն ծանօթներս տեսայ. առաջ-
ունան պէս ուրախ զուարթ՝ իրենց գրօսանոց
և եթ կը խորհէին, բայց, ափսո՛ս, վստան զի
բարերաստ ըլլալնին չեն գիտեր: Ողիմպիան
Պ. Ն. ին տուած փառաւոր կառքին մէջ ան-
ցաւ: Չանայ հայեցումովը նախատել դիտ.
չգիտեր թէ սիրտս այն տեսակ ունայնութեանց
համար ա'լ անզգայ դարձեր է: Իրազմաց հե-
տէ ինձ ծանօթ բարեախրտ երիտասարդ որ
ինձ հետ բարեկամանալ ուզող մէկ բարեկա-
մին հետ ընթրելու հրաւիրեց զիս:

«Տխուր ժպտելով հրատոշոր ձեռնս կարկա-
ռեցի իրեն:

«Ապշեցաւ մնաց:

«Ժամեր չորսին 'ի տուն դառնալով ախար-
ժով ճաշեցի :

«Շրջագայութիւնս օգտակար եղաւ :

«Արդեօք կրնամ առողջանալ :

«Ինչպէ՛ս այլոց կեանքն ու երջանկութիւնը
տեսնելով ապրիլ կը մաղթէ այն՝ որ դեռ առ-
ջի օրն՝ առանձինն մթին խցի մէջ հիւանդ
պառկած՝ մահուան կը փափարէր :»

10 Յունվար .

«Առողջանալու յոյսս երազ մ'է եղեր : Ահա
դարձեալ յանկողին եմ , մարմինս կիզիչ սպե-
ղանիներով ծածկուած : Գնա՛, ծախէ հիւսու-
այդ մարմինն որ այնքան սուղ էր յառաջա-
դոյն , նայի՛նք ի՛նչ կուտան այսօր :

«Մնանելնէս առաջ մեծ յանցանք մը գործած
լլալու ենք , և կամ մեռնելնէս յետոյ երա-
նութիւն մը մեզ պահուած լլալու է , ապա-
թէ ոչ Աստուած թող չէր տար որ այս անցա-
ւոր աշխարհիս մէջ մարդս քաւութեան ամէն
տանջանքը և փորձի ամէն ցաւերը կրէ :

12 Յունվար .

«Շարունակ հիւանդ եմ :

«Շ. Առման երէկ արժաթ դրկեց , բայց ես
չընդունեցի : Այն մարդէն բան մ'առնուլ չեմ
ուզեր , վասն զի քովս չըլլալուդ պատճառն
ինքն է :

«Ո՛ր են հիմա ի Պաժիվալ անցուցած երա-
նաւէտ օրերս :

«Առողջանալուս պէս՝ մեր բնակած տան ուխ-
տագնացութեան պիտի երթամ , ու միեզև մեռ-
չքս անտի դուրս պիտի չեղնեմ :

«Արդեօք վաղը պիտի կարենամ գրել :

«25 Յունվար .

«Տասն ու մէկ գիշերէ 'ի վեր քուն չեմ եղած .
չնչառութիւնս կը բռնուի , ու ամէն պահուն
կարծեմ թէ վերջին շունչս պիտի տամ : Բժիշ-
կըն ապաստեց որ ձեռնս գրիչ չտան , թիւ Վի
Տիւփրա , որ քովէս չ'հեռանար , այս մի քանի
տողերս գրելու թոյլտուութիւն ըրաւ : Միթէ
մեռնե՞լս առաջ պիտի չ'վերադառնամ առ իս-
տրդեօք ա'լ չպիտի տեսնենք զիրար : Ինձ այն-
պէս կը թուի որ եթէ դաս կ'առողջանամ :
Սակայն առողջութենէս ի՞նչ օգուտ :

«28 Յունվար .

«Այս առաւօս մեծ աղմուկ մ'արթնցուց
զիս . թիւ Վի , որ ի սենեակս կը քնանար , ճա-
շարան վազեց : Կրիկ մարդու ձայն լսեցի , ու
րոց հետ ի դուր կը կուռէր : Վալով ներս մը-
տաւ :

«Ռենեցածներս գրաւելու եկեր են եղեր :
Իսի թիւ Վիին որ թոյլ տայ իրենց արդարութիւ-
նը կատարելու : Վարոցաւորն ի խուցս մտաւ
առանց պիտարկը հանելու :

«Գորոցները բացաւ , ամէն տեսածներն 'ի
զիր անցուց , և փոյթն անդամ շեղաւ հոն գրա-
նուող հիւանդը՝ որ օրինաց բարեգործութեամբ
թողած անկողնոյն մէջ պառկած էր :

«Հաճեցաւ ինձ ըսել թէ ինն օրուան մէջ կըր-
նամ ընդդիմութիւն քնել , այլ պահապան մի
թողով մեկնեցաւ : Ստուած իմ , ի՞նչ պիտի
ըլլամ ես : Այն մարդը տեսնելով հիւանդու-
թիւնս դայրացաւ , Բրիւտանա ուղեց հօրդ բա-

րեկամէն արծաթ խնդրել, բայց ես չհաւո-
նեցայ : »

« Այս առաւօտ ընդունեցի նամակդ՝ որոյ կա-
րօտով կ'սպասէի : Պատասխանս արդեօք ժա-
մանակին պիտի հասնի՞ 'ի ձեռնդ : Արդեօք
զիս դարձեալ պիտի տեսնե՞ս : Այս երջանիկ օրս
կը մտցունէ ինձ վեց եօթնեկէ 'ի վեր կրած
դաւերս : Ինձ այնպէս կը թուի թէ լաւագոյն
եմ, թէ պէտ է թղթոյդ պատասխանը տխուր
դժացմանց տալաւորութեամբ գրեցի :

« Անտարակոյս միշտ դժբախտ ըլլալու չենք :

« Երբեմն կը մտածեմ թէ կրնայ ըլլալ որ չը
մեռն'իմ, քովս վերադառնաւ, տեսնեմ զգա-
րուն, դարձեալ սիրես զիս ու մեր անցած
տարուան կենցաղափարութիւնը վերստին ըս-
կսինք վարել :

« Ի՞նչ յիմարութիւն . միթէ կրնամ այս տ-
կնկալութիւններս ունենալ ես՝ որ այս անտե-
ղի երագս գրելու համար գրիչը բռնելու հա-
զիւ հաղ կարող եղայ : »

« Դ Ֆեարիայ .

« Ա. Կոմսը վերադարձաւ : Վիրուհին խաբեր
է զինքը . շատ տխուր է, վասն զի յոյժ կը
սիրէր զանի : Գլխէն անցածները եկաւ պատ-
մեց ինձ : Խեղճ մարդուն դորձերն աղէկ վի-
ճակի մէջ չեն, սակայն վարոցաւորին արծաթ
տալով պահապանը ճամբեց :

« Քու վրադ խօսեցայ իրեն հետ . ինքն ալ
խոստացաւ իմ վրաս խօսիլ քեզ հետ : Իրեւե-
հետ բանակցելու ատենս ի՞նչպէս կը մտնայի
երբեմն հոմանիս եղած ըլլալը և ինքն ալ ոգ-
չա՛փ կը ջանար զայս ինձ մտացունել . ոչնէ մար-
դը բարեսիրտ է եղեր :

«Գուքսն երկէ մարդ զրկեր է գորակաութիւնս
նրա հարցունելու համար . այսօր ալ ինքն ան-
ձամբ եկաւ . չեմ գիտեր այն ծերունին ի՞նչու
տակաւին կ'ապրի : Երեք ժամ քովս նստաւ ,
ու քսան բառ բերնէն չհանեց : Ձիս այնքան
դռնաթափ տեսնելով արտասուաց երկու խո-
շոր կաթիլներ աչերէն սահեցան : Իւր աղջկան
մահուան յիշատակն անտարակոյս այնպէս կը
լացունէր դինքը : Նորա մահը կրկին տեսած կը
համարուի : Առնակը ծռած , գլուխը գետին
հակեր է , շուրթները կախուած են , ու աչա-
քը լոյսը տկարացեր է : Տարիներ և ցաւեր յոյժ
ժանրացեր են նորա մաշած մարմնոյն վրայ :
Սեւեւեւին չմեղադրեց զիս : Ատրժես գաղտնի
կ'ուրախանար հիւանդութեան յիս գործած
տերին , և կը պարծէր իւր ողջ ըլլալուն վրայ
մինչ ախար նկուն ըրեր են զիս :

«Օգերը գարձեալ աւրուեցան : Այ որ կու-
ցայ զիս տեսնելու : Ժիւլի Տիւփրա կրցածին
չստի քովս կը կենայ : Բրիւտանա գործեր կը
պատճառէ՝ յինէ հեռանալու համար , վասն
զի առաջուան պէս իրեն արծաթ ալ չեմ կա-
րող տալ :

«Չիմա մահուանս մերձենալով , վասն զի չեմ
հաւատար բազմաթիւ բժիշկներուս իդարու-
հակառակ խօսքին , ու ասկից կ'իմացուի հի-
ւանդութեանս զայրանալը , գրեթէ կը դաւխմ
հօրդ խօսքին տնաալուս վրայ . եթէ գիտնայի
կէ ապագայիդ վրայէն տարի մը միայն պիտի
բառնամ , քեզ հետ տարի մ'անցունելու ըղձիս
գէմ բնաւ չէի մաքառեր . դէթ այն ատեն
բարեկամի մը ձեռնը սեղմելով կը մեռնէի :
Իսցց սա ալ իրաւ է որ եթէ այս տարի միա-

աւել յապրէինք՝ այսչափ վաղ չէի մեռներ :
«Եղիցին կամք Տեառն :»

«Յ Փետրվար .

«Մէ , Արման , ո՞ւր ես , ցաւերս յոյժ զայ-
րացեր են . Աստուած իմ , պիտի մեռնիմ :
Երէկ այնքան տխուր էի որ ուզեցի տնէս դուրս
անցունել դիշերը՝ որ երէկուան չափ երկայն
պիտի թուէր ինձ : Առաւօտը դուքսն եկեր
էր . կարծես մահէն մոռցուած այն ծերունին
տեսներով՝ մահս աւելի վաղ կը մերձենայ :

«Թէպէտ և զայրագին տենդ մը կ'այրէր ,
սակայն զիս հաղուեցնել տուի ու «Աօտըվիլ»
թաարոնը գացի : Ժիւլի կարմիր ներկեր էր
երեսս , ապա թէ ոչ մեռեալ կրնային կար-
ծել զիս : Այն օթեակը բռնեցի յորում առա-
ջին անգամ ժամագիր եղեր էինք . աչերս շա-
րունակ այն նատարանին վրայ սեւեռեր էի՝ ուր
որ նայն օրը նստեր էիր , և ուր երէկ բիրտ
մարդ մը բազմեր դերասաններուն ըսած ան-
խնայ խօսքերուն վրայ բարձրաձայն : կը ծի-
ծողէր : Ահամեռ ի տունս բերին զիս : Բոլոր
դիշերը հազալով արիւն թքի : Այսօր ձայնս
մտրած է , չեմ կրնար խօսիլ . հազիւ հազ բա-
զուկներս կրնամ շարժել :

Աստուած իմ , Աստուած իմ , պիտի մեռ-
նիմ : Մեռնիր դիտէի , բայց չէի կարծեր թէ
տակէ աւելի ցաւ կարենամ կրել , և թէ որ . . .»

Այս բառէս սկսեալ Մարգարիտայի դժուար
բառ դրած մի քանի դիրերն անընթեռնլի էին ,
որով թիւի Տիւփրան շարունակեր էր :»

«Պարոն Արման»

«Մարդարիտան ի թատրոն դացած օրէն ՚ի վեր աւելի գէշ է : Չայնը բողորովին մարեցաւ ու անդամներն ա՛լ չկրնար շարժել : Չկարեմ մեր բարեկամուհւոյն ցաւերը նկարագրել : Այսպիսի յուզմանց սովորած չըլլալուս համար՝ շարունակ սարսափի մէջ եմ :

«Ի՛նչ աղէկ կ'ըլլար եթէ հոս ըլլայիք : Գրեթէ միշտ կը ցնորի . բայց թէ ցնորքի և թէ շոգ աստուծեան մէջ, եթէ խօսելու կարող ըլլայ, հանապաղ ձեր անունը կուտայ :

«Բժիշկն ըսաւ թէ ա՛լ չատ ժամանակ չտարիր : Հիւանդութեան պարանոցն դայրանաւէն ՚ի վեր ծեր դուքսը չեկաւ :

«Բժիշկին ըսեր է որ զՄարդարիտան տեսնելով գէշ կ'ըլլայ եղեր :

«Տիւփէրնուա Տիկնոջ բունած ընթացքը յոյժ անվայել է :

Այն կի՛նն որ այնչափ արժաթ կը քաշէր Մարդարիտայէն, որոյ գրեթէ մնաստիք միշտ կ'ապրէր, անկարելի դործեր ստանձներ է, և իւր դրացուհւոյն արժաթ շունենալն ալ իմանալով բնաւ չգար զանի տեսնելու : Ամէն մարդ Մարդարիտայէն հեռացեր է : Պ. Կ. իւր պարտատէրներէն նեղուելով սախալուեցաւ դարձեալ ի Լոնտրա երթալ : Մեկնելէն առաջ մեղքիչ մ'արժաթ դրկեց . ձեռքէն եկածին չափ ըլլաւ, սակայն ամէն բան գրաւեցին . և պարտատէրները Մարդարիտայի մեռնելուն միայն կ'սպասեն հիմա՝ աղջկան գոյքը վաճառել տալու համար :

«Ուղեցի ամէն ունեցածս տալ, որպէս գի

չգրաւեն , բայց վարացաւորը՝ անօգուտ ըլլալը
խնայուց և յարեց նաև թէ դեռ ուրիշ վճիռ-
ներ պիտի կատարէ եղեր : Մինչ պիտի մեռնի ,
աւելի լաւ է ամէն բան նոցա ձեռքը թողուլ ,
բան թէ աղատել յօգուտ ընտանեացը , դոր
բնաւ չէ ուղած տեսնել , և որ զինքը բնաւ չէ
սիրած : Չէք կրնար երևակայել ինչպիսի՛ սու-
կեկուռ ցակնի մէջ հէք աղջիկը պիտի աւան-
դէ զհոգին : Երէկ ամենևին արծաթ չունէինք :
Սեղանոյ սպասքները , դռհարները , ցփսիները ,
միտի բանիս ամէն բան գրաւի դրուեր և մը-
նացածն ալ կամ վաճառեալ կամ գրաւեալ է :
Մարդ արիտա իւր շուրջը տեղի ունեցած բա-
ներուն տակաւին իրադէտ ըլլալով մարմինը ,
միտքն ու սիրտը միանդամայն կը վշտակրին :
Արտասուաց խոշոր կաթիլներ այտիցը վրայէն
կը սահին . այնքան վատոյժ է որ եթէ տեսնէք
հագիւ կրնաք ճանչել ի նմա ձեր երբեմն այն-
չափ սիրած Մարդ արիտան : Խոստացայ իրեն
որ երբ ինքը չկարենայ՝ ես դրեմ ձեզ , և հի-
մայ իւր առջին կը գրեմ զայս : Աչերը իմ կող-
մըս կը դարձունէ , այլ չկրնար դիտեսնել ,
վասն զի մտարուտ մահը քող մը ձգեր է աչե-
րուն վրայ , սակայն կը ժպտի , և նորա մտայ
ու հոգւոյն ձեզմով բովանդակ զբաղած ըլլա-
լուն վրայ ասպահով եմ :

Գրան ամէն անգամ բացուելուն աչերը կը
փայլին և կարծէ թէ մտնողը դուք էք . յետոյ
ձեր շրջալն իմանարուն պէս՝ երեսը դարձեալ
իւր տխուր կերպարանը կ'զգենու , պաղ քրք-
տինք մը կը թրջէ զայն , և այտերը կը ներկուին
ի գոյն ծիրանի :

«19 Փետրվար» կէս դիշեր .

«Սիրեցեալ Արման , քանի՛ տխուր է օրս . այս առաւօտ Մարգարիտա քիչ մնաց կը խեղդուէր . բժիշկն արիւն առաւ , ու ձայնը դարձեալ բացուեցաւ : Բժիշկը խորհուրդ տուաւ որ քահանայ մը բերել տամ : Մարգարիտան հաւանելուն պէս՝ բժիշկն անձամբ դնաց 'ի Սուրբ-Ռոքոս եկեղեցին երէց մը խնդրելու :

«Նոյն միջոցին Մարգարիտան զիս քովը կոչելով՝ դարանը բանալ տուաւ , զլխանոց մը և կիտուածայեռ շապիկ մը ցոյց տալով՝ ըսաւ տկար ձայնիւ .

— «Խոստովանելէս յետոյ պիտի մեռնիմ՝ այն ատեն այն բաներով զիս հաղուեցուր . առ ալ հողեարքի հպտանք մ'ըլլայ :

«Յետոյ լալով համբուրեց զիս ու յարեց .

«Արնամ խօսիլ , բայց խօսած ժամանակս կարծեմ թէ պիտի խղդուիմ . օ՛ղ կուզեմ , օ՛ղ , կը խղդուիմ :

«Իսկ ես արտասուելով դացի պատուհանը բացի , և քիչ մ'ատենէն վերջը քահանայն ներս մտաւ :

«Շնորհաւոր նորա դացի :

«Ինչպիսի տան մէջ ըլլալն խմանալով , դէշ կերպով ընդունուելու երկիւղ ունեցաւ :

«Հայր իմ , անվախ ներս հրամայեցէք , ըսի :

«Սակաւիկ մի հիւանդին սենեակը կենալէն յետոյ՝ դուրս ելաւ ու ըսաւ .

«— Մեղաւոր ապրեր է , քրիստոնեայ կը մեռնի :

«Քիչ մը ժամանակէն վերջը դարձեալ եկաւ խաչակիր դպրով ու լուսարարով մը , որ Սու-

տուժոյ առ հիւանդն գալն աւետելու համար
զանդակիկ կը զարնէր :

«Երեքն ալ մտին այն խուցն ուր երբեմն ա-
մէն տեսակ խօսքեր ըսուեր էին . և որ այն
ժամուն Սատուժոյ տապանակն էր եղած :

«Ի ծուներ իջայ : Այս տեսարանիս յիս ներ-
դործած տալաւորութիւնը չզխտեմ որչափ պի-
տի տուէ , բայց չեմ կարծեր որ աշխարհի մէջ
ուրիշ բան մը կարող ըլլայ վրաս այնքան մեծ
ազդեցութիւն ունենալ :

«Քահանայն սուրբ միւռոնով հոգեվարքին ոտ-
ները , ձեռներն ու ճակատն օժեց , կարճ ա-
ղօթք մ'ըրաւ , և Մարդարիտա պատրաստ էր
երթալու յերկինս , զոր անշուշտ պիտի ժա-
ռանդէ իւր կրած ցաւերուն ու սուրբ մահ-
ուանը համար :

«Սյն ժամանակէն սկսեալ բերնէն խօսք մը
չհանեց , շարժում մը չըրաւ . մեռած կրնայի
կարծել զանի՝ եթէ նեղութեամբ շունչ առնե-
լը չ'լսէի :

«20 Փետրվար , ժամ 3 երեկոյեան .

«Կատարեցաւ ամենայն ինչ :

«Մարդարիտա այս գիշեր ժամն երկուքին
մահուան տաղնասար մտաւ : Նահատակ մ'այն-
քան տանջանք կրած չէ , եթէ նորա աղաղակ-
ներէն դատելու ըլլանք : Երկու երեք անգամ
անկողնոյն մէջ կանգ նեցաւ , իբր առ Սատուժ
եղնող կեանքը բռնելու համար :

«Երկու երեք անգամ անուենիդ տալէն յե-
տոյ լռեց ու սպառեալ ընկաւ անկողնոյն վրայ :
Լռիկ մնջեց , արտասուեց ու յետոյ վախճանե-
ցաւ :

Այն ատեն մերձենալով՝ դանի ձայնեցի, և երբ շարտասխանեց, աչերը փակեցի ու ընձակատը համբուրեցի:

Քշու ա՛ռ Մարգարիտա, սուրբ կին մ'ըլլալու էի, որպէս զի այդ համբոյրս միջնորդ ըլլար քեզ առաջի Տեառն:

Յետոյ, իւր կամաց համեմատ, զինքը հողուեցուցի, Սուրբ-Ռոքոս եկեղեցին դացի երէց մը խնդրելու համար, երկու մտմ փառեցի նորա հողւոյն դիտաւորութեամբ ու ժամ մ'ազօթեցի:

Նորա արծաթ ունէ աղքատաց ողորմութիւն բաշխեցի:

Արօնական պարտուց քաջ տեղեակ չեմ, սակայն Աստուած անկեղծ արտասուքս և սիրով ողորմութիւն տալս տեսներով, ու ջերմեռանդն աղօթիցս լսելով՝ կը գթայ նմա՝ որ գեղեցիկ ու մանկամարդ հասակին մէջ մեռնելու ատեն՝ միայն զիս քովն ունեցաւ՝ աչերը փակելու ու զինքը թաղելու համար:

«22 Փետրվար:

Այսօր թաղման հանգէսը կատարուեցաւ. Մարգարիտայի բարեկամներէն շատերը եկեղեցին եկեր էին: Այն մարդերէն ոմանք անկեղծութեամբ կուլային: Յուղարկաւորութեան «Մօն-Մարթրի(1) ճամբան բռնած ատենն՝ երկու հողի միայն կառքին ետեւէն կ'երթային. կ. կումսը, որ Մարգարիտայի մահը լսելուն պէս Ղօնարայէն մեկնած էր, և դուքսը՝ որ երկու ծառայից կռթնած կը քայլէր:

(1) Գերեզմանատեղի 'ի Բարիզ:

«Այս մանրորդները Մարդարիտայի սենեակը նստած կը դրեմ, կանթեղին առջին՝ որ ախուր կը վառի ճաշի մը քով, որոյ բնականաբար ձեռնա պիտի չդպցունեմ, և զոր սակայն հանին սլառաստեղ տուեր է, վասն զի քսանու չորս ժամ, ի վեր բերանա բան չեմ դրած :

«Պիտի չկարենամ այս ախուր տպաւորութեանցս յիշատակն ընդ երկար պահել, վասն զի ես ալ՝ Մարդարիտային պէս՝ կենացս տէրը չեմ. ուստի այս բաները դիտամբ այն տեղը գրեցի՝ ուր որ տեղի ունեցան, վախնալով որ եթէ ուշ վերադառնաք հոս՝ նոցա հոգեչարժ ճշդութեամբը չկարեմ ձեզ պատմել :

— Կարդացի՞ր, ըսաւ Արման, այն ձեռագիրն ընթեռնելս յետոյ :

— Հիմա կիմանամ, բարեկամս, քանի՜ վշտակիր եղած ըլլալու ես, եթէ կարդացածս ճշմարիտ է :

— Հայրս նամակաւ մը հաստատեց զայնս :

Քիչ մ'ատեն ալ տեղի ունեցած ախուր եղելութեանց վրայ խօսելնէս յետոյ, տունս դացի սակաւ մի քնանալու համար :

Արման, յարատե ախրութեանքն հանդերձ այդ պատմութիւնը պատմելով, քիչ մը ախփեցաւ և մի քանի օրէն առողջանալով միատեղ Բրիւտանսին ու Ժիւլի Տիւիրային այցելութեան դացինք :

Բրիւտանս սնանկացեր էր : Մարդարիտան պատճառ բռնեց այս ճախորդութեան համար, վասն զի կիւանդութեանը ժամանակ նմա շատ արժաթ փոխ տուեր ու տոմսակներ ստորագրեր է եղեր, զոր չէ կրցած հատուցանել, և Մարդարիտային ընդունադիր շունենալուն հա-

մար՝ չէր կրցած նորա մեռնելէն յետոյ ար-
ծաթէր սրահանջել :

Այս հնարած ստուծեան միջոցաւ , զոր ա-
մէնուն կը պատմէր իւր գործոց գէշ վիճակն
արդարացնելու համար , 1000 ֆրանքի տակ-
տակ մը փրցուց Սրմանէն , որ թէպէտև չէր
հաւատար նորա լուսած խօսքերուն , բայց
Մարգարիտային յարաբերեալ ամենայն ինչ յոյժ
մեծարելուն համար , հաւատալ կեղծեց :

Յետոյ դացինք Ժիւլի Տիւփրային՝ որ այն սըր-
տածակիկ իրողութիւններն երկրորդեց մեզ , ի
յուշ բարեկամուհւոյն անկեղծ արտասուք հո-
սելով :

Ապա դացինք Մարգարիտայի գերեզմանին ,
որոյ վրայ տնկուած ծաղկանց տերևները Աս-
րիլ ամսոյն արեգական ճառագայթից տաքու-
թեամբը կը բացուէին :

Սրմանի ուրիշ պարտք մ'ալ կը մնար լրա-
ցունելու , այսինքն հօրն երթալ : Խնդրեց որ
դարձեալ ընկերանամ իրեն :

Հասանք 'ի Գ. ուր տեսայ զՊ. Տիւփալ , և
յիրաւի իւր որդւոյն ըրած նկարագրութեանը
համեմատ մարդ մ'էր , այսինքն վեհանձն , մե-
ծարեղի ու բարեսէր անձ մը :

Բարեբաատութեան արտասուք աչերը լայ-
եալ ընդունեց զՍրման , ու սիրով ձեռնս սեղ-
մեց : Ընդ հուպ խմացայ որ այդ հարկապա-
հանջին սրտին մէջ հայրական զգացումը բո-
լոր ուրիշ զգացմանց վրայ կ'իջխէ եղեր :

Իւր Պլանդա դատեր աչերուն թափանցկու-
թիւնը ու բերնին պայծառութիւնը կը յայտ-
նէին որ այն աղջկան հոգին անարատ խոր-
հօրդներ միայն երկնելու ու շուրթներն սուրբ

խօսքեր միայն արտասանելու էին : Անբիծ կոյ-
սըն իւր եղբօրը դարձին վրայ հաւրախանար ,
և կ'անդիտանար որ անառակ կին մը բարե-
բաստութիւնը զոհեր էր իւր անունը լսելուն
սէս :

Քիչ մը ժամանակ այն ընտանեաց հետ ան-
ցուցի , անբաժան անկէ՝ որ սիրտը յապաքի-
նութեան մտնելուն սէս՝ հօրը քով վերադար-
ձեր էր :

Ի Բարիզ վերադառնալով այս պատմութիւնը
գրեցի՝ ինչպէս որ լսեր էի : Ասի արդիւնք մը
միայն ունի , որ գուցէ տարակուսի տակ ինկ-
նայ , այս է ճշմարիտ ըլլալը :

Այս պատմութենէս չեմ ուզեր հետեցունել
որ Մարգարիտայի վիճակակից աղջիկները նո-
րա ըրածը կատարելու կարող ըլլան . քա՛ւ լի-
ցի . այս միայն իմացայ որ անոնցմէ մին կե-
նացը մէջ տնկեղծութեամբ մէկը սիրելով , սի-
րոյն պատճառաւ տառապեր ու մեռեր է :
Գիտցածս պատմեցի , վասն զի պարտքս էր :

Անառակութիւն չեմ քարոզեր , բայց ուր
որ աղնուտասիրտ թշու առի մը ձայնը լսեմ՝ նմա
արձագանք պիտի տամ :

Դարձեալ կը կրկնեմ . Մարգարիտայի պատ-
մութիւնը բացառութիւն մ'է՛ , եթէ սովորա-
կան բան մ'ըլլար՝ չէի գրեր :

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten note or signature in the left margin, possibly written in blue ink.



Р. У.

№ 5994